

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

_____ 2017թ.

N_____ Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է՝*

1. Ընդունել ի գիտություն Երևանի քաղաքապետի կողմից ներկայացված Երևանի զարգացման 2016 թվականի ծրագրի իրականացման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՁՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Երևանի զարգացման 2016 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Երևանի զարգացման 2016 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի 3-րդ կետի՝ Երևանի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ քաղաքապետը հաշվետվություն է ներկայացնում Երևան քաղաքի ավագանուն:

Երևանի զարգացման 2016 թվականի ծրագրի իրականացման հաշվետվությունը կազմվել է Երևանի ավագանու 18.03.2016թ. N 484-Ս որոշմամբ ընդունված Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության ձևաչափով: Մինչև 2014 թվականը զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հանդիսանում էր հաջորդող տարվա Երևանի զարգացման ծրագրի բաղադրիչ՝ «Իրականացված աշխատանքներ» ենթաբաժնի ներքո: Հաշվի առնելով, որ Երևանի զարգացման ծրագիրը մշակվում է 4-րդ եռամսյակի սկզբում, իսկ հաշվետու տարվա ծրագրով նախատեսված աշխատանքների ամբողջական հաշվետվությունը կարող է կազմվել միայն հաշվետու տարին ավարտվելուց հետո՝ Երևանի քաղաքապետի 2013թ. հոկտեմբերի 4-ի հ.4904-Ս որոշմամբ հաստատված Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2014թ. հոկտեմբերի 31-ին հրավիրված նիստում քննարկվեց հաջորդող տարվա զարգացման ծրագրից «Իրականացված աշխատանքներ» ենթաբաժինը հանելու և ծրագրի հաշվետվությունը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ ներկայացնելու հարցը: Նշված առաջարկը 2014թ. նոյեմբերի 4-ին հրավիրված Խորհրդի նիստին արժանացավ դրական եզրակացության:

Երևանի զարգացման 2016 թվականի ծրագրի իրականացման հաշվետվությունը հիմնականում բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ «Ծրագրի կամ միջոցառման անվանում», «Նախատեսված աշխատանքների նկարագիր», «Աշխատանքների իրականացման գործընթաց» և «Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ»: Հաշվետվության կառուցվածքում առանձին ներկայացված են քաղաքային տնտեսության ոլորտները և Երևանի վարչական շրջանները:

Հաշվետվության մեջ մանրամասն ներկայացված են Երևանի զարգացման 2016 թվականի ծրագրով նախատեսված և իրականացված աշխատանքների վերաբերյալ ծավալային և քանակական տվյալները:

Ընդհանուր առմամբ 2016 թվականին իրականացված ծրագրերը, աշխատանքներն ու միջոցառումներն ուղղված են եղել Երևանի զարգացման 2014-2017թթ. քառամյա ծրագրով նախանշված հիմնախնդիրների աստիճանական լուծմանը՝ հաշվի առնելով գերակա ուղղությունները:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ Երևան քաղաքի ավագանուն է ներկայացվում Երևանի զարգացման 2016 թվականի ծրագրի իրականացման հաշվետվությունը:

Երևանի զարգացման
2016 թվականի
ծրագրի իրականացման հաշվետվություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<u>Քաղաքաշինություն և ճարտարապետություն</u>	2
<u>Արտաքին ձևավորում և գովազդ</u>	7
<u>Շինարարություն և բարեկարգում</u>	16
<u>Անշարժ գույքի կառավարում</u>	26
<u>Կոմունալ տնտեսություն</u>	34
<u>Առևտրի և սպասարկումների ոլորտ</u>	51
<u>Տրանսպորտ</u>	59
<u>Բնապահպանություն</u>	67
<u>Հանրակրթություն</u>	71
<u>Առողջապահություն</u>	76
<u>Սոցիալական ապահովություն</u>	80
<u>Մշակույթ</u>	90
<u>Ֆիզիկական կուլտուրա և սպորտ</u>	112
<u>Երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</u>	117
<u>Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտ</u>	119
<u>Միջազգային համագործակցություն</u>	130
<u>Զբոսաշրջություն</u>	138
<u>Աջափնյակ վարչական շրջան</u>	146
<u>Ավան վարչական շրջան</u>	158
<u>Արաբկիր վարչական շրջան</u>	184
<u>Դավթաշեն վարչական շրջան</u>	202
<u>Էրեբունի վարչական շրջան</u>	224
<u>Կենտրոն վարչական շրջան</u>	235
<u>Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան</u>	256
<u>Նոր Նորք վարչական շրջան</u>	269
<u>Նորք-Մարաշ վարչական շրջան</u>	287
<u>Նուբարաշեն վարչական շրջան</u>	295
<u>Շենգավիթ վարչական շրջան</u>	316
<u>Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան</u>	330

Քաղաքաշինություն և ճարտարապետություն					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1.	2.	3.	4.	5.	6.
1.	Կմշակվի Երևան քաղաքի 2005-2020թթ. Գլխավոր հատակագծի ճշգրտման նախագիծի մշակման աշխատանքների հայեցակարգը	Կմշակվի Երևան քաղաքի 2005-2020թթ. Գլխավոր հատակագծի ճշգրտման նախագիծի մշակման աշխատանքների հայեցակարգը մինչև 2025 թ. զարգացման հեռանկարով:	Երևան քաղաքի 2005-2020թթ. Գլխավոր հատակագծի ճշգրտման նախագիծի մշակման աշխատանքների հայեցակարգը՝ մինչև 2025 թ. զարգացման հեռանկարով, նախատեսվում է մշակել «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո:		
1.1	Երևան քաղաքի գլխավոր հատակագծի վարման աշխատանքներ	Երևան քաղաքի գլխավոր հատակագծի վարման աշխատանքներ	22.03.2016թ. N «ԵԲ-ՊԸԱՇՁԲ-16/2 Իրականացվել են Երևան քաղաքի գլխավոր հատակագծի վարման աշխատանքներ:	«Երևաննախագիծ» ՓԲԸ 22.03.2016թ.- 10.12.2016թ.	
2.	«Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի մշակում	«Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի մշակում:	«Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի մշակման աշխատանքները նախատեսվում է իրականացնել օրենքի ընդունումից հետո՝ օրենքով սահմանված ժամկետներում:		
3.	Երևան քաղաքում հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի մատչելիության	Երևան քաղաքում հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի մատչելիության ապահովման 2016	Երևան քաղաքում կառուցվող կամ կառուցման ենթակա հասարակական և բազմաբնակարան բնակելի նշանակության շենք-շինությունների ճարտարապետաշինարարական փաստաթղթերում՝ բնակչության սակավաշարժ խմբերի համար մատչելիության ապահովման ենթակառուցվածքների բացակայության դեպքերում ծանուցվել է օբյեկտների կառուցապատողներին: Արդյունքում,	աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն	

	ապահովման 2016 թվականի ծրագրի մշակումն իրականացում	թվականի ծրագրի մշակում և իրականացում:	նախագծային փաստաթղթերում կատարվել են համապատասխան ուղղումներ հետևյալ հասցեներում՝ 1.Ազատության պողոտա հ.27– բազմաբնակարան բնակելի մասնաշենք 2.Շինարարների փողոցի հ.14/1 -բազմաբնակարան բնակելի շենք 3.Եկմայան փողոց հ.1/1 /Գրադ Ինվեստ/ բազմաբնակարան բնակելի շենք 4.Բաղրամյան 1-ին նրբանցք հ.30– բազմաբնակարան բնակելի շենք 5.Նորաշեն թաղամաս հ.12– բազմաբնակարան բնակելի շենք		
4	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի գոտիավորման նախագծի մշակում	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի գոտիավորման նախագծի մշակում:	16.11.2016թ. N ԵՔ-ԲԸ ԱՇՁԲ-16/132 Իրականացվել են Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի գոտիավորման նախագծի մշակման աշխատանքներ: Ավարտը նախատեսվում է 2017թ.:	«Երևաննախագիծ» ՓԲԸ 16.11-2016թ. - 16.11.2017թ.	
5	Աճուրդով օտարված կամ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում ներդրումային ծրագրերի, ճանապարհների և ինժեներական ցանցերի նախագծային աշխատանքներ	Աճուրդով օտարված կամ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում ներդրումային ծրագրերի, ճանապարհների և ինժեներական ցանցերի նախագծային աշխատանքներ:	1. Իրականացվել են նախագծային աշխատանքներ՝ Արգավանդ-Շիրակի փողոց, Դավթաշեն-Աշտարակ, Ա.Բաբաջանյան- Աշտարակ: 2.Համաձայնեցվել են փաստաթղթեր՝ Արգավանդ-Շիրակ, Բաբաջանյան-Աշտարակ և Դավթաշեն-Աշտարակ ճանապարհահատվածների կառուցման համար: 3. Արշակունյաց պողոտա-Շիրակի փողոց-Արտաշատի խճուղի 5կմ երկարությամբ ճանապարհահատվածի կառուցումն ավարտվել է: 4. Արշակունյաց պողոտայի և Նժդեհի փողոցի խաչմերուկում տրանսպորտային հոսքերի բեռնաթափման նպատակով մշակվել է հանգույցի կառուցման նախագիծ: 5. Համաձայնեցվել են «Հին Երևան» ծրագրի մի հատվածի առաջին հերթի կառուցապատման նախագծային փաստաթղթերը: 6. Համաձայնեցվել են Տ.Պետրոսյան փողոցի վերջնամասից դեպի Դավթաշենի 2-րդ թաղամաս տանող ճանապարհի լայնացման և բարեկարգման աշխատանքների իրականացման փաստաթղթերը:	Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ, աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն	
6	Մայրաքաղաքը	Ասիական գարգացման	1.Արգավանդ-Շիրակ ճանապարհահատված	Երևանի	

	<p>շրջանցող ռազմավարական ճանապարհի՝ Արգավանդ-Շիրակի փողոց, Դավթաշեն-Աշտարակ, Ա.Բաբաջանյան-Աշտարակ հատվածների կառուցման աշխատանքներ</p>	<p>բանկի հետ համագործակցությամբ 2016 թվականին կշարունակվեն մայրաքաղաքը շրջանցող ռազմավարական ճանապարհի՝ Արգավանդ-Շիրակի փողոց, Դավթաշեն-Աշտարակ, Ա.Բաբաջանյան-Աշտարակ հատվածների կառուցման աշխատանքները:</p>	<p>2016 թվականին սկսվել են շրջանցիկ ճանապարհի՝ Շիրակի փողոցից դեպի Արգավանդ տանող ճանապարհի շինարարական աշխատանքները: Ամբողջությամբ ավարտվել են շրջանցիկ ճանապարհի՝ Կարմիր բլուր հնավայրի հարակից հատվածում իրականացվող հնեաբանական պեղումները: Հնագիտական գտածոները տեղափոխվել են վերականգնման լաբորատորիա՝ հետագայում ցուցադրության ներկայացնելու նպատակով: 2. 20.12.2016թ. L3293-ICB/CW-T4 ԴԱՎԹԱՇԵՆ-ԱՇՏԱՐԱԿ ճանապարհահատված Կայացել է Դավթաշեն-Աշտարակի խճուղի ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների մրցույթը: 2017 թվականի սկզբին կտրվի այդ հատվածի շինարարական աշխատանքների մեկնարկը: 3. Ա.ԲԱԲԱՋԱՆՅԱՆ-ԱՇՏԱՐԱԿ ճանապարհահատված-Երևանի շրջանցիկ ճանապարհի կառուցումը կավարտվի 2019 թվականին: Ճանապարհի կառուցման նպատակով մրցույթի կազմակերպման համար նախապատրաստվել են անհրաժեշտ նյութեր:</p>	<p>կառուցապատման ներդրումային ԾԻԳ 1. «Մերենիսիմա Կոստրուցիոնի» իտալական ընկերություն 25.04.2016թ-25.04.2018թ. 2. ՀՁ Բլեք Սի Գրուփ, Վահագն և Սամվել ՄՊԸ-ն 3. Մրցույթ դեռ չի կայացել</p>	
7.	<p>Քաղաքային կախովի մարդատար ճոպանուղու ստեղծման ուսումնասիրության, հետիոտն փողոցների և հեծանվառուղիների ստեղծման հնարավոր տարբերակների հետազոտության աշխատանքներ</p>	<p>Կշարունակվեն քաղաքային կախովի մարդատար ճոպանուղու ստեղծման ուսումնասիրության, հետիոտն փողոցների և հեծանվառուղիների ստեղծման հնարավոր տարբերակների հետազոտության աշխատանքները:</p>	<p>Հարցը քննարկվել է նաև Երևան և Լիոն քաղաքների համագործակցության շրջանակներում: Աշխատանքներ են իրականացվել ֆրանսիական «MDP/Urban Concept/ ընկերության հետ Երևանում կախովի ճոպանային ուղեփոխադրման միջոցների ներդրման հնարավոր համագործակցության ուղղությամբ:</p>	<p>«Երևաննախագիծ» ՓԲԸ</p>	
8.	<p>Երևան քաղաքի ընդհանուր</p>	<p>Կշարունակվի Երևան քաղաքի ընդհանուր</p>	<p>1. Համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակում իրականացվել են Գլխավոր պողոտայի՝ Խանջյան փողոցից</p>	<p>«Երևաննախագիծ» ՓԲԸ,</p>	

	օգտագործման կանաչ տարածքների կազմակերպման և զարգացման ծրագրերի իրականացում	օգտագործման կանաչ տարածքների կազմակերպման և զարգացման ծրագրերի իրականացումը:	Հանրապետության փողոց ընկած հատվածի՝ «Վերնիսաժի» տարածքի վերակառուցման և բարեկարգման աշխատանքներ /6000քմ/: 2.Համաձայնեցվել են Երևանի գլխավոր պողոտայի՝ «Վերնիսաժի» հատվածի բարեկարգման և կառուցապատման փաստաթղթերը: 3. Համաձայնեցվել են Նուբարաշեն վարչական շրջանի կենտրոնական զբոսայգու արդիականացման, վերակառուցման և բարեկարգման փաստաթղթերը:	«Հ.Նավասարդյան» ՍՊԸ, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ, աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն	
9.	«Հաղթանակ» զբոսայգու տարածքի վերակառուցման և արդիականացման նպատակով ներդրողներ ներգրավելու ուղղությամբ աշխատանքների իրականացում	Աշխատանքներ կիրականացվեն «Հաղթանակ» զբոսայգու տարածքի վերակառուցման և արդիականացման նպատակով ներդրողներ ներգրավելու ուղղությամբ	Մշակվել է «Հաղթանակ» զբոսայգու տարածքի վերակառուցման և արդիականացման ներդրումային առաջարկ: Բանակցություններ են վարվել հնարավոր ներդրողների հետ համապատասխան ներդրումներ ներգրավելու ուղղությամբ:	«Երևաննախագիծ» ՓԲԸ	
10	Գլխավոր պողոտայի՝ Մարյան փողոցի և Մաշտոցի պողոտայի հատվածի վերակառուցման աշխատանքներ	2016 թվականին նախատեսվում է ավարտել Գլխավոր պողոտայի՝ Մարյան փողոցի և Մաշտոցի պողոտայի հատվածի վերակառուցման աշխատանքները:	Ավարտվել են համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակում իրականացվող Գլխավոր պողոտայի՝ Մաշտոցի պողոտայի և Մարյան փողոցի միջանկյալ տարածքում գտնվող զբոսայգու վերակառուցման և բարեկարգման ծրագրի առաջին հատվածի շինարարական աշխատանքները: Աշխատանքները երկարաձգվել են և կշարունակվեն 2017թվականին:	«Երևաննախագիծ» ՓԲԸ, «Նոր Երևան» ՍՊԸ, աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն	
11	Ավան վարչական շրջանում ուսումնամարզական համալիրի շինարարական աշխատանքներ	Կսկսվեն Ավան վարչական շրջանում ուսումնա-մարզական համալիրի շինարարական աշխատանքները, որի	Ավարտվել են Ավան վարչական շրջանի Ծարավ Աղբյուրի հ.55/25 հասցեում ուսումնա-մարզական համալիրի կառուցման նախագծային աշխատանքները: Սկսվել են շինարարական աշխատանքները: Ծինարարության ավարտի ժամկետ (36 ամիս) 31.05.2016թ. -31.05.2019թ.:	«Երևաննախագիծ» ՓԲԸ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 31.05.2016թ. - 31.05.2019թ./	

		կազմում նախատեսվում է դպրոց, մանկապարտեզ, մարզաառողջարարական համալիր ունիվերսալ դահլիճով և մարզասրահով, փակ սահադաշտ, ստորգետնյա ավտոկայանատեղեր և զբոսայգի:			
12	Նոր հանգստի գոտիների հիմնադրում, զբոսայգիների և կանաչ տարածքների վերականգնում	Նախատեսվում է նաև նոր հանգստի գոտիների հիմնադրում, զբոսայգիների և կանաչ տարածքների վերականգնում:	25.07-30.08.2016թ. ՌԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/109 1.Իրականացվել են Ծարավ Աղբյուրի փողոցի հ.55/27 հասցեում զբոսայգու կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքները /0.55հա/ 2.Կատարվել են Երևանի Կարպի լճին հարող տարածքի բարեկարգման և կանաչապատման նախագծային աշխատանքները:	1.«Հագարաշեն» ՍՊԸ 2.«Երևաննախագիծ» ՓԲԸ	
13	Համայնք-մասնավոր քաղաքաշինական ներդրումային ծրագրեր		Երևանի քաղաքապետարանը շարունակել է նպաստավոր պայմաններ ապահովել մասնավոր ներդրումների համար: Երևանում շահագործման է հանձնվել 3 առևտրային կենտրոն՝ «Ռոսիա-Մոլ», «Տաշիր-Սթրիթ», «Երևան Տոնավաճառ»: Շահագործման է հանձնվել «Մուլտի ուելնես կենտրոն» բազմաֆունկցիոնալ սպորտային համալիրը: Մայրաքաղաքում ավելացել է տուրիստական նշանակության ևս մեկ օբյեկտ՝ հյուրանոցային համալիր «Ռեդիսոն բլու հոթել Երևան»-ը: «Մատչելի բնակարաններ երիտասարդ մասնագետներին» բնակարանային ապահովության սոցիալական ծրագրի շրջանակներում կառուցվել է բազմաբնակարան համալիր: Ընթացքի մեջ են միջազգային չափորոշիչներին համապատասխանող Երևանի կրկեսի նոր շենքի, «Կամար» բիզնես կենտրոնի և նոր	Մասնավոր ներդրումներ	

			գրոսայգու, «Երագ» բնակելի թաղամասի 8 նոր մասնաշենքի, «ԻԲԻՍ», «Շերաթոն» հյուրանոցային համալիրների շինարարական աշխատանքները: Սկսվել են «Հրանտ Մաթևոսյան» մշակութային կենտրոն-թանգարանի շինարարական աշխատանքները, որոնք կավարտվեն 2017 թվականին:		
Արտաքին ձևավորում և գովազդ					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիրը	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1.	2.	3.	4.	5.	6.
1.	Վարչական շրջաններում առկա գովազդային վահանակների, ցուցանակների արդիականացման, «Գովազդի մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցման, քաղաքային չափերի գովազդային վահանակներով փոխարինման աշխատանքների կատարում	2016 թվականին նախատեսվում է իրականացնել վարչական շրջաններում առկա գովազդային վահանակների, ցուցանակների արդիականացման, «Գովազդի մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցման, քաղաքային չափերի գովազդային վահանակներով փոխարինման աշխատանքներ:	Իրականացվել է վարչական շրջաններում առկա գովազդային վահանակների, ցուցանակների արդիականացման, «Գովազդի մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցման, քաղաքային չափերի գովազդային վահանակներով փոխարինման աշխատանքներ, որի 169 գովազդային վահանակներ համապատասխանեցվել են «Գովազդի մասին» ՀՀ օրենքին:	Աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչություն, «Ձևավորում» ՓԲԸ հունվար-դեկտեմբեր	
2.	Էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքում առկա	2015 թվականին ստեղծված էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով նախատեսվում է	Իրականացվել է գովազդային վահանակների հաշվառման, գույքագրման աշխատանքներ և էլեկտրոնային բազայի թարմացում: Երևան քաղաքում առկա գովազդների համար տրվել են էլեկտրոնային թույլտվություններ:	Աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչություն հունվար-դեկտեմբեր	

	գովազդային վահանակների հաշվառման, էլեկտրոնային կարգով թույլտվությունների տրամադրման աշխատանքները	իրականացնել Երևան քաղաքում առկա գովազդային վահանակների հաշվառման, էլեկտրոնային կարգով թույլտվությունների տրամադրման աշխատանքները, որն իր հերթին կբարձացնի գովազդի ոլորտի կառավարման արդյունավետությունը և կնպաստի տեղական տուրքերի հավաքագրմանը:			
3.	Աշխատանքներ մասնագիտացված գովազդային կազմակերպությունների հետ՝ գովազդային վահանակների արդիականացման, սոցիալական գովազդային ծրագրերի իրականացման և Երևան համայնքի հետ աշխատանքի որակի բարձրացման ուղղություններով	2016 թվականին շարունակվելու է աշխատանքը մասնագիտացված գովազդային կազմակերպությունների հետ՝ գովազդային վահանակների արդիականացման, սոցիալական գովազդային ծրագրերի իրականացման և Երևան համայնքի հետ աշխատանքի որակի բարձրացման ուղղություններով:	Մասնագիտացված կազմակերպությունների աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացվել են մեթոդաբանական, գովազդային դաշտի արդիականացման, սոցիալական գովազդների իրականացման, Երևան համայնքի հետ գովազդային ծրագրերի իրականացման (մշակութային, սոցիալական, քաղաքային ծրագրերի մեկնաբանման) աշխատանքներ: Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ նոյեմբերի 20-25-ը մայրաքաղաքում անցկացվեց Երևանի արտաքին գովազդի առաջին փառատոնը:	Աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչություն	
4.	Ներդրումային	Նախատեսվում է	Համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում	Աշխատակազմի	

	ծրագրերի իրականացում մասնավոր հատվածի ներգրավմամբ՝ որպես փոխհատուցում գովազդային մակերեսների տրամադրմամբ	իրականացնել ներդրումային ծրագրեր մասնավոր հատվածի ներգրավմամբ՝ որպես փոխհատուցում գովազդային մակերեսների տրամադրմամբ (քաղաքային կահույքի տեղադրում և այլն):	իրականացվել են փողոցային կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներ: Իրականացվել են աշխատանքներ Երևանի բնակիչներին և զբոսաշրջիկներին տեղեկատվության տրամադրման ուղղությամբ: Համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում իրականացվել են Երևան քաղաքի ամանորյա ձևավորման ծրագրեր:	արտաքին ձևավորման և գովազդի վարչություն	
5.	Երևան քաղաքում առկա շենք-շինություններին տեղադրվող գովազդային վահանակների միասնական հայեցակարգի ստեղծում	2016 թվականին նախատեսվում է ստեղծել Երևան քաղաքում առկա շենք-շինություններին տեղադրվող գովազդային վահանակների միասնական հայեցակարգ, որով կհստակեցվեն արտաքին գովազդի տեղադրման վայրերը, գունային լուծումները, ինչպես նաև գովազդային վահանակների արտաքին տեսքը:	Իրականացվել են թվով 60 շենքերի գովազդային անձնագրերի պատրաստման աշխատանքներ, որի էլ կնպաստի Երևան քաղաքում շենք-շինությունների վրա տեղադրված գովազդային վահանակների կանոնակարգմանը և մշակված հայեցակարգին համապատասխանեցմանը:	«Ձևավորում» ՓԲԸ	
6.	Օրենքին չհամապատասխանող, ինքնակամ և ապօրինի տեղադրված	Կշարունակվեն օրենքին չհամապատասխանող, ինքնակամ և ապօրինի տեղադրված	Հայտնաբերված ինքնակամ և ապօրինի տեղադրված թվով 389 գովազդային վահանակներ ապամոնտաժվել են:	Վարչական ժրջաններ Աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչություն	

	գովազդային վահանակների հայտնաբերման և ապամոնտաժման աշխատանքներ	գովազդային վահանակների հայտնաբերման և ապամոնտաժման աշխատանքները, որի արդյունքում կապահովվի գովազդի ոլորտի համապատասխանեցումը «Գովազդի մասին» ՀՀ օրենքին:			
7.	Կամարանցումների վերանորոգում և գունազարդում	2016թ. նախատեսվում է շարունակել նախորդ տարիների վերանորոգված և գունազարդված կամարանցումների վնասված հատվածների նորոգման, թարմացման և թերությունների շտկման աշխատանքները: Նախատեսվում է վերանորոգել և գունազարդել մոտ 40 կամարանցում:	1,04.05.2016թ. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/68-1 Վերանորոգվել է թվով 23 կամարանցում 305 քմ ծավալով: 2,04.05.2016թ. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/68-2 Գունազարդվել է թվով 26 կամարանցում 238 քմ ծավալով:	1, «Ազարակ» ԲԲԸ 2, «Շինհայ-Պո» ՍՊԸ 30.06.2016թ.	
8.	Պանելային շենքերի ֆասադների գունազարդում	Չևավորման ավանդական միջոցներին զուգահեռ կիրականացվեն մոտ 5 պանելային շենքի ֆասադների գունազարդման	Կատարվել են էսքիզային աշխատանքներ:		

		աշխատանքներ:			
9.	Վարչական շրջանների բակային տարածքների գեղագիտական ձևավորում	Շարունակվելու է վարչական շրջանների բակային տարածքների գեղագիտական ձևավորումը, որի շրջանակներում իրականացվելու են նկարագրման աշխատանքներ մոտ 280 բակային տարածքներում:	12 վարչական շրջաններում ընդհանուր առմամբ նկարագրվել է 10686 քմ ծավալով բակային տարածք: Վերանորոգվել է թվով 604 մետաղական կոնստրուկցիա:	Վարչական շրջաններ, համատիրություններ, գլխավոր դիզայներ, ապրիլ-նոյեմբեր	
10	Լանդշաֆտային ձևավորում	Լանդշաֆտային ձևավորման աշխատանքների շրջանակներում նախատեսվում է տեղադրել նոր տիպի ծաղկամաններ, բազրիքներ, խոտածածկերի և ծառերի համար նախատեսված մետաղյա ցանկապատեր և այլն:	Իրականացվել է Սայաթ-Նովա պողոտայի, Գենտրոն թաղապետարանի, Աբովյան պուրակի, Ֆրանիսայի հրապարակի կանաչապատ տարածքի լանդշաֆտների ձևավորման էսքիզների կազմում:	Աշխատակազմի բնապահպանության վարչություն, Երևան քաղաքի վարչական շրջաններ Գլխավոր դիզայներ Հունվար-նոյեմբեր	
11	Երևան քաղաքի փողոցների, հրապարակների, այգիների կահավորում	Երևան քաղաքի փողոցների, հրապարակների, այգիների կահավորման նպատակով, համայնք-մասնավոր հատված համագործակցության արդյունքում,	1.26.04.2016թ. ԵՔ-ԲԸԱՊՁԲ-16/10 12 վարչական շրջաններում տեղադրվել է թվով 300 նստարան: 2.13.07.2016թ. ԵՔ-ԲԸՀԱՊՁԲ-16/2 12 վարչական շրջաններում ընդհանուր առմամբ տեղադրվել է թվով 450 «Երևան» գրվածքով նստարան, 300 ձուլվածքով մեծ աղբաման, 310 ձուլվածքով փոքր աղբաման: 3.28.07.2016թ. ԵՔ-ԲԸՀԱՇՁԲ-16/2	«Համախոհ» ՄՊԸ «Նիկոլ Դուման» ԱԿ	

		<p>նախատեսվում է քաղաքային կահույքի արդիականացման աշխատանքներ, և շուրջ 400-ական նոր նստարանների ու աղբամանների տեղադրում Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում՝ հաշվի առնելով երևանյան ոճի տարրերը:</p>	<p>Կատարվել են հետևյալ աշխատանքները՝ «Երևան» գրվածքով նստարանի ամբողջական վերանորոգում - 126 հատ, մասնակի վերանորոգում -1055 հատ, ձուլվածքով աղբամանի ամբողջական վերանորոգում – 133 հատ, մասնակի վերանորոգում - 879 հատ:</p>	«Ձևավորում» ՓԲԸ	
12	<p>Մետաղյա հենասյունների վերանորոգման և հատուկ պաշտպանիչ նյութով երեսպատման աշխատանքներ</p>	<p>Կիրականացվեն մոտ 620 մետաղյա հենասյունների վերանորոգման և հատուկ պաշտպանիչ նյութով երեսպատման աշխատանքներ՝ զերծ պահելով դրանք գրաֆիտիից, տարատեսակ ներկերից ու հայտարարություններ փակցնելուց, պահպանելով սյան արտաքին մակերեսը կորոզիայից, խոնավության, ագրեսիվ նյութերի և յուղերի ներթափանցումից:</p>	<p>12.05.2016թ. ԵՔ-ԲԸԱՇՇԶԲ-16/69 Իրականացվել են մետաղյա հենասյունների վերանորոգման և հատուկ նյութով երեսպատման աշխատանքներ հետևյալ հասցեներում՝ Պարոնյան փողոց /Բաղրամյան պողոտայից- Չորափնյա փողոց/, Կոմիտասի պողոտա /Վաղարշյան փողոցից մինչև Լամբադա կամուրջով մինչև Դավիթ Անհաղթի փողոց/, Ալեք Մանուկյան փողոց, Ազատության պողոտա /Պարույր Սևակի փողոցից մինչև Սարալանջի փողոց/, Բաղրամյան պողոտա /Պարոնյան փողոց- Բարեկամության մետրո/, Հերացու փողոց /Բելաջիո ռեստորանից-Կորյունի փողոց: Ընդհանուր առմամբ վերանորոգվել և հատուկ նյութով երեսպատվել է թվով 656 հատ 1822 քմ ծավալով մետաղյա հենասյուն:</p>	«Սասունասար» ՍՊԸ 20.08.2016թ.	

13	<p>Երևան քաղաքի բռնադատության ստեղծման ծրագիր</p>	<p>Երևան քաղաքի բռնադատության ստեղծման ծրագրի շրջանակներում նախատեսվում է տարբերանշանի ընտրություն, լոգոտիպերի մշակում, տարբեր միջոցառումների ժամանակ քաղաքի տոնական ձևավորման վերաբերյալ մշակվելիք հայեցակարգի և գեղարվեստական բովանդակությանը վերաբերող ընդհանուր պահանջների կիրառում:</p>	<p>Երևանի բրենդի վիզուալացման և տեղայնացման աշխատանքների շրջանակներում կազմվել է՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Երևանի մետրոպոլիտենի 30 ամյակի միջոցառման լոգոտիպ, 2. Հունվարի 28-ի Բանակի օրվան նվիրված լոգոտիպ, 3. Մարտի 8-ի Կանանց միջազգային օրվա լոգոտիպ, 4. Ապրիլի 7-ի լոգոտիպ, 5.«Երևանյան ամառ» միջոցառման լոգոտիպ, 6.«Համով-Հոտով Երևան»-ի լոգոտիպ, 7.«Զազը հանուն համամարդկային արժեքների» լոգոտիպ՝ Զազի միջազգային օրվա շրջանակներում, 8.«Welcome to Yerevan» Երևանի բոլոր մուտքերի համար նախատեսված բաներներ՝ լոգոտիպով, 9. Նուբարաշեն և Շենգավիթ վարչական շրջանների շախմատի դպրոցների լոգոտիպեր, 10. Միջազգային տուրիստական փառատոնի երևանյան տաղավարի լոգոտիպ, 11. «Խոսող խաղալիք» փառատոնի լոգոտիպ, 12. «Հացը լեռներում» փառատոնի լոգոտիպ, 13. «Զմերուկի չորրորդ փառատոն» միջոցառման լոգոտիպ, 14. «Երևանի գարեջրի փառատոն» միջոցառման լոգոտիպ, 15. «Մոտոկրոսսի միջազգային առաջնություն» միջոցառման լոգոտիպ, 16. «Երևան օփեն» շախմատային միջազգային միջոցառման լոգոտիպ, 17. Երևան քաղաքի թանգարանների ընդհանուր վահանակների ձևավորման նախագիծ-առաջարկ, 18. Մշակութային արժեք ունեցող շենքերի գովազդային հայեցակարգի նախագիծ-առաջարկ, 19. Երևան քաղաքի թանգարանների՝ դրսում տեղադրվող ընդհանուր վահանակների նախագիծ-առաջարկ, 20. Վերնիսաժի տաղավարների նախագիծ-առաջարկ և տաղավարների բաներների ձևավորման նախագիծ-առաջարկ, 21. Տոնական դրոշակակիրի նախագիծ-առաջարկ, 22. Քաղաքային վահանակների ընդհանուր տեսքի նախագիծ-առաջարկ, 	<p>Երևանի գլխավոր դիզայներ,</p> <p>Աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչություն</p> <p>Հունվար-դեկտեմբեր</p>	
----	---	--	--	---	--

			<p>23. Թերթի և ամսագրերի վաճառման կետի տաղավարի նախագիծ-առաջարկ,</p> <p>24.« Պատվավոր քաղաքացի» մեդալի նախագիծ-առաջարկ,</p> <p>25. Երևանի պատմության թանգարանի 85 ամյակին նվիրված միջոցառումների լոգոտիպ,</p> <p>26. Կարեն Դեմիրճյանի թանգարանի 15 ամյակին նվիրված միջոցառումների լոգոտիպ,</p> <p>27. Երևան քաղաքի ներդրումային ծրագրերի բրոշյուրի եռալեզու նախագիծ-առաջարկ,</p> <p>28. Հյուսիսային պողոտայի գովադային անձնագրի նախագիծ-առաջարկ,</p> <p>29. Ամանոր 2017-ի լոգոտիպ:</p>		
14	Շենք-շինությունների, բազմաբնակարան շենքերի արտաքին ձևավորման գովազդային վահանակների տեղադրման անձնագրերի կազմում	Նախատեսվում է շենք-շինությունների, բազմաբնակարան շենքերի արտաքին ձևավորման գովազդային վահանակների տեղադրման անձնագրերի կազմում:	Իրականացվել է թվով 60 շենքերի գովազդային անձնագրերի պատրաստման աշխատանքներ:	Աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչություն	
15	Տոնական միջոցառումների, թեմատիկ բաներների, հրավիրատոմսերի, շնորհակալագրերի, տաղավարների, ֆլայերների, ինստալյացիաների, ստիկերների ձևավորում	Նախատեսվում է շարունակել տոնական միջոցառումների, թեմատիկ բաներների, հրավիրատոմսերի, շնորհակալագրերի, տաղավարների, ֆլայերների, ինստալյացիաների, ստիկերների ձևավորումն ու կազմումը:	Երևան քաղաքում իրականացված միջոցառումների շրջանակներում իրականացվել է տոնական միջոցառումների թեմատիկ բաներների, հրավիրատոմսերի, շնորհակալագրերի, տաղավարների, ֆլայերների, ինստալյացիաների, ստիկերների ձևավորումն և կազմակերպման աշխատանքներ (94 միջոցառում):	Երևանի գլխավոր դիզայներ Աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչություն «Ձևավորում» ՓԲԸ: «Ինտեր պրինտ» ՓԲԸ: Համայնք-մասնավոր հատված: Հունվար-դեկտեմբեր	

16	Քաղաքային միջոցառումների շրջանակներում Երևան քաղաքում ձևավորման և դրոշակագարդման աշխատանքներ	Նախատեսվում է քաղաքային միջոցառումների շրջանակներում իրականացնել Երևան քաղաքում ձևավորման և դրոշակագարդման աշխատանքներ, այդ թվում նաև համայնք-մասնավոր համագործակցությամբ (Սուրբ Սարգիս, Մայիսի 1, Մայիսի 9, Մայիսի 28, Բանակի օր, Երեխաների պաշտպանության օր, Վերջին զանգ, Երևանյան ամառ, Էրեբունի-Երևան, Ամանոր, Սահմանադրության օր, Անկախության օր):	Իրականացվել են ձևավորման և դրոշակագարդման աշխատանքներ քաղաքային միջոցառումների շրջանակներում, մասնավորապես հետևյալ տոն օրերին՝ Սուրբ Սարգիս, Մայիսի 1, Մայիսի 9, Մայիսի 28, Բանակի օր, Երեխաների պաշտպանության օր, Վերջին զանգ, Երևանյան ամառ, Էրեբունի-Երևան, Ամանոր, Սահմանադրության օր, Անկախության օր:	«Ձևավորում» ՓԲԸ	
17	Նորաճ նոր Մայր Տոնաձառի ձեռքբերման, տոնական լուսավորման և ձևավորման աշխատանքներ	Նախատեսվում է իրականացնել նորաճ նոր Մայր Տոնաձառի ձեռքբերման, տոնական լուսավորման և ձևավորման աշխատանքներ:	Իրականացվել է Հանրապետության հրապարակում Ամանորյա Մայր տոնաձառի, վարչական շրջանների արհեստական տոնաձառների տեղադրման և ձևավորման աշխատանքներ, Կենտրոն վարչական շրջանի մի շարք պուրակներում՝ լուսային կամարանցումների պատրաստում և տեղադրում, Ազատության հրապարակում՝ սառցե քաղաքի պատրաստում և տեղադրում, ինչպես նաև Երևանի գլխավոր փողոցների լուսային ձևավորում: Համայնք-մասնավոր հատված համագործակցության արդյունքում իրականացվել է տնտեսվարողների հարակից տարածքների տոնական ձևավորում:	«Ձևավորում» ՓԲԸ: Համայնք-մասնավոր հատված	

18	Նոր փողոցային ուղենիշերի, ծառաբների մետաղական ծածկույթների, անվճար հայտարարությունների տախտակների, հեծանվային կանգառների, քաղաքային նշանակության միջոցառումների համար նորաճ քաղաքային ինստալյացիաների և դրոշակահենքերի ձեռքբերման աշխատանքներ	Կիրականացվի նաև նոր փողոցային ուղենիշերի, ծառաբների մետաղական ծածկույթների, անվճար հայտարարությունների տախտակների, հեծանվային կանգառների, քաղաքային նշանակության միջոցառումների համար նորաճ քաղաքային ինստալյացիաների և դրոշակահենքերի ձեռքբերման աշխատանքներ:	Իրականացվել է թվով 30 ծառաբների մետաղական ծածկույթի կահավորում, 100 անվճար հայտարարությունների տախտակների պատրաստում և տեղադրում, կամուրջների 75 դրոշակահենքերի պատրաստում և տեղադրում, էլեկտրասյուների վրա 700 նորաճ դրոշակահենքերի պատրաստում և տեղադրում, փողոցային ուղենիշերի նորոգում և հեծանվային կանգառների նորոգում:	«Ձևավորում» ՓԲԸ	
19	Օտարերկրյա նախագահների, պատվիրարկությունների պետական և պաշտոնական այցերի ժամանակ նախատեսվում է իրականացնել դրոշակազարդման աշխատանքներ	Օտարերկրյա նախագահների, պատվիրարկությունների պետական և պաշտոնական այցերի ժամանակ նախատեսվում է իրականացնել դրոշակազարդման աշխատանքներ:	Իրականացվել է թվով 7 օտարերկրյա նախագահների պատվիրարկությունների պետական և պաշտոնական այցերի հետ կապված ձևավորման և դրոշակազարդման աշխատանքներ:	«Ձևավորում» ՓԲԸ	
Շինարարություն և բարեկարգում					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ

1.	2.	3.	4.	5.	6.
1.	Փողոցների, բակային տարածքների և մայրերի ընթացիկ ասֆալտապատում	2016թ. Ասֆալտապատման աշխատանքներ կիրականացվեն 12 վարչական շրջանների փողոցներում, բակերում, մայրերում, ինչպես նաև առկա գրունտային ճանապարհների: Փողոցները պատշաճ մակարդակի պահպանելու նպատակով կշարունակվեն անհրաժեշտ ծավալի ճաքալցման և փոսային նորոգման աշխատանքները:	Կատարվել է 386 փողոցների, շուրջ 1005 բակային տարածքների, թաղամասերի և միջբակային ճանապարհների ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ շուրջ 800 000քմ ծավալով: 1. հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/81-1, 29.04-01.10.16թ. Աջափնյակ, Դավթաշեն, Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններում՝ 83099քմ; 2. հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/81-2, 26.04-01.10.16թ. Ավան, Նոր Նորք և Նորք-Մարաշ վարչական շրջաններում՝ 142540քմ; 3. հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/81-3, 26.04-01.10.16թ. Արաբկիր և Դավթաշենում վարչական շրջաններում՝ 69617քմ: 4. հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/81-4, 29.04-01.10.16թ. Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նուբարաշեն և Շենգավիթ վարչական շրջաններում՝ 87576քմ; 5. հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/81-5, 26.04-01.10.16թ. Կենտրոն, Ավան, Նոր Նորք և Նորք-Մարաշում վարչական շրջաններում՝ 79887քմ; 6. հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/81-6, 29.04-01.10.16թ. Մալաթիա-Սեբաստիա, Նուբարաշեն և Նորագավթում վարչական շրջաններում՝ 80516քմ: 7. հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/81-7, 29.04-01.10.16թ. Շենգավիթ վարչական շրջանում՝ 88976քմ: 8. հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/81-8, 26.04-01.10.16թ. Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում՝ 34321քմ:	1.«Ճառագայթ» ՓԲԸ 2. «Խաչաբ» ՍՊԸ 3.«Կապավոր» ՍՊԸ 4. «ԱՎԱ-2000» ՍՊԸ 5. «Լիլիթ-87» ՍՊԸ 6. «Սահակյանշին» ՓԲԸ 7.«Նարինանյան» ՍՊԸ 01.10.16թ. 8.«ԱԱԲ Պրոեկտ» ՍՊԸ	
3.	Փողոցների ա/բ ծածկի ճաքալցում		ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/81-2, 26.04-01.10.16թ. 12 վարչական շրջանների 205 փողոցներում կատարվել է 575350 գծմ ճաքալցում:	«Խաչաբ» ՍՊԸ	
4.	Գրունտային ճանապարհների նորոգում		ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/122, 27.09-05.12.16թ. Հիմնանորոգվել է Նոր Խարբերդի կենտրոնական ճանապարհը՝ 5790քմ: հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/98, 31.05-31.08.16թ Իրականացվել է Տիգրան Պետրոսյան փողոցից Դավթաշենի 2-րդ թաղամաս տանող ճանապարհի բարեկարգման և լայնացման աշխատանքներ (3700քմ):	«Նարինանյան» ՍՊԸ «Շինֆորում» ՍՊԸ	
5.	Մայրերի ձևավոր սալիկների և եզրաքարերի	2016թ. մայրերի վերանորոգման, եզրաքարերի	1.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/56 2. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/58 3. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/43	1.Մայր - «Սամ Կար Շին» ՍՊԸ 24.03-25.10.16թ.,	

	վերանորոգում, մետաղական ցանկապատերի ներկում	վերանորոգման և մետաղական ցանկապատերի ներկման աշխատանքներ կիրականացվեն մի շարք վարչական շրջաններում:	Կատարվել է շուրջ 4000քմ մայթերի սալիկների վերանորոգման աշխատանքներ, որից 1423 քմ բետոնե սալիկների վերանորոգում՝ հնի օգտագործմամբ, 2656 քմ՝ նոր բետոնե և 45քմ բազալտե սալիկներ: Վերանորոգվել են 222զծմ բետոնե եզրաքարեր, 742 զծմ բազալտե՝ հնի օգտագործմամբ և 1090 զծմ նոր բազալտե եզրաքարեր: Կատարվել են 3740 քմ մետաղական կոնստրուկցիաների ներկման աշխատանքներ:	2.Եզրաքար- «ԱԲԱԿ» ՍՊԸ 23.03-15.11.16 3.Ցանկապատ- «Շինհայ ՊՈ» ՍՊԸ 18.03-30.09.16թ.	
6.	Հենապատերի նորոգում-վերականգնում	Նախատեսվում է իրականացնել շուրջ 25 հենապատերի ընթացիկ նորոգման աշխատանքներ:	հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/54 12.05-30.10.16թ. Վերանորոգվել է թվով 10 հենապատեր. 1.Տերյան-Սարալանջ փողոցների հատման հատվածի հենապատ 2. Սարալանջ-Ազատության փողոցների հատվածի հենապատ 3. Բաղրամյան 1-ին նրբ. հենապատ 4. Մոլդովական 25/3 հասցեի հենապատ 5. Վ.Դավթյանի փողոցի հենապատ 6. Դրոյի հ.5 շենքի հարակից հենապատ 7. Ծովակալ Իսակովի հուշարձանի հարակից հենապատ 8. Շահումյանի հուշարձանի հարակից հենապատ 9. Ռուբինյանց փողոցի հենապատ 10. Գալոյան փողոցի հենապատ:	«Կամպարե» ՍՊԸ	
7.	բների կառուցում	Թեքահարթակների կառուցման ծրագիրը շարունակական է և կիրականացվի նաև 2016թ.՝ ընդգրկելով Երևանի բոլոր վարչական շրջանները: Նախատեսված է կառուցել 285 թեքահարթակ:	հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/55 25.03-30.10.16թ Կառուցվել է 275 թեքահարթակ և տեղադրվել է կույրերի համար նախատեսված 73 նախագգուշացնող հատուկ սալիկներով հարթակներ:	«Արթմաշին» ՍՊԸ	
8.	Վարձակալությամբ տրված ստորգետնյա հետիոտն	Վարձակալությամբ տրված ստորգետնյա հետիոտն	Երևանի քաղաքապետարան-վարձակալ համագործակցության շրջանակում՝ ընթացիկ նորոգման աշխատանքներ են իրականացվել վարձակալությամբ տրված թվով 16 ստորգետնյա հետիոտն	Աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչություն	

	անցումներում կիրականացվեն ընթացիկ նորոգման և հիմնանորոգման աշխատանքներ	անցումներում կիրականացվեն ընթացիկ նորոգման և հիմնանորոգման աշխատանքներ՝ Երևանի քաղաքապետարան-վարձակալ համագործակցության շրջանակում:	անցումներում:		
9.	Շենքերի ճակատային մասերի ընթացիկ նորոգում և քարերի մաքրում, պատշգամբների վերանորոգում	2016թ. ծրագրերով կիրականացվեն շուրջ 15 շենքերի ճակատային մասերի ընթացիկ նորոգման և քարերի մաքրման աշխատանքներ, կվերանորոգվի շուրջ 200 պատշգամբ:	հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/67-1 15.06-30.09.16թ. 15.10.16թ. Վերանորոգել են 138 պատշգամբներ՝ 1.Աջափնյակ վարչական շրջանում՝ թվով 14 պատշգամբ 2.Արաբկիր վարչական շրջանում՝ թվով 17 պատշգամբ 3.Ավան վարչական շրջանում՝ թվով 10 պատշգամբ 4.Մալաթիա-Մեֆաստիա վարչական շրջանում՝ թվով 12 պատշգամբ 5.Նորք-Մարաշ և Նուբարաշեն վարչական շրջաններում թվով 6 պատշգամբ 6.Նոր Նորք վարչական շրջանում՝ թվով 21 պատշգամբ 7.Շենգավիթ վարչական շրջանում՝ թվով 18 պատշգամբ 8.Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում՝ թվով 6 պատշգամբ 9. Կենտրոն վարչական շրջանում՝ թվով 17 պատշգամբ 10. Էրեբունի վարչական շրջանում՝ թվով 17 պատշգամբ	1-8.«Կամպարե» ՍՊԸ 9.«Ժիլո» ԱԿ 10.«Բիդեք» ՍՊԸ	Բյուջեով հաստատված ծրագրով նախատեսված բոլոր պատշգամբները վերանորոգվել են:
10	Կամրջային կառուցվածքների սպասարկում, շահագործում, վերականգնում ու ամրացում	Կամրջային կառուցվածքների սպասարկում, շահագործում, վերականգնում ու ամրացում	ԵՔ-ԲԸՕՁԲ-16/2026.01-25.12.16թ., Իրականացվել են թվով 37 կամուրջների և կամրջային կառուցվածքների շահագործման, պահպանման աշխատանքներ: հ.ԵՔ-ՊԸԱՇՁԲ-16/4, 21.07-04.09.16 Կատարվել են Գ.Նժդեհի փողոցի հարակից հատվածում Ողջաբերդ գետի կամրջի վերանորոգման աշխատանքները:	«Կամուրջշին» ՓԲԸ «Սասունասար» ՍՊԸ	
11	Հանգստի գոտիների ստեղծում, բակային տարածքների բարեկարգում	2016թ. նախատեսված է բարեկարգել Նուբարաշեն վարչական շրջանի Կենտրոնական	հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/91 08.06-01.09.16թ. Բարեկարգվել է Նուբարաշեն վարչական շրջանի Կենտրոնական զբոսայգին:	«Սամ Կար Շին» ՍՊԸ,	

		<p>զբոսայգին:</p> <p>2016թ. ծրագրով կկառուցվի ևս 9 մինի ֆուտբոլի դաշտ.</p> <ul style="list-style-type: none"> - Աջափնյակ վարչական շրջան Շիրազի.38 շենքի բակ, - Արաբկիր վարչական շրջան Ադոնցի.13 շենքի դիմաց, - Դավթաշեն վարչական շրջան 4-րդ թաղ. հ.հ.38, 39, 40, 41, 42, 43, 44 շենքերի բակ, - Էրեբունի վարչական շրջան Ավանեսովի հ.2 շենքի հարևանությամբ, - Կենտրոն վարչական շրջան Դեմիրճյան հ. 29 շենքի բակում, - Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան Անդրանիկի.34 շենքի բակ, - ՆորՆորք վարչական շրջան Մուղովական 6/1 և 6/2 շենքերի հարակից տարածք, - Շենգավիթ վարչական շրջան Թադևոսյան 11 շենքի բակ, - Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան 	<p>1ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/48-1, 16.06-30.08.16թ. 2ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/48-1, 16.06-30.08.16թ. 3ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/48-2, 14.06-30.08.16թ.</p> <p>Կառուցվել են մինի ֆուտբոլի դաշտեր հետևյալ հասցեներում</p> <ul style="list-style-type: none"> - Աջափնյակ վարչական շրջան Շիրազի.38 շենքի բակ, - Արաբկիր վարչական շրջան Ադոնցի.13 շենքի դիմաց, - Դավթաշեն վարչական շրջան 4-րդ թաղ. հ.հ.38, 39, 40, 41, 42, 43, 44 շենքերի բակ, - Էրեբունի վարչական շրջան Ավանեսովի հ.2 շենքի հարևանությամբ, - Կենտրոն վարչական շրջան Դեմիրճյան հ. 29 շենքի բակում, - Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան Անդրանիկի.34 շենքի բակ, - ՆորՆորք վարչական շրջան Մուղովական 6/1 և 6/2 շենքերի հարակից տարածք, - Շենգավիթ վարչական շրջան Թադևոսյան 11 շենքի բակ, - Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան Լեփսուսի փողոցի հ.41 շենքի բակ: 	<p>1,2 «Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ 3«Զեյթուն» Կահույքի ֆաբրիկա ԲԲԸ</p>	
--	--	--	--	--	--

		Լեփսուսի փողոցի հ.41 շենքի բակ:			
13	Երևան քաղաքի ջրային կառույցների սպասարկման ու շահագործման ծառայությունների իրականացում	Ջրային կառույցների վերականգնման ծրագիրը կրում է շարունակական բնույթ: 2016թ. շարունակվելու են մայրաքաղաքի ջրային կառույցների վերանորոգման, վերազինման, պահպանման և շահագործման աշխատանքները: Նախատեսվում է համայնք-մասնավոր հատված շարունակական համագործակցության միջոցով իրականացնել բարեկարգման կարիք ունեցող շատրվանների վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ:	ԵՔ-ԲԸԾՁԲ-16/19 Շահագործվում և սպասարկվում են թվով 33 ջրային կառույցներ: Համայնք-մասնավոր հատված շարունակական համագործակցության միջոցով ըստ անհրաժեշտության կատարվել է բարեկարգման կարիք ունեցող շատրվանների մաքրման և վերանորոգման աշխատանքներ:	«Ջրային կառույցների» ՓԲԸ 22.01-31.12.16թ.	
14	Հուշարձանների պահպանում (պատվանդանների վերանորոգում, կառուցում)	Հուշարձանների պահպանում (պատվանդանների վերանորոգում, կառուցում)	1, հ. ԳՆ-1, 26.01-30.04.16թ. 2, հ. ԳՆ-2, 26.01-20.03.16թ. Կատարվել են Գարեգին Նժդեհի պատվանդանի կառուցման, քարեգործական և տարածքի բարեկարգման աշխատանքները:	1, «ՏՈՂ-ՇԵԽԵՐ» ՍՊԸ 2, «Ներսեսյան» ՍՊԸ	
15	Կրթական, նախադպրոցական, արտադպրոցական և	2016թ. ծրագրով նախատեսվում է Երևանի	Կատարվել են 21 մանկապարտեզների /23 չավաբաժիններով/ հիմնանորոգման աշխատանքներ:		

	մարզական հաստատությունների հիմնանորոգում	ենթակայության 22 մանկապարտեզներում իրականացնել մասնակի նորոգման և հիմնանորոգման աշխատանքներ: Հիմնանորոգման աշխատանքներ կկատարվեն երաժշտական դպրոցներում, ստեղծագործական կենտրոններում, արվեստի դպրոցներում և մարզադպրոցներում:			
			1. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/46-6, 26.04-25.08.16թ. Աջափնյակի հ.41	«Բիդեք» ՍՊԸ	
			2. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/46-6, 26.04-25.08.16թ. Աջափնյակի հ.50	«Բիդեք» ՍՊԸ	
			3. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/93-3, 24.05-25.08.16թ. Արաբկիրի հ.25	«Տրանսունիվերսալ» ՓԲԸ	
			4. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/93-4, 24.05-25.08.16թ. Ավանի հ.51	«Մարտշին» ՍՊԸ	
			5. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/93-4, 24.05-25.08.16թ. Ավանի հ.52	«Մարտշին» ՍՊԸ	
			6. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/93-1, 24.05-25.08.16թ. Ավանի հ.54	«Գամշին» ՍՊԸ	
			7. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/93-2, 24.05-25.08.16թ. Ավանի հ.56	«Բնտերեվրոս-Արգոս» ՍՊԸ	
			8. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/93-2, 24.05-25.08.16թ. Ավանի հ.57	«Բնտերեվրոս-Արգոս» ՍՊԸ	
			9. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/46-2, 26.04-25.08.16թ. Դավթաշենի հ.58	«Վ.Վարդանյան» ՍՊԸ	

		10. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/46-1, 26.04-25.08.16թ. Դավթաշենի հ.59	«ԱՐՄԱՇ» ՍՊԸ	
		11. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/46-4, 26.04-25.08.16թ. Դավթաշենի հ.60-ճաշարանի վերանորոգում	«Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ	
		12. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/46-3, 26.04-25.08.16թ. Դավթաշենի հ.60-լուսամուտների փոխում	«Սամ-Շինուժ» ՍՊԸ	
		13. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/46-5, 26.04-25.08.16թ. Դավթաշենի հ.61	«Ագարակ» ԲԲԸ	
		14. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/46-6, 26.04-25.08.16թ. Էրեբունու հ. 67-ջեռուցում ավարտվել է	«Բիդեք» ՍՊԸ	
		15. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/64, 07.04-25.08.16թ. Էրեբունու հ.69	«Բիդեք» ՍՊԸ	
		16. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/46-8, 26.04-25.08.16թ. Կենտրոնի հ.3	«Լևոն և Աննա» ՍՊԸ	
		17. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/46-9, 26.04-25.08.16թ. Կենտրոնի հ.17	«Հովարմկարշին» ՍՊԸ	
		18. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/46-5, 26.04-25.08.16թ. Մալաթիա-Սեբաստիայի հ.89	«Ագարակ» ԲԲԸ	
		19. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/46-7, 26.04-25.08.16թ. Նոր Նորքի հ.99-դռների, լուսամուտների փոխում	«Արալպլաստ» ՍՊԸ	
		20. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/46-7, 26.04-25.08.16թ. Նոր Նորքի հ.99-տանիքի նորոգում	«Արալպլաստ» ՍՊԸ	
		21. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/46-7, 26.04-25.08.16թ. Նոր Նորքի հ.105	«Արալպլաստ» ՍՊԸ	
		22. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/53, 06.04-25.08.16թ. Շենգավիթի հ. 139	«Հովարմկարշին» ՍՊԸ	
		23. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/46-4, 26.04-25.08.16թ. Քանաքեռ-Զեյթունի հ.162	«Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ	
		Հիմնանորոգման աշխատանքներ են կատարվել 4 երաժշտական դպրոցներում:		
		1. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/45-2, 06.04-25.08.16թ Ա. Ցիցիկյանի անվան	«Էլդոգար» ՍՊԸ	
		2. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/45-2, 06.04-25.08.16թ	«Էլդոգար» ՍՊԸ	

			Ա. Սպենդիարյանի անվան հ.1		
			3. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/45-3, 06.04-25.08.16թ. Ս.Ջրբաշյանի անվան հ.8	«Հովարմկարշին» ՍՊԸ	
			4. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/45-1, 06.04-25.08.16թ. Ս. Բարխուդարյանի անվան հ.2	«Բաղրամյանշին» ԲԲԸ	
			Հիմնանորոգման աշխատանքներ են կատարվել 7 մարզադպրոցներում:		
			1,ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/92, 13.05-31.08.16թ. Արաբկիրի համալիր մարզադպրոց	«Էլդոգար» ՍՊԸ	
			ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/49-1, 07.04-25.08.16թ. 2,Ալբերտ Գրիգորյանի անվան սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց 3, Դաֆֆու անվ. դպրոցում գործող մարզադպրոց (Կոմիտասի 37) 4,Ավանի մարզադպրոց 5,Սալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի մարզադպրոց (Անդրանիկի36/9) 6,Նոր Նորք վարչական շրջանի հ.5/3 մարզադպրոց	«Կոսմես» ՍՊԸ	
			7,ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/49-2, 07.04-25.08.16թ. Դավթաշեն վարչական շրջանի «Հանդբոլի և մասնագիտացված այլ մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց	«Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ	
			Նորք-Մարաշ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններում կառուցվել են շախմատի դպրոցներ:		
			1. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/49-1, 07.04-25.08.16թ. Նորք-Մարաշի հ.157 դպրոցի մասնաշենքում	«Կոսմես» ՍՊԸ	
			2. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/94, 12.05-30.08.16թ. Քանաքեռ-Զեյթունի հ.44 դպրոցի մասնաշենքի 2-րդ հարկում	«Էրան» ՍՊԸ	
			Հիմնանորոգման աշխատանքներ են կատարվել 4 (5 չափաբաժին)		
			1. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/47-4, 13.04-25.08.16թ. Աջափնյակի մանկապատանեկան տեխնիկական կենտրոն	«Հովարմկարշին» ՍՊԸ	
			2. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/47-2, 13.04-25.08.16թ. «Զարթոնք» մանկական գեղարվեստական դաստիարակության կենտրոն-հիմնանորոգում	«Մեծ Հիմք» ԱԿ	
			3. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/47-3, 13.04-25.08.16թ. «Զարթոնք» մանկական գեղարվեստական դաստիարակության	«Տրանսունիվերսալ» ՍՊԸ	

			կենտրոն-ջեռուցում		
			4. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/47-1, 13.04-25.08.16թ. Ա. Ղուկյանի անվան ստեղծագործական կենտրոն	«Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ	
			5. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/47-1, 13.04-25.08.16թ. Շենգավիթի Տեխնիկների կենտրոն	«Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ	
16	Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում	Երևանի քաղաքապետարանի ենթակայության 12 պոլիկլինիկաներում ջեռուցման և վերանորոգման աշխատանքներ	Կատարվել են ջեռուցման հակարգերի կառուցման և լուսամուտների փոխարինման աշխատանքներ: հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/101-1, 29.06-31.08.16թ. 1.«Նորագավիթ պոլիկլինիկա» ՓԲԸ հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/101-1, 29.06-31.08.16թ. 2.«Սրտաբանության ԳՀԻ» ՓԲԸ հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/101-2, 29.06-31.08.16թ. 3.«Թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/101-3, 29.06-31.08.16թ. 4.«Կարմիր Բլուր պոլիկլինիկա» ՓԲԸ հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/101-4, 29.06-31.08.16թ. 5.«Նուբարաշեն պոլիկլինիկա» ՓԲԸ ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/101-1, 29.06-31.08.16թ . 6.«Արշակունյաց պոլիկլինիկա» ՓԲԸ հ. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/101-5, 29.06-31.08.16թ. 7.«Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/101-6, 29.06-31.08.16թ. 8.«Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/101-7, 29.06-31.08.16թ 9.«Թիվ 5 պոլիկլինիկա» ՓԲԸ ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/105-1, 20.07-30.09.16թ. 10.«Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի լուսամուտների փոխման աշխատանքներ ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/105-2, 20.07-30.09.16թ. 11.«Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի ջեռուցման աշխատանքներ ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/112, 19.08-20.11.16թ. 12«Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» ՓԲԸ	1.«Վահախաչին» ՍՊԸ 2.«Վահախաչին» ՍՊԸ 3.«Վ.Վարդանյան» ՍՊԸ 4.«Դի.Ջի.Էյ.Թի» ՍՊԸ 5.«Ազարակ» ԲԲԸ 6.«Վահախաչին» ՍՊԸ 7.«Տրանսունիվերսալ» ՓԲԸ, 8.«Շինհայ-ՊՈ» ՍՊԸ 9.«Արտյոմ Մինասյան» ՍՊԸ 10. «Ոսկանյանշին» ՍՊԸ 11.«Դի.Ջի.Էյ.Թի» ՍՊԸ 12.«Հիդրովերանորոգում» ՍՊԸ 13, 14,«Արտ Պլասա» ՍՊԸ 15, 16,«Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ 17,«Շինարար-97» ՍՊԸ	

			<p>ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/115-2, 13.09-01.12.16թ. 13.«Նորագավիթ պոլիկլինիկա» ՓԲԸ 14.«Թիվ 12 պոլիկլինիկա» ՓԲԸ ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/115-1, 13.09-01.12.16թ. 15. «Թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ 16. «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/115-3, 13.09-01.12.16թ. 17. «Նուբարաշեն պոլիկլինիկա» ՓԲԸ 18. Բարերար Սառա Եսայանի կողմից կատարվել է նվիրատվություն, որի շնորհիվ հիմնանորոգվել է Կ.Եսայանի անվ. Պոլիկլինիկա ՓԲԸ-ն:</p> <p>«Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» ՓԲԸ-ի շենքի վերանորոգման աշխատանքները դադարեցվել են անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով: Աշխատանքները կշարունակվեն 2017թ-ին:</p>		
17	Դպրոցների հիմնանորոգում	Երևանի հ.88 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքներ	<p>ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/52 18.03-30.09.16թ. Իրականացվել է Երևանի հ.88 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքներ: հ.ԵՔ-ՊԸԱՇՁԲ-16/6, 12.08-31.08.16թ. Իրականացվել է Երևանի հ.88 հիմնական դպրոցի 3-րդ և 4-րդ մասնաշենքերի տանիքների և բու.ֆետի նորոգման աշխատանքներ:</p>	«Մեծ Հիւր» ԱԿ «Գամշին» ՍՊԸ,	
18	4-րդ կարգի վթարային շենքի քանդման աշխատանքներ	Կապամոնտաժվի Նոր Արեշի 35-րդ փողոցի հ.127/1 հանրակացարանային շենքը	<p>ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/51 Իրականացվել է 4-րդ կարգի վթարային շենքի քանդման աշխատանքներ Արեշի 35-րդ փողոցի հ.127/1 հասցեով:</p>	«Բիդեք» ՍՊԸ 21.03-18.09.16թ.	
Անշարժ գույքի կառավարում					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1.	2.	3.	4.	5.	6.
1.	ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի հ.947-Ն	2016 թվականներին շարունակվելու է ՀՀ կառավարության 2005	ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի «Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» հ.947-Ն որոշման համաձայն հաշվետու ժամանակահատվածում	Աշխատակազմի անշարժ գույքի վարչություն	

	<p>որոշման համաձայն, զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկներ ի) կարիքավոր ընտանիքների հաշվառման ընդունելու և ցուցակները ՀՀ պաշտպանության նախարարություն ներկայացնելու գործընթացի իրականացում</p>	<p>թվականի հունիսի 9-ի «Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» հ.947-Ն որոշման համաձայն զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) կարիքավոր ընտանիքներին հաշվառման ընդունելու և ցուցակները ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացնելու գործընթացը:</p>	<p>ուսումնասիրվել է զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) կարիքավոր ընտանիքների գործեր: Թվով 24 ընտանիքների մասով կայացվել են Երևանի քաղաքապետի որոշումներ՝ բնակարանային պայմանների բարելավման հաշվառման վերցնելու մասին: Նշված ընտանիքների ցուցակը ուղարկվել է ՀՀ պաշտպանության նախարարություն:</p>	<p>հունվար-դեկտեմբեր</p>	
<p>2.</p>	<p>Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի (բնակելի տների) բնակիչների անվտանգության ապահովման, անկանխատեսելի հետևանքները բացառելու, դրանցում բնակվող բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու հետ կապված</p>	<p>2016 թվականին նախատեսվում է շարունակել Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի (բնակելի տների) բնակիչների անվտանգության ապահովման, անկանխատեսելի հետևանքները բացառելու, դրանցում բնակվող բնակիչների</p>	<p>Բնակարաններ են տրամադրվել չորրորդ կարգի վթարային՝ Շինարարների փողոցի հ.35 շենքի քանդման ենթակա մուտքի, Միսակյան փողոցի հ.3, Տ.Մեծ պողոտայի հ.47 շենքերում բնակվող 52 ընտանիքների՝ նոր կառուցված Շինարարների փողոցի հ.6/1, Շինարարների փողոցի հ.15, Միսակյան փողոցի հ.22 բազմաբնակարան շենքերում:</p>		

	աշխատանքների կատարում	բնակարանային խնդիրները լուծելու հետ կապված աշխատանքները:			
3.	Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, սակայն դեռևս չգրանցված գույքերի նկատմամբ իրավունքի պետական գրանցման աշխատանքների կազմակերպում	«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, ինչպես նաև ՀՀ կառավարության համապատասխան որոշումների հիման վրա Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, սակայն դեռևս չգրանցված գույքերի նկատմամբ իրավունքի պետական գրանցման աշխատանքների կազմակերպում:	Իրականացվել են աշխատանքներ՝ ուղղված Երևան համայնքի սեփականությունը համարվող գույքային միավորների հաշվառման, չափագրման, գույքագրման և դրանց նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցման ապահովմանը: Արդյունքում իրավունքների պետական գրանցում է կատարվել թվով 105 գույքային միավորների նկատմամբ:		
4.	Երևան քաղաքի դեռևս չանվանակոչված և անվանափոխության ենթակա պողոտաների, փողոցների և		ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային, աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների լիազոր մարմին սահմանելու մասին» հ.2387-Ն որոշման համաձայն կայացվել է Երևանի քաղաքապետի		

	<p>հրապարակների անվանման և սեփականության վկայական ունեցող շենք, շինությունների և հողամասերի հասցեավորման աշխատանքների կատարում</p>		<p>թվով 1102 որոշում, հասցեավորվել է թվով 6926 շենք, շինություն և այլ գույքային միավորներ:</p>		
<p>5.</p>	<p>Երևան համայնքի սեփականություն հանդիսացող բազմաբնակարան շենքերում դեռևս չսեփականաշնորհված բնակարանների անհատույց մասնավորեցման աշխատանքների իրականացում</p>	<p>2016 թվականին կշարունակվեն Երևան համայնքի սեփականություն հանդիսացող բազմաբնակարան շենքերում դեռևս չսեփականաշնորհված բնակարանների անհատույց մասնավորեցման գործընթացը:</p>	<p>Քաղաքացիների դիմումների հիման վրա ուսումնասիրվել և նախապատրաստվել է բնակարաններն անհատույց օտարելու մասին Երևանի քաղաքապետի թվով 184 որոշում:</p>		
<p>6.</p>	<p>Նախկինում սեփականաշնորհված , սակայն սահմանված կարգով իրավունքներ չձևակերպած հողամասերի հաշվառման, գույքագրման, դրանց նկատմամբ իրավունքի վերականգնման և ձևակերպման</p>	<p>Նախկինում սեփականաշնորհված, սակայն սահմանված կարգով իրավունքներ չձևակերպած հողամասերի հաշվառման, գույքագրման, դրանց նկատմամբ իրավունքի վերականգնման և ձևակերպման գործառույթները</p>	<p>Իրականացվել է նախկինում սեփականաշնորհված, սակայն սահմանված կարգով իրավունքներ չձևակերպված թվով 91 գույքային միավորների հիմքերի վերականգնման և սահմանների ճշտման, ինչպես նաև վերաճշտման աշխատանքներ:</p>		

	գործառույթների կատարում	կշարունակվեն նաև 2016 թվականին:		
7.	Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող անշարժ գույքերի գործառնական նշանակությունների փոփոխում	Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող անշարժ գույքերի գործառնական նշանակությունների փոփոխում՝ համապատասխան որոշումների միջոցով:	Կայացվել է անշարժ գույքերի գործառնական և հողամասերի գործառնական նշանակությունների փոփոխման վերաբերյալ Երևանի քաղաքապետի թվով 108 որոշում, ինչը հնարավորություն է տվել գույքահարկի բազայում կատարել համապատասխան փոփոխություններ՝ գույքահարկի վճարի չափը համապատասխանեցնելով գույքի փաստացի օգտագործման նշանակությանը:	
8.	Վարձակալությամբ տրված տարածքների և հողամասերի պայմանագրերի ժամկետների վերանայում և վարձավճարների համապատասխանեցում Երևանի ավագանու կողմից սահմանված դրույքաչափերին	Վարձակալությամբ տրված տարածքների և հողամասերի պայմանագրերի ժամկետների վերանայում և վարձավճարների համապատասխանեցում Երևանի ավագանու կողմից սահմանված դրույքաչափերին:	Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթների համաձայն, որը սահմանում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասերի տարեկան վարձավճարի չափը՝ հաշվետու ժամանակահատվածում քաղաքացիների դիմումների հիման վրա վարչական շրջանների հետ համատեղ նախապատրաստվել են Երևանի քաղաքապետի թվով 624 որոշման նախագծեր՝ կապված վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասերի պայմանագրերի գործողության ժամկետների երկարացման, ինչպես նաև շինարարական աշխատանքներն իրականացնելու համար շինարարական հրապարակի կազմակերպման նպատակով առանձնացվող հողամասը վարձակալությամբ տրամադրելու հետ: Արդյունքում Երևանի քաղաքապետի կողմից ընդունված որոշումների հիման վրա նախապատրաստվել և կազմվել են համապատասխան պայմանագրեր և համաձայնագրեր:	
9.	Անշարժ գույքի կառավարման էլեկտրոնային ծրագրի շահագործում	Անշարժ գույքի կառավարման բազայի էլեկտրոնային ծրագրում նոր	Կատարվել են թարմացումներ և փոփոխություններ անշարժ գույքի կառավարման էլեկտրոնային ծրագրում՝ կապված ընթացիկ ժամանակահատվածում իրականացված գործարքների և նոր հայտնաբերված գույքերի հետ:	

		<p>հայտնաբերված անշարժ գույքի միավորների մուտքագրում, բազայի հետևողական թարմացում՝ օտարված, փոխանակված, նվիրաբերված գույքերի մասով և վարձակալությամբ տրամադրված գույքերի դեպքում՝ պայմանագրային պարտավորությունների նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով ավտոմատ ռեժիմով կառավարման հնարավորության ստեղծում:</p>		
10	<p>Երևան համայնքի սեփականություն հանդիսացող ֆիզիկապես և բարոյապես մաշվածություն ունեցող և պահպանման համար չհիմնավորված ծախսեր պահանջող գույքերի օտարում:</p>	<p>Երևան համայնքի սեփականություն հանդիսացող ֆիզիկապես և բարոյապես մաշվածություն ունեցող և պահպանման համար չհիմնավորված ծախսեր պահանջող գույքերի օտարում:</p>	<p>Երևան համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու, օտարման աճուրդի և մրցույթի կազմակերպման աշխատանքների շրջանակներում գումարվել է հողի օտարման աճուրդների թվով 39 նիստ, որի արդյունքում օտարվել է թվով 126 հողակտոր, գույքի օտարման՝ 11 նիստ, որի արդյունքում օտարվել է թվով 18 գույք:</p>	
11	<p>Քաղաքացիների և</p>		<p>Կայացվել է Երևանի քաղաքապետի թվով 123 որոշում՝ ոչ բնակելի</p>	

	<p>իրավաբանական անձանց կողմից առանց համապատասխան պայմանագրերի համայնքային սեփականություն հանդիսացող գույքերի օգտագործման դեպքերի հայտնաբերում և համապատասխան ձևակերպումների իրականացում</p>		<p>տարածքները վարձակալությամբ տրամադրելու մասին:</p>	
12	<p>Երևան քաղաքի կառուցապատման ծրագրերով, գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում քաղաքաշինական ծրագրերի կազմման աշխատանքներում համապատասխան աջակցության ցուցաբերում</p>	<p>Երևան քաղաքի կառուցապատման ծրագրերով, գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում քաղաքաշինական ծրագրերի կազմման աշխատանքներում համապատասխան աջակցության ցուցաբերում:</p>	<p>Իրականացվել է համապատասխան աջակցություն՝ կապված Երևան քաղաքի կառուցապատման ծրագրերով, գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում հողամասերի օտարման գործընթացի հետ:</p>	
13	<p>Անշարժ գույքի օտարման տարեկան ծրագրերի մշակում</p>	<p>Անշարժ գույքերի օտարման տարեկան ծրագրերի մշակում՝</p>	<p>Նախապատրաստվել և հաստատվել է Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2017 թվականի ծրագիրը:</p>	

		ելնելով նախորդ տարիների փորձից:		
14	Ակտիվ շահագործման փուլում չգտնվող համայնքային սեփականություն հանդիսացող օտարման համար առանձնացված գույքերի օտարում, ինչպես նաև Երևան համայնքի հաշվեկշռում գտնվող գույքերի վարձակալությամբ տրամադրում:	Տարեկան ծրագրին համապատասխան 2016թ. ընթացքում նախատեսվում է ակտիվ շահագործման փուլում չգտնվող համայնքային սեփականություն հանդիսացող օտարման համար առանձնացված գույքերի օտարում, ինչպես նաև Երևան համայնքի հաշվեկշռում գտնվող գույքերի վարձակալությամբ տրամադրում՝ նպատակահարմարությունը նախապես ճշտելով համապատասխան ոլորտի պատասխանատու ստորաբաժանումների՝ հանրակրթության, մշակույթի և առողջապահության վարչությունների հետ:	Իրականացվել են աշխատանքներ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի օտարման, վարձակալությամբ և անհատույց օգտագործման տրամադրելու, ինչպես նաև վարձակալությամբ տրամադրված գույքերի գործողության ժամկետները երկարացնելու ուղղությամբ, արդյունքում օտարվել է թվով 126 հողակտոր և 18 գույք, ինչպես նաև կայացվել է Երևանի քաղաքապետի թվով 16 որոշում Երևան համայնքի գույքը անհատույց օգտագործման տրամադրելու մասին:	
15	Քաղաքաշինության ոլորտում, ինչպես նաև ՀՀ Հողային օրենսգրքում	Քաղաքաշինության ոլորտում, ինչպես նաև ՀՀ Հողային օրենսգրքում	Նախապատրաստվել և հաստատվել է Երևան քաղաքի հողային հաշվեկշիռը:	

	փոփոխությունների օրենսդրական փաթեթների մշակում, հողային հաշվեկշռի ամենամյա հաստատմանն ուղղած աշխատանքների իրականացում:	փոփոխությունների օրենսդրական փաթեթների մշակում, հողային հաշվեկշռի ամենամյա հաստատմանն ուղղած աշխատանքների իրականացում:			
16	Երևան քաղաքի զարգացմանն ուղղված ներդրումների ակտիվացման նպատակով համապատասխան ծրագրերի մշակման գործընթացին մասնակցություն:	Երևան քաղաքի զարգացմանն ուղղված ներդրումների ակտիվացման նպատակով համապատասխան ծրագրերի մշակման գործընթացին մասնակցություն:	Կատարվել են Երևան քաղաքում ներդրումային ծրագիր իրականացնելու նպատակով համայնքի սեփականություն հանդիսացող գույքերի հայտնաբերման, առանձնացման և դրանց օտարումը խթանելու նպատակով ներդրումային առաջարկների կազմման, աճուրդի կամ մրցույթի ներկայացնելու աշխատանքներ:		
Կոմունալ ոլորտ					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1.	2.	3.	4.	5.	6.
1.	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի վարկային ծրագիր /Երևան քաղաքի ջրամատակարարման բարելավման ծրագիր/	- բակային նոր 30 պոմպակայանների կառուցում 1197000 ԱՄՆ դոլար արժեքով, - ջրամատակարարման բաշխիչ ցանցի շուրջ 152 կմ ընդհանուր երկարությամբ առանձին հատվածների	Ծրագրով նախատեսված 30 պոմպակայանների կառուցման շինարարական աշխատանքներն ավարտվել են, պոմպակայանները շահագործվում են: «Երևանի ջրամատակարարման բարելավման վարկային ծրագրի» շրջանակներում ՎԶԵԲ-ի «Բաց մրցույթների» ընթացակարգերի արդյունքում կնքված պայմանագրերի հիման վրա Կենտրոն, Էրեբունի, Շենգավիթ, Արաբկիր, Քանաքեռ-Զեյթուն և Նորք-Մարաշ վարչական շրջաններում իրականացվել է 6590 գծմ երկարությամբ ջրամատակարարման ցանցի մոնտաժման աշխատանքներ:	«Երևան Զուր» ՓԲԸ 11.07.2016թ. «Երևան Զուր» ՓԲԸ օգոստոս-դեկտեմբեր	

		վերականգնում՝ 10245000 ԱՄՆ դոլար արժեքով - այդ հատվածներում առկա անհատական շուրջ 22 կմ ընդհանուր երկարությամբ միացումների փոխարինում՝ 9487000 ԱՄՆ դոլար արժեքով:			
2.	Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող «Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման բարելավման» 2016 թվականի ներդրումային ծրագիրը				
2. 1	Երևան քաղաքի կեղտաջրերի մաքրման «Աերացիա» կայանի վերականգնման աշխատանքներ	ա/ Կարճաժամկետ՝ մեխանիկական մաքրման համակարգի վերականգնում և առաջնային տիղմի մշակում՝ բնապահպանական նորմերի պահանջները ժամանակավոր բավարարելու համար: բ/ Երկարաժամկետ,	Կատարվել են նախագծով նախատեսված բոլոր շինարարական և տեխնոլոգիական, ինչպես նաև էլեկտրամատակարարման աշխատանքները: Ընթացքի մեջ են ենթակայանում տրանսֆորմատորների, ցածր լարման վահանների, սարքավորումների տվիչների, լուսավորության սյուների տեղադրման և ցածր լարման մալուխների անցկացման աշխատանքները:	«Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ «Սադե ԲԸ» բաժնետիրական ընկերության հայաստանյան մասնաճյուղ հունվար-դեկտեմբեր	

		որը ենթադրում է կենսաբանական և ֆիզիկաքիմիական մաքրումներով ընդարձակել առաջնային մաքրումը՝ միջազգային նորմերը բավարարելու համար: Սույն ծրագրով նախատեսված է 10,186 մլն. եվրո գումարով սարքավորումների ու ապրանքանյութական արժեքների ձեռքբերման և շինարարական աշխատանքներ:			
2. 2	Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի վերականգնման և բարելավման աշխատանքներ	Ծրագիրը ենթադրում է Երևան քաղաքում 18 կմ երկարությամբ ջրագծերի և կոյուղագծերի, 15 կմ երկարությամբ մայր ջրատարների վերակառուցման, ինչպես նաև առանձնատների 10000 միացումների փոխարինման աշխատանքներ:	Ծրագիրը ավարտվել է 2015թ.: Վերակառուցումից հետո 2016թ. կատարվել են 2140քմ մակերեսով ասֆալտապատման աշխատանքներ:	«Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ հունվար-դեկտեմբեր	
2. 3	Ջրամատակարարման և ամբողջ ցանցի հեռակառավարման	Ծրագրի նպատակն է «Երևան Ջուր» ՓԲԸ գրասենյակում ստեղծել	Կատարվել են հետևյալ աշխատանքները. 1. Հեռակառավարման RTU սարքավորումների տեղադրում - 130 հատ,	«Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման	

	<p>ՄԿԱԴԱ ծրագրի և Կաթնաղբյուրի 2 ջրաղբյուրներից ջրառի ավտոմատացման աշխատանքներ</p>	<p>ավտոմատ կառավարման հանգույց, որը հնարավորություն կտա ոչ միայն տեղեկատվություն ստանալ ջրամատակարարման ցանցում ջրի հոսքի և ճնշումների վերաբերյալ, այլև ավտոմատացված կերպով դրանք կառավարել:</p>	<p>2.Փականների փոխարինում - 83 հատ 3.Հետադարձ փականների փոխարինում- 10 հատ 4.Ծախսաչափերի տեղադրում ՕԿՁ-ներում - 27 հատ 5. Ճնշման կարգավորիչների տեղադրում - 4 հատ 6.Փականների էլ.սնուցման մետաղական արկղերի տեղադրում - 75 հատ 7.Smart տիպի էլ. հաշվիչների տեղադրում-25 հատ 8. Քլորի դոզիմետրերի տեղադրում - 12 հատ 9.Հեռակառավարման սարքավորումների միացում SCADA համակարգին -130հատ Պայմանագրով նախատեսված բոլոր աշխատանքներն ավարտված են: Հաշվի առնելով Ապարան պոմպակայանի պոմպերի շահագործման դժվարությունը՝ հատկապես ձմռան ամիսներին, հեռակառավարման ծրագիրն առաջինը գործարկվել է Ապարանում: Այժմ Ապարան պոմպակայանի բոլոր 13 պոմպերը միացվում և անջատվում են կարգավարների կողմից՝ SCADA համակարգի միջոցով:</p>	<p>գրասենյակ» ՊՀ հունվար-նոյեմբեր</p>	
<p>3.</p>	<p>«Պահպանման և վերանորոգման ընդլայնված աշխատանքների» ծրագիր</p>	<p>«Վարձակալության պայմանագրի» 10-րդ տարում (01.06.2015-31.05.2016) «Պահպանման և վերանորոգման ընդլայնված աշխատանքների ծրագրով» նախատեսվում է կատարել 1853800 հազ. ՀՀ դրամի աշխատանքներ: Միայն ջրամատակարարման բաշխիչ ցանցի և կոյուղագծերի</p>	<p><u>Ջրատար համակարգի բարելավման աշխատանքներ</u> Գառնի սանիտարական գոտում, N6 պոմպի մուտքի վրա կառուցվել է D=300մմ H=5մ շրջանցող խողովակաշար: Արդյունքում ավտոմատացվել են պոմպի մուտքի ջրաքանակը (Q=70լ/վ) և ջրթողի կապը: <u>Կաթնաղբյուր ջրատար</u> Կաթնաղբյուր IV ջրատարից, Աբելյանի հանգույցի մոտակայքում, առկա էր D=50մմ L≈ 400մ միացում, որի ջրաչափը գտնվում էր բաժանորդի տարածքում: Ջրագծի վրա առկա էին վթարներ՝ մոտ Q≈ 2 լ/վ : Ջրագիծը միացված էր Կաթնաղբյուր IV ջրատարին երկու կետից: Միացումները ապամոնտաժվել են: <u>Արարատյան ջրատար</u></p> <ul style="list-style-type: none"> • Էրեբունի օդանավակայանի տարածքում Արարատյան I ջրատարի D≈ 200մ L=1000մմ հատվածը գողացվել է: Տվյալ հատվածում Արարատյան I և Արարատյան II ջրատարերի միջև կառուցվել է L=15մ միջանկյալ միացում, որը հնարավորություն է տրվել Արարատյան պոմպակայանի 	<p>«Երևան Ջուր» ՓԲԸ հունվար-դեկտեմբեր</p>	

	<p>բարելավման ու վերակառուցման համար ներկայացված առաջնահերթ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ընդհանուր գումարը կազմում է 794.8 մլն ՀՀ դրամ, այդ թվում՝ բախշիչ ցանցի համար 764 մլն ՀՀ դրամ, կոյուղու ցանցի համար 30 մլն ՀՀ դրամ: Շարունակվելու են ջրային օբյեկտների սանիտարական գոտիների սանիտարահիգիենիկ պայմանների պահպանման, բարելավման և անվտանգության ապահովման միջոցառումները: Այս նպատակների համար նախատեսվում է իրականացնել առնվազն 70 մլն ՀՀ դրամի աշխատանքներ: Պայմանագրային 10-րդ տարում ջրային օբյեկտների անվտանգության</p>	<p>արտադրած ջրաքանակն ուղղել Խարբերդ ՕԿՁ, տեղադրվել է նաև D= 250մմ ջրթող փական:</p> <ul style="list-style-type: none"> • Արարատյան II ջրատարի վրա, 9-րդ կմ կոչվող տարածքում հայտնաբերվել է Q=300լ/վ վթար, որը վերացվել է: «Գառնի» սանիտարական գոտու թիվ 2 և թիվ 5 կապտածներում առկա էր Q=35լ/վ արտահոսք: Թիվ 2 կապտածի խնդիրը պայմանավորված էր օդի խցանումով, իսկ թիվ 5-ինը՝ կապտածից դուրս եկող ջրագծի խցանումով: Նշված խնդիրները վերացվել են: Կատարված աշխատանքների արդյունքում «Գառնի-Երևան» ջրատարի ինքնահոս ջրաքանակն ավելացել է Q=35լ/վ-ով: <ul style="list-style-type: none"> • Ապարան-Շոր-Շոր N1 ՀԷԿ-ից հետո առկա էին օդի կուտակումներ, որոնց հեռացման համար տեղադրվել է D=50մմ օդահեռ խողովակ «Ապարան-Երևան» ջրատարի վրա հայտնաբերվել և ապամոնտաժվել է Q≈3լ/վ վթարված գաղտնի միացում: Կատարվել են գյուղական համայնքներին տրվող ջրաքանակների չափման և միջհամայնքային ջրաքանակների կարգավորման աշխատանքներ: • «Արզական-Գյումուշ» ջրատարից սնվող Նոր-Գեղի համայնքի մի հատվածում քլորի քանակությունը նորմայից ցածր էր: Խնդիրը կարգավորվել է «Գյումուշ» պոմպակայանում գտնվող միջանկյալ փականների միջոցով՝ «Արզական» ջրատարից 20 լ/վ ջրաքանակ մղելով դեպի «Գյումուշ II» ջրատար: • «Գյումուշ» սանիտարական գոտում ջրհավաք ավազանից առաջացել էր ջրի արտահոսք, կատարված օդահեռացման աշխատանքների շնորհիվ արտահոսքը (20 լ/վ) դադարեցվել է: • Խարբերդ ՕԿՁ-ից ՋԷԿ-ի ուղղությամբ դուրս եկող ջրատարի վրա՝ ՋԷԿ-ի միացումից առաջ, տեղադրվել է D=400մմ գծային փական: Արդյունքում հնարավոր դարձավ այլընտրանքային տարբերակով տվյալ ջրատարից սնվող բաժանորդներին սպասարկել Նոր Խարբերդ կամ Արարատյան ՕԿՁ-ներից: Վերացվել է վերոհիշյալ ջրատարի վրա առկա վթարը՝ 10լ/վ, ինչը վերացնելու ժամանակ ՋԷԿ-ին անհրաժեշտ ջրաքանակը 		
--	--	--	--	--

		<p>ապահովման նպատակով նախատեսվում է. -իրականացնել Գառնի սանիտարական գոտու կապտաժների վերանորոգման աշխատանքներ, -բոլոր սանիտարական գոտիներում և պոմպակայաններում իրականացնել անհրաժեշտ կոսմետիկ վերանորոգումներ, սանիտարական մաքրություն և անհրաժեշտ այլ աշխատանքներ, -շարունակել ջրատարների վրա հոսակորուստների հայտնաբերմանն ու դրանց վերացմանն ուղղված միջոցառումներ, -ավարտել բոլոր ՕԿՁ-ների լվացման աշխատանքները:</p>	<p>ապահովվել է Արարատյան ՕԿՁ-ից:</p> <ul style="list-style-type: none"> • «Գառնի-Երևան» ջրատարի վրա, Բարձրաշեն գյուղի մոտակա ձորում գտնվող վթարված օդահեռ փականը վերանորոգվել է ջրատարի կանգառի ընթացքում՝ կասեցնելով $Q=11$լ/վ ջրակորուստ: <p><u>Ջրամատակարարման բաշխիչ ցանցի բարելավման աշխատանքներ</u> <u>Կենտրոն վարչական շրջան</u></p> <p>Ամիրյան և Բուզանդ փողոցների միջև ընկած հատվածում, Բուզանդ փողոցով անցնող $D=200$մմ ջրագծին միացված էր Մաշտոցի պողոտայով անցնող $D=100$մմ ջրագիծը՝ 2 հատ $D=50$մմ փականներով: $D=100$մմ ջրագիծը գտնվում էր վթարային վիճակում: Կատարվել է նշված $D=50$մմ փականների խցափակում, շահագործումից հանվել է $D=100$մմ և $L=130$մ վթարված ջրագիծը: Արդյունքում տնտեսվել է մոտ $Q=5$լ/վ ընդհանուր ջրաքանակ, բարելավվել է ջրամատակարարումը, ապահովվել է ցանցի առավել հուսալի շահագործումը, կարգավորվել են ճնշումները :</p> <p><u>Նուբարաշեն վարչական շրջան</u></p> <p>Նուբարաշեն 6-րդ փողոցի հ.1 նրբանցքով և «ՓոքրՄիեր» ռազմակրթահամալիրի տարածքով անցնում էին $D=300$մմ, $D=150$մմ և $D=100$մմ վթարված ջրագծեր:</p> <p>Շահագործումից դուրս բերելու նպատակով դրանք խցափակվել են : Կառուցվել է նոր $D=100$մմ $L=124$մ ջրագիծ՝ նշված հասցեում գտնվող բազմաբնակարան շենքը ջրով ապահովելու համար և $D=50$մմ $L=47$մ ջրագիծ՝ առանձնատները սնելու համար:</p> <p>Տեղադրվել է 2 հատ $D=100$մմ-ոց և 1 հատ $D=150$մմ-ոց ճնշման կարգավորիչ փականներ, արդյունքում տնտեսվել է $Q=7$լ/վ ընդհանուր ջրաքանակ, նվազեցվել են ավելցուկային ճնշումները, ապամոնտաժվել են ապօրինի ջրամիացումները:</p> <p><u>Քանարեն-Չեթուն վարչական շրջան</u></p> <p>Ֆանարջյան փողոցով անցնող երեք տարբեր, վթարային վիճակում գտնվող և կառուցապատված հատվածների տակով անցնող ջրագծերը շահագործումից հանելու և նոր ջրագիծ կառուցելու նպատակով</p>		
--	--	---	--	--	--

			<p>իրականացվել են հետևյալ աշխատանքները. Շահագործումից հանվել են D=150մմ L=320մ, D=150մմ L=170մ, D=50մմ L=98մ վթարային ջրագծեր և 3 հատ D=80-150մմ չաշխատող փական: Կառուցել է D=150մմ L=320մ պոլիէթիլենային նոր ջրագիծ, տեղադրել է 2 հատ D=150մմ և 2 հատ D=100մմ փական: Արդյունքում տնտեսվել է Q=6 լ/վ ջրաքանակ:</p> <p><u>Արարկիր վարչական շրջանի</u> ջրամատակարարման բարելավման նպատակով Այգեձոր փողոցում իրականացվել են գոտիավորման և ցանցի շահագործման բարելավմանն ուղղված հետևյալ աշխատանքները.</p> <ul style="list-style-type: none"> - Ուսումնասիրվել է ջրամատակարարման ցանցը, կատարվել են հոսքաչափով չափումներ, հոսակորուստների հայտնաբերման աշխատանքներ, - Շահագործումից հանվել է D=150մմ L=65մ թուջե վթարային ջրագիծ - Տեղադրվել է 1 հատ D=80մմ նոր փական, - Սահմանազատման կետերում տեղադրվել է 9 հատ ջրաչափական հանգույց: <p>Արդյունքում տնտեսվել է Q=4 լ/վ ջրաքանակ:</p> <p><u>Գյուլբենկյան 2/1 պոմպակայանում</u> շենքերին տրվող ջրաքանակների չափումների արդյունքում ջրագծերի վրա առկա էին վթարներ: Դրանց հայտնաբերման նպատակով կատարվել են ջրագծերի հետագծերի որոնման և քարտեզագրման աշխատանքներ: Հայտնաբերված վթարները վերացնելու, ջրամատակարարումը բարելավելու, ցանցի հուսալիությունը բարձրացնելու և վթարների քանակը կրճատելու նպատակով կատարվել են հետևյալ աշխատանքները.</p> <ul style="list-style-type: none"> - Շահագործումից հանվել են վթարային D=200մմ L=115մ, D=100մմ L=5մ և D=50մմ L=24 մ ջրագծեր, - Կառուցվել են D=150մմ L=96մ, D=100մմ L=5մ և D=50մմ L=75մ պոլիէթիլենային նոր ջրագծեր, - Տեղադրվել է 1 հատ D=150մմ, 1 հատ D=100մմ և 2 հատ D=50մմ նոր փական, <p>Կատարված աշխատանքների արդյունքում տնտեսվել է Q=4լ/վ ջրաքանակ, ցանցը դարձնել կառավարելի, բարձրացել է</p>		
--	--	--	--	--	--

			<p>մատակարարվող ջրի ճնշումը, խնայվել է 200կՎտ.ժամ էլեկտրաէներգիա:</p> <p><u>Ավան վարչական շրջանի</u> Դուրյան և Չարենց թաղամասերի ջրամատակարարումը բարելավելու նպատակով իրականացվել են վթարադիմացիկ աշխատանքներ, որոնց արդյունքում հայտնաբերվել է Q=8լ/վ ջրակորուստ:</p> <p>Իրականացվել են մի շարք աշխատանքներ.</p> <ul style="list-style-type: none"> - Վթարված D=300մմ L=25մ ջրագծի խցափակում և շահագործումից հանում, - D=300մմ և D=250մմ ջրագծերի միջև D=150մմ միջանկյալ միացման տեղադրում: <p>Կատարված աշխատանքների արդյունքում տնտեսվել է Q=8լ/վ ջրաքանակ:</p> <p><u>Միլիկյան թաղամասի</u> ջրամատակարարումը բարելավելու, ցանցի հուսալիությունը բարձրացնելու և վթարների քանակը կրճատելու նպատակով կատարվել են չափումներ, ջրագծերի հետագծերի որոնման և հայտնաբերման աշխատանքներ:</p> <p>Իրականացվել են հետևյալ աշխատանքները.</p> <p>շահագործումից հանվել է վթարային ջրագիծը, կառուցվել է պոլիէթիլենային նոր ջրագիծ, տեղադրվել է նոր փական:</p> <p>Նշված աշխատանքների արդյունքում տնտեսվել է Q=16 լ/վ ջրաքանակ, ցանցը դարձել է կառավարելի, վերացվել են ջրի ցածր ճնշման հետ կապված խնդիրները:</p> <p>Հաշվետու ժամանակահատվածում «Երևան Ջուր» ՓԲԸ-ի շահագործման տնօրինությունների կողմից ջրամատակարարման ցանցում վերացվել է 1728 վթար, ջրահեռացման ցանցում՝ 6012 վթար, պոմպակայանների 530 վթար, կառուցվել է 2100զմ ջրագիծ և 385զմ կոյուղագիծ:</p> <p><u>«Պահպանման և վերանորոգման ընդլայնված աշխատանքներ» 2016թվականի ծրագրի շրջանակներում իրականացված</u></p>		
--	--	--	---	--	--

			<p style="text-align: center;"><u>աշխատանքներ</u></p> <ol style="list-style-type: none"> 1. Անդրանիկի 64 շենքից մինչև Անդրանիկի 116 շենք և Անդրանիկի 64 շենքից մինչև Անդրանիկի 74 շենքի դիմաց վթարված ջրագծի վերակառուցում 2. Մալաթիա փողոց՝ Սեբաստիա փողոցից մինչև 84 տուն՝ դիմացով անցնող ջրագծի վերակառուցում 3. Արգավանդ և Գեղանիստ համայնքների ջրամատակարարման ցանցի գոտիավորում 4. ք. Եղվարդ, Կոմիտաս և Սաֆարյան փողոցների ջրագծերի վերակառուցում 5. Նորաշխարհյան - Մ. Ավետիսյան 4-րդ փողոցի խաչմերուկից մինչև Ռուբինյանց 17/1 շենք ընկած հատվածի ջրագծի վերակառուցում 6. Քանաքեռ 6-րդ փողոցի «Սուրբ Հակոբ» եկեղեցու մոտից մինչև Ֆանարջյան 23/1 տուն ընկած հատվածի ջրագծի վերակառուցում 7. Ազատության պող. և Դ. Անհաղթի փող. ճանապարհային հանգույցի գետնանցման հեղեղատար կոյուղագծի կառուցում 8. Լեփսիուսի 6-րդ փողոցի 2Ա, 3Ա, 10Ա, 4 և 6 շենքերի վթարված կոյուղագծի վերակառուցում 9. Աշտարակի խճուղին հատող Սիլիկյան թաղ. սնող 2 ջրագծերի շահագործումից հանում 10. Դավթաշեն 1 թաղ. 14-15 շենքերի հարևանությամբ կոյուղագծի վերակառուցում 11. Շիրազի փող. 6, 8, 10 շենքերի հարևանությամբ կոյուղագծի վերակառուցում 12. Դավթաշեն 1 թաղ. 19, 20, 21, 22 շենքերի հարևանությամբ կոյուղագծի վերակառուցում 13. Բաշինջաղյան փող. հ.6 շենքի հարևանությամբ կոյուղագծի փոխարինում 14. Երզնկյան փող. ջրագծի վերակառուցում (2 փուլ) 15. Սոսեի 2 և 4 շենքերի կոյուղագծերի վերակառուցում 16. Թբիլիսյան խճուղի հ.5 շենքի կոյուղագծի վերակառուցում 17. Կիկյան 1 նրբ 11 տան դիմաց կոյուղագծի կառուցում 18. Աղբյուր Սերոբ փող. 5 շենքի փողոցային հատվածի կոյուղագծի 		
--	--	--	--	--	--

		<p>վերակառուցում</p> <p>19. Բաղրամյան 70շենքի պոմպակայանը սնուցող ջրագծի վերակառուցում</p> <p>20. Կորեայի ձորում թուջե ջրագծի վերակառուցում</p> <p>21. Այգեձոր փող. թուջե ջրագծի շահագործումից հանում</p> <p>22. Կոմիտաս 49/1, 49/2, 49/3, 49/4, 49/5, և 51/2 շենքերը սնող ջրագծի վերակառուցում</p> <p>23. Բարձրաշեն համայնքի 3-րդ փուլի աշխատանքների իրականացում</p> <p>24. Նորագյուղ թաղամասի ջրամատակարարման կարգավորում</p> <p>25. Կարա Մուրզա, Լագո և Կաշեգործների փողոցների ջրագծերի վերակառուցում, ջրաչափական հանգույցների, նոր դիտահորերի կառուցում, փականների տեղադրում</p> <p>26. Հին Ավան 14 փողոցի թվով 7 նրբանցքների ջրագծերի վերակառուցում, ջրաչափական հանգույցների, նոր դիտահորերի կառուցում, փականների տեղադրում</p> <p>27. Նոր Նորքի 5-րդ գանգված կոշիկի ֆաբրիկայի մոտից մինչև «Շինարարական քոլեջ» ջրագծի վերակառուցում, փականների տեղադրում և դիտահորի կառուցում</p> <p>28. Նորք 8-րդ գանգված 16շենքից մինչև 21 շենք կոյուղագծի վերակառուցում</p> <p>29. Թամանցիներ 3-րդ նրբանցքի ջրագծի վերակառուցում, ջրաչափական հանգույցների, նոր դիտահորերի կառուցում, փականի տեղադրում</p> <p>30. Վերին Շենգավիթ 2-րդ փողոցի շենքերի և առանձնատների ջրագծերի վերակառուցում, ջրաչափական հանգույցների և դիտահորերի կառուցում</p> <p>31. Աերացիա թաղամասում նոր դիտահորերի կառուցում</p> <p>32. Բրյուսով թաղամասի ջրագծի վերակառուցում, առանձնատների ջրաչափական հանգույցների տեղադրում, նոր դիտահորերի կառուցում</p> <p>33. Ս.Ջորավարի փողոցի ներբակային ջրամատակարարման ցանցի և առանձնատների ջրագծերի վերակառուցում, ջրաչափական</p>		
--	--	--	--	--

			<p>հանգույցների և դիտահորերի կառուցում</p> <p>34. Ավան 14-րդ փողոցից մինչև 5-րդ փողոց ջրագծի վերակառուցում, ջրաչափական հանգույցների և դիտահորերի կառուցում:</p> <p>«Պահպանման և վերանորոգման ընդլայնված աշխատանքների» ծրագրի շրջանակներում իրականացվել են 15547գծմ երկարությամբ ջրագծերի և 1806 գծմ կոյուղագծերի, 187 գծմ հեղեղատար կոյուղագծերի, 270 անհատական ջրաչափական հորերի, 290 ջրաչափական հանգույցների, կոյուղու և ջրագծերի 49 դիտահորերի և հակահրդեհային 22 հիդրանտների կառուցման և վերակառուցման աշխատանքներ:</p>		
4.	Արտաքին լուսավորություն	<p>2016թ. նախատեսվում է իրականացնել 1496կմ արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքները:</p> <p>2016թ. ընթացքում նախատեսվում է նաև իրականացնել արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգման աշխատանքներ, որի շնորհիվ կվերականգնվի ևս 40կմ արտաքին լուսավորության ցանց և տարեվերջին Երևան քաղաքի շահագործվող արտաքին</p>	<p>Արտաքին լուսավորության ցանցի շահագործման ընթացքում նորերով է փոխարինվել փողոցներում ու բակերում առկա 28433 վնասված լուսատու, 154 հենասյուն և 6.2 կմ մալուխ: Նույն ժամանակահատվածում կառուցվել և ցանցին է միացվել 148 օբյեկտ՝ 71 փողոց և փողոցի հատված, 70 բակային տարածք, 3 փողոցների լանդշաֆտներ, 1 արձան, 1 ստորգետնյա անցում, 1 հրապարակ և 3 այգի: Տեղադրվել է 519 հենասյուն և 1115 լուսատու: Նորակառույց ցանցի երկարությունը կազմել է շուրջ 40 կմ:</p> <p>Իրականացվել է ուժեղացված շուրջօրյա հերթապահություն՝ արտաքին լուսավորության ցանցի վթարված հատվածների հայտնաբերման և ժամանակին վերականգնման նպատակով:</p> <p>Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրի շրջանակներում 2016թ. ընթացքում, ներգրավված խորհրդատվական ընկերությունների հետ, կատարվել են նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման աշխատանքներ:</p>	«Երբադլույս» ՓԲԸ հունվար-դեկտեմբեր	

		<p>լուսավորության ցանցի երկարությունը կկազմի 1536կմ:</p> <p>Նախատեսվում է շարունակել նաև բակային լուսավորության գործընթացը: 2016թ. նախատեսվում է շահագործման և պահպանման աշխատանքների կազմակերպման ներկա եղանակից անցնել շուրջօրյա շահագործման, ավելացնել սպասարկող անձնակազմի թիվը, կազմավորել հերթափոխեր, որոնք կիրականացնեն մայրաքաղաքի արտաքին լուսավորության ցանցի շուրջօրյա շահագործումը և պահպանումը:</p> <p>Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի ֆինանսավորմամբ իրականացվելու է Երևան քաղաքի թվով</p>			
--	--	--	--	--	--

		<p>30 փողոցների լուսավորության համակարգերի արդիականացումը: Նախատեսվում է, որ աշխատանքները կմեկնարկեն 2016թ.:</p>			
5.	<p>«Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագիր:</p>	<p>2016թ. ընթացքում նախատեսվում է ավարտել Մաշտոցի պողոտայի Հաղթանակի կամրջից մինչև Խորենացի փողոցի խաչմերուկ ընկած հատվածի արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքները, ինչպես նաև ծրագրի ընթացքում խնայված միջոցների հաշվին ավարտին հասցնել Մաշտոցի պողոտայի արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքները՝ Խորենացի փողոցի խաչմերուկից մինչև Մատենադարան հատվածում:</p>	<p>Արտաքին լուսավորության համակարգի արդիականացում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ համագործակցությամբ «Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագրի շրջանակում իրականացվել են Հաղթանակի կամրջի, Մաշտոցի պողոտայի, Աթենքի փողոցի, Ծիծեռնակաբերդի խճուղու և Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող Ծիծեռնակաբերդի հուշահամալիր տանող ճանապարհի լուսավորության համակարգի էներգաարդյունավետ վերազինման աշխատանքներ: Այդ նպատակով ձեռք է բերվել և տեղադրվել էներգախնայող 509 լուսադիոդային լուսատուներ: Աշխատանքներն իրականացվել են ՄԱԶԾ համաֆինանսավորմամբ:</p> <p>Լուսատեխնիկական լաբորատորիայի ստեղծում «Երբաղլույս» ՓԲԸ լուսատեխնիկական լաբորատորիայի ստեղծման նպատակով ձեռք է բերվել լույսի աղբյուրների ելքային հարաչափերը ստուգելու սարք (ինտեգրալ գնդոլորտ) և տեղադրվել է «Երբաղլույս» ՓԲԸ լաբորատորիայում (Կոմիտաս 28), որի համար տրամադրված տարածքը վերանորոգվել է:</p> <p>Ներշենքային լուսավորության արդիականացում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ համագործակցությամբ «Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագրի շրջանակում Երևանի քաղաքապետարանի՝ Արգիշտի 1 հասցեում գտնվող շենքի և Երևանի պատմության թանգարան ՊՈԱԿ-ի շենքի ներշենքային լուսավորության համակարգերի արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվել է նախնական գնահատում, մշակվել է լուսավորության էներգաարդյունավետ վերազինման տեխնիկական</p>	<p>ՄԱԶԾ, աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն, «Երբաղլույս» ՓԲԸ հունվար-դեկտեմբեր</p>	

			առաջադրանքը, հայտարարվել է մրցույթ: 2017թ. կիրականացվեն առակա լուսատուները լուսադիոդային լուսատուներով փոխարինման աշխատանքները: Ձեռք է բերվել պայմանավորվածություն համատեղ իրականացնել Երևանի կենդանաբանական այգու լուսավորության համակարգի արդիականացման, էներգաարդյունավետության բարձրացման ծրագրի երկրորդ փուլը:		
6.	Կառավարման մարմիններին տեղեկատվական և խորհրդատվական աջակցության տրամադրում	Կառավարման մարմիններին տեղեկատվական և խորհրդատվական աջակցության տրամադրում	Համատիրություններում իրականացված ուսումնասիրությունների ժամանակ հայտնաբերված թերությունները շտկելու նպատակով տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն: Համատիրությունների հետ Նոր Նորք, Աջափնյակ, Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջաններում կազմակերպվել են «Բազմաբնակարան շենքի կառավարում» թեմայով սեմինարներ համատիրությունների նախագահների, կառավարիչների և հաշվապահների համար:	Աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչություն հունվար-դեկտեմբեր	
7.	«Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին» որոշման պահանջների վերահսկողության իրականացում	«Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին» որոշման պահանջների վերահսկողության իրականացում	Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններում ուսումնասիրվել է պարտադիր նորմերի գծով իրականացված աշխատանքները, համատիրությունների նախագահների և կառավարիչների աշխատանքային գործունեությունը և բնակչության հետ նրանց համագործակցությունը, սեփականատերերին ներկայացվող ամենամսյա հաշվետվությունների օրինականությունը, որոնց արդյունքներն արտահայտվում են ամենամսյա գնահատման չափորոշիչներում:	Աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչություն հունվար-դեկտեմբեր	
8.	Մպասարկման վարձավճարների գանձման համակարգի կատարելագործում	Մպասարկման վարձավճարների գանձման համակարգի կատարելագործում	Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին առաջարկվել է կանխիկ գանձման կտրոնների հաշվառման համակարգը համապատասխանեցնել խիստ հաշվառման փաստաթղթերի կարգին:	Աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչություն հունվար-դեկտեմբեր	
9.	Բազմաբնակարան շենքերի մուտքերի	Բազմաբնակարան շենքերի շուրջ 800	Վերանորոգվել է 924 մուտք:	Վարչական շրջաններ, համատիրություններ	

	վերանորոգում	մուտքերի վերանորոգում		հունվար-դեկտեմբեր	
10	Երևան քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում	Երևան քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի շուրջ 81000քմ հարթ և 47000քմ թեք տանիքների վերանորոգում	Փաստացի վերանորոգվել է 97097 քմ հարթ և 58112 քմ թեք տանիք:	Վարչական շրջաններ, համատիրություններ հունվար-դեկտեմբեր	
11	Բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգում	Հաբիթաթ Ֆոր Հյուսնենիթի Արմենիա հիմնադրամի և ՀՀ Երևան համայնքի միջև 2014թ. փետրվարի 20-ին կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգում:	Կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգման և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի, ՀՀ ԿԱ Քաղաքաշինության պետական կոմիտեի, միջազգային և տեղական կազմակերպությունների, բանկերի, համատիրությունների մասնակցությամբ: Երևանի Ավան վարչական շրջանի Դուրյան թաղ. հ.37, Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շերամի փող. հ.67, Իսակովի պող. հ.50/1 շենքերում կատարվել են ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգման աշխատանքներ	Հաբիթաթ Ֆոր Հյուսնենիթի Արմենիա հիմնադրամ նոյեմբերի 15 «Դուրյան» համատիրություն «Տարոն» համատիրություն «Իսակովի 50/1» համատիրություն	
12	Բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացում	Հաբիթաթ Ֆոր Հյուսնենիթի Արմենիա հիմնադրամի հետ 2014թ. դեկտեմբերի 22-ին կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում բազմաբնակարան շենքերի	Ավան Առինջ 1մ/2 հ.1/4, Թումանյան թաղ. հ.13/1, Արզումանյան փող. հ.16/2 և Նանսենի 1-ին նրբ. հ.4 շենքերում իրականացվել են էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներ, իսկ Մամիկոնյանց փող. հ.1ա շենքում աշխատանքներն ընթացքի մեջ են:	«Ավան-Առինջ-1» համատիրություն «Ավան 4» համատիրություն «Շեն 99» համատիրություն «Նոր Նորք 1/8» համատիրություն «Քնար» համատիրություն	

		Էներգաարդյունավետության բարձրացում:		10.2016թ.-03.2017թ.	
13	Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում	2016թ. ընթացքում նախատեսվում է ՄԱԶԾ և Եվրոպական Ներդրումային Բանկի հետ Երևան քաղաքում համայնքային ենթակառուցվածքային հանրային շենքերի, ինչպես նաև Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերում էներգետիկ արդյունավետության բարձրացմանն ուղղված իրագործելիության ծրագրի մշակում և իրականացում:	Ստորագրվել է Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) և քաղաքապետարանի միջև տեխնիկական օժանդակության վերաբերյալ համագործակցության համաձայնագիրը: ԵՆԲ հետ համագործակցությամբ մշակվել է տեխնիկական առաջադրանքի նախագիծ՝ «Երևանի էներգաարդյունավետության և հանրային շենքերի ջերմային հիմնանորոգում» ծրագրի մշակման համար: ԵՆԲ աջակցությամբ ներգրավված «ԼԴԿ քոնսուլթանթս Էնջինիբու Էնդ փլաններս» խորհրդատվական ընկերության հետ համայնքային շենքերում նախնական էներգետիկ աուդիտ իրականացնելու նպատակով տեղի են ունեցել այցելություններ շուրջ 50 հանրային շենքեր, որից 5-ում իրականացվել է համալիր էներգետիկ աուդիտ: Իրականացվել է 16 համայնքային շենքերում ջերմաարդիականացման և էներգախնայողությանն ուղղված վերանորոգման աշխատանքների ֆինանսական գնահատում: «Երևանի էներգաարդյունավետության և հանրային շենքերի ջերմային հիմնանորոգում» ծրագրի շրջանակում դրամաշնորհային հայտ է ներակայացվել է «Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայր գործընկերության» (E5P) հիմնադրամին:	ԵՆԲ, աշխատակազմի գարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն հունվար-դեկտեմբեր	
14	Աղբահանություն և սանիտարական մաքրում	Աշխատանքներ կիրականացվեն ՀՀ կառավարության, Երևանի քաղաքապետարանի, Եվրոպական միության և Եվրոպական ներդրումային Բանկի միջև ստորագրած կոշտ կենցաղային թափոնների ոլորտում	17.09.2013թ N ԵՔ-ՄԵԾՁԲ-13/71 Ամենօրյա հսկողություն է իրականացվել Երևան քաղաքի սանիտարական մաքրման ընկերությունների կողմից մայրաքաղաքի փողոցների, մայրերի, հրապարակների, բակային և ընդհանուր օգտագործման այլ տարածքների սանիտարական մաքրման, ինչպես նաև թվով 4865 բազմաբնակարան շենքերից և մոտ 55000 մասնավոր տնատիրություններից իրականացվող աղբահանության աշխատանքների կատարման որակի նկատմամբ: Շարունակվել են ձեռնարկվել անհրաժեշտ միջոցներ չնախատեսված վայրերում աղբ տեղադրելու դեպքերը բացառելու ուղղությամբ, կազմվել են շուրջ 2200 արձանագրություն համաձայն «Վարչական	«Սանիթեք» ՍՊԸ	

		<p>համագործակցելու պատրաստակամության մասին փոխընդմեջ հուշագրով նախատեսված ծրագրի իրագործման ուղղությամբ՝ որի արդյունքում նախատեսվում է ստեղծել թափոնների կառավարման միջազգային չափանիշներին համապատասխան համակարգ, ինչպես նաև կառուցել նոր սանիտարական աղբավայր գործող աղբավայրի հարևանությամբ: Կշարունակվեն ձեռնարկվել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ չնախատեսված վայրերում աղբ տեղադրելու դեպքերը բացառելու ուղղությամբ: Նախատեսվում է վերջնականապես լուծել անվավոր կոնտեյներների</p>	<p>իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 43¹ հոդվածի: «Մանիթեք» ընկերությունը ստանձնել է Երևան քաղաքի Էրեբունի և Ավան վարչական շրջանների աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները, որոնց արդյունքում տեղադրվել է եվրոպական չափանիշներին համապատասխան մոտ 1500 հատ 1100լ տարողությամբ անվավոր կոնտեյներներ: Դեկտեմբերին ձյան տեղումների առկայության դեպքում ամեն օր իրականացվել են փողոցների, մայրթերի, հրապարակների, ստորգետնյան և վերգետնյա անցումների աստիճանավանդակների և այլ ինժինեռական կառույցների ձյան մաքրման և աղբահանության, իսկ անհրաժեշտության դեպքում մերկասառույցի տեխնիկական աղի և ավազի խառնուրդով մշակման աշխատանքներ: Երևանից հավաքվել և տարբեր աղբավայրեր է տեղափոխվել շուրջ՝ 470.000 տոննա կենցաղային աղբ: «Դավար» ՍՊԸ-ի շահագործմանն է հանձնվել շինարարական աղբի տեղադրման համար նախատեսված 10հա տարածք: 2016 թվականին Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագրի շրջանակներում պայմանագիր է կնքվել խորհրդատվական կազմակերպության հետ ծրագրի իրականացման աջակցման և տեխնիկական հսկողության համար: Կազմակերպության կողմից մշակվել է մրցութային փաստաթղթերի նախնական փաթեթը, այդ թվում նաև աղբավայրի նախնական նախագիծը: Անվավոր կոնտեյներների հարթակների կառուցման նպատակով պատվիրվել է նախագիծ:</p>		
--	--	---	---	--	--

		հարթակների կառուցման խնդիրը:			
15	«Ժամկետանց պեստիցիդների պաշարների ոչնչացում և կայուն օրգանական աղտոտիչներով (ԿՕՍ) աղտոտված տարածքների աղտազերծում՝ քիմիկատների անվտանգ կառավարման ծրագրի շրջանակներում»:	Ծրագրով նախատեսվում է հետևյալ երեք բաղադրիչների իրականացումը՝ - ժամկետանց պեստիցիդների պաշարների և թափոնների հավաքում և կոնսերվացում, - ժամկետանց պեստիցիդների պաշարների ու թափոնների ոչնչացում/չեզոքացում, - կարգավորիչ և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում՝ քիմիկատներով աղտոտված տարածքների անվտանգ կառավարման նպատակով	Տեղի է ունեցել «Ժամկետանց պեստիցիդների պաշարների ոչնչացում և կայուն օրգանական աղտոտիչներով (ԿՕՍ) աղտոտված տարածքների աղտազերծում՝ քիմիկատների անվտանգ կառավարման միջոցառումների շրջանակներում» ծրագրի կառավարման խորհրդի նիստ: ՄԱԶԾ կողմից մշակվել է Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցի ԿՕՍ-ներ պարունակող պեստիցիդների և առնչվող աղտոտված հողերի վերականգնման, տարածքի մաքրման, կայունացման, պարփակման և մոնիթորինգի համար պահանջվող և օժանդակող աշխատանքների կատարման տեխնիկական բնութագրերի կազմման և աջակցող գնահատում իրականացնելու ընկերության ընտրության տեխնիկական առաջադրանքը: Նուբարաշենի ԿՕՍ գերեզմանոցի և տարածքի մաքրման աշխատանքների մոդելավորման և նախագծման համար բնապահպանական և նախագծային խորհրդատվական կազմակերպություն ընտրելու նպատակով ՄԱԶԾ կողմից հայտարարված մրցույթը կասեցվել է: Մրցույթի տեխնիկական առաջադրանքը կվերանայվի և մրցույթը կվերահայտարարվի տեխնիկական առաջադրանքի մասնակի լրամշակումից հետո:	Աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն	

Առևտրի և սպասարկումների ոլորտ

Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1.	2.	3.	4.	5.	6.
1.	Առևտրի և	Առևտրի և	Աշխատանքներ են տարվել առևտրի և սպասարկման ոլորտի	Աշխատակազմի	

	<p>ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով առաջարկությունների ձևավորում և ներկայացում:</p>	<p>ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով առաջարկությունների ձևավորում և ներկայացում:</p>	<p>օրենսդրության կատարելագործման ուղղությամբ: Առաջարկություններ են ներկայացվել «Առևտրի և ծառայությունների մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 27-րդ կետերի համաձայն մշակվել է «Երևան քաղաքում առևտրի ոլորտում գործունեության կանոնների կիրառման լրացուցիչ պայմանները և լրացուցիչ կանոնները հաստատելու մասին» և «Երևան քաղաքում բացօթյա վաճառք (առևտուր) կազմակերպելու լրացուցիչ պայմանները սահմանելու մասին» Երևանի ավագանու որոշումների, ինչպես նաև հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործունեության կանոնների նախագծեր:</p> <p>Երևանի Փ. Բուզանդի փողոցի հ.1/5 հասցեում գտնվող ցուցահանդես-վաճառքի կենտրոնում իրականացվող առևտրի կանոնակարգման և ավելի քաղաքակիրթ ձևերով կազմակերպման նպատակով առևտրի և սպասարկումների վարչության մասնակցությամբ մշակվել է ցուցահանդես-վաճառքի կենտրոնում առևտրային գործընթացի կազմակերպմանը ներկայացվող պայմանների վերաբերյալ Երևանի ավագանու որոշման նախագիծ, որը հաստատվել է Երևանի ավագանու 2016թ. սեպտեմբերի 13-ի N 575-Ն որոշմամբ:</p> <p>Առաջարկություններ են ներկայացվել «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ, որոնք քննարկվել են ՀՀ արդարադատության նախարարությունում:</p> <p>Առաջարկություններ են ներկայացվել նաև Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերի առաջին և նկուղային հարկերում գործող զվարճանքի օբյեկտների տեղաբաշխման վայրերի և գործունեության, ինչպես նաև այդ ուղղությամբ իրավական ակտ ընդունելու անհրաժեշտության վերաբերյալ:</p>	<p>առևտրի և սպասարկման վարչություն հունվար-դեկտեմբեր</p>	
2.	Առևտրի և	Առևտրի և	Աշխատանքներ են տարվել «Վարչական իրավախախտումների		

	<p>ծառայությունների ոլորտում օրենքով տրված լիազորությունների շրջանակներում համակարգված և արդյունավետ հսկողության իրականացում:</p>	<p>ծառայությունների ոլորտում օրենքով տրված լիազորությունների շրջանակներում համակարգված և արդյունավետ հսկողության իրականացում:</p>	<p>վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 43.1-րդ, 113-րդ, 152-րդ, 156-րդ, 158-րդ, 162-րդ և 169.16-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտումները հայտնաբերելու, արձանագրություններ կազմելու ուղղությամբ:</p> <p>2016թ. վարչական շրջաններում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում խախտումների համար կազմված վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունների ընդհանուր թիվը կազմել է 1116:</p> <p>Հաշվի առնելով հարցի կանոնությունը շարունակվել են հետևողական աշխատանքներ իրականացվել նաև ժամը 24.00-ից հետո գործունեություն ծավալող օբյեկտների նկատմամբ հսկողության ուժեղացման ուղղությամբ:</p> <p>2016թ. ընթացքում թույլտվություններ չեն տրվել բազմաբնակարան շենքերի առաջին և նկուղային հարկերում գործող հանրային սննդի և զվարճանքի այն օբյեկտներին, որոնց վերաբերյալ բնակիչներից բողոքներ են ստացվել:</p>	
<p>3.</p>	<p>Բացօթյա առևտրի նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացում և կանոնակարգում, բացօթյա ապօրինի առևտրի վերացման ուղղությամբ միջոցառումների իրականացում</p>	<p>Բացօթյա առևտրի նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացում և կանոնակարգում:</p> <p>Միջոցառումներ կձեռնարկվեն Երևան քաղաքում բացօթյա ապօրինի առևտրի վերացման ուղղությամբ:</p>	<p>Առևտրի ոլորտի օրենսդրական պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով կազմակերպվել են ամենօրյա շրջայցեր, որոնց արդյունքում բացօթյա ապօրինի առևտրի արգելման ու կանխարգելման աշխատանքներ են իրականացվել Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի բակերում: Բացօթյա ապօրինի առևտրից ազատված տարածքներում առևտրի վերսկսումը բացառելու նպատակով շաբաթվա բոլոր օրերին, այդ թվում հանգստյան օրերին, կազմակերպվել են շրջայցեր:</p> <p>Քաղաքի կենտրոնական փողոցներում և հրապարակներում սահմանվել է հերթապահություն, այդ թվում աշխատանքային օրերին երեկոյան ժամը 18.00-ից մինչև 24.00-ը, իսկ շաբաթ, կիրակի և տոնական օրերին ժամը 12.00-ից մինչև 24.00-ը: Օրինազանցների նկատմամբ կազմվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ: Բացօթյա ապօրինի առևտուր իրականացնելու համար առևտրի ոլորտում տարվա ընթացքում կազմվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ 309</p>	

			<p>արձանագրություններ:</p> <p>Կանոնակարգվել է նաև օրենքով թույլատրվող ապրանքների բացօթյա առևտուրը: Շրջայցերի ընթացքում փողոցների և պողոտաների մայթերից տեղահանվել են առանց թույլտվության տեղադրված պաղպաղակի և զովացուցիչ ջրերի վաճառքի համար նախատեսված սառնարանները և ծաղիկների վաճառքի համար նախատեսված բաց տաղավարները: Պարբերաբար ուսումնասիրություններ են կատարվել Երևան քաղաքում գործող գյուղատնտեսական արտադրանքի և գյուղմթերքի փոքրածավալ բոլոր 23 շուկաներում և համապատասխան միջոցներ են ձեռնարկվել հայտնաբերված խախտումների և թերությունների վերացման, սպասարկման որակի բարելավման ուղղությամբ:</p>		
4.	Շաբաթ, կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում	Մայրաքաղաքում գյուղմթերքների առևտուրը կանոնակարգելու, արտադրող-սպառող անմիջական կապն ապահովելու, ազգաբնակչությանը թարմ ու որակյալ մթերքով ապահովելու նպատակով կշարունակվի վարչական շրջաններում շաբաթ, կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների,	Երևանի քաղաքապետարանի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության համագործակցության շնորհիվ մայրաքաղաքում գյուղմթերքների առևտուրը կանոնակարգելու, բացօթյա ապօրինի առևտուրը վերացնելու, արտադրող-սպառող անմիջական կապն ապահովելու, ազգաբնակչությանը մատչելի գներով թարմ ու որակյալ մթերքներով ապահովելու նպատակով Կասյան փողոցի սկզբնամասում և «Մալիբու» արձարանի հարևանությամբ հաջողությամբ գործունեություն են ծավալել գյուղատնտեսական մթերքների տոնավաճառները, որտեղ առևտուր են իրականացնում միայն գյուղմթերք արտադրողները:	Աշխատակազմի առևտրի և սպասարկման վարչություն 2-րդ և 3-րդ եռամսյակներ	

		տոնավաճառների կազմակերպման գործընթացը:			
5.	Մասնավոր ներդրումների հաշվին գյուղմթերքի փոքրածավալ շուկաներ ստեղծելու նպատակով դրանց տեղակայման վայրերի որոշում, քաղաքաշինական փաթեթի մշակում և կառուցում	Մասնավոր ներդրումների հաշվին գյուղմթերքի փոքրածավալ շուկաներ ստեղծելու նպատակով դրանց տեղակայման վայրերի որոշում, քաղաքաշինական փաթեթի մշակում և կառուցում:	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ահարոնյան 12 հասցեում գործունեություն է ծավալել գյուղմթերքի փոքրածավալ շուկան, որտեղ գյուղմթերք իրացնողներին աջակցելու նպատակով առևտուր իրականացնելու համար տրամադրվել են անվճար տեղեր: Աշխատանքներ են իրականացվել ներդրողներ ներգրավելու և մասնավոր ներդրումների հաշվին Նոր Նորք, Արաբկիր, Դավթաշեն և Նուբարաշեն վարչական շրջաններում գյուղմթերքի փոքրածավալ շուկաներ կառուցելու ուղղությամբ:	Աշխատակազմի առևտրի և սպասարկման վարչություն 2-րդ և 3-րդ եռամսյակներ	
6.	Երևանի վարչական շրջանների ղեկավարների կողմից տրված ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի վաճառքի ու իրացման, հեղուկ վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի առուվաճառքի,	Երևանի վարչական շրջանների ղեկավարների կողմից տրված ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի վաճառքի ու իրացման, հեղուկ վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի առուվաճառքի, քաղաքային կազմակերպման,	Պարբերաբար ուսումնասիրվել է Երևանի վարչական շրջանների ղեկավարների կողմից տրված ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի ու իրացման, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի առուվաճառքի, բացօթյա առևտրի կազմակերպման, վարչական շրջանների տարածքներում առևտրի, հանրային սննդի, շահումով խաղեր և վիճակախաղեր կազմակերպող օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվությունների, տեղական տուրքերի վճարումների առկայությունը և դրանց բացակայության դեպքում միջոցներ են ձեռնարկվել թույլտվություններ ձեռք բերելու և համապատասխան տեղական տուրքերը վճարելու ուղղությամբ: Վերոհիշյալ օբյեկտների նկատմամբ հսկողությունն ուժեղացնելու և աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով վարչությունում ստեղծված էլեկտրոնային շտեմարանում պարբերաբար կատարվել է տվյալների ճշտում:	Աշխատակազմի առևտրի և սպասարկման վարչություն հունվար-դեկտեմբեր	

	<p>բացօթյա առևտրի կազմակերպման, վարչական շրջանների տարածքներում առևտրի, հանրային սննդի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվությունների, տեղական տուրքերի մուտքերի նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացում:</p>	<p>վարչական շրջանների տարածքներում առևտրի, հանրային սննդի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվությունների, տեղական տուրքերի մուտքերի նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացում:</p>		
7.	<p>Առևտրի օբյեկտներում պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառքի դեպքերը հայտնաբերելու, արգելելու և կանխարգելելու ուղղությամբ անհրաժեշտ</p>	<p>Առևտրի օբյեկտներում պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառքի դեպքերը հայտնաբերելու, արգելելու և կանխարգելելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների</p>	<p>Աշխատանքներ են տարվել առևտրի և հանրային սննդի օբյեկտներում պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառքի դեպքերը հայտնաբերելու, արգելելու և կանխարգելելու ուղղությամբ: Հսկողություն իրականացված օբյեկտներում պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառք իրականացնելու համար կազմվել է 9 արձանագրություն:</p>	

	միջոցառումների իրականացում	իրականացում:			
8.	Ստորգետնյա անցումներում իրականացվող առևտրի նկատմամբ հսկողության իրականացում և կանոնակարգում	Ստորգետնյա անցումներում իրականացվող առևտրի նկատմամբ հսկողության իրականացում և կանոնակարգում:	Երևան քաղաքի 17 ստորգետնյա անցումներում վարչության կողմից պարբերաբար կազմակերպվել են շրջայցեր և իրականացվել են ապօրինի առևտրի արգելման ու կանոնակարգման աշխատանքներ Աբովյան – Կոռյուն փող. խաչմերուկի, Գայի, Տիգրան Մեծի պողոտաների, Գարեգին Նժդեհ հրապարակի, Վարդանանց – Խանջյան փող. խաչմերուկի, Նժդեհի փող. և Արշակունյաց պող. խաչմերուկի ստորգետնյա անցումներում:		
9.	Թափառող կենդանիների վնասազերծման աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացում:	Թափառող կենդանիների վնասազերծման աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացում:	Անհրաժեշտ հսկողություն է իրականացվել նաև թափառող կենդանիների վնասազերծման աշխատանքների նկատմամբ: «Յունիգրսֆ-Իքս» ՍՊԸ-ի կողմից ստերիլիզացվել է՝ 5306, քնեցվել 293, վնասազերծվել՝ 9923 թափառող կենդանի: Աշխատանքներ են տարվել նաև Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հոկտեմբերի 24-ի «Երևան քաղաքում ընտանի կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները հաստատելու մասին» N 312-Ն որոշման պահանջներն ապահովելու ուղղությամբ: Ընտանի կենդանիներ պահելու կանոնները խախտելու համար կազմվել է 13 արձանագրություն:	«Յունիգրսֆ-Իքս» ՍՊԸ Հունվար-դեկտեմբեր	
10	Թափառող կենդանիների վնասազերծման ոլորտի արդյունավետ կառավարման մեխանիզմների մշակում, ինչպես նաև համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորում («Կենդանիների մասին»,	Թափառող կենդանիների վնասազերծման ոլորտի արդյունավետ կառավարման մեխանիզմների մշակում, ինչպես նաև համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորում («Կենդանիների մասին», Կենդանիների պաշտպանության	Վարչությունը առաջարկություններ է ներկայացրել «Կենդանիների մասին» և «Կենդանիների պաշտպանության մասին» ՀՀ օրենքների նախագծերի մշակման և ընդունման անհրաժեշտության վերաբերյալ:	Աշխատակազմի առևտրի և սպասարկման վարչություն հունվար-դեկտեմբեր	

	Կենդանիների պաշտպանության մասին» ՀՀ օրենքների նախագծերի մշակման նպատակով առաջարկությունների ներկայացում):	մասին» ՀՀ օրենքների նախագծերի մշակման նպատակով առաջարկությունների ներկայացում):			
11	Հանրակրթական դպրոցների սովորողներին մատակարարվող սննդի նկատմամբ հսկողության իրականացում:		Երևանի քաղաքապետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում պարբերաբար կատարվել են ուսումնասիրություններ և հսկողություն է իրականացվել դպրոցական բուֆետների վիճակի և մատակարարվող սննդի որակի ապահովման ուղղությամբ: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ իրականացվել են դպրոցական բուֆետների վերանորոգման և կահավորման մեծ ծավալի աշխատանքներ:		
12	Լքյալ և չգործող կրպակների ապամոնտաժում		Ապամոնտաժվել են լքյալ և չգործող առևտրի և սպասարկման 121 կրպակներ:		
13	Սահմանել հսկողություն Երևան քաղաքի ավագանու 30.04.2015թ. N 319-Ա որոշմամբ սահմանված Երևան համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահներին ներկայացվող սահմանափակումներ ի, պահանջների և		Պարբերաբար իրականացված հսկողության շնորհիվ Երևան քաղաքում առանց թույլտվության քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահների գործունեություն չի ծավալվել, ինչպես նաև դրանց ներկայացվող սահմանափակումների, պահանջների և պայմանների ապահովման ուղղությամբ խախտումներ չեն արձանագրվել: Տրամադրվել է քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացնելու և (կամ) մատուցելու 15 թույլտվություն:		

	պայմանների սպասարկման ուղղությամբ:				
Տրանսպորտ					
Հ/ հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1.	2.	3.	4.	5.	6.
1.	Երևանի հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շարունակում և դրա շրջանակներում՝ ներքաղաքային երթուղիներում շահագործվող միկրոավտոբուսների քանակի կրճատման և դրանք ավտոբուսներով փոխարինման աշխատանքների իրականացում	Երևանի հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շարունակում և դրա շրջանակներում՝ ներքաղաքային երթուղիներում շահագործվող միկրոավտոբուսների քանակի կրճատման և դրանք ավտոբուսներով փոխարինման աշխատանքների իրականացում:	Մասնավոր ներդրումների հաշվին ձեռք է բերվել և մայրաքաղաք ներկրվել «ՊԱԶ-32054» մակնիշի թվով 10 նոր ավտոբուս: Դադարեցվել է միկրոավտոբուսային հ.56 երթուղու աշխատանքը և երթուղու սպասարկումը կազմակերպվել վերը նշված ավտոբուսներով: Արդյունքում 21 միավորով կրճատվել է միկրոավտոբուսների քանակը: Երևանի քաղաքապետի 09.12.2016թ. հ.4222-Ա որոշմամբ փակվել է միկրոավտոբուսային հ.69 երթուղին և հանվել երթուղային ցանցից, որի արդյունքում Երևանի ներքաղաքային կանոնավոր փոխադրումների գործընթացում ներգրավված միկրոավտոբուսների քանակը կրճատվել է 11 միավորով: Միաժամանակ տրանսպորտի ոլորտում նախաձեռնված համալիր բարեփոխումների շրջանակում Ասիական զարգացման բանկի հետ հայտարարված միջազգային մրցույթով ընտրվել է փորձառու խորհրդատվական կազմակերպություն, որը պետք է մշակի եվրոպական չափանիշներին համապատասխան Երևան քաղաքի նոր երթուղային ցանց, ուսումնասիրի միասնական և էլեկտրոնային տոմսային համակարգի ներդրման հնարավորությունները, կատարի սակագնի հաշվարկ:	Աշխատակազմի տրանսպորտի վարչություն, մասնավոր ներդրողներ	
2.	Փոքր և միջին տեղատարողության նոր, քաղաքային ավտոբուսների ձեռքբերման աշխատանքների շարունակում	Փոքր և միջին տեղատարողության նոր, քաղաքային ավտոբուսների ձեռքբերման աշխատանքների շարունակում	Հաշվետու ժամանակահատվածում ձեռք են բերվել «ՊԱԶ-32054» մակնիշի թվով 10 նոր ավտոբուսներ (մասնավոր ներդրողների կողմից):	Աշխատակազմի տրանսպորտի վարչություն, մասնավոր ներդրողներ	

		հիմնականում մասնավոր կազմակերպություններ ի միջոցով:			
3.	Երևանի քաղաքային ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների նոր կանգառների սահմանման և կահավորման ուղղությամբ աշխատանքների իրականացում	Երևանի քաղաքային ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների նոր կանգառների սահմանման և կահավորման ուղղությամբ աշխատանքների իրականացում:	Երևանի քաղաքապետի որոշումներով սահմանվել են հասարակական տրանսպորտի թվով 5 նոր կանգառներ. -Արգիշտիի-1 հասցեում, Արշակունյաց-278 հասցեում, Ա.Հովհաննիսյան 18 և 20 շենքերի հանդիպակաց հատվածում, Նորագավիթի 1-ին փողոցում հ.27 հասցեին հանդիպակաց հատվածում առկա գրպանիկում. Էջմիածնի հին խճուղում Հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտին հարակից հատվածում: Նշված կանգառները կահավորվել են կանգառանշաններով:	Աշխատակազմի տրանսպորտի վարչություն ՀՀ ճանապարհային ոստիկանություն	
4.	Երթակարգավարական կետերի բարեկարգման և կահավորման աշխատանքների իրականացում	Երթակարգավարական կետերի բարեկարգման և կահավորման աշխատանքների իրականացում:	Երթակարգավարական կետերի բարեկարգման և կահավորման աշխատանքներ չեն իրականացվել՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:	Աշխատակազմի տրանսպորտի վարչություն «Երևանտրանս» ՓԲԸ	
5.	Մետրոպոլիտենի վագոնների հիմնանորոգում և արդիականացում, դրենաժային թունելի վերակառուցում և ընդլայնում, գործող թունելի վիճակի բարելավում, շարժասանդուղքների հիմնանորոգում, ինչպես նաև	Մետրոպոլիտենի վագոնների հիմնանորոգում և արդիականացում, մոտ 1 կմ երկարության դրենաժային թունելի վերակառուցում և ընդլայնում («Հանրապետության հրապարակ» և «Զորավար Անդրանիկ» կայարանների	Մրցություն հաղթող ճանաչված իսպանական «Ագասոս» ընկերության կողմից իրականացվել է գործող դրենաժային թունելի երկարացման աշխատանքներ: 2016թ. ընթացքում իրականացված հորատանցման աշխատանքների արդյունքում գործող դրենաժային թունելի երկարությունը ավելացել է 130.1 գծամետրով: -Ավարտվել է ընթացային թունելների ձախ՝ ուժային բարձրավոլտ մալուխների կողմում 17 կմ երկարությամբ հողային հաղորդաձող (շինա) մոնտաժման աշխատանքները: Աջ պատի վրա արդեն մոնտաժվել է 9.0կմ երկարությամբ հողային հաղորդաձող:	«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ	

	<p>մետրոպոլիտենի շահագործման և երթևեկության անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում:</p>	<p>հատվածում), գործող թունելի վիճակի բարելավում (ներառյալ հակակոռոզիոն ծրագիր), շարժասանդուղքների հիմնանորոգում, ինչպես նաև մետրոպոլիտենի շահագործման և երթևեկության անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում:</p>			
6.	<p>Երևանի վերգետնյա էլեկտրատրանսպորտի հետագա զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում տրոլեյբուսային տնտեսության, հպակային ցանցի բարելավում, առկա շարժակազմի հիմնանորոգում</p>	<p>Երևանի վերգետնյա էլեկտրատրանսպորտի հետագա զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում՝ տրոլեյբուսային տնտեսության, հպակային ցանցի բարելավում, առկա շարժակազմի հիմնանորոգում:</p>	<p>Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները՝</p> <ul style="list-style-type: none"> - Թիվ 32 ք/ե ենթակայանի 600Վ լարման 300 մետր օդային մալուխագծերի անցկացում և վերագործարկում: - Մեքենայական բաժնի թվով 3 էլ.ամբարձիչների նորոգում: - Արտաշիսյան, Մազմանյան և Շիրազի փողոցներում տրոլեյբուսի հպակային ցանցի ընդհանուր 12000 մետր երկարության պղնձալարերի փոխարինում նոր լարերով: - Հոսանքընդունիչների գլխիկների թվով 9500 ներդիրների եռակալում և 16700 հատի մամլում: - Թվով 13 «Շկոդա» մակնիշի տրոլեյբուսների թափքերի նորոգում: - Մայրաքաղաքի տարբեր փողոցներում թվով 161 հենասյունների ներկում: - Մեքաստիա, Էրեբունի, Արցախի, Կորյունի, Ռուբինյանց, Մ.Բաբաջանյան, Սաֆարյան փողոցներում, Գայի, Տիգրան Մեծի և Մարշալ Բաղրամյան պողոտաներում նորոգվել է 7280 մետր ընդհանուր երկարությամբ հպակային ցանց՝ նախկինում օգտագործված պղնձալարերով: 	<p>Աշխատակազմի տրանսպորտի վարչություն «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ</p>	

			<p>-Ապամոնտաժվել է Նալբանդյան փողոցում առկա 5000 մետր երկարությամբ հպակային ցանցի պղնձալարերը:</p> <p>-Արշակունյաց պողոտայում անց է կացվել 7500 մետր ընդհանուր երկարությամբ հպակային ցանցի պղնձալար:</p> <p>-Վերանորոգվել են Արտաշիսյան փողոցում գտնվող թվով 18 վթարային հենասյուններ:</p> <p>-Նորերով է փոխարինվել թվով 6 տրոլեյբուսների նստատեղերի լրակազմը.</p> <p>-Արշակունյաց պողոտայում տեղադրվել է թվով 132 հպակային ցանցի բարձակ:</p>		
7.	<p>Երևան քաղաքի ավագանու 2012թ. դեկտեմբերի 25-ի «Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղեր կազմակերպելու մասին» հ.561-Ն որոշմամբ սահմանված ցանկում ներառված համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում ավտոկայանատեղերի կազմակերպմանն ու շահագործմանն ուղղված միջոցառումներ:</p>	<p>Երևան քաղաքի ավագանու 2012թ. դեկտեմբերի 25-ի «Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղեր կազմակերպելու մասին» հ.561-Ն որոշմամբ սահմանված ցանկում ներառված համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում ավտոկայանատեղերի կազմակերպմանն ու շահագործմանն ուղղված միջոցառումներ:</p>	<p>Նոր վճարովի ավտոկայանատեղեր են կազմակերպվել Լենինգրադյան, Մերաստիայի, Բաֆֆու, Զոր.Անդրանիկի, Օհանովի, Շերամի, Մամիկոնյանց և Փափազյան փողոցներում: Գործող կայանատեղերում շարունակաբար իրականացվել են ճանապարհային նշանների վերականգնման և գծանշումների թարմացման աշխատանքներ:</p> <p>Երևանի ավագանու 21.12.2016թ. հ.654-Ա որոշմամբ թույլատրվել է շարունակել ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը գործող կայանատեղերի թվով 40 կազմակերպիչներին, ինչպես նաև կազմակերպել նոր ծառայողական կայանատեղեր թվով 1 կազմակերպության:</p> <p>-Երևանի քաղաքապետի համապատասխան որոշումներով սահմանվել են մարդատար տաքսի-ավտոմոբիլների թվով 18 նոր կայանատեղեր:</p> <p>21.12.2016թ ընդունվել է «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը որպես նվիրատվություն ընդունելու եվ այդ բաժնետոմսերը հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» Երևանի քաղաքի ավագանու N 655-Ա որոշումը:</p>	<p>Աշխատակազմի տրանսպորտի վարչություն «Փարկինգ Սիթի Սերվիս» և «Լոկատոր» ՓԲԸ-ների կոնսորցիում ՀՀ ճանապարհային ոստիկանություն</p>	

8.	<p>Շահագրգիռ մարմիններից, ինչպես նաև քաղաքացիներից ստացվող առաջարկությունների համատեղ ուսումնասիրությունների արդյունքներով՝ ճանապարհային երթևեկության կազմակերպչական լուծումների կիրառում:</p>	<p>Շահագրգիռ մարմիններից, ինչպես նաև քաղաքացիներից ստացվող առաջարկությունների համատեղ ուսումնասիրությունների արդյունքներով՝ ճանապարհային երթևեկության կազմակերպչական լուծումների կիրառում:</p>	<p>Գույքագրվել է մայրաքաղաքում տեղաբաշխված՝ վնասված, գունաթափված ճանապարհային նշանները և համապատասխան միջնորդագիր է ուղարկվել ՀՀ ճանապարհային ոստիկանություն՝ դրանք վերականգնելու (փոխարինելու) համար:</p> <p>- ՀՀ ճանապարհային ոստիկանության հետ համատեղ իրականացվել են ստուգայցեր՝ մայրաքաղաքի փողոցներում տրանսպորտային միջոցների կայանման համար ապօրինի գումարներ գանձելու, տնտեսվարողների կողմից ավտոկայանատեղերում խոչընդոտների միջոցով տարածքները ապօրինի զբաղեցնելու և մայթերին ու կամարանցումների տակ մեքենաների կայանումն արգելելու ուղղությամբ:</p> <p>ՀՀ ճանապարհային ոստիկանության հետ համատեղ ուսումնասիրությունների արդյունքում՝</p> <p>-Դեղատան փողոցի՝ Մ.Մկրտչյան և Վ.Սարգսյան փողոցների միջև ընկած հատվածում փոփոխվել է միակողմանի երթևեկության ուղղությունը՝ Վ.Սարգսյան փողոցից Մ.Մկրտչյան փողոց.</p> <p>-Մ.Մկրտչյան փողոցի՝ Խորենացու և Դեղատան փողոցների հատվածում միակողմանի երթևեկության փոխարեն կազմակերպվել է երկկողմանի երթևեկություն:</p> <p>-Աբովյան փողոցում ավարտին է հասցվել h.1 հիվանդանոցի դիմացի հետադարձի տեղի կահավորման շինարարական աշխատանքները և հետիոտնային անցումների գծանշումները.</p> <p>-Նոր լուսացուցային օբյեկտներով է կահավորվել Սասունցի Դավթի-Մուրացանի և Ա.Հովհաննիսյան-Թևոսյան փողոցների խաչմերուկները.</p> <p>-Խորենացու 3-րդ նրբանցքում երթևեկությունը միակողմանի դարձնելու նպատակով նշված նրբանցքը և Գլինկայի փողոցը կահավորվել են համապատասխան ճանապարհային նշաններով:</p> <p>-Նոր ուսումնական տարվան ընդառաջ ուսումնական հաստատություններին հարակից ճանապարհահատվածներում իրականացվել են հետիոտնային անցումների գծանշումների թարմացման աշխատանքներ:</p> <p>-Փորձնական կարգով երթևեկելի մասից բարձրացվել են Սարյան, Լեռյի և Ա.Մանուկյան, Հր.Քոչարի փողոցների 2-ական չկարգավորվող</p>	<p>Աշխատակազմի տրանսպորտի վարչություն «Երևանտրանս» ՓԲԸ ՀՀ ճանապարհային ոստիկանություն</p>	
----	--	--	---	---	--

			<p>հետիոտնային անցումները.</p> <p>-Լրացուցիչ լուսացույցի տեղադրմամբ և գծանշումների միջոցով երթևեկության կազմակերպման սխեմայում փոփոխություն է կատարվել Մաշտոցի-Արգիշտիի-Ոսկերիչների-«Հաղթանակ» կամուրջ խաչմերուկում:</p> <p>-Ձմռան ամիսների համար թույլատրվել է երթևեկությունը Թամանյան փողոցի՝ Իսահակյան փողոցից դեպի «Կասկադ» համալիր ընկած հատվածում:</p>		
9.	Ուղևորների տրանսպորտային սպասարկման որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում	Ուղևորների տրանսպորտային սպասարկման որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում:	<p>-Ներքաղաքային երթուղիներում պարբերաբար իրականացվել են ստուգայցեր՝ անբավարար արտաքին տեսք և ուղեքահ ունեցող տրանսպորտային միջոցների աշխատանքը արգելելու, վարորդների կողմից աշխատանքի ժամանակ ծխելու, երաժշտություն միացնելու դեպքերը բացառելու համար:</p> <p>- Մայրաքաղաքի Ծարավ Աղբյուրի փողոցին հարակից շենքերի բնակիչների տրանսպորտային սպասարկման վիճակը բարելավելու նպատակով, փորձական կարգով, բացվել է նոր ավտոբուսային երթուղի (Ծարավ Աղբյուրի փող. – Պետ. Համալսարան հ.2Ա) և կազմակերպվել է երթուղու սպասարկումը 2 միավոր շարժակազմով:</p> <p>-Ներքաղաքային ավտոբուսային հ.հ.16, 63 և միկրոավտոբուսային հ.հ.53, 67, 70, 73 երթուղիները սպասարկող կազմակերպությունների կողմից դրանց շահագործումից հրաժարվելու արդյունքում, երթուղիների անխափան աշխատանքն ու ուղևորների սպասարկումն ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետի համապատասխան որոշումների հիման վրա կազմակերպվել է երթուղիների ժամանակավոր սպասարկումը.</p> <p>-Միկրոավտոբուսային հ.հ.28, 63 երթուղիների շահագործման արդյունավետությունը բարձրացնելու և ուղևորների սպասարկման վիճակը բարելավելու նպատակով Երևանի քաղաքապետի համապատասխան որոշումների հիման վրա ավելացվել է երթուղիներում շարժակազմի քանակները 3-ական միավորով:</p> <p>-Երևանի քաղաքապետի 04.07.2016թ. հ.2457-Ա որոշման հիման վրա դադարեցվել է միկրոավտոբուսային հ.56 երթուղու աշխատանքը, այն փոխարինվել է ավտոբուսայինով և կազմակերպվել երթուղու</p>	«Երևանտրանս» ՓԲԸ	

			<p>սպասարկումը «ՊԱԶ-32054» մակնիշի թվով 10 նոր ավտոբուսներով:</p> <p>-Երևանի քաղաքապետի 26.08.2016թ. հ.3078-Ա որոշմամբ ավտոբուսային հ.34 երթուղու աշխատանքի դադարեցումից հետո, Բաբայան, Արաբկիրի 17-րդ, 29-րդ, Ռիզայի փողոցների տրանսպորտային սպասարկման ապահովման նպատակով, միկրոավտոբուսային հ.65 երթուղին Աբովյան պուրակից (նշված փողոցներով) երկարացվել է մինչ «Կրպակ» առևտրի կենտրոն:</p> <p>-Նոր Նորքի 9-րդ զանգվածից դեպի մետրոպոլիտենի «Երիտասարդական» կայարան սպասարկվող ներքաղաքային ավտոբուսային երթուղիների շահագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով դադարեցվել է միկրոավտոբուսային հ.69 երթուղու աշխատանքը և այն հանվել երթուղային ցանցից.</p> <p>-2017թ. հունվարի 1-ից դադարեցվելու է 15 տարին լրացած միկրոավտոբուսների (2002թ. թողարկման) շահագործումը:</p>		
10	Ներքաղաքային կանոնավոր փոխադրումների երթուղիներում շահագործվող շարժակազմերի ցուցահարթակների թարմացում և գրառումների վերանայում	Ներքաղաքային կանոնավոր փոխադրումների երթուղիներում շահագործվող շարժակազմերի (ավտոբուս, տրոլեյբուս, միկրոավտոբուս) ցուցահարթակների թարմացում և գրառումների վերանայում ոչ հայեցի բառերն ու տեղանունները բացառելու համար:	Հաշվի առնելով, որ նախատեսվում է վերանայել հասարակական տրանսպորտի երթուղային ցանցը, հաշվետու ժամանակահատվածում ներքաղաքային կանոնավոր փոխադրումների երթուղիներում շահագործվող շարժակազմերի ցուցահարթակների թարմացման և գրառումների վերանայման աշխատանքներ չեն իրականացվել:	«Երևանտրանս» ՓԲԸ	
11	Հասարակական տրանսպորտի շարժակազմերում հաշմանդամություն	Հասարակական տրանսպորտի շարժակազմերում հաշմանդամություն	Պարբերաբար պատրաստվել են հաշմանդամություն ունեցող անձանց և երեխաների հետ ուղևորների տեղերը նշող ցուցանակներ և փակցվել այն ավտոբուսներում, որոնց ուղեարահներում դրանք թողարկող գործարանների կողմից ցուցանակներ չեն նախատեսվել:	«Երևանտրանս» ՓԲԸ	

	ունեցող անձանց և երեխաների հետ ուղևորների տեղերը նշելու նպատակով ուղեսրահներում համապատասխան ցուցանակների ապահովում	ունեցող անձանց և երեխաների հետ ուղևորների տեղերը նշելու նպատակով ուղեսրահներում համապատասխան ցուցանակների ապահովում:			
12	Միասնական տոմսային համակարգի անցման հնարավորության ուսումնասիրություն	Միասնական տոմսային համակարգի անցման հնարավորության ուսումնասիրություն:	ԱԶԲ-ի աջակցությամբ Երևան քաղաքի նոր երթուղային ցանց մշակման նպատակով ներգրավված արտասահմանյան խորհրդատու կազմակերպությունը պետք է ուսումնասիրի և առաջարկներ ներկայացնի նաև միասնական և էլեկտրոնային տոմսային համակարգի ներդրման հնարավորության վերաբերյալ:	Աշխատակազմի տրանսպորտի վարչություն	
13	Ավտոբուսների վերասարքավորում և հարմարեցում՝ սայլակավոր հաշմանդամների տրանսպորտային սպասարկումն ապահովելու համար	Թվով 5 ավտոբուսների վերասարքավորում և հարմարեցում՝ սայլակավոր հաշմանդամների տրանսպորտային սպասարկումն ապահովելու համար:	Շարժման սահմանափակ հնարավորություն ունեցող հաշմանդամների տրանսպորտային սպասարկման ապահովման համար հատուկ վերելակային հարմարանքներ են տեղադրվել ներքաղաքային հ.հ.3, 13, 28 երթուղիներում շահագործվող «Հիգեր» մակնիշի թվով 5 ավտոբուսների վրա:	Աշխատակազմի տրանսպորտի վարչություն, մասնավոր ներդրումներ	
14	Հասարակական տրանսպորտը կույր հաշմանդամներին մատչելի դարձնելու նպատակով ավտոբուսների ուղեսրահներում կանգառների հայտարարման սարքերի տեղադրում	Հասարակական տրանսպորտը կույր հաշմանդամներին մատչելի դարձնելու նպատակով թվով 36 ավտոբուսների ուղեսրահներում կանգառների հայտարարման սարքերի տեղադրում:	20.06.2016թ. ԵՔ-ՊԸԱՇՁԲ-16/15 Կույր հաշմանդամների՝ հասարակական տրանսպորտից օգտվելու հարմարություն և մատչելիության ապահովման նպատակով Երևանի ներքաղաքային երթուղիներում (ավտոբուսային հ.հ.13, 14, 54) շահագործվող թվով 36 ավտոբուսների ուղեսրահներում տեղադրվել են կանգառների անվանումների ավտոմատ հայտարարման սարքեր և ներկայումս նշված երթուղիների ավտոբուսներում իրականացվում է կանգառների անվանումների հայտարարումը հայերեն և անգլերեն լեզուներով:	Աշխատակազմի տրանսպորտի վարչություն «Լոկատոր» ՓԲԸ	
15	Ավտոբուսային (միկրոավտոբուսային)	Ավտոբուսային (միկրոավտոբուսային)	Կազմակերպվել է երթուղիների համալրման (փոխարինման) թվով 15 գործընթաց, որոնց ընթացքում կազմակերպությունների կողմից		

) երթուղիներում շարժակազմերի համալրման և փոխարինման աշխատանքների իրականացում:	երթուղիներում շարժակազմերի համալրման և փոխարինման աշխատանքների իրականացում:	տարբեր երթուղիներում ներկայացվել են, ընդհանուր առմամբ 190 միավոր տրանսպորտային միջոցներ:		
Բնապահպանություն					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1.	2.	3.	4.	5.	6.
1.	Ծառերի ձևավորում	Գարնանային և աշնանային ժամանակահատվածում կձևավորվի շուրջ 26000 ծառ:	Ձևավորվել է 30000 հատ ծառ և թուփ:	«Նաիրիշին» ԲԲԸ, վարչական շրջանների կանաչապատման ընկերություններ մարտի 1-ից մինչև ապրիլի 15-ը □ նոյեմբերի 1-ից դեկտեմբերի 15-ը	
2.	Ծառերի կրապատում	Երևանում կկրապատվի շուրջ 65000 ծառատեսակ:	Կրապատվել է շուրջ 75 000 հատ ծառ:	Ա/Ձ Ա. Պետրոսյան, կանաչապատման ընկերություններ մարտ- ապրիլ հոկտեմբեր-նոյեմբեր	
3.	Ծառերի և թփերի տնկում	Կտնկվի շուրջ 40000 հատ ծառ և թուփ:	Տնկվել է շուրջ 45000 հատ ծառ և թուփ:	«Նոր Բարեկարգում» ՓԲԸ	
4.	Վարդերի տնկում	Կիրականացվի 20000 հատ վարդի թփի տնկում:	Տնկվել են շուրջ 20000 հատ վարդի թուփ:	կանաչապատման ընկերություններ մայիս	
5.	Վարդակակաչի տնկում	Կկատարվի 750000 հատ վարդակակաչի տնկում:	Տնկվել է 750 000 հատ վարդակակաչի տխուկ:	կանաչապատման ընկերություններ նոյեմբեր	
6.	Ծաղկասածիլների	Կտնկվեն 2700000 հատ	Ներկրվել և ջերմատանն աճեցվել է շուրջ 2730000 ծաղկասածիլ:	մայիսի 16-հունիսի 20	

	տնկում	ծաղկասածիլներ, որի արդյունքում ծաղկապատ տարածքը կկազմի 7.3 հա:		«Նոր Բարեկարգում» ՓԲԸ, վարչական շրջանների կանաչապատման ընկերությունների	
7.	Գեղարվեստական կոմպոզիցիաների տեղադրում	Կտեղադրվեն թվով 96 հատ գեղարվեստական կոմպոզիցիաներ:	Տեղադրվել են 96 գեղարվեստական կոմպոզիցիաներ:	«Կամարաշատ» ՍՊԸ հունիս	
8.	Բուսահողի ներկրում	Կներկրվի 12753 խմ բուսահող՝ սիզամարգերի բարելավման նպատակով:	Ներկրվել է շուրջ 10525 խմ բուսահող: Օգտագործվել է 2 228 խմ պահեստավորված բուսահող:	«Նաիրիշին» ԲԲԸ հունիս-նոյեմբեր	
9.	Խորքային հորերի հորատում	Կհորատվեն թվով 2 խորքային հորեր, որոնց ջրերը կօգտագործվեն ոռոգման նպատակով՝ Կենտրոն վ.շ.- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի բակ, նոր հորի ստեղծում, Աջափնյակ վ.շ.- Ֆիզիկայի ինստիտուտի բակ, գոյություն ունեցող հորի վերաշահագործարկում:	Հորատվել է երկու խորքային հոր՝ Կենտրոն և Աջափնյակ վարչական շրջաններում:	«Հիդրոգենշին» ՍՊԸ, հունիս-հուլիս:	
10	Ոռոգման ցանցերի ստեղծում	Կստեղծվեն նոր ոռոգման ցանցեր՝ Կենտրոն վ.շ. - Դեմիրճյան փողոց՝ 1500 գծմ	Անց են կացվել ոռոգման ցանցեր հետևյալ հասցեներում՝ Դեմիրճյան փողոց՝ 1000 գծմ ոռոգման ջրագիծ, Մամիկոնյանց փողոց - 1200 գծմ ոռոգման ջրագիծ:	«Բելլիս» ՍՊԸ հունիս «Գոռտիգ» ՍՊԸ հունիս	Բյուջեի կատարման ծրագրային փոփոխության պատճառով

		Արաբկիր վ.2. - Մամիկոնյանց փողոց /սնուցումը Գրիբոյեդով փողոցից/ - 1700 գծմ Մալաթիա-Սեբաստիա վ.2. - Բսակովի պողոտա /ձախ հատված, դեսպանատան հատված/-3000գծմ, Բսակով-Լենինգրադյան պողոտա-պոմպակայանի տեղադրում:			իրականացվել են միայն 2200 գծմ ոռոգման ցանցի անկացման աշխատանքները:
11	Կանաչապատման և սանիտարական մաքրման գործընթացում համագործակցություն ուղրտի հասարակական կազմակերպությունների հետ:	Կանաչապատման և սանիտարական մաքրման գործընթացում համագործակցություն ուղրտի հասարակական կազմակերպությունների հետ:	Մի շարք բնապահպանական հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացվել են համաքաղաքային շաբաթօրյակ-ծառատունկեր: Բնապահպանական ՀԿ-ների հետ համատեղ կազմակերպվել է շրջայց՝ քաղաքի վթարային ծառերի վերաբերյալ եզրակացություն տրամադրելու նպատակով: Իրականացվել են աշխատանքներ հասարակական կազմակերպությունների հետ չոր ծառերի հատման և վթարային ծառերի երիտասարդացման աշխատանքները ավելի արդյունավետ դարձնելու նպատակով:	«Հանուն կայուն մարդկային զարգաման ասոցիացիա» ՀԿ, «Հայ կանայք հանուն առողջ շրջակա միջավայրի» ՀԿ, «Շողեր միություն» ՀԿ, «Էկոդաշինք» ՀԿ ապրիլ, մայիս, նոյեմբեր	
12	«Բնական միջավայրը և ես» ծրագիր	2015-2016 ուսումնական տարվա ընթացքում նախատեսվում իրականացնել առավել ընդլայնված ծրագիր, որը բաղկացած կլինի հետևյալ երեք բաղադրիչներից՝ - ուսուցանողների/ուսուց	«Բնական միջավայրը և ես» կրթական ծրագրի շարունակականությունն ապահովելու նպատակով տարվա ընթացքում ներգրավվել են Երևանի քաղաքապետարանի ենթակայության ևս 4 դպրոցներ /հ. 5,136, 154, 188/: Մայիսի 12-ին և 13-ին կազմակերպվել և իրականացվել են «Մենդային շղթան դպրոցների բակերում» պիլոտային ծրագրի ավարտական միջոցառումները ծրագրին մասնակից հ.56 հիմնական և հ.87 միջնակարգ դպրոցներում: Ծրագրին մասնակցում էր շուրջ 45 աշակերտ: Մայիսի 26-ին կազմակերպվել է QSI Երևանի միջազգային դպրոցում «Մենդային շղթան դպրոցների բակերում» ծրագրի շրջանակում	Աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն	

		<p>իչների վերապատրաստում (բնապահպանական կրթության մեթոդաբանության և դրա կիրառման վերաբերյալ մասնագիտական վերապատրաստում/սեբաֆիկացում),</p> <p>- «Մննդային շղթան դպրոցի բակում» պիլոտային ծրագիր:</p> <p>- «Բնական միջավայրը և ես» խորագրով դասընթացներ՝ տարբեր վարչական շրջաններում գտնվող ընտրված դպրոցներում:</p>	<p>Երևանյան երկու դպրոցների աշակերտների կողմից փորձի փոխանակման միջոցառումը:</p>		
13	Քաղաքապետերի Դաշնագիր»	<p>Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն վերջինս տեխնիկական աջակցություն կցուցաբերի Երևանի քաղաքապետարանին «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնության շրջանակում Երևանի համար ԿԶԳԾ մշակելու</p>	<p>ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից տրամադրված տեխնիկական աջակցության շրջանակում, «Էներգախնայողության աջակցման հիմնադրամ» ՀԿ հետ համատեղ մշակվել է Երևան քաղաքի Կայուն Էներգետիկ զարգացման գործողությունների ծրագիրը /ԿԷԶԳԾ/:</p> <p>Ծրագրի նախագիծն ըստ սահմանված կարգի ներկայացվել է Երևանի քաղաքապետին կից գործող խորհուրդների քննարկմանը: Խորհուրդների անդամների կողմից ներկայացված առաջարկություններն ու դիտողություններն ամփոփվել են՝ ըստ որի նախագիծը լրամշակվել է:</p> <p>Երևան քաղաքի Կայուն Էներգետիկ զարգացման գործողությունների ծրագիրը հաստատվել է Երևան քաղաքի ավագանու 24.06.2016թ. N 558-Ն որոշմամբ:</p> <p>ԵՄ «Քաղաքապետների դաշնագիր» նախաձեռնության</p>	Աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն	

		<p>գործում: Երևան քաղաքում ցածր ածխածնային և կայուն էներգետիկ զարգացմանն ուղղված ծրագրերը կյանքի կոչելու, ինչպես նաև «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնության շրջանակում ստանձնած պարտավորությունները կատարելու նպատակով՝ նախատեսվում ՄԱԶԾ հետ համատեղ մշակել և Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամին ներկայացնել «Ցածր ածխածնային և կլիմայի նկատմամբ դիմակայուն քաղաքների զարգացման խթանման» ծրագրային փաստաթուղթը:</p>	<p>ընթացակարգերին համանապատասխան՝ լրացվել է ԿԷԶԳԾ վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը և ներկայացվել «Քաղաքապետերի Դաշնագիր» նախաձեռնության համակարգող մարմնին: Եվրոպական հանձնաժողովի հետազոտությունների համատեղ կենտրոնն ուսումնասիրել և հաստատել է Երևանի «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագիրը»:</p>		
Հանրակրթություն					
Հ/ հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1.	2.	3.	4.	5.	6.
1.	Դպրոցների շենքերի	Դպրոցների շենքերի	Դպրոցների շենքերի վերանորոգման և հիմնանորոգման նպատակով	Աշխատակազմի	

	վերանորոգում և հիմնանորոգում	վերանորոգման և հիմնանորոգման շարունակականության ապահովում:	ըստ առաջնահերթության հավաքագրվել և ՀՀ քաղաքաշինության նախարարություն է ներկայացվել վերանորոգման ենթակա դպրոցների ցանկը դեռևս 2015թ. Վարչական շրջան Հիմնանորոգում Աջափնյակ Հ.հ 102,122,146,156 Արաբկիր Հ.հ 21,37,145 Ավան Հ.հ 124, հ.6 հատուկ Դավթաշեն Հ.199 Էրեբունի Հ.հ 34,49,64,68,70,107, 120,178 Կենտրոն Հ.հ 4,23,33,81, «Հ.Կոչոյան» Մալաթիա-Սեբաստիա Հ.հ 91,152,162,191 Նոր Նորք Հ.հ 88,133,141,163, 166,186,187 Նորք Մարաշ Հ.հ 157 Նուբարաշեն Հ.175 Շենգավիթ Հ.հ74,161 Քանաքեռ-Զեյթուն Հ.հ 48,85, 8 հատուկ	հանրակրթության վարչություն	
2.	Մովորողների և մանկավարժների՝ համակարգչային գրագիտության մակարդակի բարձրացում՝ որպես նորագույն տեխնոլոգիաների լայնածավալ կիրառման հիմք	Մովորողների և մանկավարժների՝ համակարգչային գրագիտության մակարդակի բարձրացում՝ որպես նորագույն տեխնոլոգիաների լայնածավալ կիրառման հիմք:	«Microsoft» ընկերության համագործակցությամբ մեկնարկվել է «Թվային դարաշրջանի դպրոցներ» ծրագիրը, համաձայն որի Երևանի հ. 98 և 76 դպրոցների/փորձնական/ առաջին դասարանցիները և դասավանդող ուսուցիչները ստացել են «Windows10» սարքավորումներ, որոնք օգտագործվելու են որպես դյուրակիր համակարգիչներ, ընդհանուր գրատախտակ, ինչպես նաև տնային առաջադրանքները կատարելու ժամանակակից միջոց: Հուլիս ամսին կազմակերպվել է ուսուցիչների վերապատրաստում:	Աշխատակազմի հանրակրթության վարչություն «Microsoft» ընկերություն	
3.	Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների՝ որպես ուսուցման նոր միջոցի, ոչ ձևական օգտագործման ապահովում	Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների՝ որպես ուսուցման նոր միջոցի, ոչ ձևական օգտագործման ապահովում	Դպրոց-կենտրոնների համագործակցությամբ իրականացվել է «Սոցիալական մեդիան և թվային գործիքների կիրառումը ուսումնական գործընթացում» միջազգային ծրագրի ներդրումը Երևանի թվով 20 դպրոցներում՝ որպես փորձարարական փուլ: Ներդրումը շարունակական է: Ներկայումս ինտերակտիվ և համագործակցային ուսուցման մեթոդները դասապրոցեսում ամենօրյա գործընթաց է: Դպրոցները շարունակում են համարվել համակարգիչներով:	Աշխատակազմի հանրակրթության վարչություն «Dasaran.am» և «Ucom» ՏՀՏ-ներ	

	դասապրոցեսում: Ինտերակտիվ և համագործակցային ուսուցման մեթոդների կիրառում	դասապրոցեսում: Ինտերակտիվ և համագործակցային ուսուցման մեթոդների կիրառում:			
4.	Երևան քաղաքի «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի սահմանում, ինչպես նաև «Տարվա լավագույն դպրոց», «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ», մրցույթի քաղաքային փուլի անցկացում	Մանկավարժների խրախուսման նպատակով սահմանել Երևան քաղաքի «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթ, ինչպես նաև շարունակել «Տարվա լավագույն դպրոց», «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ», մրցույթի քաղաքային փուլի անցկացումը:	Համաձայն Երևանի քաղաքապետի՝ 27.04.2016թ. հ.384-Ա կարգադրության՝ սահմանվել է Երևան քաղաքի՝ «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ», մրցույթները, ինչպես նաև անցկացվել է վերոնշյալ մրցույթների քաղաքային փուլը: Երևան քաղաքի «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ» կոչմանն են արժանացել համապատասխանաբար Երևանի Ն.Զարյանի անվան հ.130 դպրոցի տնօրեն Արմինե Հովհաննիսյանը, հ.135 դպրոցի կենսաբանության ուսուցիչ Գայանե Հովսեփյանը: Մրցույթների հանարապետական փուլին մասնակցելու համար հանձնաժողովների կողմից երաշխավորվել են հ.174 դպրոցի դասվար Ստելլա Սահակյանը, Ջ.Կիրակոսյանի անվան դպրոցի տնօրեն Անահիտ Խոսրովյանը:	Աշխատակազ մի հանրակրթու թյան վարչություն, դպրոցներ,	
5.	ՀՀ անկախության հոբելյանին նվիրված մարզական, Ազգային ժողովի գավաթի կիսաեզրափակիչ խաղերի անցկացում	ՀՀ անկախության հոբելյանին նվիրված մարզական, Ազգային ժողովի գավաթի կիսաեզրափակիչ խաղերի անցկացում /քաղաքային, հանրապետական փուլեր/:	Համաձայն ՀՀ ԿԳ նախարարի 29.01.2016թ. հ.50-Ա/Ք հրամանի՝ կազմակերպվել և անցկացվել է ՀՀ անկախության 25-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 25-րդ մարզական խաղերը, ինչպես նաև ԱԺ գավաթի խաղարկությունը: 25-րդ մարզական խաղերում մրցանակային 1-ին տեղ գրավել է Մալաթիա-Մեբաստիա վարչական շրջանը, 2-րդ տեղ՝ Շենգավիթը, 3-րդ տեղ՝ Դավիթաշենը: 16 մարզաձևերից առաջին տեղ գրաված թիմերը, ինչպես նաև մրցանակակիր վարչական շրջանները և ԱԺ գավաթի խաղարկության 1-6-րդ դասարանների 1-ին տեղ գրաված թիմերը պարգևատրվել են Երևանի քաղաքապետարանի կողմից:	Աշխատակազ մի հանրակրթու թյան վարչություն, դպրոցներ	
6.	Առարկայական օլիմպիադաների տարածքային,	Առարկայական օլիմպիադաների տարածքային,	ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի՝ Երևանի համայնքային և քաղաքային փուլերը կազմակերպվել են համաձայն կանոնադրության: Համայնքային փուլին մասնակցել է 7800 աշակերտ,	Աշխատա կազմի հանրա կրթության վարչություն, դպրոցներ	

	քաղաքային փուլերի կազմակերպում և անցկացում, հանրապետական փուլին աջակցում	քաղաքային փուլերի կազմակերպում և անցկացում, հանրապետական փուլին աջակցում:	իսկ քաղաքայինին՝ 2186 աշակերտ: Դիպլոմների են արժանացել՝ 1-ին կարգ՝ 45 աշակերտ 2-րդ կարգ՝ 112 աշակերտ 3-րդ կարգ՝ 158 դպրոցականներ:		
7.	Անվանակիր դպրոցների անվանատուններին նվիրված շաբաթների, տասնօրյակների և միամսյակների, հորեյանական միջոցառումների, ինչպես նաև ՀՀ քաղաքացու համակողմանի զարգացմանը նպաստող այլ միջոցառումների համակարգում	Անվանակիր դպրոցների անվանատուններին նվիրված շաբաթների, տասնօրյակների և միամսյակների, հորեյանական միջոցառումների, ինչպես նաև ՀՀ քաղաքացու համակողմանի զարգացմանը նպաստող այլ միջոցառումների համակարգում:	Դպրոցներում սովորողների ռազմահայրենասիրական, գեղագիտական, քաղաքացիական դաստիարակության ապահովման նպատակով կազմակերպվել են Մայրենիի, Եղիշե Չարենցի ծննդյան և Պոեզիայի միջազգային օրերին նվիրված համաքաղաքային միջոցառումներ: «Դասը վարում է մտավորականը» շարքի շրջանակում ՀՀ գրողների միության անդամները բաց դասեր են կազմակերպել հ.հ. 2,4,6,17,32,77, 88, 89,90, 91, 116,155,169,185, 186 դպրոցներում:	Աշխատա կազմի հանրակրթու թյան վարչություն, դպրոցներ, ՀՀ գրողների միություն	
8.	Ասմունքի, շարադրության, ինչպես նաև մտավոր առանձնահատուկ օժտվածությամբ դպրոցականների հայտնաբերման նպատակով մրցույթների կազմակերպում	Ասմունքի, շարադրության, ինչպես նաև մտավոր առանձնահատուկ օժտվածությամբ դպրոցականների հայտնաբերման նպատակով մրցույթների կազմակերպում:	Կազմակերպվել է «Կյանք արժեցող խաղաղություն» շարադրության, «Սողոմոն Թեղեքյան-120», «Գ.Նժդեհ-130», «Գր. Զոհրապ-150» ասմունքի, թատերական ներկայացումների, ինչպես նաև «Հաղթական մայիս» նշանաբանով միջդպրոցական միջոցառումներ: Համակարգվել է համաքաղաքային շարադրությունների մրցույթները /«Ես սիրում եմ իմ երկիրը», «Նամակ զինվորին», «Ամանորյա շնորհավորանք»/ առանձնահատուկ օժտվածությամբ դպրոցականների հայտնաբերման նպատակով:	Աշխատակազմի հանրակրթու թյան վարչություն, դպրոցներ	
9.	Իրականացվող մարզական և այլ	Իրականացվող մարզական և այլ կարգի	Երևանի խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների հ. 8 հատուկ կրթահամալիրի, մտավոր թերզարգացում ունեցող երեխաների	Աշխատակազմի հանրակրթության	

	կարգի մրցույթներում սահմանափակ կարողություններով երեխաների ընդգրկում: Վերջիններիս համար մայրաքաղաքի մշակութային օջախներ այցելելու ծրագրերի իրականացում	մրցույթներում սահմանափակ կարողություններով երեխաների ընդգրկում: Վերջիններիս համար մայրաքաղաքի մշակութային օջախներ այցելելու ծրագրերի իրականացում:	h.2 և h.6 հատուկ դպրոցների, ինչպես նաև ներառական կրթություն իրականացնող թվով 54 դպրոցների երեխաներ մասնակցել են հունիսի մեկին անցկացված կավճանկարի մրցույթին: Նրանց համար կազմակերպվել է այց Երևանի պատմության թանգարան: Համագործակցությամբ՝ սահմանափակ կարողություններով երեխաների համար կազմակերպվել է էքսկուրսիա Երևանի կենդանաբանական այգի, ներկայացումներով մասնակցել են «Նոան հատիկ» ծրագրին, ինչպես նաև հյուրընկալվել են ամանորյա հանդեսներում:	վարչություն, դպրոցներ	
10	Բարեկարգ շրջակայքով, կանաչապատված և ծառաշատ դպրոցի ծրագրի իրականացում	Բարեկարգ շրջակայքով, կանաչապատված և ծառաշատ դպրոցի ծրագրի իրականացում:	Գարնանային ծառատունկի շրջանում մայրաքաղաքի՝ ոռոգման հնարավորություն ունեցող դպրոցները շարունակել են կանաչապատումը՝ ծառաշատ դպրոց ծրագրի շրջանակում: Բարեկարգվել են ծրագրում ընդգրկված դպրոցների շրջակայքը՝ այն հարստացնելով ծառերով, թփերով և ծաղիկներով:	Աշխատակազմի հանրակրթության և բնապահպանության վարչություններ	
11	Մանկապարտեզների շենքերի վերանորոգման և հիմնանորոգման շարունակականության ապահովում	Մանկապարտեզների շենքերի վերանորոգման և հիմնանորոգման շարունակականության ապահովում:	Մանկապարտեզների վերանորոգման վերաբերյալ տեղեկատվությունը տես շինարարություն և բարեկարգում բաժնում:		
12	Մինչև 5 տարեկան երեխաների՝ օրենքով սահմանված կարգով նախադպրոցական կրթություն ստանալու հնարավորությունը ընդլայնող ծրագրերի իրականացում	Մինչև 5 տարեկան երեխաների՝ օրենքով սահմանված կարգով նախադպրոցական կրթություն ստանալու հնարավորությունը ընդլայնող ծրագրերի իրականացում:	Մանկապարտեզ չհաճախող առաջին դասարան ընդունվող երեխաների համար հավասար մեկնարկային պայմաններ ապահովելու նպատակով Երևանի Հ. Պարոնյանի անվան հ.59 դպրոցում բացվել է նախակրթարան՝ Երևանի քաղաքապետարանի ֆինանսավորմամբ:	Աշխատակազմի հանրակրթության վարչություն	
13	Երևան քաղաքի «Տարվա լավագույն	Դաստիարակների խրախուսման	Համաձայն Երևանի քաղաքապետի՝ 27.04.2016թ. հ.384-Ա կարգադրության՝ սահմանվել է Երևան քաղաքի՝ «Տարվա լավագույն	Աշխատակազմի հանրակրթու	

	դաստիարակ» մրցույթի կազմակերպում, «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի քաղաքային փուլի անցկացում	նպատակով կազմակերպել Երևան քաղաքի «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթ: Շարունակել «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի քաղաքային փուլի անցկացումը:	դաստիարակ» մրցույթը, ինչպես նաև անցկացվել է վերոնշյալ մրցույթի քաղաքային փուլը: Երևան քաղաքի «Տարվա լավագույն դաստիարակ» ճանաչվել է Երևանի հ.145 մանկապարտեզի դաստիարակ Նարինե Սեխիլյանը: Մրցույթների հանրապետական փուլին մասնակցելու համար հանձնաժողովների կողմից երաշխավորվել է մանկապարտեզի դաստիարակ Լուսինե Քարտաշյանը:	թյան վարչություն, մանկապարտեզներ	
14	Բարեկարգ շրջակայքով, կանաչապատված և ծառաշատ մանկապարտեզի ծրագրի իրականացում	Բարեկարգ շրջակայքով, կանաչապատված և ծառաշատ մանկապարտեզի ծրագրի իրականացում:	Գարնանային ծառատունկի շրջանում մայրաքաղաքի՝ ոռոգման հնարավորություն ունեցող մանկապարտեզները շարունակել են կանաչապատումը ծառաշատ մանկապարտեզ ծրագրի շրջանակում: Բարեկարգվել է ծրագրում ընդգրկված մանկապարտեզների շրջակայքը՝ այն լրացնելով ծառերով, թփերով և խոտածածկույթով:	Աշխատակազմի հանրակրթության և բնապահպանության վարչություններ	
15	Մանկապարտեզների գործունեության առավել թափանցիկության և հրապարակայնության ապահովում	Մանկապարտեզների գործունեության առավել թափանցիկության և հրապարակայնության ապահովում:	Ապահովվել է մանկապարտեզ՝ երեխաների ընդունելության և հաշվառման գործընթացի էլեկտրոնային ծրագրի ստեղծումը և ներդրումը:	Աշխատակազմի հանրակրթության վարչություն, Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն ՓԲԸ	
Առողջապահություն					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1.	2.	3.	4.	5.	6.
1.	Բուժսարքավորումների ձեռքբերում	Որակյալ բուժժառայության մատուցման և մատչելիության բարձրացման	1.30.03.2016թ. հ.ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/66-1 2.29.03.2016թ.հ.ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/66-2 3.25.03.2016թ. հ.ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/66-3 4.25.03.2016թ. հ.ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/66-4 5.25.03.2016թ. հ.ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/66-5	1.«Յունիմեդ» Հայ-Ռուսական ՀԶ ՍՊԸ 2.«Ավելմեդ» ՍՊԸ 3.«Մեդտեխնիկա Պլյուս» ՓԲԸ	2016թ. բյուջեով հաստատվել են հետևյալ բուժսարքավորումների

		<p>նպատակով Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպություններում 2016թ. նախատեսվում է ձեռք բերել նոր բուժսարքավորումներ, մասնավորապես՝ 10 լաբորատոր ցենտրիֆուգ 2 տրեդմիլ 1 ուլտրաձայնային դյուրակիր հետազոտման սարք /դոպպլեր/ 7 ուլտրաձայնային դյուրակիր հետազոտման սարք /տվիչով դոպպլեր/ 15 Էլեկտրասրտագրության (ԷՍԳ) երկարատև մոնիտորինգի կրովի համակարգ 10 կուագուլոմետր 10 բինոկուլյար մանրադիտակ 5 ուլտրաձայնային թերապիայի սարքավում 5 լազերային թերապիայի սարքավորում</p>	<p>6.25.03.2016թ. հ.ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/66-6 7.16.06.2016թ. հ. ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/115 Ձեռք են բերվել հետևյալ բուժսարքավորումները՝</p> <ul style="list-style-type: none"> • Լաբորատոր ցենտրիֆուգ - 10 հատ, • Տրեդմիլ – 2 հատ, • Ուլտրաձայնային դյուրակիր հետազոտման սարք՝ /դոպպլեր/ - 1 հատ, • Ուլտրաձայնային դյուրակիր հետազոտման սարք՝ տվիչով- 5 հատ, • Էլեկտրասրտագրության (ԷՍԳ) երկարատև մոնիտորինգի կրովի համակարգ- 15 հատ, • Բինոկուլյար մանրադիտակ – 10 հատ, • Ուլտրաձայնային թերապիայի սարքավում – 6 հատ, • Լազերային թերապիայի սարքավորում - 6 հատ 	<p>4.«Մեդտեխսերվիս» ՍՊԸ 5.«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ 6.«Մեդիսար» ՓԲԸ 7. «ԹԱԳՀԷՍ» ՍՊԸ</p>	<p>ձեռքբերումը:</p>
--	--	---	---	---	---------------------

2.	Վիրահատությունների ձեռքբերում	Երևանի սոցիալապես անապահով բնակչության համար վիրաբուժական ծառայությունների տրամադրման նպատակով 2016 թվականին նախատեսվում է ձեռք բերել գինեկոլոգիական թվով 166 հատ և աչքի կատարակտայի թվով 294 հատ վիրահատություններ:	Ծրագիրը բյուջեով չի հաստատվել:		
3.	«Ձեզ համար կանայք» և «Երևանյան ամառ» առողջապահական ակցիաների կազմակերպում	Երևանի բնակչության համար ամեն տարի անցկացվող և արդեն ավանդական դարձած «Ձեզ համար կանայք» և «Երևանյան ամառ» առողջապահական ակցիաները կիրականացվեն նաև 2016թ.:	Ծրագիրը բյուջեով չի հաստատվել:		
4.	Համաբուժարաններում ջեռուցման համակարգի անցկացում	2016թ. Երևանի քաղաքապետարանի ենթակայության թվով 9 համաբուժարաններում նախատեսվում է անցկացնել ջեռուցման համակարգ, որի արդյունքում Երևանի քաղաքապետարանի	Կատարվել են ջեռուցման հակարգերի կառուցման և լուսամուտների փոխարինման աշխատանքներ: հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/101-1, 29.06-31.08.16թ. 1.«Նորագավիթ պոլիկլինիկա» ՓԲԸ հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/101-1, 29.06-31.08.16թ. 2.«Սրտաբանության ԳՀԻ» ՓԲԸ հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/101-2, 29.06-31.08.16թ. 3.«Թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/101-3, 29.06-31.08.16թ.	1.«Վահախշին» ՍՊԸ 2.«Վահախշին» ՍՊԸ 3.«Վ.Վարդանյան» ՍՊԸ 4.«Դի.Ջի.Էյ.Թի» ՍՊԸ 5.«Ազարակ» ԲԲԸ 6.«Վահախշին» ՍՊԸ 7.«Տրանսունիվերսալ» ՓԲԸ, 8.«Շինհայ-ՊՈ» ՍՊԸ	

		<p>ենթակայության բոլոր համարումարաններում ամբողջովին կլուծվի ջեռուցման ապահովման խնդիրը:</p> <p>4.«Կարմիր Բլուր պոլիկլինիկա» ՓԲԸ հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/101-4, 29.06-31.08.16թ. 5.«Նուբարաշեն պոլիկլինիկա» ՓԲԸ ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/101-1, 29.06-31.08.16թ . 6.«Արշակունյաց պոլիկլինիկա» ՓԲԸ հ. ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/101-5, 29.06-31.08.16թ. 7.«Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/101-6, 29.06-31.08.16թ. 8.«Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ հ.ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/101-7, 29.06-31.08.16թ 9.«Թիվ 5 պոլիկլինիկա» ՓԲԸ ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/105-1, 20.07-30.09.16թ. 10.«Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի լուսամուտների փոխման աշխատանքներ ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/105-2, 20.07-30.09.16թ. 11.«Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի ջեռուցման աշխատանքներ ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/112, 19.08-20.11.16թ. 12«Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» ՓԲԸ ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/115-2, 13.09-01.12.16թ. 13.«Նորագավիթ պոլիկլինիկա» ՓԲԸ 14.«Թիվ 12 պոլիկլինիկա» ՓԲԸ ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/115-1, 13.09-01.12.16թ. 15. «Թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ 16. «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/115-3, 13.09-01.12.16թ. 17. «Նուբարաշեն պոլիկլինիկա» ՓԲԸ 18. Բարերար Սառա Եսայանի կողմից կատարվել է նվիրատվություն, որի շնորհիվ հիմնանորոգվել է Կ.Եսայանի անվ. Պոլիկլինիկա ՓԲԸ-ն:</p> <p>«Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» ՓԲԸ-ի շենքի վերանորոգման աշխատանքները դադարեցվել են անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով: Աշխատանքները կշարունակվեն 2017թ.:</p>	<p>9.«Արտյոն Մինասյան» ՍՊԸ 10.«Ոսկանյանշին» ՍՊԸ 11.«Դի.Ջի.Էյ.Թի» ՍՊԸ 12.«Հիդրովերանորոգում» ՍՊԸ 13, 14,«Արտ Պլասս» ՍՊԸ 15, 16,«Արա-Արաքս Գրուպ» ՍՊԸ 17,«Շինարար-97» ՍՊԸ</p>	
--	--	--	---	--

5.	Երևանի բնակչության համար պետության կողմից երաշխավորված թանկարժեք և դժվարամատչելի հետազոտության կոմպյուտերային տոմոգրաֆիային ծառայության տրամադրում	Երևանի սոցիալապես անապահով բնակչության համար դժվարամատչելի հետազոտությունների տրամադրման նպատակով 2016 թվականին նախատեսվում է ձեռք բերել 200 կոմպյուտերային տոմոգրաֆիային ծառայություն:	11.03.2016թ. հ.ԵՔ-ՊԸԾՁԲ-16/28 Ձեռք է բերվել 200 հատ կոմպյուտերային տոմոգրաֆիայի ծառայություն:	«Սլավոնդ Բժշկական կենտրոն» ՍՊԸ մինչև 25.12.2016թ.	
----	--	---	--	---	--

Սոցիալական ապահովություն

Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1.	2.	3.	4.	5.	6.
1.	Պետական սոցիալական օժանդակության ծրագրեր	Սոցիալական ոլորտում բարեփոխումների արդյունքում կներդրվի ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգը, որը կնպաստի սոցիալական ծառայությունների մատուցման մատչելիությանը շահառուների համար, ինչպես նաև կմեծացնի հասցեականությունը: 2016թ. ընթացքում	Փաստագրվել են շուրջ 21213 կարիքավոր ընտանիքներ, իսկ միջին հաշվով շուրջ 18071 ընտանիքներ ստացել են ընտանեկան, սոցիալական նպաստներ և հրատապ օգնություններ: 12 ՍՍՏԲ-ներում ուսումնասիրվել են ընտանեկան, սոցիալական նպաստի և հրատապ օգնության գործերը: Հայտնաբերված թերությունների արդյունքում ավել վճարված գումարները վերադարձվել են ՀՀ պետական բյուջե:	Աշխատակազմի սոցիալական ապահովության վարչություն 12 ՍՍՏԲ-ների Յուրաքանչյուր ամիս	

		Երևան քաղաքում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում կփաստագրվեն շուրջ 17500 ընտանիք և կստանան պետական նպաստներ:			
2.	Մարտի 8-ի կապակցությամբ միջոցառումների կազմակերպում	Մարտի 8-ի Կանանց միջազգային օրվա կապակցությամբ կկազմակերպվեն միջոցառումներ՝ նվիրված կարիքավորության գնահատման համակարգում հաշվառված և սոցիալական խմբեր ներկայացնող շուրջ 2000 կանանց համար այդ թվում՝ Երևանում բնակվող սոցիալապես անապահով սիրիահայ ընտանիքներին:	Կազմակերպվել է կանաց միջազգային օրվան՝ մարտի 8-ին նվիրված հանդիսություն Հ.Պարոնյանի անվան թատրոնում՝ բոլոր սոցիալական խմբերը ներկայացնող 2000 կանանց /այդ թվում նաև սիրիահայերի/մասնակցությամբ: Տոնական ներկայացման ավարտից հետո կանանց տրամադրվել են նվերներ:	Աշխատակազմի սոցիալական անապահովության վարչություն	
3.	Ապրիլի 7-ի կապակցությամբ միջոցառումների կազմակերպում	Ապրիլի 7-ին՝ Մայրության օրվա կապակցությամբ մայրության խրախուսման նպատակով նորածին երեխաներ ունեցող	Ապրիլի 7-ին մայրության օրվա կապակցությամբ իրականացվել է մեկանգամյա նպաստի վճարման ծրագիր 3 և ավելի երեխաներ ունեցող, ինչպես նաև անապահովության գնահատման համակարգում հաշվառված կարիքավոր, բազմազավակ մայրերի համար: Այցելություն է կատարվել 125 ընտանիքներ, նրանց փոխանցվել են քաղաքապետի շնորհավորական բացիկները, տրամադրվել է դրամական աջակցություն:	Աշխատակազմի սոցիալական անապահովության վարչություն	

		կարիքավոր բազմազավակ մայրերին կտրամադրվի դրամական աջակցություն:			
4.	Ապրիլի 24-ին միջոցառումների կազմակերպում	Եղեռնի 101-ամյակի կապակցությամբ՝ ապրիլի 24-ին 8 վերապրած քաղաքացիների կտրամադրվի դրամական օգնություն:	Եղեռնը վերապրած 4 քաղաքացիների տրամադրվել է դրամական աջակցություն:	Աշխատակազմի սոցիալական ապահովության վարչություն	
5.	Սոցիալապես անապահով Երևանաբնակ կարիքավոր ծնողների համար սահմանափակ գոտիների գործառնության այցելություններ	Սոցիալապես անապահով երևանաբնակ կարիքավոր շուրջ 2000-2500 ծնողների համար կկազմակերպվի տեսակցության ակցիա սահմանափակ գոտիներում՝ Տավուշի, Սյունիքի և Լեռնային Ղարաբաղի գործառնություն ծառայող իրենց զինվոր որդիների հետ/:	Կազմակերպվել է ծնողների այցելություն Տավուշի, Սյունիքի և Լեռնային Ղարաբաղի գործառնություն իրենց զինվոր որդիներին տեսակցելու նպատակով: Ծրագրերի շրջանակներում լավագույն հրամանատարներն ու զինծառայողները պարգևատրվել են Երևանի քաղաքապետի պատվոգրերով և հուշանվերներով, տվյալ գործառնություն նվիրաբերվել են անհրաժեշտ պարագաներ, հոգ է տարվել ծնողների անվտանգ և հարմարավետ տեղափոխության և սննդի մասին:	Աշխատակազմի սոցիալական ապահովության վարչություն, 12 վարչական շրջաններ	
6.	Սոցիալապես անապահով կարիքավոր, բազմազավակ ընտանիքների երեխաների	Սոցիալապես անապահով կարիքավոր, բազմազավակ ընտանիքների շուրջ 1200 երեխաներ /7-13	ՀՀ վարչապետի 2016թ. մայիսի 30-ի հ. 444-Ս որոշմամբ՝ Երևանի քաղաքապետարանը ՀՀ կառավարության հետ համատեղ պետական բյուջեի միջոցների հաշվին 3 հերթափոխով կազմակերպել է գոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողագուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքի 7-13 տարեկան 1170 երեխաների ամառային հանգստի ծրագիրը Ծաղկաձորի, Հանքավանի	Աշխատակազմի սոցիալական ապահովության վարչություն, վարչական շրջաններ	

	ամառային հանգստի կազմակերպում	տարեկան/ իրենց ամառային հանգիստը կանցկացնեն Ծաղկաձորի, Հանքավանի և այլ մանկական ճամբարներում:	և այլ մանկական ճամբարներում:		
7.	Տարեցների օրվա կապակցությամբ միջոցառումների կազմակերպում	Տարեցների օրվա կապակցությամբ (հոկտեմբերի 1)՝ տարեցներին (մասնավորապես 100 և ավելի տարիք ունեցող) կտրամադրվի դրամական օգնություն:	100 և ավելի տարիք ունեցող երևանաբնակ 19 տարեցների տրամադրվել է սոցիալական աջակցություն: «Էրեբունի-Երևան 2798» սոցիալական ծրագրերի շրջանակներում ավելի քան 700 տարեցների նվիրաբերվել է կենցաղային տեխնիկա: Տարեցների համար կազմակերպվել են հանդիսություններ, «Երևան-սիթի տուր» ծրագրով կազմակերպվել է շրջագայություն:	Աշխատակազմի սոցիալական ապահովության վարչություն	
8.	Դեկտեմբերի 3-ին՝ հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ միջոցառումների կազմակերպում	Դեկտեմբերի 3-ին՝ հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ կիրականացվեն միջոցառումներ, սոցիալական հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններին համաքաղաքային նշանակության սոցիալական ծրագրերի իրականացման կամ համաֆինանսավորման նպատակով կցուցաբերվի	Հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ դրամական աջակցություն է տրամադրվել Հայաստանի կույրերի, խուլերի միավորումներին և հաշմանդամություն ունեցող կարիքավոր թվով 123 քաղաքացիների:	Աշխատակազմի սոցիալական ապահովության վարչություն	

		դրամական օժանդակություն:			
9.	Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ միջոցառումների կազմակերպում	Կարիքավորության գնահատման համակարգում ընդգրկված սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ նախատեսվում են միջոցառումներ:	Անապահովության գնահատման համակարգում հաշվառված և սոցիալական այլ խմբերի 4000 երեխաներ մասնակից են եղել ամանորյա տոնական միջոցառումներին, հատկացվել են քաղցրավենիքի փաթեթներ:	Աշխատակազմի սոցիալական ապահովության վարչություն	
10	ՀՀ կառավարության 10.09.2015թ. հ. 1069-Ն որոշմամբ սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման նպատակով սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված բնակելի տարածության կարիք ունեցող անձանց (ընտանիքներին) հաշվառման աշխատանքների իրականացում:	ՀՀ կառավարության 10.09.2015թ. հ. 1069-Ն որոշմամբ սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման նպատակով սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված բնակելի տարածության կարիք ունեցող անձանց (ընտանիքներին) հաշվառման աշխատանքների իրականացում:	Սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման նպատակով ՄՍՏԲ-ների միջոցով իրականացվել են 9-ը ընտանիքների հաշվառման աշխատանքներ և սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:	Աշխատակազմի սոցիալական ապահովության վարչություն	
11	«Ընտեգրված	Ծրագրի արդյունքում	Երևան քաղաքում սոցիալական ծառայությունների համալիր	Աշխատակազմի	

	սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում, բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների կատարելագործում» ծրագիր	ակնկալվում է նոր որակի ծառայությունների տրամադրում, սոցիալական ծառայությունների մատչելի մատուցում, սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգերի միջև տեղեկատվության փոխանակությունն ապահովող ինքնաշխատ ծրագրի կիրառում և հասցեականության մեծացում:	կենտրոններ են ստեղծվել 5 վարչական շրջաններում՝ Աջափնյակում, Ավանում, Նորք-Մարաշում, Նուբարաշենում, Դավթաշենում:	սոցիալական ապահովության վարչություն	
12	«Տարեցների համար սոցիալական աջակցության ծրագրերի իրագործում, ցերեկային խնամքի կենտրոնների (բարեգործական ճաշարանների) գործունեության կազմակերպում» ծրագիր	Ծրագրի արդյունքում սոցիալապես անապահով տարեցներին կցուցաբերվի համապատասխան սոցիալական օգնություն և խնամք, ինչպես սոցիալական կենտրոններում, այնպես էլ տնային պայմաններում: Կապահովվի ակտիվ կենսակերպ:	Կազմակերպվել են այցելություններ Երևան քաղաքի 10 վարչական շրջաններում գործող բարեգործական ճաշարանների և տարեցների սոցիալական սպասարկման կենտրոններ, տրամադրվել է աջակցություն: Հսկողություն է իրականացվել կենտրոնների գործունեության նկատմամբ, աշխատանքներ են իրականացվել նկատված թերացումները վերացնելու ուղղությամբ:	Աշխատակազմի սոցիալական ապահովության վարչություն	

13	<p>«Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ստեղծում, նրանց աստիճանական ինտեգրում և սոցիալական աջակցություն» ծրագիր</p>	<p>Ծրագրի արդյունքում կարիքավոր հաշմանդամների և կապահովվի տարաբնույթ սոցիալական աջակցությունների և ծառայությունների մատուցում, ինչպես նաև քաղաքային ենթակառուցվածքների և սոցիալական ոլորտը սպասարկող հիմնարկներում կատեղծվեն հաշմանդամների համար հատուկ նշանակության պայմաններ, մատչելիության ապահովման նպատակով կտեղադրվեն սարքեր և սարքավորումներ <input type="checkbox"/> Մայրաքաղաքի մարզամշակույթային շենք-շինությունները կհարմարեցվեն հաշմանդամություն ունեցող անձանց: Հաշմանդամների անարգել տեղաշարժն ապահովվելու</p>	<p>«Ավելի մատչելի Երևան» ծրագրի շրջանակներում. ա/փողոցներում կառուցվել են 275 թեքահարթակներ, բ/ներքաղաքային երթուղային ևս 5 ավտոբուսներ կահավորվել են հատուկ վերելակային հարմարանքներով, գ/ տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար փողոցների խաչմերուկներում, հետիոտնային անցումներում՝ որպես ազդանշան /մայթի մոտալուտ վերջնամասի վերաբերյալ/ կառուցվել են գոգավոր սալիկներով 73 հարթակներ: դ/քաղաքապետարանի ենթակայության թվով 54 հանրակրթական դպրոցներում և թվով 8 ՆՈՒՀ-երում իրականացվում է ներառական կրթություն:</p>	<p>Աշխատակազմի սոցիալական ապահովության վարչություն</p>	
----	---	--	---	--	--

	<p>նպատակով Երևանի քաղաքապետարանը, հաշմանդամների կողմից ներկայացված առաջնահերթությամբ, մայրաքաղաքի հանրային նշանակության տարբեր վայրերում կառուցում է թեքահարթակներ, աշխատանքներ են տարվում նաև հանրային տրանսպորտը վերջիններիս մատչելի դարձնելու ուղղությամբ: Երևանի կենտրոնական փողոցների խաչմերուկներում կտեղադրվեն ձայնային ազդանշաններով լուսակիրներ, երթուղիներում կգործարկվեն կանգառների ձայնային իրազեկման համակարգեր, իսկ տրանսպորտային միջոցներում սայլակավոր ուղևորների համար կտեղադրվեն</p>			
--	---	--	--	--

		վերելակներ: Սայլակավոր քաղաքացիների, ինչպես նաև նրանց փոխադրումն իրականացնող տրանսպորտային միջոցների համար կառանձնացվեն գծանշված տարածքներ:			
14	Անօթևան անձանց ժամանակավոր կացարանում տեղավորում	Անօթևան անձանց ժամանակավոր կացարանում տեղավորում:	Մայրաքաղաքի փողոցներից հավաքագրվել և անօթևանների ժամանակավոր կացարան են տեղափոխվել 145 անօթևաններ, որոնցից 22-ը՝ քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակված անձիք են: Ներկայումս կացարանում գտնվող անօթևաններին ցուցաբերվում են սոցիալական տարաբնույթ ծառայություններ՝ հասարակական ինտեգրման նպատակով:	Աշխատակազմի սոցիալական ապահովության վարչություն, վարչական շրջաններ Կոֆոեդ հիմնադրամ	
15	Բնակարանային ֆոնդի ձևավորման ռազմավարական ծրագրի իրագործում	Ծրագրի արդյունքում նախատեսվում է կարիքավոր ընտանիքների բնակարանային խնդիրների աստիճանական կարգավորում:	Բնակարանի կարիք ունեցող Արցախյան պատերազմում զոհված, վիրավոր ազատամարտիկի ընտանիքներին, ինչպես նաև ապրիլյան պատերազմում զոհվածների ընտանիքների նվիրաբերվել են 10 բնակարաններ:	Աշխատակազմի սոցիալական ապահովության վարչություն	
16	«Բազմազավակ ընտանիքների բնակարանային և սոցիալ-կենցաղային պայմանների բարելավմանն ուղղված ծրագրերի իրագործում» ծրագիր	Ծրագրի արդյունքում ակնակալվում է կարիքավոր բազմազավակ ընտանիքների սոցիալական հոգսերի թեթևացում, բնակարանային	Բնակարանի կարիք ունեցող բազմազավակ կարիքավոր մի շարք ընտանիքների նվիրաբերվել են բնակարաններ:	Աշխատակազմի սոցիալական ապահովության վարչություն	

		խնդիրների աստիճանական կարգավորում, ծնելիության խրախուսում:			
17	«Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների, հաշմանդամ դարձած ազատամարտիկների, Հայրենական Մեծ և Աֆղանական պատերազմների վետերանների, ցեղասպանությունը վերապրած և աջակցության կարիք ունեցող այլ ընտանիքների համար սոցիալական աջակցության ծրագրերի իրագործում» ծրագիր	Ծրագրի արդյունքում ակնկալվում է վետերանների և նրանց ընտանիքների շրջանում աղքատության մակարդակի կրճատում, հարկային ոռոշակի պարտավորությունների նկատմամբ սահմանված արտոնությունների շարունակականության ապահովում, արժանապատիվ կենսակերպի ապահովում: 2016թ. Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների, հաշմանդամ դարձած ազատամարտիկների, Հայրենական և Աֆղանական պատերազմների	Ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ Երևանի բժշկական հաստատություններում բուժօգնություն ստացող ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում վիրավորված զինծառայողներին և ազատամարտիկներին անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու համար: Երևանի քաղաքապետի համապատասխան կարգադրություններով առաջնագծում զոհված, ինչպես նաև վիրավոր ազատամարտիկների 19 ընտանիքների տրամադրվել է դրամական աջակցություն: Դրամական աջակցություն է տրամադրվել նաև առաջնագծում վիրավորված՝ ԼՂՀ և ՀՀ մարզերի բնակիչ հանդիսացող 21 զինծառայողների: Վետերանների ակտիվ և արժանապատիվ կենսակերպի ապահովման նպատակով մայրաքաղաքում բնակվող շուրջ 400 վետերանները ընդգրկվել են գրեթե բոլոր սոցիալական ծրագրերում, մասնակից եղել տարբեր միջոցառումների: Մայիսի 9-ին՝ Հաղթանակի օրվա կապակցությամբ կազմակերպվել է վետերանների այցը Հաղթանակ գրոսայգի, կազմակերպվել են տոնական ճաշկերույթներ, միջոցառումներ, մեծարվել են վետերանները, նրանց տրամադրվել է դրամական աջակցություն:	Աշխատակազմի սոցիալական ապահովության վարչություն	

		վետերանների համար կազմակերպվեն միջոցառումներ, կտրամադրվի դրամական աջակցություն:			
18	«Սոցիալական գործընկերություն հասարակական կառույցների հետ» ծրագիր	Ծրագրի արդյունքում՝ համատեղելով Երևանի քաղաքապետարանի և համապատասխան հասարակական կառույցների ջանքերը, առավել արդյունավետ ձևով կյանքի կկոչվեն սոցիալական ծրագրեր՝ ուղղված հասարակության մեջ առկա սոցիալական խնդիրների լուծմանը:	Քաղաքապետարանի և հասարակական կազմակերպությունների համագործակցությամբ Երևանում իրենց գործունեությունն են շարունակել բարեգործական 18 ճաշարանները՝ որտեղ օրական մեկ անգամ տաք կերակուր են ստանում կարիքավոր շուրջ 2400 շահառուներ: Համագործակցությունը շարունակվել է Երևան քաղաքում սոցիալական ապահովության խնդիրներով զբաղվող «Գերմանական կարմիր խաչ», «Առաքելություն Հայաստան», «Հայ օգնության ֆոնդ», «Հանս Քրիստիան Կոֆոեդ», «Միրիահայերի խնդիրների համակարգման խորհուրդ», «Հայաստանի վետերանների խորհուրդ», «Արցախյան պատերազմի մասնակից կանանց հանրապետական խորհուրդ», Արցախում զոհվածների և անհայտ կորած ազատամարտիկների կազմակերպությունների հետ, որոնց շրջանակներում իրականացվել են սոցիալական աջակցություն տարբեր ծրագրեր, շահառուներին տրամադրվել են նվերներ:	Աշխատակազմի սոցիալական ապահովության վարչություն	

Մշակույթ

Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1.	2.	3.	4.	5.	6.
1.	Պետական և ազգային տոներին նվիրված, ինչպես նաև միջազգային մշակութային միջոցառումների կազմակերպում	2016 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել մի շարք պետական և ազգային տոներին նվիրված միջոցառումներ	ԵՀ-ԲԸՄԶԲ-15/1 Կազմակերպվել է ամանորյա տոնական միջոցառում: Հանրապետության հրապարակում տեղի է ունեցել Սուրբ Ծննդյան տոնին նվիրված միջոցառում: Ամանորի և Սուրբ ծննդյան միջոցառումները եզրափակվել են Հանրապետության հրապարակում տեղի ունեցած «Իմ հին ու նոր Նոր	«Էյ Դի Վի Մեդիա ԷՍ» ՄՊԸ 31.12.2015-01.01.2016 Հունվարի 6 Հունվարի 13	

	<p>Ամանորին, Մայրության և գեղեցկության տոնին, Թատրոնի միջազգային օրվան, Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան, «Թանգարանների միջազգային օրվան», «Վերջին զանգ», Երեխաների իրավունքների պաշտպանության օրվան, Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա մրցույթ- փառատոնին, Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես- փառատոնին, Ջազի միջազգային օրվան, Երիտասարդության միջազգային օրվան, «Երևանյան ամառ» եռամսյա ծրագրին, «Էրեբունի-Երևան» տոնակատարությանը, «Գրադարանավարի օրվան» և Հայ</p>	<p>տարի» խորագրով տոնական հանդիսությամբ: Զորավար Անդրանիկի ծննդյան 151-րդ տարեդարձի առթիվ Եռաբլուրում կազմակերպվել և իրականացվել է միջոցառում: ԵՀ-ԲԸԾՁԲ-16/1-3 Կանանց միջազգային օրվա կապակցությամբ մայրաքաղաքում կազմակերպվել և իրականացվել են մի շարք միջոցառումներ: Մասնավորապես կազմակերպվել են «Քեզ համար, մայրի՛կ» խորագրով համերգը, «Իմ սրտի բանալի» խորագիրը կրող համերգային ծրագիրը «Կինը՝ քաղաքային տնտեսությունում» խորագրով լուսանկարների ցուցահանդեսը, «Տոնական վագոն» ծրագիրը և այլն: ԵՀ-ԲԸԾՁԲ-16/1-1 ԵՀ-ԲԸԾՁԲ-16/1-2 Երևանի քաղաքապետի կողմից կազմակերպվել է ընդունելություն՝ նվիրված Թատրոնի միջազգային օրվան: «ԵՀ-ԲԸԾՁԲ-16/1-3 Իրականացվել է Հայոց ցեղասպանության 101-րդ տարելիցին նվիրված միջոցառում Ծիծեռնակաբերդում՝ Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախմբի և Էստոնիայից ժամանած երգչախմբի մասնակցությամբ: ԵՀ-ԲԸԾՁԲ-16/1-3 Ջազի միջազգային օրվա շրջանակում Կասկադ համալիրի հարակից տարածքում կազմակերպվել է համերգային ծրագիր՝ «Հանուն համամարդկային արժեքների» խորագրով: ՍՊԸ ԵՀ-ՊԸԾՁԲ-16/4 Անց է կացվել Երևանի քաղաքապետարանի երաժշտական և արվեստի դպրոցների 9-րդ մրցույթ-փառատոնը 10 անվանակարգերով: Երևանի և Իրանի քաղաքների միջև համագործակցության շրջանակում Երևանի պատվիրակությունը մասնակցել է Իրանի «Պերսեպոլիս» արգելոց-թանգարանում անցկացված ուրարտական ժառանգությանը նվիրված ցուցահանդեսին և գիտական նստաշրջանին: ԵՀ-ԲԸԾՁԲ-16/1-3 Իրականացվել է մայրաքաղաքի հանրակրթական դպրոցների 2015- 2016 ուսումնական տարվա շրջանավարտների «Վերջին զանգ»-ին</p>	<p>Փետրվարի 25 «Բրիդջ» ՍՊԸ Մարտի 8 «Էներգապլաստ» ՍՊԸ և «Թի Էն Սաունդ» ՍՊԸ Մարտի 27 Բրիդջ» ՍՊԸ Ապրիլի 24 «Բրիդջ» ՍՊԸ Ապրիլի 30 «Լայթ լայֆ» Մայիսի 11-ից-23-ը Մայիսի 14-ից 19-ը «Բրիդջ» ՍՊԸ Մայիսի 27</p>	
--	---	---	---	--

	<p>ականավոր գործիչների և մտավորականների հիշարժան տարերթվերին: Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում ևս կիրականացվեն վերոնշյալ իրադարձություններին նվիրված թեմատիկ միջոցառումներ: Տարվա ընթացքում մայրաքաղաքում կանցկացվեն նաև մի շարք միջազգային մշակութային միջոցառումներ՝ «ՀայՖեստ» միջազգային թատերական փառատոնը, «Ոսկե Ծիրան» միջազգային կինոփառատոնը, «Ռեանիմանիա» Երևանի միջազգային անիմացիոն կինոյի և պատկերապատման արվեստի փառատոնը, «Երևանյան հեռանկարներ» միջազգային փառատոն և այլն, որոնց իրականացման նպատակով Երևանի</p>	<p>նվիրված ծրագիրը: Կազմակերպվել է Գարեգին Նժդեհի արձանի բացման հանդիսավոր արարողությունը և գեղարվեստական ծրագիրը: ԵՀ-ԲԸԾՁԲ-16/1-3</p> <p>Կազմակերպվել է երեխաների իրավունքների պաշտպանության օրվա առթիվ «Երևանը՝ փոքրիկների համար» խորագրով անցկացվող միջոցառումների շարք, մասնավորապես «Մանուկների երազանքները կավճանկարներով» կավճանկարչություն և մանկական տոնական համերգային ծրագիրը, Հաղթանակ» զբոսայգում մանկական երգի ու պարի փառատոնը, «Երազանքի պուրակում» մանկական համերգային միջոցառումը և այլն: ԵՀ-ԲԸԾՁԲ-16/1-3</p> <p>Կազմակերպվել է «Երևանյան ամառ 2016». պատանի ստեղծագործողների մրցույթ-փառատոն՝ նվիրված Արամ Խաչատրյանի ծննդյան 113-ամյակին: ԵՀ-ԲԸԱՀԾՁԲ-16/1</p> <p>«Երևանյան ամառ 2016» եռամսյա միջոցառումների ծրագրի շրջանակում մայրաքաղաքի Թումանյանի անվան այգում կազմակերպվել է «Համով-հոտով Երևան» խորագրով «Հացը լեռներում» տոնածիսական ուտեստների 8-րդ փառատոնը: ԵՀ-ԲԸԾՁԲ-16/1-3</p> <p>«Երևանյան ամառ 2016» եռամսյա միջոցառումների ծրագրի շրջանակում Թարգմանչաց տոնի առթիվ Երևանի քաղաքապետարանի ճեմասրահում բացվել է «Ընթերցող Երևան» խորագրով գրքի ցուցահանդես-վաճառք: ԵՀ-ԲԸԾՁԲ-16/1-3</p> <p>«Արամ Խաչատրյան» համերգապրահում կազմակերպված համերգով ամփոփվել է «Երևանյան ամառ 2016» ծրագրի շրջանակում «Հնչում է Երևանը» խորագրով անցկացված՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցների 9-րդ մրցույթ-փառատոնը: ԵՀ-ԲԸԾՁԲ-16/1-3</p> <p>«Երևանյան ամառ 2016» եռամսյա միջոցառումների ծրագրի շրջանակում Կարապի լճի բեմահարթակում կազմակերպվել է</p>	<p>Մայիսի 28</p> <p>«Բրիդջ» ՍՊԸ Հունիսի 1</p> <p>«Բրիդջ» ՍՊԸ Հունիսի 6</p> <p>«Սլայդ Արտ» ՍՊԸ Հունիսի 11</p> <p>«Բրիդջ» ՍՊԸ Հունիսի 15-16</p> <p>«Բրիդջ» ՍՊԸ Հունիսի 18</p> <p>Հունիսի 24</p>	
--	---	--	---	--

	<p>քաղաքապետարանը ցուցաբերում է աջակցություն:</p>	<p>«Երևանյան բարդ» խորագրով համերգային երեկո: «Երևանյան ամառ 2016» եռամսյա միջոցառումների ծրագրի շրջանակում Մ. Մարյանի պուրակում իրականացվել է «Երևանյան ամառ» կտավի ստեղծումը՝ նկարիչների մասնակցությամբ: ԵՀ-ԲԸՄՁԲ-16/1-3 «Երևանյան ամառ 2016» եռամսյա միջոցառումների ծրագրում ներառված մանկական ծրագրերի շարքից Միսաք Մանուշյանի անվան պուրակում անց է կացվել «Խոսող խաղալիք» մանկական ուրախ փառատոնը: «Երևանյան ամառ 2016» եռամսյա միջոցառումների ծրագրի շրջանակում Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդարանի հետ համատեղ Վարդավառի տոնին ընդառաջ Սուրբ Մարգիս եկեղեցուց մինչև մանկական զբոսայգի նախատոնական քայլերը է կազմակերպվել, որն ամփոփվել է համերգային ծրագրով: «Երևանյան ամառ 2016» եռամսյա միջոցառումների ծրագրի շրջանակում Վարդավառի տոնին նվիրված Երևանի քաղաքապետարանի կողմից Կարապի լճում ու լճի շրջակայքում կազմակերպվել է տոնական միջոցառում: ՀՀ Սահմանադրության օրվան նվիրված մայրաքաղաքում փողային նվագախմբերի մասնակցությամբ կազմակերպվել է քայլերթ, որից հետո Ազատության հրապարակում կազմակերպվել է «Երևանյան շեփոր» խորագրով փողային նվագախմբերի փառատոն: Երևանում մեկնարկել էր «Ոսկե ծիրան» միջազգային 13-րդ կինոփառատոնը, որն այս տարի նվիրվել էր ՀՀ անկախության 25-ամյակին: Կազմակերպվել է «Քեզ Երևան» խորագրով համերգային ծրագիրը: Երևանի քաղաքապետարանի ձեմասրահում ՀՀ անկախության 25-րդ տարեդարձին ընդառաջ բացվել է «Դարավոր Հայաստանի նորանկախ պետությունը» խորագրով լուսանկարների ցուցահանդեսը: «Երևանյան ամառ 2015» եռամսյա միջոցառումներն ամփոփվել են օգոստոսի 31-ին՝ Կարապի լճում՝ եզրափակիչ համերգային ծրագրով: Մայրաքաղաքում անցկացվեց «Էրեբունի Երևան 2798» տոնակատարությունը, որի շրջանակում իրականացվեց</p>	<p>Հունիսի 26 «Բրիդջ» ՄՊԸ Հուլիսի 1 Հուլիսի 2 Հուլիսի 3 Հուլիսի 5 Հուլիսի 11 Օգոստոսի 7 Օգոստոսի 23 Սեպտեմբերի 21 Հոկտեմբերի 8</p>	
--	---	---	---	--

			բազմաբովանդակ միջոցառումների շարք՝ «Երևան արևի քաղաք» խորագրով կալվածանկարչություն, «Մեկ կտավ Երևանին» թեմատիկ ուղղվածությամբ բացօթյա կտավի ստեղծում-ցուցադրություն, Երևանում արտադրված թեթև և սննդի արդյունաբերական արտադրանքի նմուշների ցուցահանդես, փողային նվագախմբերի տոնական քայլերթ և այլն:		
2.	Երևանի քույր և գործընկեր քաղաքների հետ համատեղ մշակութային ծրագրեր իրականացում	2016 թվականին Երևանի քույր և գործընկեր քաղաքների հետ համատեղ կիրականացվեն մշակութային ծրագրեր՝ քարոզելով հայկական մշակույթը, որը կատեղծի համագործակցության նոր շրջանակներ:	Գործընկեր քաղաքների հետ համագործակցության շրջանակում Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում կազմակերպվել է «Երևան ՏԱՐԱԶՖեստ 2016» փառատոնը, որը մեկնարկել է Արցախի մայրաքաղաքի Վերածննդի հրապարակում: Կազմակերպվել է «Մոսկվայի օրերը Երևանում» միջոցառումների շարք, որի շրջանակում մայրաքաղաքի համերգասրահներում հանդես եկան Ռուսաստանի Դաշնությունից ժամանած հանրահայտ խմբեր և կատարողներ, կազմակերպվեցին համաժողովներ, կլոր սեղաններ և այլ միջոցառումներ: Անց է կացվել «Մանկոտ Պետերբուրգի օրերը Երևանում» խորագրով միջոցառումների շարք, որի շրջանակում մայրաքաղաքի Ա. Բաբաջանյանի անվան համերգասրահում հանդես եկավ Ռուսաստանի Դաշնությունից ժամանած «Բիս Կվիտ» խումբը, իրականացվեցին թեմատիկ ցուցահանդեսներ, կազմակերպվեցին համաժողովներ, կլոր սեղաններ:	Օգոստոսի 4 Հոկտեմբերի 27- 29 Նոյեմբերի 10- 11	
3.	Երևանում բնակվող ազգային փոքրամասնությունների համար մշակութային ծրագրերի իրականացում	Կիրականացվեն ծրագրեր՝ ուղղված Երևանում բնակվող ազգային փոքրամասնությունների պատմական, հոգևոր, մշակութային արժեքների և էթնիկ ինքնության պաշտպանության ապահովմանն ու ինքնաարտահայտմանը	Երևանի հիմնադրման 2798-ամյակին նվիրված «Էրեբունի – Երևան 2798» տոնակատարության շրջանակում Հանրապետության հրապարակ մետրոյի կայանի հարակից տարածքում տեղադրված Հայաստանի ազգային փոքրամասնությունների և էթնիկ խմբերի ողջունի բեմահարթակում ազգային փոքրամասնությունների համույթների ու անհատ կատարողների մասնակցությամբ իրականացվել է մեկ միասնական համերգային ծրագիր:	Հոկտեմբերի 8	

		, կատեղծվեն անհրաժեշտ պայմաններ՝ ազգային փոքրամասնություններ ի մշակույթի դրսևորման համար:			
4.	Գրադարաններ				
4.1	Գրադարաններում կիրականացվեն գրական, գրական-երաժշտական երեկոներ, գրքերի շնորհանդեսներ, մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ, Ազգային գրադարանային շաբաթ, կկազմակերպվեն հանդիպումներ մշակույթի և արվեստի անվանի գործիչների հետ, կնշվեն անվանի մտավորականների հիշարժան տարեթվերը: Կկազմակերպվի օրվան նվիրված «Հանդիպման վայրը գրադարան» ամենամյա միջոցառումը:	Գրադարաններում կիրականացվեն գրական, գրական-երաժշտական երեկոներ, գրքերի շնորհանդեսներ, մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ, Ազգային գրադարանային շաբաթ, կկազմակերպվեն հանդիպումներ մշակույթի և արվեստի անվանի գործիչների հետ, կնշվեն անվանի մտավորականների հիշարժան տարեթվերը: Կկազմակերպվի օրվան նվիրված «Հանդիպման վայրը գրադարան» ամենամյա միջոցառումը:	Գրադարաններում անցկացվել են գրական, գրական-երաժշտական, հուշ-երեկոներ, կազմակերպվել են հանդիպումներ մշակույթի և արվեստի անվանի գործիչների հետ, իրականացվել են գրքերի շնորհանդեսներ, մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ: Կազմակերպվել են գրքերի քննարկումներ և շնորհանդեսներ, մանկական գրքի շաբաթ, 2016թ. հիշարժան և հոբելյանական տարեթվերին նվիրված գրքային ցուցահանդեսներ, մի շաբթ միջոցառումներ, ցերեկույթներ: Կազմակերպվել են Հայոց բանակի, գրքի նվիրատվության, Կանանց միջազգային, թատրոնի միջազգային օրերին, Բարիկենդանին, Սուրբ Զատիկին նվիրված միջոցառումներ: Գրադարաններում կազմակերպվել են գրական հուշ-ցերեկույթներ ցեղասպանության 101-րդ տարելիցի առիթով: Գրադարաններում «Հեքիաթի ժամ» միջոցառման շրջանակներում կազմակերպվել են հեքիաթների ցուցադրություններ, բեմադրություններ, մուլտֆիլմերի դիտումներ, ընթերցումներ՝ կրտսեր ընթերցողների և հյուրերի համար: Հունիսի 1-ին կազմակերպվել են գրական, երաժշտական, համերգային, թատերական ներկայացումներ և կավճանկարչություն՝ նվիրված երեխաների պաշտպանության միջազգային օրվան և այլն: «Գրադարանների կենտրոնացված համակարգ» ՀՈԱԿ-ում կազմակերպվել և անցկացվել է ասմունքի մրցույթ-փառատոն՝ վարչական շրջանի հիմնական դպրոցների աշակերտների մասնակցությամբ: «Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի կողմից յուրաքանչյուր չորեքշաբթի իրականացվում է Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում գիտության և մշակույթի հայ	Աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչություն	

			հայտնի գործիչների ծննդյան օրերին և հիշարժան տարելիցներին նվիրված «Այսօր-հիշում ենք...» և «Այսօր-նշում ենք ...» ծրագրերը: Կազմակերպվել է «Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ» մարտի 28-ից ապրիլի 2-ը, «Ազգային գրադարանային շաբաթ» ապրիլի 11- 18-ը, Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված ուրախ ծրագիր:		
4.2	Գրադարաններում նախատեսվում է տեղեկատվական-հաղորդակցական, նոր տեխնոլոգիաների և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրում, գրադարանային ֆոնդերի թվայնացման գործընթացի խթանում	Գրադարաններում նախատեսվում է տեղեկատվական-հաղորդակցական, նոր տեխնոլոգիաների և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրում, գրադարանային ֆոնդերի թվայնացման գործընթացի խթանում:	Շարունակվել է Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանի էլեկտրոնային գրադարանի ֆոնդերը համալրելու և ֆոնդերի թվայնացման գործընթացը: Թվային բազայում տեղադրվել են նոր ծրագրեր: Շարունակվում են նաև ընդհանուր տեղեկատվական բազա մուտքագրումները, մուտքագրվել է 21417 անուն գիրք: Իրականացվել է Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանի ընթերցողների էլեկտրոնային սպասարկում, ձեռք է բերվել անհրաժեշտ թվով համակարգչային տեխնիկա և ավարտվել են էլեկտրոնային «ԱԼԵՖ» ծրագրով գրացուցակների ստեղծման աշխատանքները:	Աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչություն	
4.3	«Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ում մշակութային միջոցառումների կազմակերպում	«Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ում կշարունակեն գործել «Ամերիկյան անկյունը», «Ֆրանկոֆոնիայի կենտրոնը» և «Բրիտանական կենտրոնը», որոնք մշտապես համալրվում են բարձրարժեք գրականությամբ, տեղեկատվական	«Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ում գործող «Ամերիկյան անկյունում և «Բրիտանական, Ասիական, Ֆրանկոֆոնիայի կենտրոններ»-ում կազմակերպվել են 36 ֆիլմերի անվճար ցուցադրություններ, իրականացվել է «Ամերիկյան և բրիտանական անգլերենի, ֆրանսերենի խոսակցական ակումբների» պարապմունքներ, գրքի ակումբի հանդիպում, անգլերեն և ֆրանսերեն լեզուների ուսուցման անվճար դասընթացներ՝ տարիքային տարբեր խմբերի համար և այլն: Յուրաքանչյուր շաբաթ օր անցկացվում է «Գրքամո» երիտասարդական ակումբի հանդիպումները: ԿԳ-ի «Բողոքողներ» գրական ստուդիան պարապմունքներ է անցկացնում ամեն երկուշաբթի: Հոկտեմբերի 7 -ին կազմակերպվել է «Հանդիպման վայրը-գրադարան» ծրագիրը: Բազմաթիվ միջոցառումներ են իրականացվել նվիրված «Էրեբունի-	Աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչություն	

		կրիչներով, կահույքով: Կկազմակերպվեն ֆիլմերի անվճար ցուցադրություններ, դասախոսություններ, անգլերենի և ֆրանսերենի անվճար ուսուցման դասընթացներ տարիքային տարբեր խմբերի համար, ինչպես նաև կանցկացվի «Նոան հատիկ» հանրապետական մանկապատանեկան թատերական փառատոնը:	երևան 2798» տոնակարարությանը, գրադարանավարի օրվան, ամանորի տոնին:		
5.	Թանգարաններ				
5.1	Թանգարաններում ցուցահանդեսների և միջոցառումների կազմակերպում	Թանգարաններում կկազմակերպվեն ցուցահանդեսներ և միջոցառումներ: Կանցկացվեն մի շարք միջոցառումներ նվիրված Թանգարանների միջազգային օրվան, Եվրոպական ժառանգության օրվան: «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը	Երևանի քաղաքապետարանի թանգարանները այս տարի ևս կազմակերպել են միջոցառումներ՝ նվիրված Թանգարանների միջազգային օրվան՝ մայիսի 18-ին և «Թանգարանների եվրոպական գիշեր» մայիսի 21-ին: Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող մշակութային օջախների առօրյան հագեցած է եղել տարատեսակ միջոցառումներով: Միջոցառումներ անցկացվել են քաղաքապետարանի ենթակայության «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում, Երևան քաղաքի պատմության, Կարեն Դեմիրճյանի, Ժամանակակից արվեստի և Ֆրիտյոֆ Նանսենի թանգարաններում: Միջոցառումներն ու ցուցադրությունները նվիրված են եղել ՀՀ անկախության 25-ամյակին, Երևանի 2798-րդ տարեդարձին, Երևան քաղաքի պատմության թանգարանի 85, Ֆրիտյոֆ Նանսենի ծննդյան 155 և Կարեն Դեմիրճյանի թանգարանի 15-ամյակներին:	Աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչություն	

	<p>կկազմակերպի միջոցառումների շարք նվիրված Հուշարձանների միջազգային օրվան: «Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ-ի վերակառուցման ծրագիրն ունի շարունակական բնույթ: «Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ում կշարունակվեն 3D պրոեկցիայով անիմացիոն ծրագրերի ցուցադրությունները:</p>	<p>«Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի կողմից փետրվարի 2-10-ը կազմակերպել է Իննա Մխիթարյանի լուսանկարների «100-ն անց» խորագրով անհատական ցուցահանդեսը: Երևան քաղաքի պատմության թանգարանի ցուցասրահում կանանց միամսյակի շրջանակում մարտի 10-ից ապրիլի 10-ը բացվել է քանդակագործ, նկարիչ, դիզայներ Արման Դավթյանի «ԵրևանՈՒՆԻ» խորագրով աշխատանքների ցուցահանդեսը: Կանանց տոնի կապակցությամբ Երևանի մետրոպոլիտենի Երիտասարդական կայարանում մարտի 10-ից ապրիլի 7-ը կազմակերպվել է «Կինը քաղաքային տնտեսությունում» խորագրով լուսանկարների ցուցահանդեսը: Մարտի 29-ից ապրիլի 10-ը թանգարանում կազմակերպվել է «Մշակույթների երկխոսություն» խորագրով թանգարանի պարսկական իրերի հավաքածուի ցուցահանդեսը: Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակում, Ֆրանսիայի դեսպանատան նախաձեռնությամբ և քաղաքապետարանի աջակցությամբ, մարտի 16-ին թանգարանում կազմակերպվել է «Քաղաքը և միջավայրը» խորագրով ցուցահանդեսը և միջոցառումը: Մայիսի 20-ից հունիսի 30-ը «Թանգարանային գիշեր» միջոցառման շրջանակներում, կազմակերպվել է «Հեղինակային տիկնիկ» ցուցահանդեսը: Թանգարանների միջազգային օրվա կապակցությամբ Տեղյան մշակութային կենտրոնի հետ համատեղ կազմակերպվել է «Կենդանի լուսանկար» ինտերակտիվ ծրագիրը: Հունիսի 16-18-ը Թարգմանչաց տոնին ընդառաջ Երևանի քաղաքապետարանի ճեմասրահում կազմակերպված գրքերի ցուցահանդես- վաճառքին Երևան քաղաքի պատմության թանգարանը ներկայացել է հնատիպ գրքերի ցուցահանդեսով: Օգոստոսի 3-5-ը կազմակերպվել է- «Վերադարձ» խորագրով Մարիամ Ղարիբյանի ասեղնագործ աշխատանքները: Աշնան ամիսներին կազմակերպվել են նաև ցուցադրություններ «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրի շրջանակում, ինչպես նաև արտասահմանցի արվեստագետների աշխատանքների ցուցադրություններ: Հոկտեմբերի 8-ից դեկտեմբերի 31-ը կազմակերպվել է «Գոստ-</p>		
--	--	--	--	--

		<p>Արտադրված է Երևանում» խորագրով ցուցահանդեսը: Հոկտեմբերի 18-27-ը Երևանի քաղաքապետարանի, Երևան քաղաքի պատմության թանգարանի և Չեխիայի Հանրապետության դեսպանատան համատեղ նախաձեռնությամբ թանգարանում ներկայացվեց չեխ փորագրող, գծանկարիչ, մեղալների և մետաղադրամների դիզայներ Կարել Զեմանի ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսը: Նոյեմբերի 9-ից դեկտեմբերի 1-ը Երևան քաղաքի պատմության թանգարանում կազմակերպվել է «Լենինգրադ, Շրջափակում, Մարտական մատիտ, 1941-1944» խորագրով ցուցահանդեսը: «Կարեն Դեմիրճյանի թանգարան» ՀՈԱԿ-ի կողմից հուլիսի 15-ին ամառային ցուցասրահում տեղի է ունեցել «Հայաստանը ծաղիկների մեջ» խորագիրը կրող ցուցահանդեսի բացում, որտեղ ներկայացվել էին Արամ Մարգարյանի բնական ծաղիկների չորացրած տերևներով պատրաստված անհատական աշխատանքները: Մեպտեմբերի 19-ից «Կարեն Դեմիրճյանի թանգարանը» «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտենի» հետ համատեղ «Հանրապետության հրապարակ» կայարանում կազմակերպվել են ցուցահանդես: Մեպտեմբերի 24-25-ին Եվրոպական Ժառանգության օրերի շրջանակում «Կարեն Դեմիրճյանի թանգարանը» հանդես է եկել «Կենտրոն համայնքի խորհրդային տարիների ժառանգությունը» լուսանկարների թեմատիկ ցուցահանդեսով և Հայաստանի Հանրապետության անկախության կայացման գործընթացին նվիրված ֆիլմերի ցուցադրությամբ: Նոյեմբերի 5-ին թանգարանի ցուցասրահում տեղի է ունեցել հուշ երեկո՝ նվիրված Կարեն Դեմիրճյանի հիշատակին: «Առաջին ալիք» հեռուստատեսության «Երգ Երգոց» ծրագրի խմբագրական կազմի հետ համատեղ պատրաստվել է հաղորդում՝ նվիրված Կարեն Դեմիրճյանի հիշատակին, որը եթեր հեռարձակվեց դեկտեմբերի 25-ին: «Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ-ի կողմից ապրիլի 18-ին կազմակերպվել է «Առյուծի-ցուլի որսը Մերձավոր Արևելքում» խորագրով ցուցահանդես: Մեպտեմբերի 24-ին «Եվրոպական ժառանգության օրերը» միջոցառման շրջանակում</p>		
--	--	--	--	--

		<p>կազմակերպել է համերգ՝ Էրեբունի վարչական շրջանում գործող Տ.Չուխաջյանի անվ. երաժշտական դպրոցի, Մ.Մալունցյանի անվ. արվեստի դպրոցի և Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի սաների մասնակցությամբ: Կազմակերպվել են նաև «Իմ համայնքի ժառանգությունը» խորագրով նկարների ցուցահանդես, «Էրեբունի». «Իմ համայնքի ժառանգությունը» կարգախոսով Ճանաչողական շրջայց «Էրեբունի» արգելոց-թանգարանում, սեպտեմբերի 24-ին «Եվրոպական ժառանգության օրերը» միջոցառման շրջանակում կազմակերպել է համերգ՝ Էրեբունի վարչական շրջանում գործող Տ.Չուխաջյանի անվ. երաժշտական դպրոցի, Մ.Մալունցյանի անվ. արվեստի դպրոցի և Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի սաների մասնակցությամբ: Դեկտեմբերի 12-ին պաշտոնական հրավերով Երևանում գտնվող Պետական Էրմիտաժի գլխավոր տնօրեն Միխայիլ Պիոտրովսկին այցելեց է «Էրեբունի» արգելոց-թանգարան և մասնակցել ակադեմիկոս Բորիս Պիոտրովսկուն նվիրված «Բորիս Պիոտրովսկու հետքերով» ժամանակավոր ցուցահանդեսին:</p> <p>«Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի կողմից Ֆրակոֆոնիայի օրերի շրջանակում մարտի 16-ին և 29-ին թանգարանում կազմակերպվել է դասական երաժշտության համերգ: Ապրիլի 20-ից մայիսի 5-ը կազմակերպվել է Ջառա Մանուչարյանի Hierotopy (սակրալ տարածք) խորագիրը կրող անհատական ցուցահանդեսը: Մայիսի 20-ից հունիսի 5-ը «Թանգարանների եվրոպական գիշերվա շրջանակներում» թանգարանը հանդես եկավ Նազիկ Ասլանյանի անհատական ցուցահանդեսով: Կազմակերպվել է նաև «Հայաստանն իմ դեմքին» խորագիրը կրող ֆոտո ցուցահանդես, հունիսի 9-ից 22-ը՝ Երկնքի ու երկրի միջև խորագրով գեղանկարչական և գրաֆիկական աշխատանքների ցուցահանդես, հունիսի 25-ից հուլիսի 2-ը՝ Գրիգոր Միքայելյանի և Նարինե Իսաջանյանի աշխատանքների ցուցահանդեսը, օգոստոսի 6-ից 31-ը՝ շվեցարացի արվեստագետ Ժոզեթ Տառամարկայի ռեզիդենս-ցուցահանդեսը, սեպտեմբերի 1-ից 11-ը՝ Ժոզեթ Տառամարկայի «Արմատախիլ եղածները» խորագիրը կրող նախագիծը, օգոստոսի 18-ին՝ «Կատարողական արվեստը որպես</p>		
--	--	---	--	--

		<p>այլընտրանք» թեմայով բանախոսությունը, սեպտեմբերի 17-ին Երևանի Ժամանակակից արվեստի թանգարանի, Հաղորդակցության և կողմնորոշման հետազոտությունների ասոցիացիայի «Փողոցի արվեստ» (Street art) համատեղ նախագիծը՝ Էդմոնդ Հաբեթյանի ղեկավարությամբ:</p> <p>Սեպտեմբերի 16-ից հոկտեմբերի 4-ը Հայաստանի Անկախության 25-րդ տարելիցին նվիրված և «Եվրոպական ժառանգության օրեր ծրագրի շրջանակներում՝ կազմակերպվել է ֆրանսահայ նկարչուհի Ասիլվայի /Առաքելյան Սիլվա/ ցուցահանդեսը:</p> <p>Սեպտեմբերի 16-ից հոկտեմբերի 4-ը կազմակերպվել է հանրաճանաչ ֆրանսահայ նկարչուհի Ասիլվայի «Ոսկե հատման ինքնաբուխ մտահաղացմամբ» խորագրով ցուցահանդեսը:</p> <p>Հոկտեմբերի 7-30-ը կազմակերպվել է Բարձր արվեստ կերպարվեստի կենտրոնի «Անկախություն» խորագրով ցուցահանդեսը՝ նվիրված Հայաստանի անկախության 25 ամյակին:</p> <p>Նոյեմբերի 1-3-ը կայացավ Քեթի Մելքսեդեի անհատական ցուցահանդեսը:</p> <p>Նոյեմբերի 9-12-ը կազմակերպվել է Վահրամ Գալստյանի «Իրադարձություն ընդհանուր պլանում» նախագիծը:</p> <p>Դեկտեմբերի 9-14-ը կազմակերպվել է Արիստես Գարսիա Չասի (Իսպանիա) «Քայլ զծից անդին» նախագիծը:</p> <p>«Ֆրիտոֆ Նանսենի թանգարան» ՀՈԱԿ-ի կողմից փետրվարի 12-ին թանգարանում Երևանի թիվ 170 ավագ դպրոցի 11-րդ դասարանի սաները անցկացրել են բաց դաս՝ նվիրված Ֆրիտոֆ Նանսենի կյանքին ու գործունեությանը:</p> <p>Մարտի 23-ին մեկնարկել է Ֆրանկոֆոնիայի միջազգային օրվան նվիրված միջոցառումների շարքը:</p> <p>Սեպտեմբերի 24-ին տեղի է ունեցել գրող, թարգմանիչ Գրիգոր Զանիկյանի կողմց թարգմանված Աիդա Ազնավուր Կառվարենցի «Ափարիկա» գրքի քննարկումը: Սեպտեմբերի 25-ին ՀՀ անկախության 25 ամյակի կապակցությամբ ցուցադրվել է գրող, լրագրող Սպարտակ Ղարաբաղյանի «Վկայարան» ֆիլմաշարից «Շուշի» փաստավավերագրական ֆիլմը:</p>		
--	--	---	--	--

6.	Թատրոններ				
6.1	Թատրոնների խաղացանկերի համալրում	Թատրոնների խաղացանկերը համալրելու նպատակով յուրաքանչյուր տարի նախատեսվում է իրականացնել շուրջ 10-ը նոր բեմականացում:	«Թատրոններում ընթացել են ներկայացումներ ըստ խաղացանկերի, կատարվել է նաև խաղացանկերի համալրում՝ Հր. Ղափլանյանի անվան թատրոն ՀՈԱԿ-ի կողմից մարտ ամսին խաղացանկը համալրել է 1 նոր ներկայացում: «Մեք Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» ՀՈԱԿ-ի կողմից փետրվարի 10-ին բեմադրվել է 1 նոր ներկայացում: «Պատանի հանդիսատեսի թատրոն» ՀՈԱԿ-ի կողմից բեմադրվել է 5 նոր ներկայացում:	Աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչություն	
7.	Երաժշտական և արվեստի դպրոցներ				
7.1	Երաժշտական և արվեստի դպրոցներում միջոցառումների կազմակերպում	Երաժշտական և արվեստի դպրոցներում նախատեսվում է համերգների, հանրապետական ու միջազգային մրցույթների և փառատոների կազմակերպում և մասնակցություն: Ուսումնական տարվա վերջում կկազմակերպվի երաժշտական և արվեստի դպրոցների մրցույթ-փառատոն և հաշվետու համերգներ: Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում անցկացվում է Ա.Խաչատրյանի անվան պատանի	Երաժշտական և արվեստի դպրոցների դաշնամուրի, լարային, փողային, վոկալի և կերպարվեստի բաժինների աշակերտների մասնակցությամբ կազմակերպել են համերգային ծրագրեր, թեմատիկ միջոցառումներ, ցուցահանդեսներ՝ նվիրված մայրության և գեղեցկության տոնին, մայիսի 9-ին՝ Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակին, մայիսի 28-ին՝ Առաջին Հանրապետության օրվան: Դպրոցների աշակերտները մասնակցել են մի շարք միջազգային, հանրապետական փառատոնների, մրցույթների և ցուցահանդեսների՝ շահելով մրցանակներ և դիպլոմներ: Երաժշտական և արվեստի դպրոցների սաները ապրիլ ամսին մասնակցել են Գյումրիի «Վերածնունդ» 8-րդ միջազգային մրցույթ-փառատոնին, «Երգող Հայաստան» մանկապատանեկան երգչախմբերի 9-րդ հանրապետական մրցույթին: Երաժշտական և արվեստի դպրոցների սաները ապրիլ ամսին մասնակցել են «ԱՐՏ ՄՅՈՒԶԻՔ» 7-րդ մրցույթ-փառատոնի 2-րդ փուլին: Ա.Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցի աշակերտները հրավիրվել են ԱՄՆ (Գլենդեյ) եկամսյա համերգային շրջագայության՝ «Անուշ» օպերա և «Պատարագ առ Կոմիտաս» խորագրով համերգ-ներկայացմանը: Բոլոր դպրոցներում կազմակերպվել են ուսումնական տարվա ավարտի հաշվետու համերգներ՝ դպրոցների լավագույն աշակերտների մասնակցությամբ: Հունիս ամսին՝ Ա.Գաբրիելյանի անվան արվեստի դպրոցի համերգը Ա. Խաչատրյանի անվան համերգասրահում, նվիրված էր դպրոցի հիմնադրման 45 ամյակին: Ստ. Ջրբաշյանի անվան	Աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչություն	

		<p>ստեղծագործողների ամենամյա ստուգատես-փառատոն: 2016թ. կշարունակվի 2015թ. մեկնարկած «Բաց դաս» խորագրով ծրագրի իրականացումը: Մասնագետներն ու դպրոցի սաները կիրականացնեն բացօթյա հանրային դասընթացներ՝ ներգրավելով հանրության լայն շերտեր հանրահոշակելով մշակութային մասնագիտական կրթությունը:</p>	<p>երաժշտական դպրոցն ապրիլի 11–16-ն անցկացրել է համերգների շարք՝ նվիրված իր հիմնադրման 50-ամյակին: Հունիսի 6-ին Արամ Խաչատրյանի անվան տուն-թանգարանում անցկացվել է պատանի ստեղծագործողների մրցույթ-փառատոն՝ նվիրված Արամ Խաչատրյանի ծննդյան 113-ամյակին: Հունիսի 7-ին «Երևանյան ամառ 2016» եռամսյա միջոցառումների ծրագրի շրջանակում Երևանի քաղաքապետարանի ենթակայության մշակութային կրթօջախներում՝ երաժշտական և արվեստի դպրոցներն անցկացրել են բացօթյա բաց դասեր: Երաժշտական և արվեստի դպրոցների աշակերտների մասնակցությամբ կազմակերպել են համերգային ծրագրեր, թեմատիկ միջոցառումներ, ցուցահանդեսներ՝ նվիրված «Էրեբունի-Երևան 2798» տոնակատարությանը, ուսուցչի օրվան, ամանորին: «Ա.Սպենդիարյանի անվան երաժշտական մասնագիտական դպրոց» ՀՈԱԿ-ում սեպտեմբերի 27-ին անց է կացվել վարպետության դաս ԱՄՆ Ֆլորիդա նահանգի Ատլանտիկ համալսարանի դաշնակահար, պրոֆեսոր Իրենա Կոֆմանի կողմից: «Երևանի Չայնի պահպանման վոկալ-երգչախմբային մասնագիտական դպրոց» ՀՈԱԿ-ի երգչախումբը սեպտեմբերի 21-ին մասնակցել է մարզահամերգային համալիրում կազմակերպված ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված համերգին: Սեպտեմբերի 22-ին դպրոցի մեծ երգչախումբը մասնակցել է Է.Մադոյանի «Մեարոպ Մաշտոց» օպերայի պրեմիերային՝ Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում: Սեպտեմբերի 22-ին դպրոցի սաները (թվով 25 հոգի) մասնակցել են Կարմեն օպերայի բեմադրությանը՝ Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում: ՀՈԱԿ-ի մեծ երգչախումբը հոկտեմբերի 10-ին ելույթ է ունեցել ՀՀ պետական սիմֆոնիկ նվագախմբի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում կազմակերպված համերգին՝ նվիրված թատրոնի գեղարվեստական ղեկավար Կ. Օրբելյանին: Հոկտեմբերի 17-ին դպրոցի «Երգող հրեշտակներ» համույթը ելույթ է ունեցել ՀՀ սփյուռքի նախարարությունում, հոկտեմբերի 29-ին դպրոցի</p>		
--	--	--	--	--	--

			<p>մեծ երգչախումբը մասնակցել է Պուրինիի «Տոսկա» օպերայի բեմադրությանը՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում:</p> <p>Դեկտեմբերի 2-ին մեծ երգչախումբը ելույթ է ունեցել UNICEF-ի կողմից կազմակերպված բարեգործական համերգին:</p> <p>Դեկտեմբերի 20-ին և 24-ին մեծ երգչախումբը ելույթ է ունեցել ՀՀ պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ՝ Ա. Խաչատրյան ֆիլիհարմոնիայի մեծ համերգասրահում՝ Չայկովսկու «Շչեկունրիկ» բալետի համերգային կատարմանը:</p>		
7.2	Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցման ծրագիր	Շարունակվելու է երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցման ծրագիրը, որը միտված է մոռացվող ազգային նվագարանների և հայ երաժշտական ավանդույթների պահպանմանը, տարածմանը և հանրահռչակմանը:	2006 թվականից երաժշտական և արվեստի դպրոցներում իրականացվում է ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսման վարձավճարների փոխհատուցման ծրագիր, որի շրջանակում 2016թ. սովորում է 610 աշակերտ:	Աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչություն	
7.3	Երաժշտական և արվեստի դպրոցներում գույքի և երաժշտական գործիքների ձեռքբերում	Նախատեսվում է իրականացնել նաև գույքի և երաժշտական գործիքների ձեռքբերում երաժշտական և արվեստի դպրոցների համար, ինչն իր հերթին կնպաստի	Օգոստոսի 30-ին Երևանի քաղաքապետարանի ճեմասրահում իրականացվել է երաժշտական և արվեստի դպրոցների համար ձեռք բերված թվով 154 երաժշտական գործիքների հանձնման արարողությունը:	«Տեսակենտրոն» ՍՊԸ , Ֆ/ա Գրիգոր Մուրաքչյան և Օնիկ Գալստյան	

		մշակութային կրթության գործընթացի բարելավմանը, սաների թվաքանակի ավելացմանը:			
8.	Մշակույթի տներ և գեղագիտական կենտրոններ				
8.1	Հաշմանդամ, ծնողազուրկ, բազմազավակ և անապահով ընտանիքների երեխաների ընդգրկվածության մեծացման նպատակով նախատեսվում է կրթամշակութային և սոցիալական ծրագրերի իրականացում, տարբեր սոցիալական խմբերի համար մշակութային ծրագրերի մշակում և ընդլայնում	Հաշմանդամ, ծնողազուրկ, բազմազավակ և անապահով ընտանիքների երեխաների ընդգրկվածության մեծացման նպատակով նախատեսվում է կրթամշակութային և սոցիալական ծրագրերի իրականացում, տարբեր սոցիալական խմբերի համար մշակութային ծրագրերի մշակում և ընդլայնում:	Մշակույթի տների և գեղագիտական կենտրոնների կողմից կազմակերպվել և իրականացվել են տոնական, ազգային տոներին նվիրված մշակութային միջոցառումներ, համերգային ծրագրեր, ցուցահանդեսներ՝ Ամանոր, Տյառնըդառաջ, Բարեկենդան, Բանակի օր, Մարտի 8, թատրոնի միջազգային օր, Սուրբ Զատիկ, Հայոց ցեղասպանության 101-ամյա տարելից, Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակ, Առաջին Հանրապետության օր, երեխաների իրավունքների պաշտպանության օր, «Երևանյան ամառ 2016», ՀՀ անկախության 25-ամյակ և այլն: «Երևանյան ամառ 2016» եռամսյա միջոցառումների ծրագրի շրջանակում օգոստոս ամսին իրենց մասնակցություն են ցուցաբերել մշակույթի տների և գեղագիտական կենտրոնների սաները: Մշակույթի տների և գեղագիտական կենտրոնների կողմից կազմակերպվել և իրականացվել են ազգային տոներին և հիշարժան տարեթվերին նվիրված մշակութային միջոցառումներ, համերգային ծրագրեր, ցուցահանդեսներ՝ նվիրված «Էրեբունի-Երևան 2798» տոնակատարությանը, ուսուցչի օրվան, Ամանորի տոնին: «Երևանի մանկապատանեկան ստեղծագործության քաղաքային կենտրոն» ՀՈԱԿ-ում մարտի 1-ին նկարչական խմբակների երեխաների մասնակցությամբ կազմակերպվել է գարնանային աշխատանքների ցուցադրություն, մարտի 13-ին «Միկա» ակումբում ելույթ է ունեցել սպորտային պարերի ՀՀ պաշտոնական առաջնության մասնակից «Մատադոր» պարային համույթը: Մարտի 21-ին Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում կազմակերպվել է ՀՀ ժողովրդական արտիստ Ազատ Ղարիբջանին նվիրված համերգ-փառատոն՝ «Կռունկ» պարային համույթի մասնակցությամբ: Ապրիլի 16-30-ը կազմակերպվել է «Նոր Շունչ» ամենամյա պարային	Աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչություն	

		<p>փառատոնի 1-ին և 2-րդ փուլերը, իսկ հունիսի 22-ին ամենամյա պարային փառատոնը ամփոփվել է գալա-համերգով:</p> <p>«Աջափնյակ» գեղագիտական կենտրոն» ՀՈԱԿ-ի գեղանկարչական խմբակի սաները փետրվարին մասնակցել են ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից Հայոց ցեղասպանության 101-րդ տարելիցի առիթով կազմակերպված «Մեկ դար և ավելի...» խորագրով 5-րդ համահայկական մրցույթ-փառատոնին: Կենտրոնի «Ֆորս» պարախմբի սաները մարտին մասնակցել են «Գարուն, ամառ, աշուն, ձմեռ 2015» հանրապետական հեռուստափառատոնին:</p> <p>«Ավանի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի դահլիճում հունվարի 29-ին տեղի է ունեցել միջոցառում՝ նվիրված Հայոց բանակի 24-ամյակին:</p> <p>«Պատանեկության ստեղծագործական կենտրոն» ՀՈԱԿ-ի «Ինսայթ» պարային համույթը հունվարի 4-5-ը ելույթ է ունեցել Ֆիլհարմոնիկ մեծ դահլիճում, փետրվարի 1-7-ը «Օկտավա» էստրադային համույթը և դիռլահարների խումբը Գերմանիայում կազմակերպել է մանկապատանեկան բարեգործական համերգ: Մարտի 7-ին Կոնգրես հյուրանոցում կազմակերպված «Կին-հերոս» ցուցահանդես-համաժողովին ելույթ են ունեցել «Ծիծեռնակ» և «Նոստալգիա» պարային համույթները:</p> <p>«Մեքասոփա մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ը փետրվարի 4-ին Արամ Խաչատրյանի անվան մեծ համերգասրահում կազմակերպել է Միլեն շոու բալետի 15-ամյակին նվիրված միջոցառում: Միլեն շոու բալետի գեղարվեստական ղեկավարը պարզևատրվել է «Երևան» ոսկե հուշամեդալով և Վրաստանի պարարվեստի միության ոսկե մեդալներով:</p> <p>«Զեյթուն մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի թատերախումբը փետրվարի 12-ին Հ.Մաթևոսյանի ծննդյան օրը, Հ.Մաթևոսյանի անվ. դպրոցում ներկայացրել են «Հացը» և «Մեր վազքը» ներկայացումները: Մարտի 5-ին «Մինորա 2015» երգի և պարի հեռուստափառատոնին կենտրոնի «Բելլա» պարային համույթը մասնակցել է խուլերի մշակույթի և սպորտի հանրապետական պալատում տեղի ունեցած մրցանակաբաշխությանը: «Զեյթուն» ժող.գործիքների համույթը մարտի 9-ին և 29-ին համերգային ծրագրերով ելույթ է ունեցել գերմանական</p>		
--	--	---	--	--

			<p>«Կարմիր խաչ» բարեգործական ճաշարանում, մարտի 14-ին՝ «Առաքելություն Հայաստան» բարեգործական ճաշարանում: Հոկտեմբերի 30-ին «Զեյթուն» մշակութային կենտրոնում տեղի ունեցավ «Աշխարհի գույները» փառատոնը՝ «Մշակույթն ընդդեմ պատերազմների» խորագրով: Նոյեմբերի 4-ին «Զեյթուն» մշակութային կենտրոնը «Մինորա» մշակութային կենտրոնի հետ համատեղ կազմակերպել էր «Էտյուդ 2016» ասմունքի և թատերական արվեստի հանրապետական մանկապատանեկան 1-ին մրցույթ-փառատոնը: «Մեքաստիա» մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի սաները հունիսի 20-ին մասնակցել են Կապան քաղաքում կազմակերպված «Պարի աստղեր» խորագիրը կրող միջոցառմանը: Մշակույթի տների և գեղագիտական կենտրոնների կողմից կազմակերպվել և իրականացվել են համերգային ծրագրեր, ցուցահանդեսներ՝ նվիրված ՀՀ անկախության 25-ամյակին:</p>		
9.	Այլ մշակութային կազմակերպություններ				
9.1	<p>Համերգներին, փառատոներին, ցուցահանդեսներին մասնակցություն</p>	<p>Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են «Հայաստանի փոքրիկ երգիչներ», «Յու. Բախչյանի անվան մանկական ֆիլիարմոնիա», «Երևան» փողային նվագախումբ» ՀՈԱԿ-ները և «Հայ-Արտ» մշակութային կենտրոն» ՓԲԸ-ն: Նախատեսվում է ապահովել վերոնշյալ կազմակերպություններ</p>	<p>«Հայաստանի Փոքրիկ Երգիչներ մանկական ֆիլիարմոնիա» ՀՈԱԿ-ի կողմից հունվարի 13-ին Մայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի դահլիճում տեղի է ունեցել Հայաստանի փոքրիկ երգիչներ և Հայաստանի ամենափոքրիկ երգիչներ երգչախմբերի կազմակերպած «ՀՓԵ-ի արկածները Նյու Յորքում» միջոցառումը: Փետրվարի 29-ին Մայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի դահլիճում կայացել է «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբի կրտսեր և ավագ սաների, ինչպես նաև «Զանգակների երգչախմբի» համատեղ ելույթը: «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբի 6 անդամները մարտի 8-ին հաջողությամբ մասնակցեցել են Ճապոնիայի մայրաքաղաք Տոկիոյում կայացած "Nodo-jiman the World" հեռուստատեսային նախագծին և արժանացել են հատուկ մրցանակի: Մարտի 3-ին, Մայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի Փոքրիկ Երգիչներ երգչախումբի կրտսեր սաների համերգը՝ նվիրված մայրության և գեղեցկության տոնին: Մայիսի 2-ին, Կոմիտասի անվան Կամերային երաժշտության տանը տեղի ունեցավ «Խոնարհում գինվորին» խորագիրը կրող համերգը:</p>	<p>Աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչություն</p>	

	<p>ի մասնակցությունը համերգների, փառատոների, ցուցահանդեսների ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում:</p>	<p>Մայիսի 11-ից հունիսի 4-ը երգչախումբը մեկնել է Շվեյցարիա համերգային շրջագայության՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին: Հունիսի 21-ին, Կամերային երաժշտության ազգային կենտրոնում տեղի ունեցավ «Հինգ երանգ» խորագիրը կրող մենահամերգը՝ նվիրված հայ կոմպոզիտորներ Ալեքսանդր Հարությունյանի, Ղազարոս Սարյանի, Առնո Բաբաջանյանի, Ադամ Խուրդյանի և Էդուարդ Միրզոյանի 95-ամյակին: Հունիսի 29-ին, Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի դահլիճում տեղի ունեցավ «Յոթ նոտա» խորագիրը կրող մենահամերգը: «Հայաստանի Փոքրիկ Երգիչներ» երգչախումբը Տավուշի մարզի Հաղարծին վանական համալիրում օգոստոսի 15-21-ը մասնակցել է հոգևոր-մշակութային շաբաթ միջոցառմանը: Մեպտեմբերի 17-ից հոկտեմբերի 2-ը «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախումբը մեկնել է Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին նվիրված՝ «Անկախության սերունդ» խորագիրը կրող համերգային շրջագայության Դանիա, Գերմանիա, Նիդերլանդներ և Բելգիա: «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախումբը նոյեմբերի 18-ին Էլույթ է ունեցել Հ.Պարոնյանի անվան թատրոնի հիմնադրման 75-ամյակին նվիրված միջոցառմանը: Նոյեմբերի 29-ին Մոսկվա կինոթատրոնում տեղի ունեցավ «Լույսի ձայներ» վավերագրական ֆիլմի պրեմիերան՝ նվիրված «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբի՝ Շվեյցարիայի համերգային շրջագայությանը: Դեկտեմբերի 17-ին «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախումբը Էլույթ է ունեցել Ավետիս Բերբերյանի 50-ամյա հոբելյանին նվիրված համերգին՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում: Դեկտեմբերի 18-ին տեղի է ունեցել «Հայաստանի Ամենափոքրիկ երգիչներ» երգչախմբի տարեվերջյան համերգը: Մարտի 12 –15-ը կայացել է «Ոսկե սրնգ» 2016 վոկալ փառատոնը և մարտի 15-ին եզրափակվել է հանդիսավոր մրցանակաբաշխությամբ: Մարտի 22-ին կայացել է վոկալ անսամբլի համերգը: Մաները</p>		
--	--	---	--	--

			<p>ապրիլի 2-ին մասնակցեցին Ռետրո ակումբի բաց առաջնությանը և ստացան մի շարք մրցանակներ, ապրիլի 18-ին ներառական ծրագրի շրջանակներում իրականացվեց համատեղ ծրագիր, Կարմիր խաչի հետ՝ թատերական ներկայացում՝ սիրիահայ պատանիների և աղջիկների մասնակցությամբ, մայիսի 3-ին՝ Երգչախմբային ընկերությունում «Style» պարային խմբի սաները մասնակցեցին Arm dream production -ի կողմից կազմակերպված միջոցառմանը, մայիսի 15-ին՝ ՀՄՊՖ անդամ Ֆիեստա ակումբի բաց առաջնությանը և ստացան մրցանակներ, մայիսի 15 -ին անցկացվեց «Ոսկե սրինգ - 2016» պարի փառատոնի I փուլը, մայիսի 25-30-ը Բաթումիում կայացած «Ոսկե դեմֆին» 2016 միջազգային մրցույթ- փառատոնին Ժող. գործիքների նվագախումբը արժանացավ Գրան Պրի մրցանակին, հունիսի 1-ին Երևանի կենդանաբանական այգում՝ Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված համերգին ելույթ ունեցան Մանկական ֆիլհարմոնիայի սաները, հունիսի 7-ին կազմակերպվեց բաց դաս «Երևանյան ամառ -2016» ծրագրի շրջանակներում ժող. գործիքների նվագախմբի մասնակցությամբ, հունիսի 12-ին ՀՄՊՖ բաց առաջնությունում մանկական ֆիլհարմոնիայի սաները ստացան 10 մրցանակներ:</p> <p>Ապրիլի 1-ից հունիսի 15-ը Մանկական ֆիլհարմոնիան ՀՀ Կարմիր խաչի հետ համատեղ, ներառական ծրագրի շրջանակներում, ստեղծեց Անդրանիկ Մարգարյանի անվան դպրոցում սովորող սիրիահայ երեխաների և Մանկական ֆիլհարմոնիայի սաների միացյալ վոկալ-գործիքային անսամբլ, որի համերգը տեղի ունեցավ հունիսի 23-ին Մ.Մկրտչյանի անվան թատրոնի դահլիճում:</p> <p>Հունիսի 25-26 -ը Ծաղկաձորում կայացած փառատոնին մասնակցել են ֆիլհարմոնիայի պարային խմբերը: «Յու.Բախյանի անվան մանկական ֆիլհարմոնիա» ՀՈԱԿ-ի սաները օգոստոսի 30- ին մասնակցեցին քաղաքապետարանում երաժշտական և արվեստի դպրոցներին երաժշտական գործիքների հանձնման արարողությանը, որի ժամանակ ելույթ ունեցավ մանկական</p>		
--	--	--	--	--	--

		<p>ֆիլիարմոնիայի էստրադային նվագախումբը: Էստրադային նվագախումբը հոկտեմբերի 4-6-ը մասնակցեց «Ուսուցչի օրվան» նվիրված միջոցառմանը ԼՂՀ-ում: Հոկտեմբերի 23-ին ֆիլիարմոնիայի խմբերը մասնակցել են ՀՄՊՖ <<Օրիոն>> ակումբի բաց առաջնությանը՝ շահելով 16 մրցանակ: Նոյեմբերի 20-ին կայացավ «Ոսկե սրինգ 2016» փառատոնի եղրափակիչ փուլը: Նոյեմբերի 20-ին Երզնախմբային ընկերություն դահլիճում կայացավ համերգ՝ խմբերի մասնակցությամբ: Նոյեմբերի 27-ին կազմակերպվեց «Տեսանելի դարձրու աշխատանքդ» սոցիալական ցուցադրություն՝ «Պարզևի՛ր ժպիտ» երիտասարդական հասարակական կազմակերպության հետ համատեղ: Դեկտեմբերի 1-ին կայացավ բարեգործական համերգ Երևանի թ.17 հատուկ դպրոցում: Դեկտեմբերի 19-ին քաղաքապետարանի կողմից կազմակերպված ամանորին նվիրված միջոցառմանը մասնակցեց էստրադային նվագախումբը: «Հայ-Արտ» մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ում ապրիլի 12-ին կազմակերպվել է երեկո՝ նվիրված Գրիգոր Գուրգադյանին: Ապրիլի 25-29-ը կազմակերպվել է «Երեք ընկեր» խորագրով երիտասարդ քանդակագործների ցուցահանդես, մայիսի 3-13-ը՝ շվեցարացի նկարիչ Ֆելիչե Վարինիի ցուցահանդես՝ «15 դիտակետ» խորագրով, մայիսի 25-27-ը՝ Ավանի արվեստի դպրոցի սաների աշխատանքների ցուցահանդես, հունիսի 4-11-ը՝ «ԱրտՖեստ» 2016 փառատոն, հունիսի 28-ին՝ Նոր Նորքի մշակույթի կենտրոնի սաների աշխատանքների ցուցադրություն: «Երևանյան ամառ 2016» եռամսյա միջոցառումների ծրագրի շրջանակներում կազմակերպվել է հին Երևանին նվիրված ֆոտո ցուցահանդես, օգոստոսի 2-5-ը՝ բացօթյա ցուցահանդես Գառնիի արվեստի դպրոցի սաների մասնակցությամբ, սեպտեմբերի 17-22-ը՝ գեղանկարիչ Սերգեյ Իսավերոյանի ստեղծագործությունների ցուցահանդեսը, սեպտեմբերի 17-22-ը՝ գեղանկարիչ Սերգեյ Իսավերոյանի ստեղծագործությունների ցուցահանդեսը, սեպտեմբերի 13-30-ը՝ «Հայրենիքիս հետ» լուսանկարչական ցուցահանդեսը,</p>		
--	--	--	--	--

			<p>սեպտեմբերի 22-ին՝ Հաղթանակի երգեր Սահակ Սահակյանի մեկնաբանությամբ:</p> <p>Հոկտեմբերի 14-ին կազմակերպվել է «Տիեզերքը փի մեջ» երեկո՝ նվիրված Գրիգոր Գուրգադյանի ծննդյան տարեդարձին: Նոյեմբերի 9-14-ը կազմակերպվել է «Կրկնությունների տարբերություն» ֆոտոցուցահանդես: Դեկտեմբերի 10-ին կազմակերպվել է Իզաբելա Հասրաթյանի «Վերադարձ հայրենիք», «Արտագաղթի հետքերը» և «Օտարության ճանապարհին» գրքերի շնորհանդես: Դեկտեմբերի 16-17-ը կազմակերպվել է «24 ակնթարթ» լուսանկարչական ցուցահանդես, հեղինակ՝ Սարգիս Վիրաբյան, դեկտեմբերի 20-ին՝ կազմակերպվել է տարեմուտի տոնական հանդես ՀայԱրտ-ի բարեկամ-նկարիչների մասնակցությամբ: Դեկտեմբերի 21-24-ը կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության անկախության 25 ամյակին նվիրված ցուցահանդես:</p> <p>«Երևան փողային նվագախումբ» ՀՈԱԿ-ը մարտի 8-ին՝ Կանանց միջազգային օրվա կապակցությամբ, ելույթ է ունեցել քաղաքապետարանի գլխավոր մասնաշենքում: Նվագախումբը ապրիլի 12-ին համերգային ծրագրով ելույթ է ունեցել Միրահարների այգում, մայիսի 27-ին՝ Ազատության Հրապարակում՝ նվիրված դպրոցականների վերջին զանգին:</p> <p>ՀՈԱԿ-ի նվագախումբը մասնակցել է ՀՀ Սահմանադրության օրվան նվիրված՝ մայրաքաղաքում փողային նվագախմբերի մասնակցությամբ կազմակերպված քայլերթին, որից հետո Ազատության հրապարակում մասնակցել է «Երևանյան շեփոք» խորագրով փողային նվագախմբերի փառատոնին:</p>		
10	Կենդանաբանական այգու վերակառուցման ծրագրի իրականացում	Կենդանաբանական այգու վերակառուցման ծրագիրը կրելու է շարունակական բնույթ: Ծրագրի իրականացման արդյունքում մայրաքաղաքը	<p>20.01.2016թ. հ. ԵԲ-ԲՀՀԱՇՁԲ-16/1</p> <p>Այգում տարեշրջանի բացման նպատակով իրականացվել են մի շարք աշխատանքներ տախտակամածերի, ճաղավանդակների, վանդակաճաղերի և արգելապատնեշների, կենդանիների ձմեռանոցի տանիքների, սողունների պահպանման վայրի (տեռարիում), գայլերի բնի, տոմսարկղի ներսի պատերի ներկում, ներառական խաղահրապարակի կառուցվածքների ամրացում և այլն:</p> <p>Իրականացվել են մի շարք մասնակի վերանորոգման աշխատանքներ՝</p>	«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ	

		կունենա արդի չափանիշներին համապատասխան կենդանաբանական այգի, որը իր նպաստը կբերի նաև Երևանյան տուրիզմի զարգացման և խթանման գործընթացին:	կենդանիների և թռչունների ազատավանդակների, տախտակամածի առանձին հատվածների, մանկական խաղահրապարակի, ոռոգման համակարգի առանձին հատվածների, ոռոգման համակարգի պոմպերի և այլն: Իրականացվել է ուղտերի ազատավանդակի ջրավազանի ջրահեռացման համակարգի վերանորոգում, լուսանի ձագերի համար բնի պատրաստում, ներառական խաղահրապարակում կանաչապատ հատվածի արգելապատնեշի կառուցում, կանաչապատ հատվածներում ոռոգման ջրագծերի անցկացում և այլ ընթացիկ աշխատանքներ: Կենդանաբանական այգու 2016թ. սկսած վերակառուցման ծրագիրը՝ առյուծների, արջերի և գայլերի նոր ազատավանդակների կառուցման աշխատանքները շարունակվում են և կավարտվեն 2017թ. ընթացքում:		
Ֆիզիկական կուլտուրա և սպորտ					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1.	2.	3.	4.	5.	6.
1.	Մի շարք մարզական ՀՈԱԿ-ների վերակազմակերպում	«Երևանի սպորտ կոմիտե» կազմակերպության վերակազմակերպում «Բարձրագույն մարզական վարպետության մարզադպրոց» ՀՈԱԿ-ի, ինչպես նաև մի շարք այլ մարզական ՀՈԱԿ-ների վերակազմակերպում:	Ծրագրի իրականացվում է փուլերով: 2016 թվականին կազմակերպվել են քննարկումներ, մասնագիտական խմբի կողմից ուսումնասիրվել և ընտրվել են Երևան քաղաքի հավաքական թիմերի կանոնավոր պարապմունքների, ուսումնամարզական հավաքների գործընթացի իրականացման համար համապատասխան տարածքներ:	Աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժին	

2.	<p>Երևան–Ստեփանակերտ, Երևան–Մոսկվա քաղաքների համագործակցության ծրագրով նախատեսված աշխատանքների զարգացում:</p>	<p>Երևան–Ստեփանակերտ, Երևան–Մոսկվա քաղաքների համագործակցության ծրագրով նախատեսված աշխատանքների զարգացում:</p>	<p>Երևան և Ստեփանակերտ քաղաքների համագործակցության շրջանակներում Երևանցի 20 մարզիկներ մասնակցել են Ստեփանակերտում անցկացված սանդա ուշու մարզաձևի բաց առաջնությանը: Երևան-Ստեփանակերտ համագործակցության ծրագրի շրջանակներում Ստեփանակերտի բասկետբոլի թիմը Երևանում մասնակցել է բասկետբոլի բաց առաջնությանը: Երևան և Մոսկվա քաղաքների համագործակցության ծրագրով նախատեսված «Մոսկվայի օրերը Երևանում» միջոցառման շրջանակում կազմակերպվել են պատանեկան մարզական խաղեր՝ ազատ ոճի ըմբշամարտ, ձյուդո, շախմատ մարզաձևերից:</p>	<p>Ասեպտեմբերի 21-24 նոյեմբերի 2-4 հոկտեմբերի 27-30-ը</p>	
3.	<p>Երևան քաղաքի հավաքական թիմերի երևանյան թիմերի ու մարզիկ-մարզուհիների մասնակցության ապահովում Հայաստանի հանրապետության առաջնություններում ու տեղական և միջազգային մրցաշարերում:</p>	<p>Երևան քաղաքի հավաքական թիմերի երևանյան թիմերի ու մարզիկ-մարզուհիների մասնակցության ապահովում Հայաստանի հանրապետության առաջնություններում ու տեղական և միջազգային մրցաշարերում:</p>	<p>Երևան քաղաքի հանդրոլի թիմը մասնակցել է Վանաձորի բաց առաջնությանը գրավելով երկրորդ տեղը: «Երևանի մարզատրամաբանական խաղերի մանկապատանեկան մարզադպրոցում անցկացվել է ռենձյուի Երևան քաղաքի 2016թ. պատանեկան առաջնությունը: 1-8-րդ տեղերը գրավածներն իրավունք են ստացել մասնակցելու Հայաստանի պատանիների առաջնությանը: Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տանն անցկացվել է շախմատի Երևանի 2016թ. պատանեկան առաջնությունը: Հաղթողներն իրավունք են ստացել մասնակցելու Հայաստանի պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին: Իրինա Ռոդինայի գեղասահքի մարզադպրոցում առաջին անգամ կազմակերպվել է գեղասահքի Երևան քաղաքի առաջնությունը: Աշխարհահռչակ կանադացի գեղասահորդ Էլադ Բալդեն գեղասահքի սահադաշտում անցկացրել է վարպետության դաս: Անցկացվել են Երևան քաղաքի առողջարարական, հանրային, մարզական ու երիտասարդական միջոցառումների 2016 թվականի օրացուցային պլանով նախատեսված բասկետբոլի, շաշկու, հունահռոմեական և ազատ ոճի ըմբշամարտի, սեղանի թենիսի, հանդրոլի Երևան քաղաքի առաջնություններ: «Դինամո» մարզադահլիճում անցկացվել է բոքսի Երևան քաղաքի առաջնությունը: Կազմակերպվել է Հայաստանում գոլֆ մարզաձևի հիմնադիր Վահագն</p>	<p>փետրվարի 3-7 փետրվարի 8-15 փետրվարի 14-23 փետրվարի 2-4 մարտ ամսին ապրիլի 2-7-ը ապրիլի 17-ին</p>	

			<p>Հովանյանի հուշամրցաշար: Երևանի շախմատի ֆեդերացիայի հետ համատեղ անցկացվել է անվանի գրոսմայստեր Կարեն Ասրյանի հուշամրցաշար: Կազմակերպվել է բաղմինթոնի Երևան քաղաքի առաջնություն «Հրազդան» մարզադահլիճում: Կազմակերպվել է վոլեյբոլի Երևան քաղաքի առաջնություն «Կիլիկիա» մարզադահլիճում: Դինամո» մարզադահլիճում կազմակերպվել է «արևելյան մարզաձևերի փառատոն: Կազմակերպվել են «Երևանյան ամառ 2016» ծրագրով նախատեսված մարզական միջոցառումներ: Կազմակերպվել է Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված մարզահամերգային տոնահանդես Երևանի մանկական զբոսայգում: Կազմակերպվել է ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» հանրապետական մրցույթի երևանյան փուլի վեց մարզաձևերի մրցաշարեր: Ծաղկաձորում Երևանի մարզական պատվիրակությունը մասնակցել է ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» հանրապետական մրցույթի եզրափակիչ փուլին ընդհանուր հաշվարկով գրավելով առաջին տեղը և արժանանալով ՀՀ Նախագահի գավաթին: Կազմակերպվել է մոտոկրոսի միջազգային առաջնություն: Կազմակերպվել է վինդսերֆինգի Երևան քաղաքի առաջնություն Սևանա լճում: Կազմակերպվել է Երևան քաղաքի աթլետիկայի առաջնություն «Մպարտակ» մարզահամալիրում: ՀՀ Նախագահի մրցանակի համար «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» հանրապետական մրցույթին Երևանի թիմի կազմում մասնակցել է լողական, տեսողական, հենաշարժողական խնդիրներ ունեցող 27 մարզիկ: Կազմակերպվել է սուսերամարտի Երևան քաղաքի առաջնություն Ալբերտ Գրիգորյանի անվան սուսերամարտի մանկապատանեկան</p>	<p>ապրիլի 28-ին մայիսի 15-18-ը, մայիսի 20-26-ը մայիսի 15-31-ը հունիս-օգոստոս հունիսի 1-ին հունիսի 27 Հուլիսի 18-24 օգոստոսի 20 օգոստոսի 5-8 օգոստոսի 9-10 օգոստոսի 28-31 սեպտեմբերի 9-13</p>	
--	--	--	--	--	--

			<p>մարգադպրոցի մարգադահլիճում: Կազմակերպվել է Գոլֆի Երևան քաղաքի առաջնություն՝ «Արարատ» գոլֆի ակումբի մարգադաշտում: Կազմակերպվել է ավիացիոն մարզաձևի Երևան քաղաքի առաջնություն՝ Արգնու օդանավակայանում: Կազմակերպվել է հանդբոլի կանանց հուշամրցաշար՝ նվիրված վաստակավոր մարզիչ Տիգրան Թերզիյանին: Կազմակերպվել է հեծանվասպորտի Երևան քաղաքի առաջնություն: Կազմակերպվել է հրաձգության Երևան քաղաքի առաջնություն: Կազմակերպվել է ձյուդոյի Երևան քաղաքի առաջնություն: Կազմակերպվել է գեղարվեստական մարմնամարզության Երևան քաղաքի առաջնություն: Կազմակերպվել է ակրոբատիկ մարմնամարզության Երևան քաղաքի առաջնություն: Կազմակերպվել է սպորտային մարմնամարզության Երևան քաղաքի առաջնություն:</p>	<p>սեպտեմբերի 11-13 սեպտեմբերի 14-15 հոկտեմբեր 22-24 հոկտեմբեր 13-27 հոկտեմբեր 15-17 հոկտեմբեր 23-24 հոկտեմբեր 24-27 նոյեմբեր 5- 8 դեկտեմբեր 14-16</p>	
4.	<p>Հանրապետական և միջազգային մրցաշարերին պատշաճ մակարդակով մասնակցելու նպատակով երևանցի մարզիկների և Երևանի թիմերի համար ուսումնամարզական հավաքների կազմակերպում:</p>	<p>Հանրապետական և միջազգային մրցաշարերին պատշաճ մակարդակով մասնակցելու նպատակով երևանցի մարզիկների և Երևանի թիմերի համար ուսումնամարզական հավաքների կազմակերպում:</p>	<p>Անցկացվել են ուսումնամարզական հավաքներ՝ Վանաձորում՝ հանդբոլի Երևանի հավաքական թիմերի համար, Վանաձորում՝ ակրոբատիկայի Երևան քաղաքի հավաքական թիմի համար, Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրում՝ շախմատի Երևան քաղաքի հավաքական թիմի համար, Միսիանում՝ վոլեյբոլի Երևան քաղաքի աղջիկների և պատանիների թիմերի համար:</p>	<p>հունիսի 6-15 օգոստոսի 2-11 սեպտեմբերի 4-13 նոյեմբերի 1-10 Աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժին</p>	
5.	<p>«Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային</p>	<p>«Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային</p>	<p>Կազմակերպվել են Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի համար «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» 2016թ. համաքաղաքային բակային ավանդական փառատոնի մրցաշարեր Երևանի վարչական շրջաններում:</p>	<p>հունիս 1-30</p>	

	բակային ավանդական փառատոնի վերածում միջազգայինի՝ համագործակցելով Երևանի քույր քաղաքների հետ:	բակային ավանդական փառատոնի վերածում միջազգայինի՝ համագործակցելով Երևանի քույր քաղաքների հետ:	Կազմակերպվել և ամփոփվել է Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի համար «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային փառատոնի քաղաքային փուլը: Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթը երրորդ անգամ նվաճեց Աջափնյակ վարչական շրջանը:	հուլիսի 2-30-ը Աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժին	
6.	Հանրապետական, միջազգային մրցաշարերում, Եվրոպայի ու աշխարհի առաջնություններում և օլիմպիական խաղերում բարձր արդյունքներ ցուցաբերած երևանցի մարզիկների խրախուսում:	Հանրապետական, միջազգային մրցաշարերում, Եվրոպայի ու աշխարհի առաջնություններում և օլիմպիական խաղերում բարձր արդյունքներ ցուցաբերած երևանցի մարզիկների խրախուսում:	Երևանի քաղաքապետի կողմից խրախուսվել են Ռիո դե Ժանեյրոյում կայացած 31-րդ օլիմպիական խաղերի հաղթող հունահռոմեական ոճի ըմբիշներն ու նրանց մարզիչները: Մամբոյի աշխարհի և Եվրոպայի կրկնակի չեմպիոն, Հայաստանի բազմակի չեմպիոն Քրիստինե Նաջարյանը պարգևատրվել է Երևանի քաղաքապետի պատվոգրով: ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» հանրապետական մրցույթի գավաթագիր Երևանի թիմում ընդգրկված 23 ընտանիք պարգևատրվել են Երևանի քաղաքապետի շնորհակալագրերով և դրամական պարգևներով:	Աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժին	
7.	Երևանի ենթակայության մարզական կազմակերպությունների տարածքների հիմնանորոգման և ժամանակակից մարզագույքով ապահովման աշխատանքների իրականացում:	Երևանի ենթակայության մարզական կազմակերպությունների տարածքների հիմնանորոգման և ժամանակակից մարզագույքով ապահովման աշխատանքների իրականացում:	Նախատեսված հիմնանորոգման աշխատանքներն ավարտվել են Երևան համայնքի 9 մազադպրոցներում, Քանաքեռ-Զեյթուն, Նորք-Մարաշ վարչական շրջանների նորաստեղծ շախմատի մարզադպրոցներում: Երևան համայնքի 16 մարզադպրոցների համար ձեռք են բերվել մարզական, գրասենյակային գույք և բժշկական սարքավորումներ: Ձեռք է բերվել հաշմանդամություն ունեցող անձանց (կույրերի) համար թենիսի հարմարեցված (շոուդաունի) 2 սեղան:	Աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժին	

Երիտասարդության հետ տարվող աշխատանքներ					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1.	2.	3.	4.	5.	6.
1.	Համագործակցության ծավալում մայրաքաղաքում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների, ուսանողական խորհուրդների, սփյուռքի և հանրապետության մարզերի երիտասարդական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային երիտասարդական կառույցների հետ	Արդյունավետ համագործակցության ծավալում մայրաքաղաքում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների, ուսանողական խորհուրդների, սփյուռքի և հանրապետության մարզերի երիտասարդական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային երիտասարդական կառույցների հետ:	Կազմակերպվել է հեծանվամարաթոն Երևանից դեպի Արցախ՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին: «Էրեբունի-Երևան 2798» տոնականկատարության շրջանակներում «Մարզական Երևան» խորագրի ներքո կազմակերպվել են մարզական միջոցառումներ տարբեր կազմակերպությունների երիտասարդների մասնակցությամբ. Կարապի լճում՝ թիավարողների ու առագաստանավորողների, Ազատության հրապարակում՝ սթրիթ վոլբոլի ցուցադրական ելույթներ, Արգիշտիի փողոցից դեպի Հանրապետության հրապարակ՝ հեծանվավազք:	Սեպտեմբերի 11-21 Հոկտեմբերի 8 Աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժին	
2.	Հաշմանդամ երիտասարդներին մայրաքաղաքի երիտասարդական կյանքին ինտեգրելու նպատակով սերտ համագործակցության ծավալում հաշմանդամ երիտասարդներին	Հաշմանդամ երիտասարդներին մայրաքաղաքի երիտասարդական կյանքին ինտեգրելու նպատակով սերտ համագործակցության ծավալում հաշմանդամ երիտասարդներին	ՀՀ-ում Ֆրանսիայի, Գերմանիայի դեսպանությունների, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի և հասարակական կազմակերպությունների հետ Հայաստանի ֆուտբոլի ակադեմիայում կազմակերպվել է զանգվածային և հաշմանդամային սպորտի վերաբերյալ սեմինար-պարապմունք:	Աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժին հունիս	

	երիտասարդներին աջակցող կազմակերպությունների հետ	աջակցող կազմակերպությունների հետ:			
3.	Մայրաքաղաքի երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի լայն տարածմանը նպատակաուղղված զանգվածային մշակութային, մարզական միջոցառումների կազմակերպում	Մայրաքաղաքի երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի լայն տարածմանը նպատակաուղղված զանգվածային մշակութային, մարզական միջոցառումների կազմակերպում:	Անց է կացվել Երևան քաղաքի ուսումնարանների և քոլեջների ուսանողների սպարտակիադա «Հայաստան» մարզական միության մարզակառույցում: Կազմակերպվել է մարզաառողջարարական հետիոտն արշավ Վանաձորում:	մայիսի 20-27 հուլիսի 29-31 Աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժին	
4.	Երիտասարդների համար ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, թմրամոլության մասին իրազեկության ապահովմանը և կանխարգելմանն ուղղված զանգվածային մարզական միջոցառումների կազմակերպում	Երիտասարդների համար ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, թմրամոլության մասին իրազեկության ապահովմանը և կանխարգելմանն ուղղված զանգվածային մարզական միջոցառումների կազմակերպում:	Իրականացվել են երիտասարդների իրազեկվածության բարձրացման աշխատանքներ: Երևան քաղաքի առողջարարական, հանրային, մարզական, երիտասարդական միջոցառումների և մարզաառողջարարական հետիոտն արշավի շրջանակներում կազմակերպվել են զրույցներ, քննարկումներ:	Հուլիսի 29-31 Աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժին	
5.	Հաշմանդամություն ունեցող տաղանդավոր երիտասարդների ստեղծագործական ցուցահանդեսների և	Հաշմանդամություն ունեցող տաղանդավոր երիտասարդների ստեղծագործական ցուցահանդեսների և միջոցառումների	Կազմակերպվել է Երևան քաղաքի սպարտակիադա հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությամբ: Հաշմանդամություն ունեցող անձանց համար կազմակերպվել են բասկետբոլի, սեղանի թենիսի, ծանրամարտի, լողի և շախմատի մրցաշարեր:	Մայիսի 23-24 Սեպտեմբերի 11-13 Հոկտեմբերի 8	

	միջոցառումների կազմակերպում	կազմակերպում:	«Էրեբունի-Երևան 2798» տոնակատարության շրջանակում կազմակերպվել է պարաօլիմպիկ մարզիկների տոնական երթ՝ «Մոսկվա» կինոթատրոնից դեպի Երևանի քաղաքապետարան: Հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպվել է հաշմանդամություն ունեցող անձանց գեղանկարների և ձեռքի աշխատանքների ամենամյա ցուցահանդես Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միության շենքում:	Դեկտեմբերի 6	
6.	Խորհրդի կողմից իրականացվող միջոցառումներ («Կամավորների բանկ», «Բանավեճի ակումբ», «Ընթացասերների ակումբ», ծառատունկեր, շաբաթօրյակներ և այլն)	2016 թվականին կշարունակվեն խորհրդի կողմից իրականացվող բոլոր միջոցառումները («Կամավորների բանկ», «Բանավեճի ակումբ», «Ընթացասերների ակումբ», ծառատունկեր, շաբաթօրյակներ և այլն): Կիրականացվեն նաև նոր ծրագրեր:	Իրականացվել են երիտասարդական ուղղվածության մի շարք ծրագրեր՝ «Կամավորների բանկ», «Երբ բանավիճում են երիտասարդները» բանավեճի ակումբ, «Խոսենք ֆիլմից» կինոսերների ակումբ, «Էկո Սերունդ» երիտասարդական բնապահպանական ծրագիր: Կազմակերպվել են նաև բաց դասընթացներ, սեմինարներ և երիտասարդական միջոցառումներ: Մասնավորապես՝ «Գործարար հմտություններ. Հաղորդակցություն» դասընթաց, «Կայքերի ստեղծում Wordpress հարթակով» դասընթաց, «Հմտությունների կամուրջ», «Կամավորությունը նույնպես աշխատանք է», «Խելամիտ վարկավորում», «Ստեղծի՛ր քո գործը» և այլն: Կազմակերպվել են նաև մի շարք մարզական-երիտասարդական միջոցառումներ՝ Սթրիթ Ուորքաութի (Street Workout) Հայաստանի առաջնություն և այլն:	Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհուրդ, «Ակտիվ երիտասարդ քաղաքացիների նախաձեռնություն» ՀԿ հունվար-դեկտեմբեր	
Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտ					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1.	2.	3.	4.	5.	6.
1.	Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հայտնաբերում, հաշվառում, կարիքների գնահատում և ՀՀ	Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հայտնաբերում, հաշվառում, կարիքների գնահատում և ՀՀ օրենսդրությամբ	Հայտնաբերվել և հաշվառման են վերցվել առանց ծնողական խնամքի մնացած 99 երեխա և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 4 անձ, իրականացվել է կարիքների գնահատում և ուղղորդում համապատասխան կառույցներ մասնագիտական աջակցություն ստանալու նպատակով:	Աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին հունվար-դեկտեմբեր	

	օրենսդրությամբ սահմանված արտոնությունների տրամադրման ապահովում:	սահմանված արտոնությունների տրամադրման ապահովում:			
2.	Հատուկ դպրոցների երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների և մանկատների հնարավոր բեռնաթափման ուղղությամբ աշխատանքների կատարում	Հատուկ դպրոցների երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների և մանկատների հնարավոր բեռնաթափում	Ծնողի դիմումի և համապատասխան փաստաթղթերի հիման վրա տրվել է մանկատնից դուրսգրման մասին 20 եզրակացություն, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունից դուրսգրման մասին 52 եզրակացություն:	հունվար-դեկտեմբեր	
3.	Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տվյալների մուտքագրում բազայում	Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տվյալների մուտքագրում բազայում:	Երեխաների տվյալների շտեմարանում մուտքագրվել է կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող 132 երեխայի տվյալ:	հունվար-դեկտեմբեր	
4.	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագրում	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագրում:	Հիմք ընդունելով ծնողի դիմումը և Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի եզրակացությունը՝ վկայագրվել է 1345 երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:	հունվար-դեկտեմբեր	
5.	Մանկատների	Մանկատների	«Երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգի» համաձայն	հունվար-դեկտեմբեր	

	բեռնաթափման նպատակով խնամատարության ինստիտուտի կայացմանն աջակցություն:	բեռնաթափման նպատակով խնամատարության ինստիտուտի կայացմանն աջակցություն:	ստացվել է խնամատար ծնող դառնալու մասին 8 դիմում, տրվել է դրական եզրակացություն: Երևանի քաղաքապետի և խնամատար ծնողի միջև կնքվել է «ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցները խնամատար ծնողին տրամադրելու մասին» 12 պայմանագիր:		
6.	Մանկատների բեռնաթափման, երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրացման նպատակով որդեգրման հնարավորության մասին եզրակացության տրամադրման գործընթացի իրականացում:	Մանկատների բեռնաթափման, երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրացման նպատակով որդեգրման հնարավորության մասին եզրակացության գործընթացի իրականացում:	Հիմք ընդունելով քաղաքացիների կողմից ներկայացված փաստաթղթերը և կենսապայմանների ուսումնասիրության ակտերը՝ երեխա որդեգրելու հնարավորության մասին տրամադրվել է 32 դրական եզրակացություն: 42 օտարերկրյա քաղաքացու տրվել է խորհրդատվություն՝ երեխա որդեգրելու հնարավորության մասին եզրակացություն ստանալու վերաբերյալ և ուղղորդվել ՀՀ արդարադատության նախարարություն: Որդեգրողի թեկնածու հանդիսացող անձանց տրամադրվել է շտեմարանում առկա որդեգրման ենթակա երեխաների տվյալներ:	հունվար-դեկտեմբեր	
7.	Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տեղավորում խնամքի և պաշտպանության հաստատություններում:	Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տեղավորում խնամքի և պաշտպանության հաստատություններում :	Վարչական շրջաններից ստացված գրությունների, ծնողների դիմումների, ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև կենսապայմանների ուսումնասիրման արդյունքների հիման վրա 62 երեխա տեղավորվել է մանկատուն, 13 երեխա՝ խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն:	հունվար-դեկտեմբեր	
8.	Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների, բուժհաստատությունների և շահագրգիռ	Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների, բուժհաստատությունների և շահագրգիռ այլ կառույցների հետ	Մանկալքության դեպքերի կանխմանն նպատակով իրականացվել են այցելություններ Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ և «Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ: Ծնողների հետ իրականացված բացատրական աշխատանքների արդյունքում կանխվել է 9 երեխայի տեղավորումը մանկատուն:	հունվար-դեկտեմբեր	

	այլ կառույցների հետ համատեղ միջազգային իրականացում մանկալքության դեպքերը կանխելու համար:	համատեղ միջազգային իրականացում մանկալքության դեպքերը կանխելու համար:			
9.	Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով, ըստ անհրաժեշտության, մեթոդական և գործնական օգնության տրամադրում:	Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով, ըստ անհրաժեշտության, մեթոդական և գործնական օգնության տրամադրում:	Երեխաների հետ կապված հատուկ դեպքերի առնչությամբ բաժինը մասնակցել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների 34 նիստի, տրամադրել մեթոդական օգնություն:	հունվար-դեկտեմբեր	
10	Միջազգային և տեղական հասարակական կառույցների և կազմակերպությունների հետ համատեղ ընտանիքի, կանանց և երեխաների հիմնախնդիրների	Միջազգային և տեղական հասարակական կառույցների և կազմակերպությունների հետ համատեղ ընտանիքի, կանանց և երեխաների հիմնախնդիրների	Իրականացվել է համագործակցություն ՀՀ-ում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի, «Փիփլը ին նիդ» միազգային հասարակական կազմակերպության, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի «Մեյվ դը չիլդրեն» միջազգային կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության, «Յունիսեֆ Հայաստան» միջազգային կազմակերպության, «Հույս և օգնություն», «Մոցիալական արդարություն», «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպությունների, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոն հիմնադրամի,	հունվար-դեկտեմբեր	

	լուծմանն ուղղված ծրագրերի մշակում, համատեղ միջոցառումների իրականացում:	լուծմանն ուղղված ծրագրերի մշակում, համատեղ միջոցառումների իրականացում:	երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների հետ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնդիրների ուսումնասիրման և հետագա խնդիրների կանխարգելման նպատակով: Երևանի քաղաքապետարանի և «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպության համագործակցության արդյունքում իրականացվել է միջոցառում Երևանի խնամատար ընտանիքների երեխաների համար՝ «Մեկ պարզ ցանկություն» նախաձեռնության շրջանակներում:		
11	Անչափահասների կողմից իրավախախտումների, մուրացիկության և թափառաշրջիկության և կանխարգելման, հիմնախնդիրների առաջացման պատճառների ուսումնասիրման և համապատասխան միջոցառումների ձեռնարկման նպատակով ոստիկանության անչափահասների գործերով բաժանմունքների հետ համագործություն՝ համատեղ նիստերի, շրջայցների կազմակերպում, հասցեական օգնության տրամադրում, երեխաների կողմնորոշում և	Անչափահասների կողմից իրավախախտումների, մուրացիկության և թափառաշրջիկության կանխարգելման, հիմնախնդիրների առաջացման պատճառների ուսումնասիրման և համապատասխան միջոցառումների ձեռնարկման նպատակով ոստիկանության անչափահասների գործերով բաժանմունքների հետ համագործություն՝ համատեղ նիստերի, շրջայցների կազմակերպում, հասցեական օգնության տրամադրում, երեխաների կողմնորոշում և	Թափառաշրջիկ երեխաների, նրանց հետ կապված խնդիրների լուծման, միասնական աշխատանքների կազմակերպման նպատակով ՀՀ ոստիկանության պետի 07.11.2013թ. հ. 3837-Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի հերթական նիստին ներկայացվել է Երևանի քաղաքապետարանի կողմից կատարված աշխատանքը՝ մայրաքաղաքում մուրացիկության և թափառաշրջիկության կանխարգելման նպատակով: Կազմակերպվել է կլոր-սեղան քննարկում՝ մասնակից դարձնելով քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության և սոցիալական ապահովության վարչություններին, վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին, ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության՝ 3-րդ վարչության աշխատակիցներին՝ անչափահասների հարցերով տեսուչներին՝ վարքային խնդիրներ ունեցող երեխաների տեղավորման հարցերի, վերջին շրջանում Երևանում ՀՀ ոստիկանության և Երևանի քաղաքապետարանի տեսադաշտում հայտնված մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների հիմախնդիրների քննարկման նպատակով: Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների և ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության՝ 3-րդ վարչության աշխատակիցների՝ անչափահասների հարցերով տեսուչների հետ համատեղ կազմակերպվել են նիստեր և իրականացվել են տունայցեր յուրաքանչյուր անչափահասի կողմից մուրացիկության և թափառաշրջիկության դեպքերը կանխարգելելու նպատակով: ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների կողմից	հունվար-դեկտեմբեր	

	երեխաների կողմնորոշում և տեղավորում:	տեղավորում:	ստացված տեղեկատվություն համաձայն մուրացիկ և թափառաշրջիկ 28 երեխաների տվյալներ փոխանցվել են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին՝ ընտանիքներին հնարավորինս աջակցելու և հետագայում մուրացիկության դեպքերը կանխարգելելու համար: ՀՀ ոստիկանությունից ստացված փաստաթղթերի և ծնողի դիմումի հիման վրա 8 երեխայի տրվել է «Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների տեղեկատվական համակարգում» հաշվառված լինելու մասին տեղեկանք, որի հիման վրա վերջիններս տեղափոխվել են Հանրապետական հ. 1 հատուկ կրթահամալիր:		
12	Շահագրգիռ կառույցների հետ համատեղ կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերում և նրանց կրթական համակարգում ընդգրկելու ուղղությամբ աշխատանքներ:	Շահագրգիռ կառույցների հետ համատեղ կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերում և նրանց կրթական համակարգում ընդգրկելու ուղղությամբ աշխատանքներ:	Իրականացվել են աշխատանքներ 34 երեխաների կրթական համակարգում ընդգրկելու և կրթական շարունակականությունը ապահովելու ուղղությամբ:	հունվար-դեկտեմբեր	
13	Շահագրգիռ կառույցների հետ համատեղ ծննդյան վկայական չունեցող երեխաների տվյալների հավաքագրում, վկայականների ձեռքբերման գործընթացին աջակցում:	Շահագրգիռ կառույցների հետ համատեղ ծննդյան վկայական չունեցող երեխաների տվյալների հավաքագրում, վկայականների ձեռքբերման գործընթացին աջակցում:	Մտացվել է ծննդյան վկայական չունեցող 2 երեխայի տվյալ, իրականացվել է աջակցություն՝ վկայականի ձեռքբերման գործընթացի հարցում:	հունվար-դեկտեմբեր	
14	Ընտանիքի, կանանց և	Ընտանիքի, կանանց և	Առանձին դեպքերի առնչությամբ քննարկումներ են կազմակերպվել	հունվար-դեկտեմբեր	

	երեխաների ոլորտում առկա խնդիրներին վերաբերվող սեմինարների, կլոր սեղանների, գործնական քննարկումների կազմակերպում	երեխաների ոլորտում առկա խնդիրներին վերաբերվող սեմինարների, կլոր սեղանների, գործնական քննարկումների կազմակերպում:	վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների, հատուկ դպրոցների, մանկատների, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների ներկայացուցիչների հետ: 12 վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների մասնակցությամբ իրականացվել է աշխատանքային քննարկում՝ օրենսդրական դաշտում առկա փոփոխությունների վերաբերյալ:		
15	Վարչական շրջանների գենդերային հարցերով զբաղվող աշխատանքային խմբերի հետ գենդերային խնդիրների շուրջ եռամսյակային քննարկումների կազմակերպում	Վարչական շրջանների գենդերային հարցերով զբաղվող աշխատանքային խմբերի հետ գենդերային խնդիրների շուրջ եռամսյակային քննարկումներ:	ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 20-ի հ. 19 և հունիսի 17-ի հ.23 արձանագրային որոշումների պահանջներին համաձայն գենդերային հարցերով աշխատանքային խմբերի մասնակցությամբ կազմակերպվել են քննարկումներ, տրամադրվել է մեթոդական աջակցություն:	հունվար-դեկտեմբեր	
16	ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 20-ի և հունիսի 17-ի նիստերի համապատասխանաբար հ.19 և հ.23 արձանագրային որոշումների հիման վրա մշակված Կանանց և տղամարդկանց իրավահավասարության և սեռի հատկանիշով բռնության ծրագրերի իրականացման	ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 20-ի և հունիսի 17-ի նիստերի համապատասխանաբար հ.19 և հ.23 արձանագրային որոշումների հիման վրա մշակված Կանանց և տղամարդկանց իրավահավասարության և սեռի հատկանիշով բռնության ծրագրերի իրականացման	Երևանի 12 վարչական շրջանների գենդերային հարցերով զբաղվող աշխատանքային խմբերի մասնակցությամբ պարբերաբար կազմակերպվել է կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ քննարկումներ: Կազմակերպվել է կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ սեմինար՝ Երևանի 12 վարչական շրջանների գենդերային հարցերով զբաղվող աշխատանքային խմբերի և «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» հասարակական կազմակերպության ներկայացուցչի մասնակցությամբ: Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի հետ իրականացվել է «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագիրը՝ մասնակից դարձնելով Երևան քաղաքի Ավան, Արաբկիր, Էրեբունի, Նուբարաշեն, Քաբաբեռ-Ջեյթուն վարչական շրջանների գենդերային հարցերով զբաղվող աշխատանքային խմբերի անդամներին:	հունվար-դեկտեմբեր	

	սեռի հատկանիշով բռնության ծրագրերի իրականացման ապահովում Երևան քաղաքում:	ապահովում Երևան քաղաքում:			
17	Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների ընտանիքների աջակցություն	Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների ընտանիքներին աջակցություն:	Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող 81 ընտանիքի տրամադրվել է սոցիալական աջակցություն, 103 անձանց տրվել է իրավական խորհրդատվություն:	հունվար-դեկտեմբեր	
18	Երևան քաղաքի հատուկ դպրոցներ՝ այցելություններ՝ երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով	Այցելություն Երևան քաղաքի հատուկ դպրոցներ՝ երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով:	Իրականացվել են այցելություններ Երևանի հ. 2 և հ. 6 հատուկ դպրոցներ, լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր, Հանրապետական հ.1 հատուկ կրթահամալիր՝ երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով:	հունվար-դեկտեմբեր	
19	Թրաֆիքինգի վերաբերյալ դեպքերի քննարկում և ուղղորդում	Թրաֆիքինգի վերաբերյալ դեպքերի քննարկում և ուղղորդում:	Կանանց և երեխաների թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկատվություն չի ստացվել:	հունվար-դեկտեմբեր	
20	Կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ սեմինար:	Կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ սեմինար:	Կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ սեմինարի կազմակերպում՝ Երևանի 12 վարչական շրջանների գեղդերային հարցերով զբաղվող աշխատանքային խմբերի և «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» հասարակական կազմակերպության ներկայացուցչի մասնակցությամբ:	մարտի 24	
21	Մարզամշակութային միջոցառում հատուկ դպրոցների երեխաների համար:	Մարզամշակութային միջոցառում հատուկ դպրոցների երեխաների համար:	Կազմակերպվել է ֆուտբոլի մրցաշար Երևան քաղաքի հ. 2, 6, 8, 12 հատուկ դպրոցների, լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի, երեխաների խնամքի և պաշտպանության հ. 2 գիշերօթիկ հաստատության, «ՍՕՍ-մանկական գյուղեր» մանկատան, հանրապետական հ. 1 հատուկ կրթահամալիրի շուրջ 120 երեխաների	մայիսի 11-13	

			մասնակցությամբ: Միջոցառման ընթացքում բոլոր մասնակիցներին տրամադրվել է սպորտային համազգեստ և խրախուսական նվերներ: Մրցաշարի հաղթող թիմերին շնորհվել են գավաթներ, մեդալներ և պատվոգրեր:		
22	Ընտանիքի օրվան նվիրված շնորհալի երեխաների ձեռքի աշխատանքների ցուցահանդես «Իմ ընտանիքը» խորագրով:	Ընտանիքի օրվան նվիրված շնորհալի երեխաների ձեռքի աշխատանքների ցուցահանդես «Իմ ընտանիքը» խորագրով:	Ընտանիքի միջազգային օրվան նվիրված Ավանի մշակույթի տանը իրականացվել է առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ձեռքի աշխատանքների ցուցահանդես՝ «Իմ ընտանիքը» խորագրով: Միջոցառման ավարտին շուրջ 50 երեխաների տրամադրվել են նվերներ:	մայիսի 17	
23	Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված այցելություն ծննդատներ հունիսի 1-ին ծնված երեխաներին նվերների տրամադրում:	Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված այցելություն ծննդատներ՝ հունիսի 1-ին ծնված երեխաներին նվերների տրամադրում:	Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված իրականացվել է այցելություն «Սուրբ Աստվածածին» և «Գրիգոր Նարեկացի» ծննդատներ: Հունիսի 1-ին ծնված երեխաներին և նրանց մայրերին տրամադրվել են նվերներ:	հունիսի 1	
24	Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված շրջիկ տիկնիկային թատրոնի մասնակցությամբ ներկայացում «Մարի Իզաբելայի անվան մասնագիտացված մանկատուն» և «Երևանի Մանկան տուն» ՊՈԱԿ-ների	Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված շրջիկ տիկնիկային թատրոնի մասնակցությամբ ներկայացում «Մարի Իզաբելայի անվան մասնագիտացված մանկատուն» և «Երևանի Մանկան տուն» ՊՈԱԿ-ների երեխաների համար,	Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ կազմակերպվել է այցելություն «Երևանի մանկան տուն» և «Մարի Իզաբելայի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ներ, որի ընթացքում մանկատների սաներին տրամադրվել են նվերներ, հիգիենյաի պարագաներ, տակդիրներ, լողավազաններ:	հունիսի 1	

	երեխաների համար, նվերների տրամադրում:	նվերների տրամադրում:			
25	Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված հեքիաթի հերոսների, մանկական երաժշտական խմբերի մասնակցությամբ տոնական զվարճալի միջոցառում, որի ընթացքում երեխաներին կտրվեն խորհրդանշական նվերներ:	Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված հեքիաթի հերոսների, մանկական երաժշտական խմբերի մասնակցությամբ տոնական զվարճալի միջոցառում, որի ընթացքում երեխաներին կտրվեն խորհրդանշական նվերներ:	Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված Երևանի «Առնո Բաբաջանյան» համերգասրահում «Նագաշյան մանուկների տուն» հաստատության հետ համատեղ կազմակերպվել է միջոցառում՝ երեխաների խնամքի և պաշտպանության հ.2 գիշերօթիկ հաստատության, «ՍՕՍ-մանկական գյուղեր» մանկատան, հանրապետական հ. 1 հատուկ կրթահամալիրի, «Զատիկ» և ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոնների, Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգաձության կենտրոնի, «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի երեխաների մասնակցությամբ: Մջոցառման ավարտին շուրջ 300 երեխաների տրամադրվել են նվերներ:	հունիսի 1	
26	Հանրապետական հ.1 հատուկ կրթահամալիրի և Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության հ.2 գիշերօթիկ հաստատության երեխաների համար այց-սեմինար կենդանաբանական այգի, ծանոթացում վայրի բնությանը, ոլորտի մասնագիտությունների	Հանրապետական հ.1 հատուկ կրթահամալիրի և Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության հ.2 գիշերօթիկ հաստատության երեխաների համար այց-սեմինար կենդանաբանական այգի, ծանոթացում վայրի բնությանը, ոլորտի մասնագիտությունների	Կազմակերպվել է հատուկ կարիքներով շուրջ 300 երեխաների այցելությունը Երևանի Կենդանաբանական այգի:	սեպտեմբերի 20, 22, 23	

	րի ուսումնասիրում:	ուսումնասիրում:			
27	Էրեբունի-Երևան տոնին ընդառաջ Հանրապետական հ.1 հատուկ կրթահամալիրի և «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգաձության կենտրոն» ՊՈԱԿ-ի երեխաների այցելության կազմակերպում թանգարաններ:	Էրեբունի-Երևան տոնին ընդառաջ Հանրապետական հ.1 հատուկ կրթահամալիրի և «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգաձության կենտրոն» ՊՈԱԿ-ի երեխաների այցելության կազմակերպում թանգարաններ:	Կազմակերպվել է Հանրապետական հ.1 հատուկ կրթահամալիրի և «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգաձության կենտրոն» ՊՈԱԿ-ի երեխաների այցելություն թանգարաններ:	հոկտեմբերի 14	
28	Հաշմանդամների միջազգային օրվան նվիրված հաշմանդամություն ունեցող երեխաների ձեռքի աշխատանքների ցուցահանդես:	Հաշմանդամների միջազգային օրվան նվիրված հաշմանդամություն ունեցող երեխաների ձեռքի աշխատանքների ցուցահանդես:	Հաշմանդամների միջազգային օրվան նվիրված կազմակերպվել է հատուկ կարիքներ ունեցող շուրջ 90 երեխաների մասնակցությամբ ձեռքի աշխատանքների ցուցահանդես, մասնակից երեխաներին տրվել են խրախուսական նվերներ:	դեկտեմբերի 9	
29	Երեխա որդեգրել ցանկացող քաղաքացիներին որդեգրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի ներկայացում, դիմումների քննարկում,	Երեխա որդեգրել ցանկացող քաղաքացիներին որդեգրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի ներկայացում, դիմումների քննարկում, փաստաթղթերի	Ներկայացված փաստաթղթերի, որդեգրման վերաբերյալ դրական եզրակացությունների հիման վրա հաշվառման է վերցվել երեխա որդեգրել ցանկացող 39 անձ: 2 քաղաքացու դիմումի հիման վրա կատարվել է հարցում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ որդեգրման նպատակով երեխայի ընտրության վերաբերյալ: Որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառման վերցված 34 անձանց տրվել է որդեգրման ենթակա երեխաների ցանկ:	հունվար-դեկտեմբեր	

	փաստաթղթերի իսկության ստուգում, կենսապայմանների ուսումնասիրում և որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառման իրականացում	իսկության ստուգում, կենսապայմանների ուսումնասիրում և որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառման իրականացում:			
30	Որդեգրման ենթակա երեխաների հաշվառում՝ անձնական քարտի լրացում, անձնական գործի կազմում և կենրոնացված հաշվառման ներկայացում	Որդեգրման ենթակա երեխաների հաշվառում՝ անձնական քարտի լրացում, անձնական գործի կազմում և կենրոնացված հաշվառման ներկայացում:	ՀՀ կառավարության 18.03.2010թ. հ. 269-Ն որոշմամբ հաստատված որդեգրման կարգի համաձայն հաշվառվել է որդեգրման ենթակա 56 երեխա, դատարանի վճիռների հիման վրա՝ հաշվառումից հանվել է որդեգրման ենթակա 28 երեխա:	հունվար-դեկտեմբեր	
31	Երևանի վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կողմից իրականացված աշխատանքների գնահատում	Երևանի վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կողմից իրականացված աշխատանքների գնահատում:	Երևանի քաղաքապետի 02.03.2015թ. հ. 515-Ա որոշման պահանջների համաձայն՝ իրականացվել է Երևան քաղաքի վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների 2016թ. 12 ամիսների գործունեության գնահատում:	հունվար-դեկտեմբեր	

Մ ի ջ ա զ գ ա յ ի ն հ ա մ ա գ ո Ր ծ ա կ ց ու թ յ ո ն

Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1.	2.	3.	4.	5.	6.
1.	Միջազգային և տարածաշրջանային	2016թ. շարունակական բնույթ է կրելու	Երևանի քաղաքապետարանի և Ֆրանկոֆոն քաղաքապետերի միջազգային ասոցիացիայի համագործակցության շրջանակներում	Աշխատակազմի արտաքին կապերի	

	կառույցների հետ համագործակցություն , տեխնիկական աջակցության տրամադրման ծրագրերի իրականացում	միջազգային և տարածաշրջանային կառույցների հետ համագործակցությունը, տեխնիկական աջակցության տրամադրման ծրագրերի իրականացումը (մշակումը):	իրականացվել է նոր տեխնիկական աջակցության ծրագրերի մշակում: Նախապատրաստվել և կազմակերպվել է Երևանի ավագանու անդամ Նատալյա Լափաուրիի այցը Լիբանանի Հանրապետության մայրաքաղաք Բեյրութ՝ ֆրանկոֆոն քաղաքապետերի միջազգային ասոցիացիայի ամենամյա համաժողովին մասնակցելու նպատակով: Ապահովվել է Երևան քաղաքի մասնակցությունը Հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության երրորդ համաժողովին: Համաժողովը ընթացել է 4 աշխատախմբերով, Երևանը մասնակցել է 3-ին՝ տուրիզմ, քաղաքային ենթակառուցվածքներ, կրթություն և մշակույթ:	վարչություն սեպտեմբերի 28-30 դեկտեմբերի 1-2	
2.	Երևան քաղաքի, ինչպես նաև գործարար միջավայրի և ներդրումային առաջարկների վերաբերյալ տեղեկատվությունը միջազգային ցուցահանդեսներին, գիտաժողովներին - ներկայացնելու ուղղությամբ աշխատանքների իրականացում	Քայլեր կձեռնարկվեն Երևան քաղաքի, ինչպես նաև գործարար միջավայրի և ներդրումային առաջարկների վերաբերյալ տեղեկատվությունը միջազգային ցուցահանդեսներին, գիտաժողովներին ներկայացնելու ուղղությամբ:	Ուսումնասիրվել է Երևանի գործընկեր քաղաքների ներդրումային փաթեթները: Երևան քաղաքի, ինչպես նաև գործարար միջավայրի և ներդրումային առաջարկների վերաբերյալ տեղեկատվությունը զեկույցի տեսքով ներկայացվել է Երևանում Սանկտ Պետերբուրգի օրերը և Մոսկվայի օրերը միջոցառումների շրջանակում կազմակերպված գործարար համաժողովի և կլոր սեղան-քննարկման մասնակիցներին:		
3.	Սփյուռքի կառույցների և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների հետ քաղաքային	Կակտիվացվեն աշխատանքները սփյուռքի կառույցների և ՀՀ դիվանագիտական հաստատությունների հետ՝ քաղաքային	ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանության հետ համագործակցության շրջանակներում կազմակերպվել և ապահովվել է Երևանի քաղաքապետարանի համապատասխան մասնագետների մասնակցությունը ՀՀ ԱԳՆ-ի և Ֆրանսիայի դեսպանության կողմից կազմակերպված «Վերանայել քաղաքը՝ միասին ավելի լավ ապրելու համար» հանդպում-կոնֆերանսին: Ֆրանսիայի դեսպանատան հետ		

	տնտեսության զարգացմանն ուղղված ծրագրերի շուրջ աշխատանքների իրականացում	տնտեսության զարգացմանն ուղղված ծրագրերի շուրջ:	համատեղ կազմակերպվել է «Քաղաքը և շրջակա միջավայրը» լուսանկարների ցուցադրություն Երևանի պատմության թանգարանում: Լիտվայի դեսպանության հետ համատեղ կազմակերպվել է «Փողոցային երաժիշտների օր» միջոցառումը: Իրանի դեսպանության հետ համատեղ Երևանի պատմության թանգարանում կազմակերպվել է «Մշակութային երկխոսություն» խորագրով ցուցահանդեսը: Ապահովվել է Կապույտ մզկիթի արտաքին գեղարվեստական լուսավորումը Մաշտոցի պողոտայի կողմից:		
4.	«Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքներ» կազմակերպության հետ ծրագրերի իրականացում	Նպատակային ծրագրերի իրականացում «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքներ» կազմակերպության հետ:	Ուսումնասիրվել է «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքներ» կազմակերպության 2015-2020թթ. զարգացման ծրագիրը: «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքներ» կազմակերպության հետ քննարկվել են ծրագրի իրականացման հնարավորության շուրջ:		
5.	Գործընկեր քաղաքների գործարար շրջանակների այցելությունների կազմակերպում	Կազմակերպվեն գործընկեր քաղաքների գործարար շրջանակների այցելություններ Երևան:	Մասնակցություն «Ֆրանսիա» խմբի հերթական նիստին՝ դեկտեմբերի 1-ին և 2-ին Հայաստանում անցկացված Հայ-Ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության համաժողովի նախապատարաստական հարցերի քննարկման նպատակով: Երևանում անցկացվել են Սանկտ Պետերբուրգի օրերը, որի շրջանակներում կազմակերպվել է գործարար համաժողով: Երևանում անցկացվել են Մոսկվայի օրերը, որի շրջանակներում անցկացվել է կլոր սեղան-քննարկում գործարար շրջանակների մասնակցությամբ:	հունիսի 10 նոյեմբերի 9-12 հոկտեմբերի 27-30	
6.	Մայրաքաղաքի տնտեսության զարգացմանն ուղղված նորագույն	Մայրաքաղաքի տնտեսության զարգացմանն ուղղված նորագույն փորձի	Մշակվել է Արաբկիր վարչական շրջանի և Ֆրանսիայի Պլեսսի- Ռոբինսոն քաղաքի 2016թ. համագործակցության ծրագիրը: Համագործակցության համաձայնագիր է կնքվել Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի և Նովոսիբիրսկ քաղաքի Կենտրոնական		

	<p>փորձի ուսումնասիրության նպատակով Երևանի վարչական շրջանների և գործընկեր քաղաքների կամ քաղաքների վարչական շրջանների միջև համագործակցություն :</p>	<p>ուսումնասիրության նպատակով Երևանի վարչական շրջանների և գործընկեր քաղաքների կամ քաղաքների վարչական շրջանների միջև համագործակցությունը կրելու է շարունակական բնույթ:</p>	<p>շրջանի միջև: Ստորագրվել է համագործակցության համաձայնագիր Երևան քաղաքի Էրեբունի և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների և ՌԴ Մանկտ Պետերբուրգի Մոսկովյան և Պետրոգրադսկի վարչական շրջանների միջև: Արաբկիր-Պլեսսի Ռոբինսոն համագործակցության շրջանակներում Ֆրանսիայի Պլեսսի-Ռոբինսոնի քաղաքապետ Ֆիլիպ Պեմբրեկի հրավերով կազմակերպվել է Արաբկիր վարչական շրջանի պատվիրակության այցը Պլեսսի Ռոբինսոն՝ քաղաքի տոնին մասնակցելու նպատակով: Կազմակերպվել է Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար Ա. Ուլիխանյանի այցը Նովոսիբիրսկ քաղաքի օրվան մասնակցելու նպատակով: Կազմակերպվել է Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ղեկավարների գլխավորած պատվիրակության այցը Խարկով քաղաքի օրվան մասնակցելու նպատակով: Կազմակերպվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի պատվիրակության այցը Ստավրոպոլ՝ քաղաքի 239-ամյակի տոնակատարությանը մասնակցելու նպատակով: Ուսումնասիրվել է քույր և գործընկեր քաղաքների կոմունալ տնտեսության, բազմաբնակարան շենքերի և վերելակների կառավարման փորձը: Աշխատանքներ են իրականացվել Երևանի արտաքին գովազդի փառատոնին Երևանի քույր և գործընկեր քաղաքների մասնակցության ապահովման նպատակով:</p>		
7.	<p>Քույր և գործընկեր քաղաքների հետ համագործակցություն և այցելությունների կազմակերպում</p>	<p>2016թ. սպասվում է Փարիզ, Լիոն, Նիցցա, Լյուբլյանա, Թեհրան, Ալեքսանդրոպոլի և Պոդգորիցա քաղաքների քաղաքապետերի, Ստրասբուրգի</p>	<p>Բանակցություններ են վարվել մի շարք գործընկեր քաղաքների հետ: Աշխատանքներ են իրականացվել Ստրասբուրգի, Պոդգորիցայի, Բուենոս Այրեսի, Մոնրեալի, Պրահայի քաղաքապետերի, Տոսկանայի մարզային խորհրդի նախագահի Երևան այցերի կազմակերպման ուղղությամբ: Բանակցություններ են վարվել Մարսելի քաղաքապետարանի հետ՝ Երևանի Ս. Աստվածամայր հիվանդանոցի և Մարսելի Հանրային աջակցության կլինիկայի միջև համաձայնագրի թարմացման ուղղությամբ: Աշխատանքներ են իրականացվել Վիեննայի</p>		

		<p>քաղաքապետի տեղակալի գլխավորած պատվիրակությունների այցը Երևան: 2016թ. ընթացքում նախատեսվում է վերականգնել Երևան-Լիոն համագործակցության գործողությունների ծրագիրը: 2016թ. Երևան և Թբիլիսի քաղաքների միջև համագործակցության ձևավորման 20-ամյակի առթիվ նախատեսվում է ստորագրել համագործակցության ծրագիր:</p>	<p>քաղաքապետարանի հետ՝ «Երևանի և Վիեննայի միջև բարեկամության մասին» համաձայնագրի նախագծի մշակման նպատակով: Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել Թբիլիսիի հետ համագործակցության ծրագրի ստորագրման ուղղությամբ: Աշխատանքներ են իրականացվել Երևանի քաղաքապետի այցերը Դոնի Ռոստով, Կրասնոդար, Կազան և Մինսկ քաղաքներ կազմակերպելու ուղղությամբ: 2016թ. մայիսի 14-17-ը Երևանի քաղաքապետարանի պատվիրակությունը մասնակցել է Էստոնիայի Տալլին քաղաքի օրվան նվիրված միջոցառումներին: 2016թ. մայիսի 24-27-ը Երևանի քաղաքապետարանի պատվիրակությունը մասնակցել է Կազան քաղաքում տեղի ունեցած «Քաղաքների և տեղական իշխանությունների կազմակերպության» նիստին: Կազմակերպվել է Երևանի քաղաքապետարանի ներկայացուցչի մասնակցությունը Ֆրանկոֆոնիայի միջազգային ինստիտուտի և Լիոնի Ժան-Մուլեն Լիոն 3 համալսարանի կողմից «Ֆրանկոֆոնիա և ապակենտրոնացում, բարձրագույն կրթություն և տեղական զարգացում» թեմայով Լիոնում կայացած Ֆրանկոֆոնիայի ամառային դասընթացին: Կազմակերպվել է Լիոնում կայացած «Երկրի հողային ճարտարապետության 7-րդ Համաշխարհային կոնգրեսին» Երևանի քաղաքապետարանի պատվիրակության մասնակցությունը: Հուլիսի 14-17ը կազմակերպվել է Երևանի քաղաքապետի գլխավորած պատվիրակության այցը Ստեփանակերտ: Օգոստոս 3-5-ը կազմակերպվել է Երևանի քաղաքապետարանի պատվիրակության այցը Ստեփանակերտ՝ «Երևան Տարագ-Ֆեստ» փառատոնը կազմակերպելու նպատակով: Կազմակերպվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետի այցը Կարրարա Մեպտեմբերֆեստ միջոցառմանը մասնակցելու նպատակով: Կազմակերպվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետի գործուղումը Կազան՝ քաղաքի</p>		
--	--	---	---	--	--

		<p>օրվան մասնակցելու նպատակով:</p> <p>Կազմակերպվել է սեպտեմբերի 1-2-ը Երևանի քաղաքապետի գլխավորած պատվիրակության այցը Ստեփանակերտ՝ ԼՂՀ անկախության 25-ամյակին մասնակցության նպատակով:</p> <p>Կազմակերպվել է 2016թ. սեպտեմբերի 8-12-ը Երևանի քաղաքապետի տեղակալ Դ. Օհանյանի գործուղումը Դոնի Ռոստով՝ քաղաքի օրվան մասնակցելու նպատակով:</p> <p>Կազմակերպվել է Երևանի քաղաքապետարանի պատվիրակության մասնակցությունը ՉԺՀ Ուռումչի քաղաքում կայացած Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու քաղաքների համագործակցության 4-րդ ֆորումին:</p> <p>Կազմակերպվել է Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Տիգրան Բարսեղյանի այցը Սանկտ Պետերբուրգ քաղաք:</p> <p>Կազմակերպվել է 2016թ. սեպտեմբերի 1-5 Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետի տեղակալի գործուղումը ԻԻՀ Ղազվին քաղաք՝ Մետաքսի ճանապարհի քաղաքապետերի 11-րդ համաժողովին մասնակցելու նպատակով:</p> <p>Կազմակերպվել է Երևանի քաղաքապետի խորհրդական Ա. Քոթանջյանի գործուղումը Կրասնոդար քաղաքի օրվան մասնակցելու նպատակով:</p> <p>Կազմակերպվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետի գործուղումը Մոսկվա՝ Ոսկե Նուռ փառատոնին մասնակցելու նպատակով:</p> <p>Կազմակերպվել է Երևանի քաղաքապետի գլխավորած պատվիրակության այցը Ռիգա՝ Երևան անունով այգու բացման արարողությանը մասնակցելու նպատակով:</p> <p>Կազմակերպվել է Փարիզի քաղաքապետի գլխավորած պատվիրակության այցը Երևան՝ «Էրեբունի-Երևան 2798» տոնակատարության շրջանակներում:</p> <p>2016թ. հոկտեմբերի 12-15-ը կազմակերպվել է Երևան քաղաքի ավագանու անդամ Ն.Նահապետյանի գործուղումը Կոլումբիայի</p>		
--	--	--	--	--

		<p>մայրաքաղաք Բոգոտա՝ մասնակցելու Միավորված քաղաքների և տեղական մարմինների կազմակերպության նիստին: 2016թ. հոկտեմբերի 14-17-ը կազմակերպվել է Երևանի քաղաքապետի տեղակալ Դ.Օհանյանի գլխավորած պատվիրակության այցը Թբիլիսի՝ քաղաքի օրվան մասնակցելու նպատակով: Կազմակերպվել է Երևան քաղաքի ավագանու անդամ Ն.Լավիաուրիի գործուղումը՝ Եվրամիջերկրածովյան քաղաքների ցանց ընդհանուր ժողովին մասնակցելու նպատակով: Կազմակերպվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետի տեղակալի այցը Ստրասբուրգ քաղաք՝ Ստրասբուրգ ակումբի ամենամյա 14-րդ հանդիպմանը մասնակցելու նպատակով:</p> <p>Կազմակերպվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչության և եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետերի գործուղումը ՌԴ Մոսկվա քաղաք: Կազմակերպվել է Երևանի քաղաքապետարանի պատվիրակության գործուղումը Մոսկվա մասնակցելու «Միներթի գլոբալ» ֆորումին: Երևան – Լիոն համագործակցության շրջանակներում Լիոնում կազմակերպվել է փորձի փոխանակման և վերապատաստման ծրագիր քաղաքային տնտեսության մի շարք ոլորտների մասնագետների համար: Կազմակերպվել է Երևանի քաղաքապետարանի ներկայացուցչի մասնակցությունը Կիևում կայացած «ԵՄ հարևանության քաղաքականություն և ընդլայնում» աշխատանքային խմբի հանդիպմանը: 2016թ. դեկտեմբերի 6-10-ը կազմակերպվել է Երևան քաղաքի առողջապահական հաստատությունների ներկայացուցիչների գործուղումը ՌԴ Մանկտ Պետերբուրգ քաղաք: 2016թ. դեկտեմբերի 13-18-ը կազմակերպվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության</p>		
--	--	---	--	--

			վարչության պետի գործուղումը Ամստերդամ քաղաք:		
8.	Բանակցություններ «Եվրոսիթիս» ասոցիացիայի հետ	Բանակցություններ են ընթանում նաև «Եվրոսիթիս» ասոցիացիայի հետ՝ Եվրամիության հարևանության քաղաքականություն և ընդլայնում» աշխատանքային խմբի հանդիպումը Երևան քաղաքում անցկացնելու վերաբերյալ: Երևանի քաղաքապետարանը կշարունակի համատեղ ծրագրեր իրականացնել «Եվրոսիթիս» ասոցիացիայի շրջանակներում, ինչպես նաև քայլեր կձեռնարկվեն Եվրամիության կողմից ֆինանսավորվող ծրագրերին ներգրավվելու ուղղությամբ:	Աշխատանքներ են իրականացվել «Եվրոսիթիս» ասոցիացիայի հետ: Բանակցություններ են վարվել Եվրամիության հարևանության քաղաքականություն և ընդլայնում» աշխատանքային խմբի հանդիպումը Երևանում անցկացնելու վերաբերյալ, ինչպես նաև ԵՄ ֆինանսավորմամբ ծրագրերում ներգրավվելու ուղղությամբ:		
9.	Համագործակցություն Ստեփանակերտի հետ	Նախատեսվում է վերականգնել Երևանի և Ստեփանակերտի քաղաքապետարաններ ի միջև	Երևան քաղաքի վարչական շրջանների կողմից իրականացվել է 94 այց ԼՂՀ, ԼՂՀ-ից՝ 97 այց Երևան: Այցերի ընթացքում կազմակերպվել են համերգային միջոցառումներ, փորձի փոխանակման, կրթական, մշակութային և այլ ծրագրեր, այցելություններ գործառնալ:		

		համագործակցության ծրագիրը, ինչպես նաև կազմակերպել Երևանի օրերը Ստեփանակերտում, մշակութային տարբեր միջոցառումներ, մասնագետների փոխայցելություններ:			
10	Հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության շահագրգիռ նախաձեռնող խմբերի հետ համագործակցության ընդլայնում	Նախատեսվում է ընդլայնել համագործակցությունը հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության շահագրգիռ նախաձեռնող խմբերի հետ բոլոր ուղղություններով:	Երևան-Ստեփանակերտ համագործակցության շրջանակներում՝ իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ՝ «Արցախյան բարիքներ» ցուցահանդեսի կազմակերպման ուղղությամբ: Աշխատանքներ են իրականացվել ԼՂՀ և ՀՀ գործարար շրջանակների, ՀԿ-ների հետ:		
Զբոսաշրջություն					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1.	2.	3.	4.	5.	6.
1.	Երևանում զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային քաղաքականության իրականացում	Մույն ուղղությունն իր մեջ ներառում է՝ Երևան քաղաքում զբոսաշրջային ինդուստրիայի հետ համագործակցության միջոցով Երևանը, որպես զբոսաշրջային	Մայրաքաղաքում իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է Երևանի մետրոպոլիտենին և Զվարթնոց միջազգային օդանավակայանին՝ ակտիվ համագործակցելով վերջիններիս տեղեկատվական կենտրոնների հետ: Որպես գրավիչ զբոսաշրջային քաղաք՝ Երևանի դրական նկարագրի ստեղծման և ամրապնդման նպատակով աշխատանքներ են իրականացվել հայկական մեդիայի առաջատար ամսագրերի և կայքերի հետ (TourInfo, Армения Туристическая, sputnikarmenia.ru,	Հունվար-դեկտեմբեր Հունվար-դեկտեմբեր	

		<p>արդյունք գովազդելն ու ներկայացնելը, մայրաքաղաքի զբոսաշրջային ներուժը ներկայացնող նյութերի, քարտեզների, բուկլետների, ուղեգրքերի, հեռախոսային հավելվածների, ֆիլմերի, գովազդային հոլովակների պատրաստումն ու գովազդումը, Երևանի քույր և գործընկեր քաղաքների հետ համատեղ միջոցառումների, հանդիպումների, ճանաչողական այցերի իրականացումը, զանգվածային լրատվամիջոցներում և համացանցում Երևանը՝ որպես զբոսաշրջային քաղաք ներկայացնող նյութերի պատրաստումն ու ներկայացումը, մասնավոր ոլորտի հետ համատեղ Երևան քաղաքի զբոսաշրջային դիմագծի դիրքավորման</p>	<p>yerevanresto.am): Հրապարակվել են Երևանի՝ որպես զբոսաշրջային ուղղության վերաբերյալ տեղեկատվական նյութեր: Կազմակերպվել է Մեդիապոլիգոն-24 ծրագրի շրջանակում Ռուսաստանից ժամանած շուրջ 100 երիտասարդ լրագրողների կողմից Երևանի վերաբերյալ հարցազրույցների անցկացումը: Գարնանային համաքաղաքային ծառատունկի շրջանակում Թաթուլ Կրպեյանի անվան զբոսայգում կազմակերպվել է զբոսաշրջության ոլորտի ներկայացուցիչների համար սիմվոլիկ ծառատունկ, որի ընթացքում նաև տեղի է ունեցել ռուսական «Русский репортёр» հաղորդման նկարահանման աշխատանքները՝ նվիրված Երևան քաղաքին: Կարևորելով համագործակցությունը գործընկեր քաղաքների հետ՝ ստեփանակերտցի 11 երեխաների համար կազմակերպվել է այցելություն մայրաքաղաքի կրթամշակութային օջախներ և «Երևան Միթի Տուր» էքսկուրսիոն շրջայց: Երևանի քաղաքապետարանում Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայկական վիրտուալ համալսարանի հետ համատեղ ներկայացվել է «Բացահայտենք Երևանը. հայացք քաղաքի անցյալին և ներկային» զբոսաշրջային էլեկտրոնային գիրքը զբոսաշրջային ոլորտի ներկայացուցիչների համար: Քաղաքի դրական նկարագրի ստեղծման ու պահպանման նպատակով պատրաստվել է մայրաքաղաքի տեսարժան վայրերը և զբոսաշրջային ներուժը ներկայացնող «Բարի գալուստ Երևան» տեսանյութը և ներկայացվել տարբեր գովազդային հարթակներում: Համագործակցություն է իրականացվել «TripAdvisor» էլեկտրոնային զբոսաշրջային հարթակի հետ, թարմացվել է Երևանի մասին տեղեկատվությունը, մասնավորապես՝ Երևանը հեղինավոր «TripAdvisor»-ի հարթակի կողմից իրականացված ամենամյա մրցանակաբաշխության արդյունքում ընդգրկվել է «Զբոսաշրջիկների ընտրություն 2015» անվանակարգում՝ զբաղեցնելով 7-րդ հորիզոնականը: «Երևան Միթի Տուր»-ը և Կենդանաբանական այգին ևս ընդգրկվեցին վերոնշյալ հարթակում:</p>	<p>Ապրիլի 1</p> <p>Ապրիլի 9</p> <p>Ապրիլի 29</p> <p>Հունիսի 2</p> <p>Ապրիլ-մայիս</p> <p>Ապրիլ-հունիս</p>	
--	--	---	---	--	--

		<p>ն գովազդման նպատակով լրագրողական և մասնագիտական խմբերի այցերի կազմակերպումը և այլն:</p>	<p>Լեհական «All inclusive» ամսագրում Երևան քաղաքին նվիրված հոդվածի տպագրման համար տրամադրվել է անհրաժեշտ լուսանկարներ և տեղեկություն:</p> <p>«Էրեբունի-Երևան 2798» տոնակատարության շրջանակներում իրականացվել է իրազեկման աշխատանքներ զբոսաշրջային ինդուստրիայի ներկայացուցիչներին և մայրաքաղաք այցելող հյուրերին՝ անցկացվելիք միջոցառումների վերաբերյալ:</p>	<p>Մեպտեմբեր</p> <p>Հոկտեմբերի 1-8</p>	
2.	<p>Երևանում միջոցառումային զբոսաշրջությունը զարգացնելու նպատակով, ինչպես նաև Երևանը, որպես գրավիչ զբոսաշրջային քաղաք դիրքավորելու նպատակով կոնկրետ միջոցառումների իրականացում</p>	<p>Այս նպատակով նախատեսվում է զարգացնել «Երևանյան ամառ» եռամսա միջոցառումների ծրագիրը, որի շրջանակում արդեն ավանդական են դարձել Երևանի գարեջրի փառատոնը, Երևան ՏարազՖեստը, մշակութային, գործարար բացօթյա ցուցահանդեսները, թեմատիկ տոնավաճառները, զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող սեզոնային փառատոնները, համերգները: Երևան քաղաքի զբոսաշրջային դիրքավորման</p>	<p>Երևանը որպես զբոսաշրջային քաղաք դիրքավորելու նպատակով «Վերնիսաժ»-ի վերակառուցման, արդիականացման, կանոնակարգման և բարեկարգման նախագծի վերաբերյալ Երևանի քաղապետարանում կազմակերպվել է հանդիպում-քննարկում զբոսաշրջության ոլորտի շահագրգիռ ներկայացուցիչների հետ, որի ընթացքում ներկայացվել են 4 նախագծերը: Ոլորտի մասնագետները, ծանոթանալով նախագծերին, ներկայացրել են իրենց մտեցումներն ու առաջարկները:</p> <p>Իրականացվել են աշխատանքներ «Երևանյան ամառ 2016» եռամսյա միջոցառումների ծրագիրը պատշաճ կերպով լուսաբանելու համար, ինչպես նաև իրականացվել է մի շարք գովազդային ակցիաների կազմակերպում:</p> <p>Երևանում միջոցառումային զբոսաշրջությունը զարգացնելու նպատակով՝ «Երևանյան ամառ 2016» ծրագրի շրջանակում Թումանյանի անվան այգում կազմակերպվել է «Համով-հոտով Երևան» խորագրով «Հացը լեռներում» տոնածիսական ուտեստների 8-րդ փառատոնը: Միջոցառումը կազմակերպվել է «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» ՀԿ-ի հետ համատեղ: Միջոցառմանը մասնակցել են շուրջ 500 զբոսաշրջիկ և շուրջ 2000 համաքաղաքացի:</p> <p>«Երևանյան ամառ 2016» ծրագրի շրջանակում Կարապի լճի հարակից տարածքում կազմակերպվել է Երևանի գարեջրի ամենամյա 3-րդ փառատոնը:</p>	<p>Ապրիլի 13</p> <p>Հունիս-Հուլիս</p> <p>Հունիսի 11</p> <p>Օգոստոսի 20</p>	

		<p>ամրապնդմանն ուղղված քայլերից կարևորվում է յուրաքանչյուր տարի «Էրեբունի-Երևան» տոնակատարության կանոնավոր կազմակերպումն ու իրականացումը: Սույն ծրագրի շրջանակում նախատեսվում է նաև՝</p> <ul style="list-style-type: none"> - զբոսաշրջային միջոցառումների օրացույցի պատրաստում, - Երևանի զբոսաշրջային ռեսուրսների օգտագործման վերաբերյալ մոնիտորինգի անցկացում հարցման միջոցով, - գործարար հանդիպումների, սեմինարների, կլոր սեղանների կազմակերպում: 	<p>Երևանի գարեջրի փառատոնում ներկայացվել է 15 ընկերությունների 20 տաղավար: Փառատոնը ուղեկցվել է երաժշտական կատարումներով, այցելուների համար կազմակերպվել են զվարճալի խաղեր:</p> <p>Միջոցառմանը մասնակցել են շուրջ 3000 համաքաղաքացիներ և զբոսաշրջիկներ:</p> <p>Տրվել է աջակցություն Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում իրականացված դաշնամուրային երաժշտական երեկո՝ «Հին ու նոր Երևան 2798+» ժողովածուի ձայնասկավառակի շնորհանդեսի կազմակերպմանն աջակցելու նպատակով տրամադրվել են անհրաժեշտ լուսանկարներ և տեղեկատվություն Երևանի պատմության վերաբերյալ:</p> <p>Միջազգային հարթակներում Երևանի՝ որպես զբոսաշրջային քաղաք դիրքավորման նպատակով աջակցություն է ցուցաբերվել Տուրիզմի հայկական ինստիտուտին՝ Եվրոդիպի 23-րդ միջազգային կոնֆերանսի անցկացման հարցում: Միջազգային համաժողովին մասնակից տուրիզմի ոլորտի ավելի քան 200 ներկայացուցիչներ քննարկել են տուրիզմի և հյուրընկալության ոլորտներում պրոֆեսիոնալ ու բազմակողմանի մասնագետների պատրաստումը:</p> <p>Միջազգային համաժողովի կազմակերպման հարցում գործուն աջակցություն ցուցաբերելու և Երևան քաղաքի տուրիզմի ոլորտին մշտապես ուշադրություն դարձնելու համար Երևանի քաղաքապետարանն արժանացել է Եվրոդիպ հյուրանոցային և տուրիստական դպրոցների ասոցիացիայի մրցանակին:</p> <p>Տարվել են աշխատանքներ «Նոր Տարին Երևանում 2017» միջոցառումների ծրագիրը պատշաճ կերպով լուսաբանելու համար:</p> <p>Զբոսաշրջիկների իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով տպագրվել և զբոսաշրջային ինդուստրիայի ներկայացուցիչներին է տրամադրվել Երևան քաղաքի երկլեզու քարտեզները:</p>	<p>Սեպտեմբերի 26</p> <p>Հոկտեմբերի 14-16</p> <p>Հոկտեմբեր-Դեկտեմբեր</p> <p>Հոկտեմբեր-դեկտեմբեր</p>	
--	--	--	---	--	--

3.	<p>Երևան այցելող զբոսաշրջիկների տեղեկատվական աջակցման, ինչպես նաև զբոսաշրջային ոլորտի զարգացման ծրագրերի իրականացում</p>	<p>Մույն ծրագիրը նախատեսում է Երևանի վերաբերյալ տեղեկատվական նյութերի պատրաստում: Երևան այցելող զբոսաշրջիկների համար հարմարավետ պայմանների ստեղծման ծրագրի շրջանակում է նախատեսվում է զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի հիմնադրում ու դրա շուրջ աշխատանքների իրականացում: Նախատեսվում է նաև իրականացնել զբոսաշրջիկների անվտանգության ապահովման ծրագրի՝ ոստիկանության բաժանմունքների հետ համագործակցությամբ: Երևան ժամանող զբոսաշրջիկների հարմարավետության բարձրացման նպատակով նախատեսվում է</p>	<p>Զբոսաշրջիկների տեղեկատվական աջակցման նպատակով պարբերաբար իրականացվում են Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքի «Զբոսաշրջություն» բաժնի համալրման, տվյալների թարմացման աշխատանքներ, մասնավորապես՝ համալրվել են Հայկական Վիրտուալ Համալսարանի էլեկտրոնային գիրք. «Բացահայտենք Երևանը. հայացք քաղաքի անցյալին և ներկային» և «Երևանյան ամառ» բաժինները:</p> <p>Երևանը որպես զբոսաշրջային քաղաք դիրքավորելու ծրագրերի շրջանակում՝ սոցիալական ցանցերում պարբերաբար հրապարակվում է մայրաքաղաքում զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող ծրագրերը:</p> <p>Իրականացվում է Երևան քաղաքում տեղի ունեցող միջազգային մասին զբոսաշրջային ընկերությունների, հյուրանոցների, ինչպես նաև զբոսաշրջության ոլորտի այլ ներկայացուցիչների պարբերաբար իրազեկում (Մայրության և Գեղեցկության տոն, Ջազի միջազգային օր, Պարի միջազգային օր, «Թանգարանային գիշեր», Street Music's Day, «Համով-հոտով Երևան», Վարդավառի տոն, “Yerevan Color Run”, Ձմերուկի 4-րդ փառատոն, «Երևան SUFUՋՖեստ», Երևանի զարեջրի փառատոն, «Ցտեսություն ամառ», Էրեբունի-Երևան և այլն):</p> <p>Երևան այցելող զբոսաշրջիկների համար հարմարավետ պայմանների ստեղծման ծրագրի շրջանակում՝ Երևանի մասին տեղեկատվությունը մատչելի դարձնելու նպատակով՝ իրականացվել է «Երևանյան ամառ» բուկլետների, «Նոր Տարին Երևանում 2017» միջոցառումների ծրագրի, զբոսաշրջիկների համար հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ տեղեկատվական թոուցիկների նյութերի թարգմանություն ռուսերեն և անգլերեն լեզուներով:</p> <p>Քաղաքային միջոցառումների վերաբերյալ իրազեկվածության աստիճանի բարձրացման նպատակով www.yerevan.am կայքի «Զբոսաշրջություն» բաժինը համալրվեց «Միջոցառումների օրացույց» ենթաբաժնով:</p>	<p>Հունվար-դեկտեմբեր</p> <p>Հունվար-դեկտեմբեր</p> <p>Հունվար-դեկտեմբեր</p> <p>Հունվար-դեկտեմբեր</p> <p>Օգոստոս</p>	
----	--	--	--	--	--

		մայրաքաղաքի բանուկ, մարդաշատ և զբոսաշրջային հետաքրքրություններ կայացնող հատվածներում, կայարանում, մետրոյում, ավտոկայաններում, քաղաքի մեծ մասշտաբի քարտեզների տեղադրում:			
4.	Երևանում զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ ծրագրերի իրականացում	Մույն ծրագրի նպատակն է Երևանում զարգացնել էքսկուրսիոն ուղղությունը: Այդ նպատակով նախատեսվում է՝ - զբոսավարների ասոցիացիայի, շահագրգիռ կրթական հաստատությունների հետ առկա կադրերի վերապատրաստման դասընթացների կազմակերպում, - «Երևան Միթի Տուր» քաղաքային զբոսաշրջային պաշտոնական երթուղու ամենամյա կատարելագործում ու արդիականացում,	Համայնքային 5 թանգարանների հետ պարբերաբար աշխատանքներ են տարվել թանգարանների դիրքավորման և զբոսաշրջիկներին հետաքրքիր կերպով տեղեկատվության տրամադրման ուղղությամբ, մասնավորապես՝ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում նշվել է հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրը, որի շրջանակում բացվել է «Առյուծի և ցուլի որսը Մերձավոր Արևելքում» խորագրով ցուցահանդեսը: ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ կազմակերպվել է «Իմ ֆինանսների ամիս» ծրագիրը, որի շրջանակում ավելի քան 500 երիտասարդ հատուկ մշակված 8 երթուղիներով շրջել են «Երևան Միթի Տուր» երկհարկանի ավտոբուսներով և ծանոթացել մայրաքաղաքում գործող ֆինանսական կառույցներին, տեսարժան վայրերին: «Նվիրենք նրանց հեքիաթ» բարեգործական նախագծի շրջանակում Երևան քաղաքում իրականացվել է սոցիալական նշանակություն ունեցող ծրագիր ապրիլին առաջնագծում զոհված զինծառայողների երեխաների և հարազատների համար: «Մայրություն» ՀԿ-ի հետ համատեղ ապրիլին առաջնագծում զոհված զինծառայողների 30 արցախցի երեխաների համար կազմակերպվել է	Ապրիլի 18 Ապրիլ Հունիսի 1 Հունիսի 28	

			<p>շրջանային փուլը:</p> <ol style="list-style-type: none"> 4. Վարչական շրջանի մարզադպրոցում տեղի է ունեցել ընկերական ֆուտբոլի հանդիպում Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի ներկայացուցիչների մասնակցությամբ: 5. Մարտի 23-ին կանանց միամսյակի շրջանակում կազմակերպվել է շախմատի աղջիկների ընկերական հանդիպում Ավան և Նոր Նորք վարչական շրջանների միջև: 6. Ա.Մարգարյանի հիշատակին նվիրված Հայաստանի Դուքենդո ֆեդերացիայի կողմից հուշամրցաշարի բացման հանդիսավոր արարողությանը Դուքենդո «Ավան» մասնաճյուղի մարզիկները հանդես են եկել ցուցադրական ելույթներով: Անցկացվել է ՀՀ Անկախության 25-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 25-րդ մարզական խաղերի շրջանային փուլը 7. Մայիսի 23-ին՝ Ավան և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ֆուտբոլի թիմերի միջև կայացավ հանրակրթական դպրոցների միջև անցկացվող ֆուտբոլային առաջնության եզրափակիչ խաղը: 8. Մայիսի 10-ին 1995-1996թթ. ծնված երիտասարդները (թվով 50) մասնակցել են Արմավիրի «Բաղրամյան» ուսումնական կենտրոնում վարչական շրջանի կողմից կազմակերպված մարտական հրաձգության բաց առաջնության մրցաշարին: 9. Հունիսի 1-ին «Երևանյան ամառ 2016» եռամսյա միջոցառումների ծրագրի շրջանակում Մանկական զբոսայգում անցկացվել է «Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված 2016թ. մարզահամերգային տոնահանդես՝ մանկապարտեզների երեխաների մասնակցությամբ» մարզական միջոցառումը: 10. Հունիսի 12-ին մեկնարկվել է ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» ամենամյա մրցույթը: 11. Կազմակերպվել է «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» 2016թ. համաքաղաքային բակային ավանդական փառատոնի շրջանային փուլը: 12. Հունիսի 1-ին հ.57 մանկապարտեզի սաները «Միկա» 		
--	--	--	--	--	--

			<p>մարզադաշտում մասնակցել են Օլիմպիական կոմիտեի կազմակերպած սպորտային միջոցառմանը:</p> <p>13. Մասնակցություն «Առողջ սերունդ, պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական փառատոնին: Երեխաները մասնակցել են «թռչող գնդակ» անվանումով մրցաշարին և վոլեյբոլի խաղին՝ գրավելով 1-ին և 2-րդ տեղ:</p> <p>14. Հուլիսի 28-ին Նարեկացի թաղամասի այգում տեղի է ունեցել Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի մրցաշար 2016 «Շախմատային Երևան» մարզական միջոցառումը:</p> <p>15. Հուլիսի 29-ին Նարեկացի թաղամասի այգում տեղի է ունեցել Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի մրցաշար 2016 շաշկու առաջնությունը:</p> <p>16. Հուլիսի 1,8,15,22,29-ին, օգոստոսի 5,12,19,26-ին, սեպտեմբերի 2,9,16,23,30-ին, հոկտեմբերի 7,14,21,28, նոյեմբեր 4,11,18,25-ին Ավան վարչական շրջանի Իսահակյան և Նարեկացի թաղամասերի այգիներում տեղի է ունեցել Դուքենդո Ավանի դեմո թիմի մասսայական ցուցադրական ելույթներ:</p> <p>17. Հուլիսի 20-ին Շախմատի միջազգային օրվա առթիվ Նարեկացի թաղամասի այգում կազմակերպվել էր շախմատի, նարդու և շաշկու մրցաշար:</p> <p>18. Մարզադպրոցի վոլեյբոլի աղջիկների թիմը մասնակցել է ՀՀ վոլեյբոլի 2001-2002թթ. ծնված պատանիների և աղջիկների 2016թ. եզրափակիչ առաջնությանը՝ գրավելով առաջին տեղ և պարգևատրվել ՀՀ վոլեյբոլի ֆեդերացիայի կողմից մեդալներով և գավաթով:</p> <p>19. Մարզադպրոցի վոլեյբոլի սաները մասնակցել են ՀՀ 2016 թվականի լողափնյա վոլեյբոլի պատանեկան առաջնությունը:</p> <p>20. Մարզադպրոցի ֆուտբոլի թիմը Էջմիածին քաղաքում մասնակցել է Արցախի հերոս գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանի 60-ամյակին նվիրված ֆուտբոլի գավաթի առաջնությանը:</p> <p>21. ՀՀ ԱԾ պատգամավոր Ռոբերտ Մարգարյանը և Ավան վարչական շրջանի ղեկավար Մանվել Ջավադյանն ընդունեցին Վրաստանի Փոթի քաղաքում կայացած 11th Poti International Chess Festival-ի չեմպիոնի տիտղոս նվաճած «Երևանի Ավանի շախմատի</p>		
--	--	--	--	--	--

			<p>մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի սաներին:</p> <p>22. Ավան վարչական շրջանի բազկամարտի թիմը մասնակցել է Արաբկիր վարչական շրջանում կազմակերպված բազկամարտի առաջնությանը:</p> <p>23. Ավան վարչական շրջանի վոլեյբոլի թիմը մասնակցել է Արաբկիրում վոլեյբոլի բաց առաջնությանը՝ նվիրված ՀՀ անկախության 25-րդ տարեդարձին:</p> <p>24. Սեպտեմբերի 21-ին <<Երևանի Ավանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց>> ՀՈԱԿ – ում անցկացվեց արագ շախմատի մրցաշար՝ նվիրված Հայաստանի Հանրապետության 25 – ամյակին:</p> <p>25. ՀՀ Նախագահի մրցանակի համար 2016թ. <<Լավագույն մարզական բակ>> մրցանակաբաշխությանը ներկայացվել են Ռուբինյանց 27/4 և Դուրյան 46 շենքերի բակային տարածքներ:</p> <p>26. Հոկտեմբերի 8-9 անցկացվել է նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի շրջանային փուլը:</p> <p>27. Վարչական շրջանի հանդբոլի թիմը մասնակցել է Նորք Մարաշում կազմակերպված առաջնությանը:</p> <p>28. Հոկտեմբերի 29-ին տեղի է ունեցել միջազգային բաց առաջնություն:</p>		
5. Սոցիալական ապահովություն					
5.1	Աջակցության ծրագրեր	Բնակչության սոցիալական պաշտպանվածության խնդիրներ իրականացնող հիմնարկ-ձեռնարկությունների, հասարակական, ինչպես նաև մի շարք բարեգործական կազմակերպությունների հետ կիրականացվեն	<p>N ԵՀԱՎՎՇ_ 16/2</p> <p>1 ՀՀ Բանակի օր</p> <p>1.1 Կազմակերպվել է համերգ-միջոցառում՝ արվեստի դպրոցի սաների կողմից, Արցախյան պատերազմի մասնակիցների և ժամկետային զինծառայողների ծնողների համար /50ընտանիք/:</p> <p>1.2 <<Խուրթ>> բարեգործական հիմնադրամի հետ համատեղ կազմակերպվել է միջոցառում ՀՊ վետերանների խորհրդի և ԵԿՄ տարածքային կազմակերպության մասնակցությամբ:</p> <p>1.3 2 ժամկետային զինծառայող ունեցող ընտանիքներին ցուցաբերվել է նյութական և պարենային աջակցություն:</p> <p>1.4 ՀՀ վետերանների խորհրդի Ավանի տարածքային կազմակերպության հետ նշվել է Խորհրդային բանակի օրը,</p>	<<Խուրթ>> հիմնադրամ 22.01.16թ. - 25.12.2016թ.	

		<p>տեղական նշանակության բարեգործական ծրագրեր: Թիվ 12 պոլիկլինիկայի հետ համատեղ կազմակերպվող «Բաց դռների օրեր»-ի շրջանակում կիրականացվեն խորհրդատվություններ, լաբորատոր և դժվարամատչելի հետազոտություններ, դասախոսություններ կանանց կոնսուլտացիայում գործող «Մայրության դպրոցում»:</p> <p>Կկազմակերպվի սոցիալապես անապահով ընտանիքների 90 դպրոցահասակ երեխաների ամառային հանգիստը հանրապետության ճամբարներում:</p> <p>Սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաներին</p>	<p>քննարկվել 2016թ. համատեղ աշխատանքային ծրագրերը: ՀՊ վետերանների խորհրդին տրվել է ֆինանսական աջակցություն:</p> <p>2 Կանանց միամսյակ</p> <p>2.1 Կատարվել են տունայցեր Հայրենական պատերազմի մասնակից վետերան կանանց: Վետերան մայրերը ստացել են նվերներ և ծաղիկներ:</p> <p>2.2 Կազմակերպվել է հյուրասիրությունը՝ «Առաքելություն Հայաստան» բարեգործական ճաշարանի տնային սպասարկման կենտրոնի 20 տարեցների համար:</p> <p>2.3 «Առաքելություն Հայաստան» բարեգործական ճաշարանի 25 շահառուներ հյուրընկալվել են Երևանի տարածաշրջանային թիվ 1 Պետական Քոլեջում: Կանայք օգտվել են վարսավիրական ծառայություններից:</p> <p>2.4 Կազմակերպվել է հանդիպում 7 սիրիահայ կանանց հետ: Տրվել են նվերներ և ծաղիկներ:</p> <p>2.5 Ավանի մշակույթի տանը կազմակերպվել է համերգ-միջոցառում՝ ՀՕՄ-ի «Ակնունի» մասնաճյուղի հետ՝ Արցախյան պատերազմի մասնակիցների 60 կանանց և մայրերի համար: Կանայք ստացել են նվերներ և ծաղիկներ:</p> <p>3 Սուրբ Զատիկի տոն</p> <p>3.1 Հայրենական պատերազմի 18 վետերանների տրվել է հավկիթ,</p> <p>3.2 9 սիրիահայ ընտանիքների տրվել է հավկիթ, բրինձ և գինի:</p> <p>3.3 «Առաքելություն Հայաստան» բարեգործական ճաշարանի 180 շահառուների համար կազմակերպվել է համերգ և հյուրասիրություն:</p> <p>3.4 Անհատ բարերարի կողմից 150 ընտանիք ստացել է հավկիթ, գինի, լավաշ:</p> <p>4 Երևանի քաղաքապետարանի և «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի համագործակցությամբ Ավան վարչական շրջանի թվով 35 կարիքավոր ստացել է պարենային աջակցություն:</p> <p>5 Կազմակերպվել է աջակցություն ծանր պայմաններում հայտնված բազմազավակ ընտանիքին, տրվել է նյութական, պարենային աջակցություն և խոհանոցային սպասք:</p>		
--	--	---	---	--	--

		<p>կտրամադրվեն պայուսակներ և գրենական պիտույքներ:</p> <p>Գ. Բուդաղյանի անվան արվեստի դպրոցում գերազանց առաջադիմություն ունեցող և կարիքավոր ընտանիքների 20 երեխա կազատվի ուսման վարձավճարից: ՀՀ տոն և հիշատակի օրերի կապակցությամբ դրամական, նյութական աջակցություն կցուցաբերվի պատերազմի, աշխատանքի, ոստիկանության վետերանների, միայնակ տարեցների, չորս և ավելի երեխաներ ունեցող, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաների ընտանիքների, զոհված, վիրավոր և մասնակից ազատամարտիկների և ՀԿ-ներին:</p> <p>Ամանորի և Սուրբ</p>	<p>6 Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ վարչական շրջանի 8 բազմազավակ մայրեր ստացել են դրամական աջակցություն:</p> <p>7 Վարչական շրջանի ղեկավարի և անհատ բարերարի կողմից Մայրության և գեղեցկության տոնի առթիվ կազմակերպվել է հյուրասիրություն «Առաքելություն Հայաստան» բարեգործական ճաշարանի 140 շահառուների համար:</p> <p>8 Մանդի փաթեթներ է տրամադրվել «Էրեբունի» բժշկական կենտրոնում բուժվող 5 վիրավոր զինծառայողների:</p> <p>9 Գենդերային հիմնահարցերով զբաղվող աշխատանքային խմբի և «Սեյվ դը չիլդրեն» միջազգային կազմակերպության նախաձեռնությամբ կազմակերպվել է քննարկում «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» թեմայով:</p> <p>10 «Վոլդ-Վիժեն» ինտերնեյշենել մարդասիրական կազմակերպությունը «Խույ» բարեգործական հիմնադրամի հետ համատեղ 35 կարիքավոր ընտանիքի տրամադրել է հագուստ:</p> <p>11 Վարչական շրջանում բնակվող 2 վիրավոր ժամկետային զինծառայողների ընտանիքների տրվել է դրամական աջակցություն:</p> <p>12 ՀՀ ԵԿՄ «Ավան» տարածքային բաժանմունքին ԼՂՀ մեկնելու համար տրվել է ֆինանսական աջակցություն /35 կամավոր/:</p> <p>13 Հայրենական պատերազմի հաղթանակի առթիվ Ավանի հուշահամալիրում կազմակերպվել է համերգ, հյուրասիրություն: ՀՊ-ի 19 վետերանների և Արցախյան պատերազմի 141 ազատամարտիկների տրվել է դրամական աջակցություն:</p> <p>14 Մայիսյան տոների կապակցությամբ Գ.Բուդաղյանի արվեստի դպրոցում կազմակերպվել է հանդիպում, համերգ «Սերունդների համերաշխություն» խորագրով, որին մասնակցել են արվեստի դպրոցի աշակերտները, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի «Խրոխտ ձայներ» տարեցների երգչախումբը:</p> <p>15 Մասնակցություն «Ընտանիքի միջազգային օրվան» նվիրված շնորհալի երեխաների ձեռքի աշխատանքների ցուցահանդես՝ «Իմ ընտանիքը» խորագրով միջոցառմանը: Վարչական շրջանի ղեկավարի կողմից հատուկ դպրոցների՝ հաշմանդամություն ունեցող 45 աշակերտներ ստացել են խրախուսական նվերներ:</p>		
--	--	---	--	--	--

		<p>Ծննդյան տոների կապակցությամբ սոցիալապես անապահով 1000 ընտանիք կատանա սննդի փաթեթ, իսկ երեխաներին կհատկացվեն կոնֆետի փաթեթներ:</p>	<p>16 «Ընտանիքի միջազգային օրվան» նվիրված <<Խուրթ>> բարեգործական հիմնադրամում կազմակերպվել է «Երջանիկ երեխա դաստիարակելու արվեստը» գրքի շնորհանդեսը: Բազմազավակ, բազմանդամ թվով 5 ընտանիքներ ստացել են նվերներ/ խոհանոցային սպասք/:</p> <p>17 Մարսելի հայ համայնքի հետ համագործակցության շրջանակներում <<Աջակցություն Արցախում և ՀՀ սահմաններում գոհված զինվորների ընտանիքներին>> միության ներկայացուցիչները այցելել են վարչական շրջանում ապրող 2014թ. հունվարին հերոսաբար գոհված և 2016թ. ապրիլին առաջնագծում ծանր վիրավորված զինծառայողների ընտանիքներ: Ընտանիքներին փոխանցվել է դրամական աջակցություն /2 ընտանիք/:</p> <p>18 Վարչական շրջանում բնակվող 2 վիրավոր և 1 <<Արիության շքանշան>> մեդալի արժանացած ժամկետային զինծառայողների ընտանիքների տրվել է դրամական աջակցություն:</p> <p>19 Պարի միջազգային օրը նշվել է Ավանի Թումանյան թաղամասի պուրակում: Մասնակցել են վարչական շրջանի պարային խմբերը, տարեցների <<Ընտրյալներ>> համույթը:</p> <p>20 Հունիսի 1-ին՝ Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրը, վարչական շրջանի շենքի բակում անցկացվել է ֆլեշմոբ, ուրախ մանական ծրագիր, կավճանկարչություն: Միջոցառմանը ընդգրկվել են նաև կարիքավոր և հատուկ խմբերի, սիրիահայ 25 երեխաներ:</p> <p>21 Փախստականի միջազգային օրվա առթիվ վարչական շրջանի ղեկավարի նախաձեռնությամբ ավանաբնակ սիրիահայ ընտանիքներին տրվել են սննդի փաթեթներ /11 ընտանիք/:</p> <p>22 Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոնի հետ համագործակցության արդյունքում վարչական շրջանում բնակվող 30 միայնակ տարեցներ ենթարկվել են ակնաբուժական հետազոտության:</p> <p>23 Ծաղկաձորի <<ԼԱՎԱ Աղբյուր>> ճամբարում կազմակերպվել է սոցիալական ռիսկի խմբի 90 դպրոցահասակ երեխաների ամառային հանգիստը: Երեխաներին տրվել են մարզաշապիկներ, գլխարկներ, սանհիգիենիկ փաթեթներ և սպորտային խաղերի</p>		
--	--	--	---	--	--

		<p>պարագաներ:</p> <p>24 Համագործակցություն «HAPPY DAY» մանկական ակումբի հետ: Հատուկ խնդիրներ ունեցող երեխաների համար կազմակերպվել է ավագե նկարչություն, արտ-թերապիա, զարգացնող, շարժական, տրամաբանական խաղեր /10 երեխա/:</p> <p>25 Հուլիսի 1-ին Թումանյան թաղամասի այգում «Երևանյան ամառ - 2016թ.» ծրագրի շրջանակում կազմակերպվել է տոնական համերգային ծրագիր՝ «Ողջուն Ավանից» խորագրով: Միջոցառմանն իրենց մասնակցություն են ունեցել հատուկ խնդիրներ ունեցող 15 երեխաներ՝ ներկայացնելով իրենց գունավոր ավագներով ձեռքի աշխատանքները:</p> <p>26 Շախմատի միջազգային օրվա առթիվ ՀՀ ոստիկանության Ավան և Նոր Նորք խորհրդի վետերանների հետ Նարեկացի թաղամասի այգում կազմակերպված շախմատի, նարդու և շաշկու մրցաշարերին իրենց մասնակցությունն են ունեցել 5 բազմազավակ ընտանիքների ծնողներ և երեխաներ:</p> <p>27 Հայոց բանակ ժամկետային ծառայության մեկնող 25 զինծառայողների տրվել են սանհիգիենիկ փաթեթներ:</p> <p>28 Օգոստոսի 14-ին՝ Մուրբ Աստվածածին եկեղեցու բակում կազմակերպված Խաղողօրհնեքի արարողությանը՝ նվիրված Մուրբ Աստվածածնի վերափոխման տոնին, ներկա էին նաև ռիսկի խմբի ընտանիքների 25 երեխաներ:</p> <p>29 Օգոստոսի 19-ին «Երևանյան ամառ - 2016թ.» ծրագրի շրջանակում կազմակերպվել է տոնական համերգային ծրագիր: Միջոցառմանն իրենց մասնակցությունն են ունեցել հատուկ խնդիրներ ունեցող 10 երեխաներ՝ ներկայացնելով իրենց կողմից նկարված աշխատանքները:</p> <p>30 Օգոստոսի 25-ին՝ Գիտելիքի և դպրության օրվա կապակցությամբ 60 անապահով ընտանիքի և հաշմանդամություն ունեցող դպրոցականների տրվել են պայուսակներ և գրենական պիտույքներ:</p> <p>31 «Սեյվ դը չիլդրեն» միջազգային կազմակերպության նախաձեռնությամբ կազմակերպվել է քննարկում «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» թեմայով:</p> <p>32 Անկախության 25-ամյակին նվիրված Գ.Բողաղյանի անվան արվեստի դպրոցում «Անկախության սերունդ» խորագրով միջոցառմանը ներկա</p>		
--	--	--	--	--

		<p>էին հերոս Ա. Հովհաննիսյանի և ապրիլյան պատերազմի հերոս, զինծառայող Վ.Բզնունու մայրերը: /30 շահառու/</p> <p>33 ՀՊՀ վետերանների Ավանի տարածքային կենտրոնում կազմակերպվել է հանդիպում՝ «Երեք սերունդ» խորագրով:</p> <p>34 Թիվ 87 դպրոցում կազմակերպվել է հանդիպում, միջոցառում քառօրյա պատերազմի «Արիության շքանշան» մեդալակիր, դպրոցի շրջանավարտ Վրեժ Բզնունու հետ: Վ.Բզնունին ստացավ պատվոգիր և նվերներ:</p> <p>35 Կազմակերպվել է «Առաքելություն Հայաստան» բարեգործական ճաշարանի 25 շահառուների մեկօրյա հանգիստը Սևանում:</p> <p>36 Տարեցների միջազգային օրվա առթիվ «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի բարեգործական ճաշարանի 162 շահառուների համար կազմակերպվել է միջոցառում, հյուրասիրություն:</p> <p>37 Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված զբոսանքին մայրաքաղաքի դիտարժան վայրերով՝ «Երևան Սիթի Տուր» պաշտոնական զբոսաշրջային երթուղով, մասնակցել է Ավան վարչական շրջանից 5 տարեց:</p> <p>38 ՀՀ սահմանամերձ շրջաններում և ԼՂՀ-ում ծառայող ժամկետային զինծառայողների ծնողների այցելությունը գործառնաբեր կազմակերպելու հերթական ակցիայի շրջանակներում թվով 46 ծնողներ մեկնել են տեսակցության:</p> <p>39 «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի բարեգործական ճաշարանում կազմակերպվել է մատաղի հյուրասիրություն, որին ներկա էին ճաշարանի 180 շահառուները:</p> <p>40 Էրեբունի-Երևան տոնակատարության շրջանակներում թվով 213 ընտանիք, որից 5-ը՝ սիրիահայ, ստացել է նվեր:</p> <p>41 Կազմակերպվել է տնային սպասարկման 15 տարեցների այցը Հ.Պարոնյանի թատրոն:</p> <p>42 Մոցիալապես անապահով 16 ընտանիքի տրվել է թվային հեռուստատեսության ընդունիչ սարք:</p> <p>43 Գույրերի օրվա կապակցությամբ կատարվել է տունայց: 5 կույրերի տրվել են սննդի փաթեթներ:</p> <p>44 Կազմակերպվել է «Առաքելություն Հայաստան» բարեգործական</p>	<p>Ամառային հանգստի կազմակերպումը Ծաղկաձորի «ԼԱՎԱ Ադրյուր» ճամբարում իրականացվում է ՀՀ կառավարության ծրագրով:</p>	
--	--	---	---	--

			<p>ճաշարանի 22 շահառուների էքսկուրսիա՝ «Մուսա Լեռ» թանգարան:</p> <p>45 Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրը կազմակերպվել են տունայցեր: Հատուկ խնդիրներ ունեցող 15 ընտանիքների տրամադրվել են սննդի փաթեթներ:</p> <p>46 «Առաքելություն Հայաստան» բարեգործական ճաշարանի 180 շահառուների համար կազմակերպվել է մատաղի հյուրասիրություն:</p> <p>47 Վառելափայտ է տրամադրվել սոցիալապես անապահով և հաշմանդամություն ունեցող 16 ընտանիքի:</p> <p>48 Վանաձորի և Աբովյանի՝ ծայրահեղ կարիքավոր 2 ընտանիքի տրամադրվել է պարենային աջակցություն:</p> <p>49 Տեղի է ունեցել հերթական ակցիան «Եզանյան» ստոմատոլոգիական կլինիկայի հետ: Թիվ 54 և 57 մանկապարտեզների թվով 100 երեխաներ անցել են բժշկական հետազոտություն, ստացել խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում՝ նաև ատամնաբուժական ծառայություն:</p> <p>50 Պարենային աջակցություն է տրվել ռիսկի խմբի 1685 ընտանիքի՝ ԵԿՄ-ի անդամներին, «Առաքելություն Հայաստան» բարեգործական ճաշարանի շահառուներին, խուլ-համրերին, բազմազավակներին, սիրիահայ ընտանիքներին, սոցիալապես անապահով ընտանիքներին:</p> <p>51 Արվեստի դպրոց հաճախող 20 անապահով ընտանիքների՝ նպաստառու, կարիքավոր, ծնողազուրկ և գերազանց առաջադիմություն ունեցող երեխաներ ազատվել են ուսման վարձավճարից՝ «Խուր» բարեգործական հիմնադրամի կողմից:</p> <p>52 «Առաքելություն Հայաստան» բարեգործական ճաշարանում կազմակերպվել է միջոցառում սիրիահայերի համար: Նրանց տրվել են սննդի և քաղցրավենիքի ամանոբյա փաթեթներ:</p> <p>53 Բազմազավակ, բազմանդամ, սոցիալապես անապահով 55 ընտանիքի տրվել է հագուստ, կոշիկ:</p> <p>54 Ամանորի կապակցությամբ սննդի 1116 և քաղցրավենիքի 2200 փաթեթների բաշխում:</p> <p>55 29 քաղաքացի ուղեգրվել է բարեգործական ճաշարան, 9 քաղաքացի՝ տնային սպասարկման կենտրոն: 5 քաղաքացի ուղեգրվել է բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատություն/ տուն-ինտերնատ/:</p>		
--	--	--	--	--	--

			<p>56 Տարվա ընթացքում բնակիչների դիմումների համաձայն, դրամական աջակցություն է տրվել 322 ընտանիքի՝ «Խուր» բարեգործական հիմնադրամի միջոցներից:</p> <p>57 Դեղորայք ձեռք բերելու համար դրամական օգնություն է տրվել 123 ընտանիքի՝ «Խուր» բարեգործական հիմնադրամի կողմից:</p>		
5.2	Համագործակցություն	<p>Կշարունակվի համագործակցությունը «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության հետ (1 բարեգործական ճաշարան՝ շուրջ 150 շահառու), «Խուր» բարեգործական հիմնադրամի հետ կիրականացվեն սոցիալական տարբեր ծրագրեր:</p>	<p>Շարունակվել է համագործակցությունը ««Խուր»» բարեգործական հիմնադրամի, ««Առաքելություն Հայաստան»» բարեգործական ճաշարանի, տարածքում գործող ««Արևիկ»» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ-ի, Հայրենական պատերազմի վետերանների միության, ԵԿՄ-ի, տարածքում գործող բուժհաստատությունների հետ:</p> <p>Համագործակցության ծրագրի շրջանակում վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ներկայացուցիչները այցելել են ՀՀ Արմավիրի մարզ, քննարկել համագործակցության ուղղություններն ու հեռանկարները:</p>		
6.	Հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների հուղարկավորության կազմակերպում		<p>N- ԵԲԲԸՉԸԲ- 16/5- 1</p> <p>Փոխհատուցվել է 13 բնակչի հուղարկավորության ծախսեր:</p>	<p>««Բնակչության հատուկ սպասարկում»» ՀՈԱԿ 13.01.16թ.- 25.12.16թ.</p>	
7.	Առողջապահություն	<p>Հատուկ խմբերում չընդգրկված սոցիալապես անապահով անձանց կտրվեն միջնորդագրեր</p>	<p>Առողջապահություն.</p> <ul style="list-style-type: none"> Պետպատվերի շրջանակներում կատարվել 86 բնակչի վիրահատություն, 38 բնակչի բուժում՝ ռիսկի խմբի ընտանիքներից: Վարչական շրջանի և «Խուր» բարեգործական հիմնադրամի համատեղ նախաձեռնությամբ «Աստղիկ» բժշկական կենտրոնի 		

		<p>պետպատվերի շրջանակներում ստացիոնար բուժում անցնելու նպատակով</p>	<p>մասնագետները վահանաձև գեղձի հիվանդությունների անվճար հետազոտություններ են իրականացրել վարչական շրջանի կրթամշակութային հաստատությունների շուրջ 60 մանկավարժների համար:</p> <ul style="list-style-type: none"> • Վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի գենդերային հիմնախնդիրներով զբաղվող աշխատանքային խմբի կողմից թիվ 12 պոլիկլինիկայի <<Մայության դպրոցում>> կազմակերպվել է հանդիպում 25 ապագա մայրերի հետ՝ կանանց վերարտադրողական առողջությանը/սեռով պայմանավորված աբորտների կանխարգելում/նվիրված թեմայով: • «Բուժաշխատողի օրվա» մասնագիտական տոնի կապակցությամբ «Ավանի մանկապարտեզներ» ՀՈԱԿ թվով 7 մանկապարտեզները ստացել են բուժական փաթեթներ՝ առաջին բուժօգնության դեղորայքով և անհրաժեշտ պարագաներով: • <<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոնի և «Խուր» բարեգործական հիմնադրամի հետ համատեղ կազմակերպվել է առողջապահական ակցիա: 100 քաղաքացի անվճար օգտվել է բժշկական դժվարամատչելի հետազոտություններից /սիրտ-անոթային, կրծքագեղձի/: • Համագործակցություն <<Ավանի մանկապարտեզներ>> ՀՈԱԿ թվով 7 մանկապարտեզների և <<Եզանյան>> ստոմատոլոգիական կլինիկայի հետ: Իրականացվել է թվով 200 երեխաների ատամնաշարերի և բերանի խոռոչի զննում: 		
--	--	---	--	--	--

Արաբկիր վարչական շրջան					
Հ/հ	Ծրագրերի, միջոցառումների և աշխատանքների անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1	Տարածքային բարեկարգման աշխատանքներ				
1.1	Փողոցների ասֆալտ-բետոնե ծածկերի ընթացիկ վերանորոգում	Նախատեսվում է վերանորոգել և հիմնանորոգել 11140քմ ա/բ ծածկույթ:	<p>«ԵՔ-ԲԸ-ԱՇՁԲ-16/84-3»</p> <p>Համաձայն պայմանագրի կատարվել է 8662.5քմ. ա/բ ծածկի վերանորոգման աշխատանքներ հետևյալ հասցեներում՝ Ազատության 9/3 և 9/4 շենքերի բակերում- 523քմ, Կոմիտաս 41 և 39-1004 քմ, Կոմիտաս 34-281 քմ, Կոմիտաս 36ա-191քմ, Կոմիտաս 57 և Տիգրանյան 6-594քմ, Արդույթյան 29-699քմ, Տիգրանյան 14-301քմ, Աղբյուր Սերոբ 2ա-240 քմ, Մամիկոնյանց 36/1,36/2-503 քմ, Տիգրանյան 15 /Կույրերի մշակույթի պալատի դիմաց/-357.5քմ, Տիգրանյան 12 /թիվ 54 ավագ դպրոցի բակ/-499 քմ, Գրիբոյեդով 3 և 5 -405 քմ, Թիվ 33 մանկապարտեզի բակ-258 քմ, Մամիկոնյանց 36/5 և Տորբուխին 34 շենքերի բակերում և միջբակային տարածք-667 քմ, Մամիկոնյանց 34գ -136 քմ, Բակունց 13 միջբակային ճանապարհ-66 քմ, Թիվ 26 մանկապարտեզ-399 քմ, Գրիբոյեդով փող -40 քմ:</p>	«Շին Պլյուս» ՍՊԸ 16.05.2016-30.09.2016	Բյուջեով հաստատվել է 8663քմ ա/բ ծածկույթի վերանորոգման աշխատանքների ֆինանսավորումը:

1.2	Եզրաքարերի վերանորոգում	Նախատեսվում է վերանորոգել և հիմնանորոգել 145 գծմ եզրաքար:	<p>«ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/29» Համաձայն պայմանագրի կատարվել է 166գծմ եզրաքարերի վերանորոգման աշխատանքներ հետևյալ հասցեներում՝ Բարբուսի փողոց– 7 գծմ Կոմիտասի փողոց՝ Դավթյանի այգու դիմաց –11գծմ, Կոմիտաս 54 շենքի դիմաց –3 գծմ, Կոմիտաս 49 շենքի դիմաց –3 գծմ, Մամիկոնյանց – Տիգրանյան խաչմերուկ– 51.1գծմ, Մամիկոնյանց 25 շենքի դիմաց– 7 գծմ, Մամիկոնյանց 36 շենքի դիմաց –15գծմ, Մամիկոնյանց 34Գ շենքի դիմաց– 12 գծ, Մամիկոնյանց 25 շենքի դիմաց– 53.9 գծմ:</p>	«ՄՄԱԼԱ» ՍՊԸ 19.02.2016-30.09.2016	Բյուջեով հաստատվել է 160 գծմ եզրաքարերի վերանորոգման հիմնանորոգման ֆինանսավորումը:
1.3	Բակային տարածքների բարեկարգում	19 բակեր բարեկարգվելու են, իսկ 7-ը՝ ընթացիկ վերանորոգվելու, տեղադրվելու են թվով 75 նստարաններ և 1 զրուցարան, կառուցվելու են նոր խաղահրապարակներ, զբոսայգիներ և 1 մինի ֆուտբոլի դաշտ:	<p>«ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/34» Համաձայն պայմանագրի բակերի ընթացիկ վերանորոգման աշխատանքներն են կատարվել Բաբայան 22, 22ա, Կոմիտաս 56,58, Գյուլակյան 24, Կոմիտաս 9/1 և Վաղարշյան 19/1, Կոմիտաս 16, Կոմիտաս 20, Կոմիտաս 26 շենքերի բակերում:</p>	«ՊԱԸՍ» ՍՊԸ 25.02.2016-30.09.2016	Բյուջեով հաստատվել է 7-բակային տարածքների ընթացիկ նորոգման աշխատանքների ֆինանսավորումը:
			<p>«ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/65-2» Համաձայն պայմանագրի բակերի հիմնանորոգման աշխատանքներ են կատարվել հետևյալ հասցեներում՝ Հակոբյան 9, Աղբյուր Մերոբ 2ա, Տիգրանյան 14, Կոմիտաս 41, Կոմիտաս 57 և Մամիկոնյանց 25, Կոմիտաս 36ա ,Արդուրյան 29:</p>	«Ա.Ֆալան»ՍՊԸ 19.04.2016-30.09.2016	Բյուջեով հաստատվել է 8 բակերի հիմնանորոգման աշխատանքների ֆինանսավորումը, տեղադրվելու է 59 նստարան և 1 զրուցարան: Մինի ֆուտբոլի դաշտի կառուցման վերաբերյալ տես

			<p>«ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/65-1» Համաձայն պայմանագրի՝ բակի հիմնանորոգման աշխատանքներն են կատարվել Կոմիտաս 34 շենքի բակում:</p>	«Կոտայք Շին» ՍՊԸ 19.04.2016-30.09.2016	Շինարարություն և բարեկարգում բաժինը:
			<p>«ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/34» Համաձայն պայմանագրի տեղադրվել է 59 նստարան և 1 գրուցարան հետևյալ հասցեներում՝ Կոմիտաս 40-3, Վ.Դավթյան այգու սկզբնամաս /Կոմիտասի պող/-3, Ադոնց 15-3, Շրջանցիկ թունել / գիշերօթիկ դպրոց/-2, Շրջանցիկ թունել /գիշերօթիկ դպրոցի հարակից տարածք/-2, Բարբյուս 65-1, Արծրունի 28-3, Սունդուկյան 17-2, Բաֆֆու դպրոց-2, Բաղրամյան 2-րդ նրբգ. 4-3, Շահումյան 4-2, Մամիկոնյանց 23-1, /Մամիկոնյանց 36/6-2, Ադոնց 1, Վ. Դավթյանի այգի, Շիրվանզադե /սպորտդպրոց/-3, Մամիկոնյանց 36/38-9, Կոմիտաս 57 շենքի բակ 1 գրուցարան:</p>	«Պարս» ՍՊԸ 25.02.2016-30.09.2016	
2	Կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում և ոռոգում				
2.1	Կանաչ տարածքների պահպանում և խնամք	Մշտապես բարեկարգվելու է Հրազդանի կիրճը և 53հա կանաչապատ տարածությունը՝ անտառ-պուրակները հասցնելով 45 հա:	<p>«ԵՔ-ՇՀԱՇՁԲ-16/4 » Իրականացվել է 53 հա կանաչ տարածքների մշտական խնամք: Ստեղծվել է 1099 քմ մակերեսով սիզամարգ Մամիկոնյանց փողոցում: Կատարվել է փողոցների, պուրակների, զբոսայգիների տերևների մաքրման աշխատանքներ:</p>	«Արաբկիր-Կամար» ՓԲԸ 10.02.2016-25.12.2016	
2.2	Ծաղկային տարածքների ստեղծում և խնամք	Շրջակա միջավայրի պահպանության համար տնկվելու է ևս 3000 հատ թուփ:	<p>«ԵՔ-ՇՀԱՇՁԲ-16/4 » Տնկվել է 98600 հատ ծաղկասածիլ, 3000 թուփ, 2000 հատ վարդի թփեր, պալարաստիուկներ՝ 34800 հատ:</p>		

2.3	Ծառատունկ	Շրջակա միջավայրի պահպանության համար տնկվելու է ևս 3000 հատ ծառեր	«ԵՔ-ՇՀԱՇՁԲ-16/4» Տնկվել է 2460 ծառ՝ կեդրենի-55 հատ, ընկուզենի-200 հատ, կաղնի -55 հատ, լորենի-100, կեչի-15, սոճի-30, գնդաձև ակացիա-140, սոսի-350 հատ:		
2.4	Հուշարձանների պահպանում		«ԵՔ-ՇՀԱՇՁԲ-16/4» Իրականացվել է Արաբկիր վարչական շրջանում գտնվող բոլոր հուշարձանների տարածքների մշտական մաքրում, պահպանում և խնամք:		
2.5	Չոր ծառերի հատում և երիտասարդացում, ծառերի խոր էտ		«ԵՔ-ՇՀԱՇՁԲ-16/4» Կատարվել է 1100 հատ կոտրված ճյուղերի հեռացում՝ բակերում, փողոցներում և զբոսայգիներում: Հատվել է 107 չոր ծառ, 835 ծառ ենթարկվել է խոր էտի և ձևավորման:		
2.6	Ոռոգման ցանցի վերանորոգում	Հիմնանորոգվելու է 1000 գծմ գործող ոռոգման ցանց և կառուցվելու է նորը՝ 1500 գծմ երկարությամբ:	«ԵՔ-ՇՀԱՇՁԲ-16/4» Գործող ոռոգման ցանցի հիմնանորոգման և կառուցման աշխատանքները կատարվել են անհրաժեշտությունից ելնելով: Վերանորոգվել է 1300 գծմ ոռոգման ցանց և անցկացվել է 720 գծմ նոր ցանց:		
2.7	Հրագղանի կիրճի բարեարգում	Մշտապես բարեկարգ պահել Հրագղանի կիրճի «Արաբկիր» զբոսայգուց մինչև «Կիևյան» կամուրջ ընկած հատվածը	«ԵՔ-ԲԸՄՁԲ-16/18» Կատարվել է Հրագղանի կիրճի ամենօրյա մաքրման աշխատանքներ:	«Վահրադյան Շին» ՍՊԸ 19.02.2016-19.12.2016	
3	Բնակարանային ֆոնդի շահագործում				
3.1	Հարթ տանիքների նորոգում /իզոգամ/	Վարչական շրջանում 2016թ. ընթացքում նախատեսված է իրականացնել շենքերի 4500քմ հարթ տանիքների	«ԵՔ-ԲԸՄՁԲ-16/62-9» Համաձայն պայմանագրի 5021քմ հարթ տանիքների նորոգման աշխատանքներ են կատարվել հետևյալ հասցեներում՝ Ադոնցի 17/3 – 187 քմ, Արաբկիր 51 փող. 3 – 670քմ, Բարբյուսի 67 – 450քմ, Էմինի 4 – 490 քմ, Աղբյուր Սերոբ 10 – 470 քմ, Խաչատրյան 24/1 – 450քմ, Կոմիտաս 28 – 420քմ, Ադոնց 17 – 390 քմ, Խաչատրյան 26/1 – 670քմ,	«Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ 17.04.2016-30.09.2016	

		վերանորոգում:	Արաբկիր 37 փող. 3/2 – 824 քմ:		
3.2	Թեք տանիքների նորոգում /ազրոհերձաքար/	Վարչական շրջանում 2016թ. ընթացքում նախատեսված է իրականացնել շենքերի 13 թեք տանիքների վերանորոգում:	«ԵՔ-ԱՇՁԲ-16/100-4» Համաձայն պայմանագրի թեք տանիքների վերանորոգման աշխատանքներ են կատարվել՝ Կասյան 3, Կասյան 5 և Օրբելի 67 հասցեներում:	«Արտյոմ Մինասյան» ՍՊԸ 12.07.16 -30.09.2016թ.	Բյուջեով հաստատվել է 3 թեք տանիքների հիմնանորոգման աշխատանքները:
		Ձեռք են բերվելու նյութեր (ալիքավոր ցինկապատ թիթեղ-1400քմ, ցինկապատ հարթ թիթեղ-150քմ	«ԵՔ-ՇՀԱՁԲ-16/39-2 » Համաձայն պայմանագրի համատիրությունների և սեփական տնտեսություններին սպասարկող լիազորներին են հատկացվել ալիքավոր ցինկապատ թիթեղ -1400քմ, հարթ ցինկապատ թիթեղ -150քմ: Վերանորոգվել են թեք տանիքներ՝ «Շենքերի կառավարում» համատիրություն-151.8քմ ալիքավոր թիթեղ, «Քնար» համատիրություն- 234.6 քմ ալիքավոր թիթեղ, 40քմ հարթ թիթեղ, «Արաբկիր 005» համատիրություն -303.6 ալիքավոր թիթեղ, «Արծրունի 90» համատիրություն -186.3 քմ ալիքավոր թիթեղ, 20քմ հարթ թիթեղ, «Այգեձոր» համատիրություն 103.5 քմ ալիքավոր թիթեղ, 20 քմ հարթ թիթեղ, «Արև» համատիրություն-69 քմ ալիքավոր թիթեղ, թիվ 13 տեղամաս-69 քմ ալիքավոր թիթեղ, Շիրվանզադեի անվան թիվ 21 դպրոց-20.7 քմ ալիքավոր թիթեղ, «Արեգ» համատիրություն-261.5 քմ ալիքավոր թիթեղ, 38 քմ հարթ թիթեղ:	«Սթիլ կոնցեռն» ՍՊԸ 09.02.2016-25.12.2016թ.	
		Ձեռք են բերվելու ազրոթիթեղ (80 հատ) թեք տանիքների նորոգման համար:	«ԵՔ-ՇՀԱՁԲ-16/39-3 » Համաձայն պայմանագրի ձեռք է բերվել 80 հատ ազրոթիթեղ:	«Կավաչեն » ՍՊԸ 09.02.2016-25.12.2016	
3.3	Վերելակների հիմնանորոգում	Վարչական շրջանում 2016թ. ընթացքում նախատեսված է	«ԵՔ-ԲԸԱՊՁԲ-16/14» 18 վերելակների վերանորոգման աշխատանքներ են կատարվել հետևյալ հասցեներում՝ Բարբյուսի 67, Սունդուկյան 17/3հ/, Էմին 4, Ադոնց 13, Խաչատրյան 27/1, Տոլբուխին 34, Վաղարշյան 24/1 , Սունդուկյան 27,	«Ույուտ վերելակ» ՍՊԸ 07.06.2016-30.09.2016	

		իրականացնել 20 վերելակների վերանորոգում:	Մամիկոնայնց 36/6, Մամիկոնայնց 36/5, Այգեձոր 70, Ադոնց 17, Գյուլբենկյան 43/2հ./, Վաղարշյան 15բ, Ադոնց 17 հասցենրում: Նախատեսված 20 վերելակների վերանորոգման աշխատանքները չեն հաստատվել բյուջեով: Փոխարենը հաստատվել է 24 տեսակի ապրանքների ձեռքբերում, որոնցով վերանորոգվել են 18 վերելակներ:		
3.4	Մուտքերի, դռների վերանորոգում	Վարչական շրջանում 2016թ. ընթացքում նախատեսված է իրականացնել 42 մուտքերի վերանորոգում:	«ԵՔ-ԲԸԱՊՁԲ-16/35» Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել պայմանագիր: Մուտքերի վերանորոգման աշխատանքներ են կատարվել հետևյալ հասցեներում՝ Էմին4/1 մուտք./, Օրբելի 6/6 մուտք/, Արաբկիր 25 փող. 2/1 /1մուտք/, Սոսե 2-րդ նրբ. 8 /1մուտք/, Վաղարշյան 17 /3մուտք/, Կոմիտաս 25/2 /4մուտք/, Բաղրամյան 70 /4մուտք/, Կոմիտաս 27/1 /3մուտք/, Մամիկոնյանց 40/1 /1մուտք/, Շիրվանզադե 4 /1մուտք/ հասցեներում:	«ԼԵՎ» ՍՊԸ 10.03.2016-30.09.2016	Բյուջով հաստատվել է 25 մուտքերի վերանորոգում:
3.5	Այլ աշխատանքներ	Վարչական շրջանում 2016թ. ընթացքում նախատեսված է իրականացնել 64 կախովի պատշգամբների վերանորոգում:	Կախովի պատշգամբների վերանորոգման աշխատանքների ֆինանսավորումը բյուջեով չի հաստատվել:		:
		21 ներքին ջրագծերի վերանորոգում:	«ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/23» Համաձայն պայմանագրի ներքին ջրագծի վերանորոգման աշխատանքներ են կատարվել՝ Բաղրամյան 44(98գծմ.), Ն. Էմին 4(97գծմ), Ն.Էմին 5(97գծմ), Բաղրամյան 71(126գծմ.), Կոմիտաս 26 /6 և 7 մուտքեր – 57 գծմ, Ազատության 21ա /50 գծմ/:	«Էլդոգար» ՍՊԸ 19.02.2016-30.09.2016	Բյուջեով հաստատվել են 6 բազմաբնակարան շենքերի ջրագծերի և կոյուղագծերի հիմնանորոգումը:
4	Կրթություն, մշակույթ և սպորտ				
4.1	Մշակույթ	Մշակութային	Տոնական օրերին Արաբկիր վարչական շրջանում կազմակերպվել են ամանորյա միջոցառումներ:		

		միջոցառումներ	<p>Հայոց բանակի տարեդաձի առթիվ տեղի է ունեցել «Փառք մեր հերոսներին» խորագրով ցերեկույթ և պսակադրման արարողություն՝ զոհված ազատամարտիկներին նվիրված խաչքարի մոտ:</p>		
			<p>Կանանց միջազգային օրվա կապակցությամբ ծաղիկներ են նվիրվել պատահական կին անցորդների:</p>		
			<p>«ԵՔ-ԲԸՏՁԲ-16/19-2» Ապրիլի 7-ին կազմակերպվել է Մայրության և գեղեցկության տոնին նվիրված միջոցառում:</p>	<p>«Աֆրիկյանների Պանդոկ» ՍՊԸ</p>	
			<p>«ԵՔ-ԲԸՏՁԲ-16/78» Ապրիլի 24-ին կատարվել է Հայոց ցեղասպանության 101-րդ տարելիցին նվիրված պսակադրման արարողություն:</p>	<p>«Ա/Ձ Ալեքսանդր Մհերյան»</p>	
			<p>«ԵՔ-ԲԸՏՁԲ-16/78» Մայիսի 9-ին կազմակերպվել է Հաղթանակի և Շուշիի ազատագրման օրվան նվիրված ծաղկեպսակների դրման արարողություն:</p>		
			<p>«ԵՔ-ԲԸՏՁԲ-16/78» Մայիսի 28-ին կազմակերպվել է ՀՀ 1-ին հանրապետության օրվան նվիրված համերգ-միջոցառում Վահագն Դավթյանի անվան այգում:</p>		
			<p>«ԵՔ-ԲԸՏՁԲ-16/78» Հունիսի 1-ին կազմակերպվել է երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառում:</p>		
			<p>«ԵՔ-ԲԸՏՁԲ-16/78» Հունիսի 10-ին «Երևանյան ամառ-2016» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է «Բարև Արաբկիրից» խորագրով միջոցառումը:</p>		
			<p>«ԵՔ-ԲԸՏՁԲ-16/78» «Երևանյան ամառ-2016» ծրագրի շրջանակներում Արաբկիր վարչական շրջանի Քանաքեռ ՀԷԿ հասցեում տեղի ունեցավ 10-օրյա բակային ճամբարի բացումը:</p>	<p>«Ա/Ձ Ալեքսանդր Մհերյան» 12.07.2016-22.07.2016</p>	

			<p>«ԵՔ-ԲԸՄՁԲ-16/78» «Երևանյան ամառ-2016» ծրագրի շրջանակներում Արաբկիր վարչական շրջանի Ա. Ավետիսյան 74, 76 հասցեում տեղի ունեցավ 10-օրյա բակային ճամբարի բացումը:</p>	«Ա/Ձ Ալեքսանդր Միերյան» 25.07.2016-02.08.2016
			<p>«ԵՔ-ԲԸՄՁԲ-16/78» «Երևանյան ամառ-2016» ծրագրի շրջանակներում Արաբկիր վարչական շրջանի Փափազյան 21/1 հասցեում տեղի ունեցավ 10-օրյա բակային ճամբարի բացումը:</p>	«Ա/Ձ Ալեքսանդր Միերյան» 03.08.2016-13.08.2016
			<p>«ԵՔ-ԲԸՄՁԲ-16/78» Վ. Դավթյանի անվան զբոսայգում տեղի ունեցավ «Երևանյան ամառ-2016»-ի գլխավոր միջոցառումը՝ բակային ճամբարի փակումը:</p>	«Ա/Ձ Ալեքսանդր Միերյան» 26.08.2016
			<p>«ԵՔ-ԲԸՄՁԲ-16/78» Ուսուցչի օրվա կապակցությամբ ծաղկեփնջեր են նվիրվել դպրոցների տնօրեններին:</p>	«Ա/Ձ Ալեքսանդր Միերյան» 12.07.2016-28.12.2016
			<p>«ԵՔ-ԲԸՄՁԲ-16/78» Էրեբունի – Երևան 2797 –կազմակերպվել է համերգ «Վ.Դավթյանի անվան զբոսայգում»:</p>	
			<p>Ամանորին նվիրված տոնական համերգ, որի ընթացքում մասնակից մանուկներին հատկացվել են քաղցրավենիքի տոնական փաթեթներ:</p>	25.12.2015-06.01.2016
4.2	Սպորտ	Մարզական միջոցառումներ	<p>«ԵՔ-ԲԸՄՁԲ-16/15-1 » Կազմակերպվել է Արաբկիր վարչական շրջանի սուսերամարտի բաց առաջնություն:</p>	«Ա/Ձ Հայկ Ղազարյան» 28.01.2016-25.12.2016
			<p>«ԵՔ-ԲԸՄՁԲ-16/15-1 » Կազմակերպվել է Արաբկիր վարչական շրջանի շախմատի բաց առաջնություն:</p>	

			<p>«ԵՔ-ԲԸՄՁԲ-16/15-1 » Կազմակերպվել է 25-րդ մարզական խաղերի ծրագրով Արաբկիր վարչական շրջանի դպրոցականների սեղանի թենիսի, ֆուտզալի, ֆուտբոլի, թեթև ատլետիկայի առաջնություն:</p>		
			<p>«ԵՔ-ԲԸՄՁԲ-16/15-1 » Կազմակերպվել է Արաբկիր վարչական շրջանի սեղանի թենիսի բաց առաջնություն:</p>		
			<p>«ԵՔ-ԲԸՄՁԲ-16/15-1 » Կազմակերպվել է Երևան քաղաքի առաջնություն՝ հանրակրթական դպրոցների 25-րդ մարզական խաղերի ծրագրով:</p>		
			<p>«ԵՔ-ԲԸՄՁԲ-16/15-1 » «Ազգային ժողովի գավաթի» հանրակրթական դպրոցների 1-6-րդ դասարանների միջև Երևան քաղաքի առաջնություն:</p>		
			<p>«ԵՔ-ԲԸՄՁԲ-16/15-1 » Կազմակերպվել է Արաբկիր վարչական շրջանի ֆուտբոլի պատանիների բաց առաջնություն:</p>		
			<p>«ԵՔ-ԲԸՄՁԲ-16/15-1 » Կազմակերպվել է ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի Արաբկիր վարչական շրջանի և Երևան քաղաքի առաջնություն:</p>		
			<p>«ԵՔ-ԲԸՄՁԲ-16/15-1 » Կազմակերպվել է «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» վարչական շրջանի միջբակային առաջնություն:</p>		
			<p>«ԵՔ-ԲԸՄՁԲ-16/78» Կազմակերպվել է Արաբկիր վարչական շրջանի շախմատի բաց բաց առաջնություն վետերան շախմատիստների միջև:</p>		
			<p>«ԵՔ-ԲԸՄՁԲ-16/78» Կազմակերպվել է Արաբկիր վարչական շրջանի բազկամարտի բաց առաջնություն:</p>		

			<p>«ԵՔ-ԲԸՄՁԲ-16/78» Կազմակերպվել է Արաբկիր վարչական շրջանի վոլեյբոլի բաց առաջնություն:</p> <p>«ԵՔ-ԲԸՄՁԲ-16/15-1 » Կազմակերպվել է Արաբկիր վարչական շրջանի ձյուդոյի բաց առաջնություն:</p> <p>«ԵՔ-ԲԸՄՁԲ-16/15-1 » Կազմակերպվել է նախագինակոչային և գորակոչային տարիքի ռազմամարզական խաղեր:</p> <p>«ԵՔ-ԲԸՄՁԲ-16/15-1 » Կազմակերպվել է Արաբկիր վարչական շրջանի շախմատի բաց առաջնություն 12 վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցների միջև:</p> <p>«ԵՔ-ԲԸՄՁԲ-16/15-1 » Կազմակերպվել է Արաբկիր վարչական շրջանի աշխատակազմի աշխատակիցների միջև շախմատի բաց մրցաշար:</p>		
5	Սոցիալական ապահովություն				
5.1	Աջակցության ծրագրեր	2016թ. նախատեսվում է դրամական, նյութական աջակցություն ցուցաբերել տոն և հիշատակի օրերի կապակցությամբ: Կազմակերպվելու է դպրոցահասակ երեխաների ամառային հանգիստը հանրապետության տարբեր ճամբարներում, երեխաները կապահովվեն սնունդով, հագուստով և	<p>96 ընտանիքի հատկացվել է դրամական օգնություն:</p> <p>Հունիսի 20-ին Հանքավանի «Արագած» ճամբար մեկնող 60 երեխայի նվիրվել են մարզաշապիկներ, արևապաշտպան գլխարկներ, քաղցրավենիք, խաղեր և այլ նվերներ, ինչպես նաև կազմակերպվել է ծնողների այցելություն ճամբարում հանգստացող երեխաներին:</p> <p>«ԵՀ-16/8-1» Հունվարի 28-ին՝ Հայոց Բանակի օրվա կապակցությամբ երկու զինծառայող ունեցող ընտանիքների համար կազմակերպվել է միջոցառում և հանձնվել են նվերներ:</p> <p>«ԵՀ-ՊԸՄԲ-16/7-1 » Մարտի 8-ի՝ կանանց միջազգային օրվա կապակցությամբ «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական ճաշարանում կազմակերպվել է միջոցառում ճաշարան այցելող կանանց համար:</p>	<p>«Տարոն Տալ» ՄՊԸ</p> <p>«Տարոն Տալ»ՄՊԸ</p>	

		<p>հիգիենայի պարագաներով, ինչպես նաև սեպտեմբերի 1-ի առթիվ ապահովվելու են գրենական պիտույքներով: Անցկացվելու են տոնական միջոցառումներ, այդ թվում՝ Քրիստոսի Հարության տոնի կապակցությամբ, կկազմակերպվեն համերգներ, էքսկուրսիաներ: Առողջապահական հիմնարկների հետ համագործակցությամբ սոցիալապես անապահով խավերին անվճար բուժօգնություն ցուցաբերելու ուղղությամբ՝ ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ միջնորդագրերով պետական պատվերի շրջանակներում</p>	<p>« ԵՀ-ՊԸՄԲ-16/7-1 » Մարտի 27-ին՝ Հարության տոնի կապակցությամբ, տոնական միջոցառում է կազմակերպվել «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական ճաշարանում և սոցիալապես անապահով, սիրիահայ ընտանիքներին տրամադրվել են մթերքներ:</p>		
		<p>«ԵՀ-16/8-1» Հունիսի 21-ին՝ բուժաշխատողի օրվա կապակցությամբ կազմակերպվել է այցելություն Արաբկիր վարչական շրջանի 3 պոլիկլինիկաներ, «Քաղաքային էնդոկրին դիսպանսեր», Երևանի քաղաքապետարանի «Շտապբուժօգնություն» ՓԲԸ: Բուժհաստատությունների տնօրեններին հանձնվել են պատվոգրեր, ծաղիկներ, իսկ լավագույն 7 բժիշկների՝ նվերներ և շնորհակալագրեր:</p>			
		<p>«ԵՀ-16/8-1» Հոկտեմբերի 1-ին՝ տարեցների միջազգային օրվա կապակցությամբ միջոցառում է կազմակերպվել «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական ճաշարանում:</p>			
		<p>«ԵՀ-16/8-1» Սեպտեմբերի 23-ին այցեր են կատարվել ծննդատներ, 5 նորածինների մայրերին հատկացվել են նվերներ՝ (նորածնի հավաքածու-10կտոր) և քաղցրավենիք , ՀՀ անկախության՝ սեպտեմբերի 21-ի կապակցությամբ:</p>			
		<p>«ԵՀ-16/8-1» դրամաշնորհի հատկացման պայմանագիր Դեկտեմբերի 26-ին կազմակերպվել է տոնական ճաշկերույթ և համերգ ճաշարանում սնվողների համար՝ նվիրված Նոր տարվա և Սուրբ Ծննդյան տոներին:</p>			

		<p>կկազմակերպվի բնակիչների բժշկական հետազոտությունը, բուժումը և վիրահատությունը, բժշկական հաստատություններում կկազմակերպվի «Բաց դռների օրեր»: Հայոց Ցեղասպանության հիշատակի օրվա կապակցությամբ Եղեռնը վերապրած 2 բնակիչներին կցուցաբերվի դրամական աջակցություն: Աջակցություն կցուցաբերվի անօթևաններին ժամանակավոր կացարաններում</p>	<p>Երևան հիմնադրամ «ԵՀ-16/8-1» Դրամաշնորհի հատկացման պայմանագիր Մայիսի 9-ին՝ Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 70-ամյակի կապակցությամբ 76 վետերանների հատկացվել է դրամական աջակցություն:</p>		
			<p>«ԵՀ-16/8-1» դրամաշնորհի հատկացման պայմանագիր Հոկտեմբերի 26-ին՝ Թարգմանչաց տոնի կապակցությամբ 20 սիրիահայ երեխաների համար կազմակերպվել է էքսկուրսիա Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան:է</p>	<p>«Գոլդեն Թիքեթ»</p>	

		<p>բնակվելու հարցում: Դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների և ընտանիքների պաշտպանության և սոցիալական աջակցության նպատակով համագործակցություն կծավալվի ՀՀ նստիկանության հետ, կանցկացվեն սեմինարներ:</p>	<p>«ԵՀ-16/8-1» Ապրիլի 29-ին առաջին դասարանցի 20 սոցիալապես անապահով և սիրիահայ երեխաների համար կազմակերպվել է էքսկուրսիա Օշական քաղաք՝ այցելություն Մեսրոպ Մաշտոցի գերեզմանին, ապահովվել են նաև երեխաների սնունդը:</p> <p>«ԵՀ-16/8-1» Մայիսի 18-ին՝ թանգարանների միջազգային օրվա կապակցությամբ, սոցիալապես անապահով 20 երեխաների համար կազմակերպվել է էքսկուրսիա Հայաստանի ազգային պատկերասրահ, ապահովվել են նաև երեխաների սնունդը:</p> <p>«ԵՀ-16/8-1» Հունիսի 6-ին Արաբկիր վարչական շրջանում գործող թույլ լսող երեխաների մայրերի «Հավատ» ՀԿ հաճախող երեխաների համար կազմակերպվել է էքսկուրսիա կենդանաբանական այգի:</p>		
--	--	--	--	--	--

			<p>«ԵՀ-16/8-1» Հունիսի 14-ին 20 սոցիալապես անապահով և սիրիահայ երեխաների համար կազմակերպվել է մեկօրյա ճանաչողական էքսկուրսիա՝ այցելություն Գառնու տաճար, Գեղարդի վանք, ինչպես նաև ապահովել են սննդով:</p>		
			<p>«ԵՀ-16/8-1» Հուլիսի 14-ին՝ տարբեր խոցելի խմբերի պատկանող 20 երեխաների համար/ 5-ը սիրիահայ/ մեկ օրն ավելի հետաքրքիր դարձնելու համար կազմակերպվել է հետաքրքրաշարժ, ուսուցողական և ճանաչողական էքսկուրսիա Լոռու մարզ՝ Դսեղ, Սանահին, Հաղպատ: Երեխաները եղել են Հ. Թումանյանի տուն-թանգարանում, Հաղպատի և Սանահինի վանական համալիրներում:</p>		
			<p>«ԵՀ-16/8-1» Օգոստոսի 5-ին և 16-ին՝ Արաբկիրում բնակվող 30 սիրիահայերի համար կազմակերպվել է ճանաչողական էքսկուրսիա «Երևան Սիթի Տուր»-ով: Կազմակերպվել է էքսկուրսիա Երևանի պատմության թանգարան:</p>		
			<p>«ԵՀ-16/8-1» Մեպտեմբերի 7-ին 20 սիրիահայերի համար կազմակերպվել է էքսկուրսիա Երևանի պատմության թանգարան:</p>		
			<p>«ԵՀ-16/8-1» Մեպտեմբերի 24-ին Հ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնի տոմսեր են հատկացվել 3-6 տարեկան 30 երեխայի՝ 15-ը սիրիահայեր:</p>		

			<p>Ապրիլի 1-4-ը դարաբաղա-ադրբեջանական հակամարտ գորքերի շփման գծի ողջ երկայնքով հակառակորդի ձեռնարկած հարձակողական գործողությունների ժամանակ զոհված արաբկիրցի զինձառայողների ընտանիքներին հատկացվել է ֆինանսական օգնություն:</p> <p>Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից ԼՂՀ Մարտունի քաղաք և Մարտակերտի շրջաններ են ուղարկվել տնտեսվարող սուբյեկտներից, դպրոցներից, անհատներից և բնակիչներից հավաքագրված սննդամթերք և դեղորայք, ինչպես նաև առաջին անհրաժեշտության պարագաներ:</p> <p>Հունիսի 20-ին Հանքավանի «Արագած» ճամբար մեկնող 30 երեխայի նվիրվել են մարզաշապիկներ, արևապաշտպան գլխարկներ, քաղցրավենիք, խաղեր և այլ նվերներ:</p> <p>Հուլիսի 16-ին Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի գլխավորած պատվիրակության ԼՂՀ կատարած պաշտոնական այցի շրջանակներում Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը Հովհաննես Վարդանյանի գլխավորությամբ այցելել է ԼՂՀ Մարտունու շրջան: Գրքեր, մատիտներ են նվիրվել մանկապարտեզի երեխաներին: Պատվիրակության անդամներն եղել են Մարտունի - 2 գորամասում, այցելել են նաև առաջնագիծ և հանդիպում ունեցել մարտական հերթապահություն իրականացնող զինձառայողների հետ, հանձնել նվերներ:</p> <p>Կազմակերպվել է արաբկիրցի 67 ծնողների այցելությունը ԼՂՀ-ում և ՀՀ սահմանամերձ գոտիներում ձառայող երևանաբնակ ժամկետային զինձառայողներին:</p> <p>«Էրեբունի-Երևան-2798» տոնակատարության շրջանակներում 286 սոցիալապես անապահով ընտանիքների ցուցաբերվել է սոցիալական աջակցություն:</p>		
--	--	--	---	--	--

			<p>Համագործակցության շրջանակներում «Հավատ» վատ լսող երեխաների մայրերի հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված Ամանորի միջոցառմանը լսողության խանգարում ունեցող 40 երեխաների հատկացվել է քաղցրավենիքի փաթեթ:</p> <p>«Դեագա» ՄՊԸ Սոցիալապես անապահով 1200 ընտանքիների հատկացվել է ամանորի սննդի փաթեթ:</p> <p>«ԵՔՇԱՊՁԲ-16/53» Սոցիալապես անապահով ընտանիքների 200 դպրոցահասակ երեխաների հատկացվել է դպրոցական պայուսակ և գրենական պիտույքներ:</p> <p>Պարբերաբար շրջայցեր են կատարվել վարչական շրջանում անօթևանների և մուրացիկների հայտնաբերման ուղղությամբ: ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնի հետ համատեղ աշխատանքներ են տարվում հայտնաբերված 10 մուրացկանների անձնական տվյալների ճշտման և հետագայում համապատասխան միջոցներ ձեռնարկելու ուղղությամբ: 1 մուրացիկ տեղափոխվել է «Հանս Քրիստիան Կոֆոեդ» անօթևանների ժամանակավոր կացարան:</p>		
--	--	--	--	--	--

5.2	Համագործակցություն	Գերմանական Կարմիր Խաչի, «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ համագործակցության շրջանակներում ապահովվելու է բարեգործական ճաշարանների գործունեությունը, ինչպես նաև կշարունակվի համագործակցությունը այլ հասարակական կազմակերպությունների	Իրականացվել է բարեգործական ճաշարանի ծախսերի մասնակի փոխհատուցում՝ սոցիալապես անապահով խավերին տրամադրած ծառայությունների դիմաց:	
5.3	Այլ ծրագրեր		<p>«Դիակոնիա» ք/հ-ի հետ համատեղ 47 սոցիալապես անապահով ընտանիքների՝ միակողմանի ծնողազուրկ, արցախյան պատերազմի հաշմանդամ, սիրիահայ, հատկացվել են սննդի փաթեթներ:</p> <p>«Հավատ» ՀԿ-ի հետ համագործակցության արդյունքում մարտի 8-ի կապակցությամբ հաշմանդամ երեխաների մայրերի համար կազմակերպվել է միջոցառում:</p> <p>«Հույսի պատուհան» ՀԿ-ի հետ համագործակցության արդյունքում հաշմանդամություն ունեցող 5 երեխաների մայրերի՝ մարտի 8-ի կապակցությամբ տրվել են նվերներ, հագուստ, պայուսակ, անկողնային պարագաներ:</p> <p>«ՍՕՍ»-Մանկական գյուղեր ՀԲՀ-ի հետ համագործակցությամբ 36 սիրիահայ և 191 սոցիալապես անապահով ընտանիքների տրամադրվել է տարաբնույթ օգնություն՝ նյութական աջակցություն, բնակարանի և կոմունալ վարձավճարի փոխհատուցում, անվճար առողջապահական և</p>	

		<p>կրթական ծրագրերում ներառում:</p> <p>Կազմակերպվել է այցելություն 11 բազմազավակ ընտանքիների բնակարաններ, հատկացվել է դրամական աջակցություն ապրիլի 7-ի մայրության և գեղեցկության օրվա կապակցությամբ:</p> <p>«Հուլիսի պատուհան» ՀԿ-ի հետ համագործակցության արդյունքում հաշմանդամություն ունեցող 5 աղջիկների ապրիլի 7-ի կապակցությամբ տրվել է քաղցրավենիք, հիգիենայի պարագաներ:</p> <p>Հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության օրվա առթիվ հաշմանդամություն ունեցող 5 երեխաների տրամադրվել է հագուստ, քաղցրավենիք:</p> <p>«Մեյվ դը չիլդրեն» ՀԿ-ի հետ համատեղ կազմակերպվել է սեմինար-քննարկում՝ «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» թեմայով, որին մասնակցել են նաև բժիշկներ պոլիկլինիկաներից:</p> <p>Ապրիլի 22-ին «Հուլիսի օջախ» մտավոր անկարողների մայրերի հասարակական կազմակերպությանը տրամադրվել է միկրոավտոբուս և նրանց հետ միասին այց է կատարվել Ծիծեռնակաբերդ՝ Հայոց Ցեղասպանության զոհերի հուշահամալիր:</p> <p>Մայիսի 12-ին «Մեկ օր տարեցների հետ» ծրագրի շրջանակներում այցելություն է կատարվել մեկ միայնակ տարեցի և հանձնվել սննդի փաթեթներ:</p> <p>«Սոցիալական արդարություն» ՀԿ-ի հետ համատեղ կազմակերպվել է սեմինար «Ընտանեկան բռնության հիմնահարցերով համայնքի ընտանեկան բռնության խնդրով շահագրգիռ կառույցների վերապատրաստում» թեմայով:</p> <p>«Հանգրվան» ՊՈԱԿ-ի հետ համագործակցության արդյունքում 1-ին խմբի հաշմանդամ մեկ անձի հատկացվել է հաշմանդամի սայլակ:</p>		
--	--	--	--	--

Դավթաշեն վարչական շրջան					
Հ/հ	Ծրագրերի, միջոցառումների և աշխատանքների անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1	Տարածքային բարեկարգման աշխատանքներ				
1.1	Փողոցների ասֆալտ-բետոնե ծածկերի ընթացիկ վերանորոգում	Կիրականացվեն փողոցների երթևեկելի հատվածի և մայրերի ասֆալտե ծածկույթի ընթացիկ և կապիտալ նորոգման աշխատանքներ:	ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/84-4 Ըստ պայմանագրի տարեկան ծավալը կազմում է 3675քմ: Աշխատանքներ են իրականացվել հետևյալ հասցեներում՝ Դավթաշեն 2-րդ թաղամաս հ. 28 շենքին հարող միջբակային ճանապարհ, հ.27, 28 շենքերի բակ Դավթաշեն 4-րդ թաղամաս հ. 38,42,43,44 շենքերի բակ, հ. 45, 46, 47 շենքերի բակ, հ. 17, 15 շենքերի միջբակային ճանապարհ, հ. 20, 21, 22, 23, 24 շենքերի բակ, հ. 26, 27 շենքերի բակ, հ. 32, 33, 34 շենքերի բակ, հ.1, 2, 3, 4, 7 շենքերի բակ, հ.28 շենքի ետնամաս, հ.23 շենքի ետնամաս, հ.35 շենքի ետնամաս, հ. 11, 12 շենքերի բակ, հ. 9 շենքի կողամաս, հ. 22 շենք, հ. 27 շենք, հ. 34 շենք, հ. 43 շենք, հ. 44 շենքի մայթ, հ. 48 շենքի մայթ, հ. 33 շենքից սուպերմարկետ, տանող ճանապարհ, հ. 47 շենքի մայթ, ոստիկանության շենքի տարածք, հ. 26/5 շենքի բակ, հ. 3 շենքերի հարող ճանապարհ, թիվ 196 հանրակրթական, դպրոցին և ձեռքի գնդակի մարզադրոցին հարող ճանապարհ, հ. 46/5 շենքի բակի խրամուղի, հ. 28, 29, 30, 31 շենքերի բակ, հ. 39, 43 շենքերի բակ, հ.2Ա շենքերի բակ, հ. 38, 42 շենքերի բակ:	«ՇԻՆՊԼՅՈՒՄ» ՍՊԸ 16.05.2016թ.-02.10.2016թ.	
1.2	Եզրաքարերի վերանորոգում	Կնորոգվեն փողոցների եզրաքարերը:	ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/31 Իրականացվել է 180 գծմ եզրաքարի վերանորոգում	«ՍԱՄՇԻՆՈՒԺ ՍՊԸ» 19.02.2016թ.-30.09.2016թ.	

			Աղաբաբայան Փիրումյաններ փողոցներում:		
1.3	Բակային տարածքների բարեկարգում	Դավթաշեն վարչական շրջանում կշարունակվեն գույքի համալրման աշխատանքները, մասնավորապես նախատեսվում է տեղադրել 5 զրուցարան, 15 նստարան, 39 աղբաման:	ԵՔ-ԲԸԱՊՁԲ-16/4 Ձեռք են բերվել և տեղադրվել աղբամաններ, նստարաններ և զրուցարաններ հետևյալ բաշխմամբ՝ աղբաման– 39 հատ՝ Տ.Պետրոսյան փողոցի երկայնքով, զրուցատաղավար –5 հատ՝ Դավթաշեն 2-րդ թաղ. 8, 9, 10 շենքերի բակ, Դավթաշեն 2-րդ թաղ. 27, 28 շենքերի բակ, Դավթաշեն 4-րդ թաղ. 25ա, 30, 31 շենքերի բակ, Դավթաշեն 4-րդ թաղ. 38, 39, 41, 42 շենքերի բակ, (2 հատ) նստարան -15 հատ:	«ՄԻՍՍՊԸ» 09.03.2016թ.-25.12.2016թ.	
1.4	Այլ աշխատանքներ	Բարեկարգման ծրագրերի շրջանակում կիրականացվեն մայթերի սալահատակի, դիտահորերի, ինչպես նաև կիրականացվեն հենապատերի նորոգման աշխատանքներ:	Իրականացվել է սալիկապատում հետևյալ հասցեներում՝ 1. Դավթաշեն 1-ին թաղ. 9, 10, 10Ա, 4, 5, 6, 7 շենքերի բակում-226քմ 2. Դավթաշեն 2-րդ թաղ. 21, 22, 23, 24 շենքերի բակում-26քմ 3. Դավթաշեն 2-րդ թաղ. 27, 28 շենքերի բակում-58քմ 4. Դավթաշեն 4-րդ թաղ. 25Ա, 30, 31 շենքերի բակում-71քմ 2016 թվականին Դավթաշեն վարչական շրջանում դիտահորերի և հենապատերի նորոգման աշխատանքներ չի նախատեսվել:		
2	Կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում և ոռոգում				
2.1	Կանաչ տարածքների պահպանում և խնամք	Կանաչապատման աշխատանքների շրջանակներում կիրականացվեն կանաչ տարածքի և ընդլայնված կանաչ	ԵՔ-ՇՀԱՇՁԲ-16/13 Ապահովվել է կանաչ տարածքների խնամք և պահպանում:	«Դավթաշենի կանաչապատում» ՓԲԸ 23.12.2015թ-25.12.2016թ	

2.2	Ծաղկային տարածքների ստեղծում և խնամք	գոտու խնամք, բարեկարգում և պահպանում, ոռոգման ցանցի նորոգում: Նախատեսվում է ծառերի էտ և երիտասարդացում:	Տնկվել է 500 վարդի թուփ, 270 թուփ, 58860 ծաղիկ, 30000 հատ սոխուկ: Ստեղծվել է 2354քմ ծաղկային տարածք, 1260քմ գազոնային տարածք:		
2.3	Ծառատունկ		Տնկվել է 1175 հատ տնկի:		
2.4	Չոր ծառերի հատում և երիտասարդացում, ծառերի խոր էտ		Իրականացվել է 460 հատ չոր ծառերի հատում և երիտասարդացում:		
2.5	Ոռոգման ցանցի վերանորոգում		Ոռոգման ցանցի վերանորոգում իրականացվել է հետևյալ հասցեներում՝ Եղվարդի խճուղի, Տիգրան Պետրոսյան փողոց, Սասնա Ծռեր փողոց, 1-ին թաղամաս կաղնուտի այգի, Կենտրոնական այգի:		
3	Բնակարանային ֆոնդի շահագործում				
3.1	Հարթ տանիքների նորոգում (իզոգամ)	2016թ. կշարունակվեն բնակելի շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքները: Նախատեսվում է վերանորոգել 10.550քմ մակերես:	ԵՔ-ԲԸԱՇՁԲ-16/62-6 Իրականացվել է բնակելի շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքները 10.550քմ ծավալով հետևյալ հասցեներում՝ Դավթաշեն 1-ին թաղ. 9, 10, 10Ա շ., 3շ. 55 բն., 51շ. 2մ, 11 շ. 17, 18, 36 բն., 26շ. 17 բն., 28շ. 33, 34, 35, 35 բն., 29շ. 17 բն., 10Աշ. 17, 18, 54 բն., 10շ. 35 բն., 2մ., 29շ. 72 բն., 9շ. 17, 18 բն., 23շ., 30շ. 17, 18 բն., 38շ. 57, 58 բն., 44շ. 33, 34 բն. Դավթաշեն 2-րդ թաղ. 37Աշ. 18, 36բն., 43 շ. 71բն., 4շ. 17բն., 26շ. 18բն., 2շ. 51, 52բն., 43շ. 54բն., 37շ. 17բն., 41շ. 36 բն., 42շ. 1 և 2 մուտքերի, 44շ. 51, 52 բն., 33շ. 1 մուտք, 23շ. 33, 34, 36 բն., 2շ., 13շ. 49, 50, 51, 52 բն., 37Ա շ. 17բն., 24 շ. 33, 34, 36 բն., 36 շ. 33 բն. Դավթաշեն 3-րդ թաղ. 20շ. 49, 50 51, 52բն., 1շ. 33, 34, 35, 36 բն., 14շ. 72 բն., 2մ., 20շ. , 21շ. 1մ., 30շ. 57, 60 բն., 11շ. 35 բն., 18շ. 35 բն., 12շ. 71 բն., 17շ. 51բն. Դավթաշեն 4-րդ թաղ. 26շ., 28շ. 17, 18 բն., 21շ. 49 բն., 10շ. 70 բն., 11շ. 15, 16	«ԼԵՎՈՆ ԵՎ ԱՆՆԱ» ՍՊԸ 17.05.2016թ., -30.09.2016թ.	

			բն., 41շ. 2մ. և 3մ., 21շ., 50բն., 20շ. 49, 50, 51, 52 բն., 5շ. 33, 34, 35, 36 բն., 24շ. 33, 34, 35, 36 բն., 3շ. 53, 54 բն., 30շ. 33, 35, 36 բն., 27շ. 17, 18, 89, 90 բն., 22շ. 17բն., 4Աշ. 17, 53 բն., 1-ին և 2-րդ մուտք, 38շ. 49բն., Թիվ 62 մանկապարտեզ, Թիվ 20 պոլիկլինիկա																										
